De imitatione Christi

Amstel. 1696.



Ահա՛ ճանապարհ, և ճշմարտութիւն, և կեանք:
Յօհ. 14. 6:

ԳԻՐՔ
ԹՈՄԱՅԻ
ՔԵՄՓԱՑԻՈՅ։

Յաղագս
ՀԱՄԱՀԵՏԵՒՄԱՆՆ
ՔՐԻՍՏՈՍԻ։

Թարգմանեցեալ 'ի Յոհաննիսէ
յոլովերախտ Վարդապետէ
Կոստանդինուպօլսեցւոյ։

'Ի խնդրոյ Ջուղայեցի խօջայ Սահրա
տին որդւոյ պարոն Քառապարին։

Գործեօք, և ծախիւք Թօմասու
սրբափայլ Եպիսկոպոսի
սրբոյ խաչին։

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ
1696։

ՅԱՄՍՏԵՂՌՕԴԱՄԻ

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Առ միահամուռ Ուսումնասէր հօյլս Մերազնեայց։

Բաղձալի էր, և անձկանօք գըրեցին սրբոց Հոգւոյն, և մեր դարուս յետ զարգացումն Միտնի սրբոյ՝ երգէ յիւրումն նուագի․ Ճրագ ոտից իմոց բան քո, և լոյս շաւղաց իմոց․ Սաղմոս՝ 118։ Այսու խրախուսականաւ ձայնիւ վառէ, և հրաւիրէ զհամայն դասս՝ և զխումբս պաշտօնասէր վարժողաց, տքնիլ՝ և դեգերիլ յուսումն, և 'ի կրթութիւն, ըստ յորդորման հանրական Փրկչին․ Քննեցէք՝ ասէ՝ զԳիրս, զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտենականս․ Յովհան, 5․ 39։ Եւ արդ՝ Սիրելիք, և անձկալիք հոգւոյ իմոյ՝ հարք իմ, և եղբարք իմ․ որովհետև չէք այլով ինչիւք շահել զկեանսն յաւիտենականս, եթէ ոչ գրովք սրբովք․ վասն որոյ՝ և իմ իրաւունս, և արժան համարելով՝ տալցի զգիրս մեծի երանելւոյ, և վայելչաբուղխ աղբերն Թովմասա Քեմպիացւոյ, 'ի զուարճութիւն, և յարութիւն մանկանց Եկեղեցւոյ։ Այնքան պատուելի, և սիրելի է ճաշակ այսմ գրոյ, մինչզի՝ որքան

լե

լեզուք դոն 'ի կալուածս Եւրոպայու, ամենեքեան ունին թարգմանեցեալ զս͞ բարբառոյ իւրեանց. լութերեանք, և կալվինեանք ևս՝ և ոմոք միշտ կրէ զնոյն 'ի ծոցի իւրում իբրև՝ զմեծ իմն մխիթարութ͞ե հոգւոց: և մերս գոյր թարգմանեցեալ 'ի լատին լեզուէ, 'ի հայկական բարբառ աշխատանօք Յոհաննէս վարդապետէ Կոնստանդինուպօլսեցւոյ յամի Փրկչին մերոյ՝ 1670. 'ի խնդրոյ ազնուատոհմ Ջուղայեցի Շահրիմանենց Պարոն Քասպարին: Արդ՝ մեծաւ թախանձանօք խնդրեմ յեղբարցդ սիրելեաց, զի ոմոք ըստացի զայս ըմպելանի, և բուժիչ ամենից ախտից. զի սովաւ ըսթափեցեալք 'ի նիրհմանէ ծանրագունէ, բուռն հարցէ զուղիղ շաւղաց ըստ ձայնի մանկագիր բարբառոյն. Ճրագ ոտից իմոց բան քո, և այլն:

Այլ և՝ զայս յուշարարից աւագութեան ձերոյ. զի որքան վկայուն բանք ասացան՝ և եղան 'ի ս͞բ գիրս յայս, ես ապիրատս, և անվարժս Թովմաս Վանանդեցի՝ ըստ իմում տկարութեան, և անկատարութե, աշխատեցայ՝ և յանդիման ածի

զև

զիւրաքանչիւր վկայութեանց 'ի սմա եղելոց զհամարագիրս գլխոց համայնից, և առընթեր նոցա՝ ըզ թիւս տանց պարունակեցելոց. զի զնոյնս խնդրողաց, և որոնողաց՝ դիւրագոյն լիցի առձեռն ունիլ՝ զոր խնդրեացն: եթէ՝ որոց տեսանեն, և զգան՝ երևիցի հաճոյ ի միք՝ և ընդունելի, շնորհողին պատիւ, և գոհութիւն. զի ես ոչ այլ ինչ՝ եթէ ոչ պղինձ, որ յայլմէ հարեցեալ հնչէ. իսկ եթէ առ ելորդ իմն՝ և անախորժ, և քամահելի. զներումն, և զանպարսաւութիւն ըսպասեմ ունիլ. Թ. մաս պարտաւոր, և սխալական Վարդապետ:

Բան

Բան առ Սիոն Երինայն,

Զերմեռանդօրէն յուսով կայ
գուրեալ՝ բուռնհարից զան
շարժագունէ, և զհաստատնոյ Լեռ
նէ քումմէ՝ Սիոն պանծացեալ, ըստ
գուշակման մեծի Երգողին։
Լեառն՝ ընդ որ հաճեցաւ Ած բնակել
'ի նմա. Սաղմոս. 67, 16։ Քանզի՝
դու երկին յերկրի, և բազմապատ
կաբար պարգևատու քան զնա. զի
նա ունող արեգական զգալւոյ, լոկ՝
դու զԱրեգակն անեղ միշտ 'ի քեզ
ունիս, յոր ոչ երբեք հայլին ստուերք
փոփոխմանց։ և նա մեծաբանեալ
պարծի յերկոտասան Կենդանա
տեսակս. այլ՝ դու ունիս յառաջա
տի քում զերկոտասան Առաքեալսն,
ըստ երկոտասան աղբերցն Յաղե
մայ. 'ի նմա զոն եօթն մոլորականք՝
կառավարիչք բոլորից տիեզերաց.
այլ սակայն՝ 'ի գահոյի, և 'ի խորա
նի քում են եօթն զօրաւորագոյնք,
և ազդողականք գործառութեանք.
յորոց կիրառութեց մերակոչին, և
զրին ամենքին որդիք Լուսոյ, ըստ
հրամանի աճանգատուր Իշխանաց
Եկեղեցւոյ. և ս՝ տանելով նա զսպառ
ծանս վասն բազմահոյլ աստեղաց,
զորս միշտ կրէ 'ի ծոցի իւրում. և

դու

զոր առաւելապէս ունելով զան
թիւ երամս, և զգունդս առատեղա
փայլ Սրբոց, որք յաւէտ զծիրս, և զ
ծառայմունս զանմարմնից շնորհաց՝
հեղուն, և տան յուսով խնդրողաց.
և այս են՝ զի երկին զոր ինչ և առ
նէ ստորակայից, դարմանել և
պաշտել. բոլորն, և համայնն են
փոփոխականք՝ և անկայունք. իսկ՝
քոյդ խնամք, և այցելութիւք յաւ
էտ զօրաւորագոյնք՝ և օգտակարք՝
և վերածօղք յեւս մեծագոյն վայել
չութիւնս, և 'ի փառս անդրաւա
կանս: Եւ այսու ամենայնիւ ծա
նուցաւ պարզապէս, և աներկբայ
օրէն գերազանցութի քո՝ համեմա
տութե առ երկին՝ ով սուրբդ Սի
օն՝ գոգ, և ժողովարան ամենից արի
ացելոց, և վառելոց 'ի սէր անմահ
փեսային: ուստի՝ և ես տարամեր
ժեալս, և անպտուղս յերամս սպա
ռազինել՝ և արդիւնարար ընտրե
լոց 'ի քեզ, մաղթեմ ցաւագինս ա
ձամբ՝ ձօնել ողորմանս գթութեց
քոց յիս, և յիմսն. զի նպաստու
թե քով՝ յաւէտ կացեալք, բարե
պէս՝ և պատահագոյն աճարուես
ցուք՝ և հանցուք 'ի գլուխ զմերս՝
համայն ձեռնարկութիւնս, 'ի
փառս

փառս և 'ի Պատիւ Ամենասրբոյ Երրորդութեանն, այժմ, և ան ջաւ յաւիտենիւ· Ամէն:

Թովմաս Եպիսկոպոս Վանանդեցի, ծառայ ծառայից այ:

✠


Հաւատարիմ ընտանես քո նին·
ելեալ 'ի գլուխ բարձու լերին:
Փողել զքարոզ Երկնաւոր րին·
յարխութիւն փոքու հօ տին:
Թովմաս քեմիեան Երանե լին·
վառեալ սիրով աստուածայ ին:
Կազմեաց ընթրիս մեծ արքայ ին·
հրաւիրելով զեկեղե ցին:
Եւ կայք որդեակք ամենե քին·
ուրախ լերուք 'ի սէր փրկ չին:
Ճաշակելով զնորին մար մին·
տեղի և տուն գոլ անմա հին:
Սա բարեկամ սուրբ փեսայ ին·
կոչէ զմանկունս առագաս տին:
Պարակից գոլ անբիծ հարսին·
'ի հարսանիս յաղթող Գառին:
Խնդրողք ականց ըն մեծա գին·
և պատուական հատ մարգարտին:
Վաճառեցէք ըզ շպրժե լին·
'զի ունիցիք զանշարժ բար ին:
Արդ ես Թովմաս լեալ ուռ վերջին·

'ի

'ի վանանդայ գողթնեայ մասին։
Տպագրեցի զհիւսուած վէ հին.
և համարձակ քարոզր զին։
Եդեալ զծիրագ յաշտանա կին.
'ի զուարճութիւն բազմականին։
Զձեզ աղաչեմ զամենե սին.
յիշել զհէքս առ միշտ բա րին։
Այլ և զծնօղսն իմ քաղցրագին.
ըզՆուրիջանն ընդ Դիլդարին։
Ոստի և ցօղն հանուրց Փրկչին,
ձեզ և նոցա յաւէտ տացին։

THOMÆ à KEMPIS
De Imitatione Chrifti
Armeno idiomate.

'Ի Հայրապետութեանն Լուսահէ
ղոյս Գահոյին Սրբոյ Էջմիածնի
Տեառն Նահապետի՝ ամ Հայոց
Ինքնագլուխ Կաթողիկոսի։



Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ, ընդ խաւար ոչ մի գնասցէ.
Յ.Հ.Ը.ԺԲ:

ԹՕՄԱՅԻ ԿԵՄՓԱՑԻՈՅ.

կանոնաւորի կրօնաւորի 'ի կար
գէ Սրբոյն Օգոստինոսի ։

Յաղագս

ՀԱՄԱՀԵՏԵՒՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ։

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ։

Առաջնորդութիւնք օգտակարք
առ կեանս հոգեկանս ։

Գլուխ Ա ։

Յաղագս համահետեւմանն Քի̃, եւ խոտ
ման բնաւից ունայնութեանց աշխարհի ։

ՈՐ ՀԵՏԵՒԻ
ԻՆՉ, *ՈՉ ՇԸՐ Յով. 8. 12
ջէ 'ի խաւարի. ա
սէ Տէրն ։ Այսոքիկ են բանք
Քրիս

Քրիստոսի, որովք առաջնորդիմք, որ
պէս զի կենաց նորին՝ և վարուց հա
մահետևեսցիմք. եթէ կամիցիմք
ճշմարտապէս՝ լուսաւորիլ՝ և յամե
նայն կուրութենէ սրտի՝ զերծանիլ. ու
րեմն ծայրագոյն ջանն մեր լիցի,
զի զվարուցն Յիսուսի Քրիստոսի
համախորհեսցիմք:

2. Վարդապետութիւն Ք͞ի, ըղ
բնաւ վարդապետութիւնս սրբոց գե
րազանցէ. և որ ունի զհոգի նո
Տեսլէ րին, *զմանանայն ծածկեցեալ 'ի
2. 17 նմա գտանէ: Բայց պատահի, զի
բազումք 'ի յաճախել լսոյ աւետա
րանին՝ զդոյն ինչ խղճ զգան. վա
Հռո զի՝ *ոչ ունին զհոգին Ք͞ի: Իսկ
8. 9 որ կամի լսապէս՝ և քաղցրապէս՝
իմանալ զբանս Ք͞ի. պարտի՝ հա
մակերպել նմին զկեանս իւրս
բնաւս:

3. Զի՞նչ օգուտ է քեզ՝ խորթնա
պէս, վիճաբանելն զԵրրորդութե
նէ. եթէ ոչ ունիցիս զխոնարհու
թի, որով Երրորդութեանն անհա
ճոյ լինիս: Իրաւի՝ բանք խորինք
ոչ առնեն զմարդ ս͞ր, և ոչ արդար.
այլ կեանք առաքինականք սիրելի
առնեն զմարդ ա͞յ: Ըղձամ մանա
ւանդ զգալ զապաշխարութի, քան
թէ

թէ՝ գիտել զսահման նորին։
Եթէ ունէիր զբոլոր Ա՟ծաշունչն ուսեալ 'ի բերան, և զասացուածս հանուրս փիլիսոփայից. Թարց սիրոյն այ՟ և շնորհաց նորին, զի՞նչ օգտէին քեզ բնաւքն։ * Ունայնութի ունայնութեանց, և ամ՟ ինչ ընդունայն է, բաց 'ի սիրոյն այ՟, և 'ի ծառայութենէ նորին միայնոյ։ Ժողով I • I
Այս է ծայրագոյն իմաստութի, խոտել զաշխարհս, և փութալ առ արքայութիւնն երկնային։

4. Ունայնութիւն է ուրեմն, խնդրելն զվարթամութի՟ս կորըստականս, և յուսալ 'ի նս։ Ունայնութի է և՝ փարիլն զպատուօք, և զինքն 'ի յաստիճանս մեծագոյնս բարձրացուցանել։ Ունայնութի է՝ հետևիլն մարմնոյ ցանկութե. և ըղձալ այնմ, որոյ աղագաւ զկնի պատժիլ պարտ է ծանրապէս։ Ունայնութիւն է՝ հայցելն զկեանս երկարս, և զկենաց բարեաց զգոյն ինչ փոյթ ունիլն։ Ունայնութիւն է՝ միայն նշմարելն զկեանս ներկայս. և ոչ զայնս՝ որք ապառնիքն են, նախատեսանել։ Ունայնութի է՝ սիրելն զայն, որ ամենևիմբ արագապէս՝ անցանէ. և ոչ ճեպելն

յայն

յայն, ուր մշտնջենական խնդութիւն մնայ:

5. Յիշեա՛ յաճախապէս՝ զա-
Եկեղ. ռակն զայն. թէ* ոչ յագին աչք ՚ի
1. 8 տեսութենէ, և ոչ լնանին լսելիք
՚ի լսոյ: Ջանա՛ ուրեմն զսիրտ քո
՚ի սիրոյն երևելեաց արտաքարշել՝
և առ աներևոյթս զքեզ անդրդարձե-
րել: Քանզի հետևօղք զգայու-
թեանց իւրեանց՝ բծաւորեն զխ-
ղճմտանս իւրեանց, և կորուսա-
նեն զշնորհն Աստուծոյ:

Գլուխ Բ̃:

Յաղագս զինքենէ հարծեաց խոնարհաց:

1. Ամենայն մարդ բնականա-
բար ցանկայ գիտել.
բայց գիտութիւն թարց երկիւ-
ղին ա̃յ զի՞նչ օգուտ է. արդարև՝
բարեգոյն է գեղջուկ խոնարհ, որ
ծառայէ ա̃յ. քան զփիլիսոփայ հը-
պարտ, որ զինքենէ անփոյթ եղեալ՝
զընթացս երկնից նկատէ: Որ բա-
րւոքն՝ ճանաչէ զինքն, խոտի յին-
քենէ՝ և ոչ հրճուի ՚ի գովութիւնս
1. Կորն. մարդկայնոց: Եթէ գիտիցեմ զա-
13. 2 մենայն ինչ՝ որ յաշխարհի է, և* ըզ-
սէր

սէր ոչ ունիցիմ. զի՞նչ օգուտ է ինձ առաջի Աստուծոյ, որ դատելոց է զիս 'ի գործոց:

2. Հանգիր 'ի սաստկագունէ ըղձէ գիտելոյ. զի 'ի նմա գտանին ցնդմունք մեծամեծք՝ և պատրանք: Գիտունքն՝ յօժարութ՜ կամին երևանիլ, և իմաստունք անուանիլ. Բազում ինչք գոն, որոց գիտութիւնքն՝ կամ սակաւ ինչ՝ կամ, բնաւին ոչինչ օգուտք են հոգւոյն: Եւ յոյժ անմիտ է այնպիսին, որ առաւել դիտէ առ այլ իրս, քան յայնս՝ որք իւրում հոգւոյն օգտակարք են: Բանից բազմութիւնք ոչ յագեցուցանեն զհոգին. այլ կեանք բարիք զովացուցանեն ըզմիտս. և խղճմտանք մաքուրք՝ տան մեզ զյոյս մեծ առ Ած:

3. Որքան առաւել՝ և բարեպէս՝ գիտես, այնքան ծանրագոյնս՝ անտի դատեսցիս, եթէ ոչ սրբութ՜ կեցցես: Մի՛ փքանար ուրեմն արհեստիւ՝ կամ գիտութ՜. այլ մանաւանդ երկիր՝ սակս շնորհեցելոյ քեզ ծանօթութեն: Եթէ թուեցի քեզ, թէ՛ զբազում ինչ գիտիցես, և բարեպէս՝ իմանայցես. սակայն գիտեա՛, զի գոն ևս բա

զում

զուամ ինչք՝ զորս անգիտանաս։ Մի՛ կամիր բարձրամտիլ՝ այլ մանաւանդ զտգիտութիւն քո խոստովանեաց։ Ընդէ՞ր կամիս զքեզ յառաջ արկանել՝ որովհետեւ գտանին բազումք քան զքեզ գիտունք, և հմտագոյնք յօրէնս։ Եթէ կամիս օգտակարապէս՝ գիտել զիր ինչ՝ և ուսանիլ. սիրեա՛ զո՛չ գիտիլն, և զոչ ինչ համարիլն։

4. Ահա այս է բարձրագունեղ՝ և օգտակարագունեղ ընթերցումն, որ՝ իւրոյ անձին ճշմարիտ ճանաչումն, և արհամարհումն. իւրոյ ինքեան ոչինչ համաթուեցումն, և զայլոց միշտ բարի, և վեհ զգացումն, մեծ իմաստութիւն է, և կատարելութիւն։ Եթէ տեսանիցես զոք յայտնապէս՝ 'ի մեղս, կամ թէ անկեալ 'ի ծանրագոյն իմն փորձութիւն, ոչ պարտիս զքեզ բարեգոյն քան զնա վարկել. զի ոչ գիտես, թէ՝ ո՛րքան ժամանակս տեւելոց իցես 'ի բարութեան։ ամենեքեան տկար եմք. բայց դու մի՛ համարիցես զոք տկարագոյն քան զքեզ։

Գլուխ Գ:

Յաղագս վարդապետութեանն ճշմարտութեան:

1. Երջանիկ է նա, որում ճշմարտութիւն ինքնին ուսուցանէ, ոչ ձեւակերպութեամբք՝ և ձայնիւք անցաւորօք, այլ ըստ որում ինքնին է: Կարծիք մերք՝ և զգայութիւնք, ցա՛նդ զմեզ պատրեն, և դոյն ինչ տեսանեն:
Զի՞նչ օգուտ է յաճախ խուզումն զերաց խրթնեաց՝ և զգաղտնեաց, յաղագս որոց ոչ յանդիմանիցիմք ՚ի դատաստանի, եթէ տըգէտք իցեմք: Մեծ իմն անխոհեմութիւն է, մինչ խոտունկանեմք զերօք օգտակարիւք՝ և հարկաւորօք, և յօժարապէս պարապիմք ՚ի վայելչալուրս, և ՚ի վնասակարս. ոմ թէ՝ զաչս ունիմք, և ոչ տեսանեմք:

2. Արդ՝ զի՞նչ փոյթ է մեզ զսեռից՝ և զտեսակաց. ընդ որում յաւիտենական բանն խօսի, նա ՚ի բազմաց տարակուսութեանց զերծանի: քանզի ՚ի բանէ միոյ ընաւն, և զմինն խօսի ընաւն. և այս է սկիզբն, որ և խօսի ընդ մեզ: Ո՛չ ոք թարց նմա կարէ իմանալ՝ և կամ ուղղապէս դա-

տել

տել: Առ որ ամենայնք մի են, և զընաւն քարշէ առ մին, և զամ 'ի միում տեսանէ. կարէ լինիլ հաստատուն սրտիւ, և առ Ած խաղաղարար յարամնալ: Ո՛վ ճշմարտութիւն Ած, միաւորեա զիս ընդ քեզ սիրով մշտնջենաւորիւ: Զի յար ձանձրացուցանեն զիս ըղ բազումս ընթեռնուլն, և լսելն 'ի քէն բնաւն՝ զոր ցանկամ, և փափաքիմ: Լռեսցեն վարդապետք համօրէն, կարկեսցին միանգամայն ստեղծուածք բնաւք առաջի քո. դու միայն խօսեաց ընդ իս:

3. Որքան ոք առաւել՝ յաւէտ ինքեան, և զլոտի ըստ ներքինոյ մարդոյն, այնքան զբազումս, և զնրբագոյնս թարց աշխատանաց իմանայ: քանզի 'ի վերուստ առնու զլոյս իմացողութեան: Մաքուր, պարզ և հաստատուն հոգի, 'ի հոգս բազումս ոչ տարացնդի. քանզի առնէ զընաւն 'ի փառս Այ, և ջանայ ներ յինքեան մերկանալ յամենեցունց որոնմանց յատկականաց: Ո՛վ է, որ զքեզ առաւել արգելու և տագնապէ, եթէ ոչ քոյոյ սրտին ախտակրութիւն անմեռ: Այր բարի և երկիւղած, զառնելիս իւր

նախ

նախ յինքեան կարգաւորէ, զորս արտաքս 'ի կիրարկանել մարթի։ Եւ ոչ քարշեն զնա առնելիքն 'ի ցանկութիւնս՝ և 'ի յօժարութիւնս մոլեկանս, այլ ինքն սանձահարէ զն̃ ըստ համաձայնութեան ուղիղ բանի։ Ո՞վ է՝ որ քաջապէս պատերազմի, եթէ ոչ որ ջանայ զինքն յաղթահարել։ Վ̃ որոյ պիտոյ է, զի այս լինիցի մեր փոյթ, մի՝ յաղթահարել զանձն իւր, և օրըստօրէ լինել զօրեղագոյն քան զինքն՝ և առ բարեգոյն ինչ յառաջանալ։

4. Այս կատարելութիւն այսրիկ կենցաղոյս, զանկատարութիւն ինչ ինքեան առակցեցեալ ունի. և ամ̃ տեսողութիւն մեր, 'ի միգէ յիմեքէ ոչ զերծանի։ Զինքենէ գիտութիւն խոնարհ, ապահովագոյն շաւիղ է առ Ած, քան զխորին խուզումն գիտութեանց։ Ո՛չ է խոտելի գիտութիւն, կամ իւրաքանչիւրոյ իրի զուտ ծանօթութիւն, որ բարի է ըստ ինքեան նկատեցեալ, և յԱյ կարգաւորեցեալ· բայց՝ նախամեծարելիք են միշտ՝ խղճմտանք բարիք, և կեանք առաքինականք։ Եւ քանզի բազումք առաւել ջանան ուսանիլ,

քան

քան բարեպէս՝ կեալ. վասն որոյ՝
բազմիցս մոլորին, և թերևս զոչինչ՝
կամ զդոյն ինչ պտուղ առնեն։
Օ՛չ թէ՝ զայնքանս զգուշութիս
'ի կիրարկանէաք, առ 'ի յառաջել
զմոլորութիւնս, և 'ի տնկել զառա
քինութիւնս, զորքանս 'ի կիրար
կանելս 'ի հետազօտումն միոյ խնդ
րոյ փիլիսոփայականի, ոչ լինէին
այնքան չարութիւնք՝ և գայթակ
ղութիւնք 'ի ժողովրդեան, և ոչ տա
րաձայնութիւնք 'ի միաբանս։
Ի րաւի՝ ասեմ, յաւուր դատաստա.
նին՝ ոչ խնդրի 'ի մէնջ թէ զի՞նչ
ընթերցաք, այլ թէ՝ զի՞նչ արա
րաք. ոչ թէ բարեպէս՝ խօսեցաք,
այլ թէ որպիսեաւ բարեկրօնու
թեամբ կեցաք։ Ա՛սա ինձ ու՞ր
են նարդեանս տեարքն այնոքիկ՝
և վարդապետք, զորս ծանեար
մինչ կենդանիքն էին, և ուսմամբք
ծաղկէին։ Որոց այժմ զընձե
ռոճածս այլք վայելեն, և ոչ գի
տեմ թէ արդեօք խորհիցին զնո
ցունց։ 'Ի կեանս իւրեանց գոլ
ինչ համարէին, բայց այժմ լռու
թիւն է վասն նոցա։

6. Ո՛հ թէ որպէս վաղվաղակի՝
անցանեն փառք աշխարհի, երանի
թէ

թէ կեանն նոցին համեմատիւք
գիտութեանց նոցին, քանզի յայն
ժամ բարեպէս՝ ուսանէին և ըն
թեռնուին: Որքան անձինք կոր
ընչին մնոտեաւ գիտութբ աշխար
հիս այսորիկ, որք ունին զսակաւ
ինչ՝ փոյթ զծառայութենէն այ:
Վզի առաւել ընտրեն զմեծու
թիւն, քան զխոնարհութի. ուս
տի նանրանան 'ի խորհուրդս իւ
րեանց: Ճշմարտապէս մեծ է
այն, որ ունի զմեծ սէր:
Եւ ճշմարտապէս՝ մեծ է այն, որ
յինքեան փոքր է: Ճշմարտապէս՝
խոհեմ է այն, որ զմն ինչ կենցա
ղոյս, իբրև զկղկղանս համարէ, որ
պէսզի * զՔս շահեսցի: Իսկ ճշմա Փիլ.
րիտ գիտուն է այն, որ առնէ զ 3. 8.
կամս այ, և զկամս իւրս 'ի բաց
թողու:

Գլուխ Դ:

Յաղագս նախատեսութեան, և խոհեմութեան 'ի յառնելիս:

1 ՈՉ ամենեցունց բանից հաւ
ատալ պարտիմք, և ոչ ներ
դրդմանց բնականաց· այլ զգու
շութբ, և երկայնմտութբ զամե
նայն

նայն ինչ ըստ իմ կշռել: Բայց ոհ ցաւոյս, զի բազմիցս դիւրաւ չար ինչ, քան թէ՝ բարի ինչ զայլոց ասի, և հաւատացեալ լինի. անա այսպէս՝ տկարք եմք: Բայց արք կատարեալք ամենեցուն ճառողաց դիւրաւ ոչ հաւատան. քանզի զի գիտեն զտկարութիւն մարդկային, զհակամէտ նորին 'ի չարն, և ընթահոսումն նորին 'ի բանս:

2 Մեծ իմաստութիւն է՝ ոչ ընտապիլն 'ի յանձնելիս, և ոչ մնալն կամակորութե 'ի կարծիս իւրս յատուկս: Առ այս և պատշաճի, ոչ հաւատալն ամենայն ասացելոց ամենեցուն մարդկան. և ոչ ներհեղուլն փութով յականջս այլոց, զայն զոր լուեալն, և զոր հաւատացն: Ընդ առն իմաստնոյ՝ և երկիւղածի խորհրդակցիր. և խնդրեա՛ մանաւանդ 'ի բարեգունից ներկրթիլ, քան թէ՝ հետևիլ քոյոց հանճարոց: Կեանք բարիք՝ առնեն զմարդ իմաստուն ըստ այ, և խելամուտ 'ի յիրս բազումս: Որքան ոք խոնարհագոյն է յինքեան, և հնազանդագոյն այ, այնքան յամենայնում է իմաստնագոյն, և խաղաղագոյն:

Գլուխ

Գլուխ Ե.

Յաղագս ընթերցման գրոց սրբոց:

1 Ճ՛շմարտութիւնն է խնդրելի 'ի գիրս սուրբս, և ո՛չ գեղեցկութիւն բանից: Այնու հոգւով ընթեռնուլ պարտի ամենայն գիրք սբ, որով և է արտագրեցաւ: Մանաւանդ խնդրել պարտիմք զօգտութիւն 'ի գիրս սբս, քան թէ՝ զնրբութիւն բանից: Այնու յօժարութբ ընթեռնուլ պարտիմք զգիրս հոգեորս, և զպարզաբանս, որով զնրբահայեցս, և զխորինս: Մի՛ գայթակղեցուսցանիցէ զքեզ հեղինակութիւն շարադրողին, թէ զչատ կամ զսակաւ տեղեկութիւն գրոց ունիցի, այլ զուտ սէր ճշմարտութեն, առքարշեսցէ զքեզ 'ի յընթերցումն· Մի՛ խնդրիցես, թէ յորմէ իցէ ասացեալ՝ այլ լուր, թէ զի՛նչ ասիցէ:

2. Անցանեն ամէք կենաց մարդկան, իսկ* ճշմարտութիւն տն մնայ յաւիտեան: Սաղմ 116. 2
Օրինակօք բազմօք, թարց աչառութե խօսի ընդ մեզ Ած: Հետաքննութիւն մեր արգելու զմեզ բազմիցս 'ի յընթերցման գրոց սրբոց· քանզի կա-

միմք

մինչ իմանալ, և առարկել՝ ուր
անցանել պարտիմք պարզապէս։
Թէ կամիս գշահ ինչ գտանել, ըն
թերցիր խոնարհաբար, պարզա
բար, և հաւատարմաբար, և մի կա
միր բնաւ ունել զանուն գիտնոյ։
Հարց հեզաբար, և ունկնդիր լեր սրբոց
լռութեամբ։ Մի անհաճոյք թուի
ցին քեզ առակք ծերոց, զի թարց
պատճառի ոչ են առացեալք։

Գլուխ Զ։

Յաղագս անկարգելից ըղձմանց։

1 Որ քանիցս ոք յիր ինչ ան
կարգապէս՝ առձկոտի, այն
քանիցս յինքեան անհանգիստ լի
նի։ Գոռոզք, և ագահք ոչ եր
բէք հանգչին. աղքատք, և խո
նարհք հոգւով նաւատուռմ՝ շրջին
խաղաղութեն։ Այր՝ որ ոչ է տա
կաւին մեռեալ յինքեան, դիւրաւ
փորձի, և յաղթի ՚ի յիրս փոքունս,
և յունայնս։ Տկարն հոգւով, և
կերպիւ իւիք դեռևս մարմնաւորն,
և առ զգալիս հակամիտողն, դժուա
րաւ կարէ զինքն յարտաքարշել
բոլորովին ՚ի յերկրայնոց ըղձից.
ուստի ցանգ ՚ի տրտմութեան կայ՝

մինչ հրաժարի. դիւրաւ եւս անդի տայ վշտագնութեան, եթէ՝ ոք նմա ընդդիմանայցէ:

2. Իսկ եթէ հաւանիցի այնմ, որում ցանկայ, իսկոյն յաղագս պարտաւորութեան խղճին ծանրանայ. քանզի՝ հետեւեցաւ իւրոցն կրից, որք ոչ պատճառեն նմա զխաղաղութիւնն զայն, զոր խնդրեաց: Ուստի պատերազմելով ընդ իւրոցն կրից, գտանէ զճշմարիտ խաղաղութիւն սրտի, այլ ոչ ծառայելով նոցին: Ուրեմն ոչ է խաղաղութիւն 'ի սրտի առն մարմնասիրի, և ոչ առն զգալեաց հետեւողի՝ այլ միայն ըն սրտի առն բարեպաշտի, և հոգեւորի:

Գլուխ: Է

Յաղագս ունայնի յուսոյ, և խորշելոյ ի հպարտութենէ:

1 Ունայն է այրն այն, որ ըզյոյս իւր դնէ 'ի մարդիկ՝ կամ, 'ի ստեղծուածս: Մի ամօթ թուիցի քեզ ծառայելն այլոց 'ի սէրն Յի Քի, կամ երեւիլն իբրև զաղքատ յայսմիկ աշխարհի: Մի ապաւինիր յանձն քո, այլ կայ

ացն զայս քո առ Ած ։ Աւրան զոր ինչ 'ի քեզ է, և Ած օգնական եղիցի քում բարեհաճութե ։ Մի յուսար 'ի գիտութիւնս քոյս, և մի 'ի խորամանկութիւնս այլոց կենդանեաց, այլ մանաւանդ յուսա 'ի շնորհս նյ, որ օգնական լինի հեզոց և խոնարհեցուցանէ զամբարտաւանս ։

2 • Մի պարծիր 'ի յինչս, եթէ ունիցիս • և մի 'ի բարեկամս, թէ հզօրք իցեն • այլ պարծիր յԱծ, որ զամենայն շնորհէ, և 'ի վերայ ամենայն զանձն իւր տալ կամի ։ Մի մեծանայցես թէ մեծ իցես, կամ թէ զգեղեցկութիւն մարմնոյ ունիցիս, որ դոյնիւ իմիք տկարութե ապականի, և ժահահոտի ։ Մի տայցես զտեղի ինքնահաւանութեան, թէ ուշիմ իցես՝ կամ մտացի, մի գուցէ լինիս անհաճոյ նյ • որոյ է ընդունելութիւն զոր ունիս բնականաբար ։

3 • Մի կարծիցես զքեզ բարեգոյն քան զայլս, մի գուցէ առաջի նյ խոտան լինիցիս, որ գիտէ թէ զինչ գոյ ընդ մարդում ։ Մի հպարտանայցես վս բարեաց գործոց, զի այլ է դատաստանն նյ, և այլ է մարդկան • որում բազմիցս որք հա

ճելիքն են մարդկան, անհաճոյք
լինին։ Եթէ ունիս դու զբարի
գործ ինչ, հաւատամ թէ այլք զբա
րեգոյնս ունիցին, զի զխոնարհութի
պահիցես։ Ո՛չ ինչ է վնաս, թէ
ամենեցուն դու զիջանիցես. բայց
վնաս մեծ է թէ 'ի վերայ միոյ հը
պարտանայցես։ Ուստի յար խա
ղաղութիւն մնայ 'ի խոնարհս. իսկ
նախանձ, և վրդով յաճախ 'ի
սիրտս հպարտաց։

Գլուխ Է։

Յաղագս զգուշանալոյ 'ի յաճախելէ ընտանէկութենէ։

1. Մի՛ * ամենայնի մարդոյ Եկլէ
յայտներ զսիրտ քո, այլ 8 · 22
ընդ իմաստնոյ և երկիւղա
ծի յայ արա զբան քո։ Մի՛ լի
նիր յաճախ ընդ մանկունս, և ընդ
օտարս, և մի՛ ընդ արս աշխարհականս
շողոքորթական ցիր. մի՛ եւս առաջի
մեծամեծաց յաճախ երևիր. ընդ
խոնարհաց, և ընդ միամտաց, ընդ
առաքինեաց և ընդ բարեկրօնից՝
լեր ընկերակից. և որք շինութեն
առիթք են զայնցանէ յարաձեւ
նեա։ Մի՛ լինիր ընտանեկից ընդ

ու

ումեք կնոջ, այլ առ հասարակ ըզ-
բնաւս բարիս կանայս յանձնեա՛
Աստուծոյ: Ցանկա՛ զի լինիցիս
ընտանեկից միայնում ա՛յ, և հրեշ-
տակաց նորին, և զծանօթութիւն
մարդկան 'ի քէն տարհերքեա՛:

2. Թէպէտ պարտ է մեզ զսէր
ունիլ առ ամենեսեան, բայց զըն-
տանեկցութիւն ունիլն առ ամե-
նեսեան ո՛չ վայելուչ է: Պատահի
երբեմն, զի անծանօթք ոմանք՝
համբաւովք բարիւք լուսաւորին.
բայց ներկայութիւնք նոցին զաչս
դիտողաց մրթացուցանեն:
Համարիմք երբեմն թէ ընկերակ-
ցութ՟բ մերով հաճոյանամք այլոց,
բայց սկսանիմք անհաճոյք լինիլ,
յաղագս անկատարութեան բա-
րուցն՝ 'ի մեզ նկատեցելոց:

Գլուխ Թ:

Յաղագս հնազանդութեան, և հպատակութեան:

1. Մեծ է յոյժ կալն 'ի հը-
նազանդութեան, ապ-
րիլն 'ի ներքոյ հրամանաց առաջ-
նորդին, և ո՛չ գոլն ըստ հաճոյից
իւրոց: Առաւել յանդորրագոյն
է

է կալն 'ի հպատակութեան, քան յառաջնորդութեան: Բազումք մանաւանդ կան 'ի հարկէ 'ի հնազանդութեան, քան թէ 'ի սիրոյ. և այնպիսիք նեղասրտին, և յարաժամ տրտնջեն, և զազատութիւն մտաց ոչ գտանեն, եթէ ոչ բոլորիւ սրտիւ վն այ հպատակիցին: Ընթացիր այսր՝ և անդր. ոչ ուրեք գտանիցես զհանգստութիւն, եթէ ոչ ընխոնարհում հպատակութեան, որ է 'ի ներքոյ կառավարութեան առաջնորդին: Զբազումս պատրեաց խոկումն զտեղեաց զանազանից, և զփոփոխմանէ:

2. Սոյն է, զի իւրաքանչիւրոք դիւրապէս՝ հետևի իւրոյն կարծեաց. և առաւել միտէ առ այնոսիկ, որք նոյնպէս՝ կարծեն. բայց՝ եթէ ԱԾ է 'ի միջի մերում, պարտիմք թողուլ երբեմն զմեր կարծիս՝ վն բարւոյ խաղաղութեան: Ո՛չ ոք է այնքան իմաստուն, որ լրապէս՝ կարիցէ գիտել զամ. վասն որոյ՝ մի յոյժ հաճանիցիս քոյոցն կարծեաց. այլ լուր ևս դիւրապէս՝ զկարծիս այլոց: Եթէ՝ բարիքէն քոյք կարծիք, վասն այ 'ի

բայց

բաց թողուս զնոսա, և հետևիս այլոց, առաւել անտանելոյ շահես ցիս ։

3 ․ Քանզի լռեայ բազմիցս, ապա հաւագոյն է լսելն, և հարցանելն զխորհուրդ իմն յայլոց, քան զնոյնն տալն ։ Կարէ ևս պատահիլ զի բարի իցեն կարծիք իւրաքանչիւրոյ ։ Բայց ոչ կամիլն այլոց հաւանիլ, մինչ զայն պահանջէ հանճարն, կամ բանն, նշան է հպարտութեան և խստասրտութեան ։

Գլուխ Ժ ։

Յաղագս զգուշանալոյ յաւելորդս բանութենէ ։

1 ․ Ոգւոյ լեր 'ի յաղմկէ մարդկան որքան և կարես, զի յոյժ արգելուն զմեզ ըն ձեռութիւնք աշխարհայնոց իրակութեանց, թէև՝ սակաւ դիտաւորութբ արտաբերիցին ։ Քանզի՝ դիւրաւ գերիմք ունայնութբք, և վատթարանամք ։ Երանի թէ՝ բազմիցս լռեալէի, և 'ի մէջ մարդկան ոչ եղեալէի ։ Ո՞րդ ընդէր այնքանիւ յօժարութբ խօսիլ կամիմք ընդ միմեանս, և առակաբանել

նել, որովհետև հազիւ երբեք թարց բծաւորելոյ զխղճմտանս դառնամք 'ի լռութիւն. զի խօսակցելով ընդ մարդկանս զմխիթարութիւն ինչ 'ի մարդկանց խնդրեմք. և զսիրտս զանազանիւք խոկմամբք ձանձրացեալս՝ սփոփել կամիմք: Եւ այնքան յօժարութբ զայնցանէ իրաց խօսիլ կամիմք, որքան սիրեմք զնոյնս, և ըղձամք, և կամ, զայնցանէ իրաց խօսիմք, և խորհիմք, զորս մեզ հակառակս վարկանիմք:

2. Բայց՝ վա՜յ ցաւոյս, զի բազմիցս՝ ընդվայր՝ և 'ի զուր՝ խօսիմք, քանզի արտաքին մխիթարութիւնս այս, ներքնայնոյն, և Ածայնոյն մխիթարութեան, ոչ զսակաւս առբերէ տուժանս. ուստի հսկել պարտիմք միշտ՝ և աղօթել, զի մի՛ ժամանակ մեր դատարկութբ անցանիցէ: Եթէ պիտոյ իցէ խօսիլ ինչ, խօսեաց զշինութենէ: Սովորութիւն չար, և զանցառութիւն մերոյ օգտի, բազմիցս տուիթք լինին անսպահպանութեան բերանոյ մերոյ: Բայց իրաց հոգևորաց յառաջ բերութիւնք առաքինականք՝ ոչ սակաւ օգնեն հոգևորականի

օգ-

օգտի. մանաւանդ ուր հանդէսք հոգւով, և միօք ընդ միմեանս Աստուծով միաբանին:

Գլուխ Ժ:

Յաղագս ստանալոյ զխաղաղութիւն, և զեռանդն նախանձ:

1. Բազում խաղաղութեն ստանալ մարթէաք, եթէ ոչ զբաղէաք 'ի բանս, և 'ի գործս այլոց, այլև՝ յայնս, որք ոչ պատշաճին մեզ: Ո՛րպէս կարէ որ զժամանակ ինչ տևել 'ի խաղաղութեան, եթէ 'ի հոգս օտարաց զինքն ներմուծանէ, զպատճառս արտաքինս խնդրէ, և ներքսայէս՝ դոյն ինչ, կամ հազիւ երբէք զինքն ժողովէ: Երանի այնոցիկ, որք միամիտքն են, զի ունին զբազում խաղաղութին:

2. Ընդէ՞ր ոմանք 'ի սրբոց այնքան կատարեալք՝ և այնքան ծծանկատք եղեն, վ՟ն զի՝ ընաւէին զինքեանս մեռուցանել ջանացին 'ի համայնից երկրայնոց ըղձից, ուստի ուղղիւ սրտիւ յԱծ յենեալք՝ 'ի հոգս իւրեանց կարացին պարապիլ: Մեք զբաղիմք յոյժ 'ի կիրս

յա

յատուկս, և յաղագս անցականաց սատուխ՝ վրդովիմք: Հազիւ եւ՛ զախտ իմն կատարելապէս՝ յաղթեմք, և առ հանապազորդականն յառաջադիմութիւն ոչ փութամք. վասն որոյ՝ միամք ցրտացեալք՝ և զաղջացեալք:

3. Եթէ էաք կատարելապէս մեռեալք, և ոչ ինչ ներքսապէս՝ ադմկեցեալք, կարէաք զա͞ծայինս իմանալ, և երկնայնոց ինչ համանկատմամբք ներհմտանալ: Առաւելագոյն՝ և մեծագոյն արգելումն մեր այն է, զի ոչ եմք 'ի կրից, և 'ի ցանկութեանց ազատք. և ոչ 'ի կատարեալ շաւիղս սրբոց ջանամք մտանել: Վ͞ն որոյ՝ թէև սակաւ ինչ պատերազմ հանդիպեսցի մեզ, իսկոյն ստորանկանիմք, և դառնամք 'ի մխիթարութիւնս մարդկայինս:

4. Թէ ջանայաք, իբրև զարս հզօրս՝ 'ի պատերազմի կալ, արդարև Տ͞ն զօգնութիւն 'ի յերկնից 'ի վերայ մեր տեսանէաք: Զի նա պատրաստ է օգնել այնոցիկ, որք պատերազմին, և որք յուսան 'ի շնորհս ն͞ր. Նատի զհնար պատերազմելոյ մեզ նախահոգայ, զի կա

ընկցուք յաղթել: Եթէ միայն 'ի յարտաքին զգուշութիւն հիմնեաք զառաջադիմութիւն մերոյ կրօնաւորութեան, վաղուրեմն առաքինութիւն մեր առեալէր զվախճան: Բայց զառաւպարն առ արմին դիցուք, զի մաքրեցեալք 'ի կրից՝ զխաղաղականս ստանայցեմք միտս:

5. Եթէ յիւրաքանչիւրում ամի զմին 'ի մերոց վասթարութեանց արմատխլէաք, դիւրաւ լինէաք արք կատարեալք: Բայց այժմ զհակառակն մանաւանդ զգամք, քանզի բարեդոյնս՝ և մաքրագոյնս ըզմեզ լեալ գոլ գտանեմք յառաջ քան զդարձումն մեր առ ած, քան թէ՝ յետ ամաց բազմաց զկնի դարձմանն: Ջերմեռանդութիւն մեր՝ և յառաջադիմութիւն, որ ըստ օրէ պարտէր յաճախել՝ իսկ այժմ, մեծ համարիմք զայն, որ ունի զմասն նախկնոյ ջերմեռանդութեան: Եթէ՝ 'ի սկզբան դարձմանն մերոյ սակաւ ինչ ջանիւք աշխատեալ քէաք, այժմ զամ ինչ կարէաք առնել դիւրութեամբ, և խընդութեամբ:

6. Ծանր է 'ի բաց ձգել զսովորութիւնս, սակայն ծանրագոյն է՝

առ

առնելն ընդդէմ կամաց մերոց առանձնականաց։ Ուստի՛ թէ ոչ յաղթահարեցես զփոքրագոյնս, և զթեթևագոյնս, ոպ՝ յաղթահարեցես զդժուարագոյնս. ընդդէմ կաց 'ի յսկզբանն քոյոց յօժարութեանց, և խորշեաց 'ի սովորութեանց չարաց, մի գուցէ սակաւ առ սակաւ 'ի մեծագոյնս առածիցէ զքեզ դժուարութիւն։ Վա՜հ թէ զգայիր՝ թէ զորքան քեզ զխաղաղութիւն, և այլոց զխնդութիւն առնէիր քոյովք կենօք բարեօք, կարծեմ թէ՝ դիւրապէս՝ պարապէիր 'ի հոգեկանս յառաջադիմութիւնս։

Գլուխ ԺԲ։

Յաղագս օգտի ընդդիմամարտութեան։

1. Բարի է մեզ՝ թէ ունիցիմք երբեմն զծանրութիւնս ոմանս, և զընդդիմամարտութիւնս. զի բազմիցս նորօք արխանամք, մինչ տեսանեմք զմեզ 'ի յաքսորինս, և զյոյսն մեր ոչ դնեմք 'ի յերս աշխարհականս։ Բարի է մեզ՝ և թէ երբեմն կրիցեմք զպատերազմունս, և եթէ զչար ինչ, և զան

կա

կատարութիւն ինչ զգայցեն ըղձնջ, թէև՝ զբարիս գործիցեմք, և զբարիս խորհիցիմք: Այսուքիկ բազմիցս պատճառեն մեզ զխոնարհութիւն, և յունայնից փառաց զմեզ զերծուցանեն: Քանզի յայն ժամ բարեպէս՝ խնդրեմք զա̃ծ, որ է ներքին մեր վկայ, յորժամ արտաքուստ՝ մարդիկ զմեզ առ ոչ ինչ համարին, և բարեպէս՝ ոչ հաւատան մեզ:

2. Վա̃ որոյ այնպէս՝ մարդ պարտի յենուլ յա̃ծ, զի մի հարկաւորիցի խնդրել յաճախապէս՝ զմխիթարութիւնս մարդկայինս:
Յորժամ այր ոք բարւոյ յօժարութեան վշտագնի՝ կամ փորձի, և կամ վատիւք խոկմամբք նեղանի, յայնժամ զա̃ծ իւքեան առաւել հարկաւոր իմանայ, և հաւաստայ թէ՝ թարց նմա ոչ ոք գործ բարի գոլ կարէ: Յայնժամ և՝ տխրի, հեծէ, և աղօթէ սակս թշուառութեացն, զորս կրէ: Յայնժամ ձանձրանայ յերկարապէս՝ կեալյն, և ըղձայ տեսանել զմահ. զի լուծեցեալ՝ ի մարմնոյն՝ լիցի ընդ Ք̃ի. Յայնժամ և՝ բարեպէս աղգայ թէ՝ կատարեալ աներկեանութիւնն.

թիւնն, և լուացեալ խաղաղու-
թիւնն յաշխարհի աստ կայանալ
ոչ կարէ։

Գլուխ Ժզ։

Յաղագս ընդդիմանալոյ փորձութեանց։

1. Որքան կեամք յաշխարհի
աստ, թարց վշտի, և փոր-
ձութեան զոլ ոչ կարեմք։ Ուստի
ասէ Յոբ. «Փորձութիւն է կեանք Յոբ
մարդոյ 'ի վերայ երկրի։ Վա որոյ 7. 1
իւրաքանչիւրոք 'ի մէնջ հոգալ
պարտի սակս իւրոցն փորձութեանց,
և հսկել յաղօթս. զի մի գտանի-
ցէ սատանայ զտեղի պատրելոյ.
որ ոչ երբէք ննջէ, այլ* շրջի խնդ- 1 Պետ
րելով թէ զո՞ կլանիցէ։ Ոչ ոք է 5. 8
այնքան կատարեալ, և այնքան
սուրբ, որ ոչ ունիցի երբեմն զփոր-
ձութիւնս. բոլորովին 'ի փորձու-
թեանց զգուշանալ ոչ կարեմք։

2. Բայց երբեմն փորձութիւնք
յոյժ օգտակարք են մարդկան,
թէև՝ վշտագնիցք իցեն՝ և ծա-
նունք. քանզի մարդ 'ի փորձու-
թիւնս խոնարհի, մաքրի՝ և հմտանայ։
Ամենեքեան *նեղութեամբ՝ և Գործ
փորձութեամբ կեցին՝ և օգտեցան։ 14. 21
Իսկ

իսկ՝ որք ոչ կարացին տանել փորձութեանց՝ խոտեցան, և նուաղեցան: Ո՛չ ուրեք գտանի կրօն ինչ այնքան սո՛, և ոչ տեղի ինչ այնքան առանձին, ուր ոչ լիցեն փորձութիւնք՝ կամ պատերազմունք:

3. Ո՛չ կարէ մարդ բնաւին հանգարտել 'ի փորձութեանց 'ի կեանս իւրս. զի 'ի մեզէ առիթն՝ որով փորձիմք, յորմէ հետէ ծնաք 'ի ցանկութեան. մինչ հեռանայ միոյն, 'ի վերայ գայ միւսն. և միշտ ունիմք զփորձութիւն իմն առ 'ի կըրել, քանզի՝ զբարին երջանկութեան մերոյ կորուսաք: Բազումք կամին փախչել 'ի փորձութեանց, բայց առաւել անկանին 'ի նոսա. ոչ կարեմք յաղթել՝ նոցին փախստեամբ միայնով, այլ համբերութե՛ և խոնարհութե՛. քան զբնաւ մեր թշնամիս լինիմք հզօրագոյնք:

4. Որ արտաքսապէս՝ միայն խոտորի 'ի փորձութեանց, և ոչ արտախլէ զարմատս նոցին, սակաւ ինչ օգտի, զի փութանակի՝ դառնան առ նա փորձութիւնքն,* և զգայ զնո
Մտթ 12. 45 չարագոյնս քան զառաջինն:
Սակաւ առ սակաւ համբերութե՛, և օգնութեամբն այ գիւրագոյնս

պէս

պէս յաղթիցես, քան թէ՝ խստու
թե̃, և փոքրահոգութբ քոյով:
Բազմիցս խնդրեա՛ զխորհուրդ 'ի
փորձութն քում, և ընդ փորձեցե
լոց մի վարիր խստութեամբ, այլ
մխիթարեա՛ զնա̃, որպ̃ * և դու կա Ղու
միս՝ թէ այլք քեզ առնիցեն: 6. 31
5. Սկիզբն ամենեցունց չարաց
փորձութեանց, է անկայութիւն
մտաց՝ և պակասութն յուսոյն առ
Ած, զի որպէս նաւ առանց ղեկի,
աստուստ՝ և անտուստ 'ի ծփանաց
բախի, այսպէս այր անարի, և զխո
րոց իրաց զփոյթ ոչ ունողն՝ զանա
զանապէս՝ փորձի: Հուր փորձէ
զերկաթ, և փորձութիւն զայր ար
դար: Բազմիցս ոչ գիտեմք՝ թէ
զինչ կարեմք, բայց փորձութին
ցուցանէ մեզ՝ թէ զինչ եմք մեք:
Սակայն զգուշանալ պարտիմք;
մանաւանդ 'ի յսկզբան փորձու
թե. զի յայնժամ դիւրապէս յաղ
թի թշնամին, յորժամ ոչ իմէք է
զանակաւ թոյլ տամք նմա մտա
նել ընդ դուռն մտաց, այլ վաղվա
ղակի ընդդէմ ելանեմք նմա մինչ
բախէ կալով արտաքոյ սեման:
Ուստի ասաց ոմն.
Յ'սկզբանն ընդդիմամարտեաց, զի անա

դան

գա՛ն ողջախոհ պարապաթին ։
Քանզի նախ հանդիպի մեզ սոսկ
մտածութեն, ապա սաստիկ երևա
կայութեն, յետոյ հեշտութիւն՝ և
մախիզ շարժումն, և հաւանումն.
և այսպէս՝ սակաւ առ սակաւ ներ
մտանէ թշնամին վտանգաւոր բոլո
րովին, մինչ ոչ ընդդիմանամք
նմա 'ի սկզբանն ։ Եւ որքան յա
ւանայ ոք 'ի պատերազմելոյ, այն
քան օր ըստ օրէ յինքեան տկարա
գոյն լինի՝ և թշնամին հակառա
կօղ հզօրագոյն ։

6. Ոմանք 'ի սկզբան դարձ
մանն իւրեանց զծանրագոյնս կրեն
փորձութիւնս, և ոմանք 'ի վախճա
նի. ոմանք 'ի կեանս իւրեանց բո
լորս չարապէս՝ կեան, և ոմանք
թեթևապէս, և այս՝ ըստ ածայ
նոյն կարգաւորութեան իմաստու
թեանն, և արդարութեանն, որ
զաստիճանս՝ և զմրգիւնս մարդ
կան կշռէ, և զբնաւս 'ի կեցու
թիւն ընտրեցելոց իւրոց նախայօ
քինէ ։

7. Վճ այնորիկ ոչ պարտիմք յու
սահատիլ՝ մինչ փորձիմք, այլ մա
նաւանդ ջերմեռանդապէս՝ աղեր
սել զնա, զի նա յանմուշ վշտի ար
ժա

ժամի առնէ զմեզ՝ օգնել մեզ. որ
և՝ որպէս ասէ առաքեալն՝ տայ
ընդ * փորձութեան և զելս, զի 1 Կորն
կարիցուք տանել: Խոնարհեցուս 10. 13
ցուք ուրեմն զմեր միտս 'ի ներքոյ
ձեռին Տն՝ յամենայնում փորձու
թեան՝ և նեղութեան. զի նա * զխո Սաղմ
նարհս հոգւով՝ կեցուցանէ, և 33. 19
բարձրացուցանէ:

8. 'Ի փորձութիւնս, և 'ի տառապանս երևի որ՝ թէ որքան օգտեցաւ, և անդ արդիւնք մեր մեծագոյնք արտակայանան՝ և առաքինութիւնք բացայայտին: Եւ ոչ է մեծ ինչ՝ թէ ոք առաքինի իցէ, և ջերմեռանդ՝ եթէ ոչ զգայցէ զծանրութիւն ինչ. բայց թէ 'ի ժամանակի փորձութեան, համբերութի՜ւ տևիցէ՝ անդ յոյս է մեծի օգտութե՜: Ոմանք պահեն զինքեանս 'ի փորձութեանց մեծաց, բայց 'ի փոքունց հանապազորդականաց բազմիցս յաղթին. զի խոնարհեցեալք՝ մի երբեք 'ի մեծամեծս փորձութիւնս ապաւինիցին յինքեանս, որք այնքան 'ի փոքրագոյնս տկարանան:

Գը

Գլուխ ԺԴ։

Յաղագս մերժելոյ զանդգնաբար դատաստանս։

1. Դարձո՛ զաչս քոյս 'ի քեզ՝ և զգուշացիր 'ի դատելոյ զգործս այլոց։ Մինչ դատէ ոք զայլս՝ 'ի զուր աշխատի, բազմիցս սխալի՝ և դիւրապէս մեղանչէ. եթէ զինքն դատէ՝ և յանդիմանէ, միշտ արդիւնաւորապէս աշխատի։ Որպէս իրք ըստ մերոց սրտից են՝ այնպէս յաճախ դատեմք. զի զճշմարիտ դատումն, սակս առանձնոյ սիրոյն դիւրապէս կորուսանեմք։ Եթէ Աստուած էր միշտ պարզ դիտումն մերոյ ըղձի, ոչ այնքան դիւրաւ վրդովէաք 'ի յընդդիմանալն զգայութեաց մերոց։

2. Բայց բազմիցս ծածկի ինչ 'ի ներքոյ՝ և կամ երևի արտաքոյ, որ զմեզ ևս նմանապէս՝ առպատրէ։ Բազումք ծածկապէս զփառս իւրեանց խնդրեն 'ի յիրս, զորս առնեն՝ և ոչ իմանան։ Եւ երևին կալ 'ի բարւոյ խաղաղութեան, մինչ իրքն ըստ հաճոյից, և ըստ զգայութեաց իւրեանց լինին. բայց եթէ այլապէս՝ հանդիպիցին՝ քան

թէ

թէ ըղձանն, խոկոյն այլագունին՝ և աղմկին: Վ՟ս զանազանութեան գիտաւորութեանց՝ և կարծեաց, յաճախապէս՝ ծնանին խռովութիւք 'ի մէջ սիրելեաց, և քաղաքակցաց, 'ի մէջ կրօնաւորաց՝ և առաքինեաց:

3. Սովորութին հնացեալ դժուարապէս՝ թողանի, և անդր քան զտեսութիւն սեփական՝ ոչ ոք յօժարապէս ածի: Եթէ յընտրութի քո՝ և 'ի հանճար առաւել յենուցուս, քան թէ՝ յառաքինութիւն հնազանդական Տն մերոյ Յիսուսի Քի, հազիւ՝ և յամր լուսաւորիցիս. քանզի կամի ած, զի կատարելապէս՝ ինքեան հընազանդիցիմք, և զբնաւ ընտրութիւնս ջերմութ սիրոյն գերազանցիցեմք:

Գլուխ Ժե:

Յաղագս գործոց 'ի սիրոյ եղելոց:

1. ՅԱղագս ոչնչի՛ իրի աշխարհային՝ և յաղագս ոչ ումուք մարդկայնոյ սիրոյ, զչար ինչ առնելպարտ է. բայց յաղագս օգտակարութեան կարօտելոյն՝

զգործ ինչ բարի երբեմն ազատա
բար գործելն, և կամ զբարին 'ի
բարեգոյն ինչ փոխարկելն՝ վայե
լուչ է: Քանզի զայս առնելով ոչ
խանգարեմք զգործն բարի, այլ 'ի
բարեգոյնն զնա փոխարկեմք:
Եւ թէ արտաքին գործն բարի իցէ
թարց սիրոյ, ոչ ինչ օգուտ է. իսկ
որ ինչ 'ի սիրոյ գործի, թէպէտ և
սակաւ ինչ իցէ, կամ առ ոչ ինչ
վարկանելի՝ ամենևիմբ արդիւնա
որ է: Վ̃ա զի ԱԾ առաւել համա
րի զեղեալն 'ի սիրոյ, քան ըզ
գործն եղեալ:

2. Զբազում ինչ գործէ, որ
յոյժ սիրէ. զբազում ինչ գործէ,
որ բարեպէս՝ գործէ. և բարե
պէս՝ գործէ, որ առաւել հասարա
կութեան՝ քանթէ կամաց իւրոց
ծառայէ: Բազմիցս թուի՝ թէ
եղեալն է սիրելութիւն, բայց մա
նաւանդ է մարմնաւորութիւն. զի յօ
ժարութիւն բնական, կամք սե
փականք՝ յոյս հատուցման՝ և իղձ
հեշտութեան, հազիւ երբեմն 'ի
բաց հեռանան:

3: Որ զճշմարիտն՝ և զկատարեալ
սէր ունի, 'ի յոչ ինչ իրս խնդրէ
զիւրն՝ այլ ըղձայ միայն, զի ամ ինչ
լէ

լինիցի 'ի փառս այ: Եւ ոչ ումեք նախանձի, զի զոչ իմն խնդութիւն առանձին սիրէ. և խնդալ յանձն իւր ոչ կամի՝ այլ 'ի վեր քան զամ բարութիւն, երանիլ 'ի այ փափաքի: Յոչ ումեքէ զբարութիւն ինչ լինիլ վարկանի՝ այլ յայ միայնոյ, յորմէ աղբիւրաբար՝ բղխի ամ պարգև, յորում և սրբք ամենեքեան՝ իբր ընդ վախճանի, զմայլապէս յարահանգին: Օ՜հ, եթէ ունէր ոք զկայծ իմն ճշմարտի սիրոյ, արդարև համարէր՝ թէ բնաւք երկրայինք լիք են ունայնութբ:

Գլուխ ԺԶ:

Յաղագս ըմբերելոյ պակասութեանց այլոց:

1. Որ ոչ կարէ ուղղել զկնրս անձին՝ կամ այլոց, համբերութբ ըմբերել պարտի. մինչև այլապէս Այ տնօրինեսցէ: Խորհեաց՝ թէ գուցէ այնպէս՝ բարւոք իցէ վա քոյոյ հաւատարմութեան՝ և համբերութե, թարց որոց ոչ այնքան համարելիք են արդիւնք մեր: Եւ աղաչեա զա վա այնպիսեաց արգելմանց, զի

զքեզ

զքեզ արժանի առնիցէ օգնել քեզ՝ և կարիցես դիւրապէս տանիլ։

2. Եթէ ոք միանգամ, կամ երկիցս խրատեցեալ՝ ոչ խաղաղանայ, մի՛ խստեր զնա՝ բայց զԲԸ նաւն յանձնեա՛ Այ, զի լինիցին կամք նորին՝ և պատիւ ՚ի ծառայս իւր հանուրս, որ բարւոք գիտէ զչարս ՚ի բարիս փոխարկել։ Ջանա՛ համբերութբ ըմբերել պակասութեանց այլոց՝ և իւրաքանչիւրոց տկարութեանց, զի՝ և դու զբազումս ունիս, որոց այլք ըմբերեն։ Եթէ ոչ կարես առնել ըզ քեզ ո՛ր՝ և կամիս. որպէս կարես առնել զայլս ըստ հաճոյից քոց։ Ախորժիմք թերևս՝ թէ այլք կատարեալք իցեն, բայց զմեր պակասութիւն ոչ կարգաւորեմք։

3. Կամիմք՝ թէ այլք ամենևիմբ ուղղիցին, բայց զմեզ ուղղել ոչ կամիմք։ Անհաճոյք թուին մեզ այլոց ընդարձակութիւնք, բայց ոչ կամիմք թէ արգելուցուն զմեզ այլք յայնմանէ, զոր ախորժիմք։ Կամիմք թէ այլք ձի ներքոյ կանոնաց իցեն, իսկ մեք ամենևիմբ ոչ տանիմք, թէ այլք կանոնադիրք իցեն

լիցէն մեզ։ Ուստի յայտ է թէ հազիւ զմեր մերձաւորս համարիմք իբրև զմեզ։ Եթէ ամենեքեան էին կատարեալք՝ զի՞նչ 'ի միմեանց վ՟ն էր, ունէաք 'ի կրել։

4. Բայց այժմ ա՟ծ այնպէս կարգաւորեաց, զի ուսանիցիմք * մի Գաղ.
մեանց զբեռն բառնալ. քանզի 6. 2
ո՛չ ոք թարց պակասութե՟, ո՛չ ոք թարց բեռան, ո՛չ ոք բաւական է ինքեան, ո՛չ ոք լրապէս՝ վ՟ն ինքեան գիտուն. բայց պարտիմք տանիլ միմեանց՝ միխթարել զմիմեանս՝ այսպէս և օգնել միմեանց, հմտացուցանել՝ և խրատել զմիմեանս։ Զի ուրաքանչիւրոյ թէ որքան լիցէ առաքինութիւն՝ երևի 'ի ժամու պատերազմի. քանզի պատերազմունք ո՛չ առնեն զոք տկար, այլ թէ որպիսի լիցէ յայտնեն։

Գլուխ ԺԷ։

Յաղագս մենակեցականի կենցաղավարութեան։

1. Եթէ կամիս խաղաղութե՟, և միաբանութե՟ կեալ ը՟ այլոց, ուսանիլ պարտիս զքեզ 'ի յիրս բազումս խոնարհեցու

ցուցանել։ Ո՛չ է փոքր ինչ, 'ի միայնարանս՝ և 'ի ժողովարանս բնակել, և թարց խռովութեան կենցաղավարել՝ և մինչև 'ի մահ հաւատարիմ գտանիլ։ Երանելի է՝ որ կեայ անդ բարեպէս, և երջանկաբար կատարէ զընթացս։ Եթէ կամիս կեալ ըստ արժանոյն, վարկեա զքեզ իբրև աքսորեցեալ՝ և պանդուխտ 'ի վերայ երկրի։ Լեր իբրև զյիմար վասն Քի, եթէ կամիս կեալ միակեցաւպէս։

2. Զգեստուց փոփոխումն, և հերաց խուզումն՝ սակաւ ինչ օգնեն, բայց բարուց ուղղումն՝ և կատարեալ մահացուցումն կրից առնեն զկրօնաւոր բարի։ Որ զայլ ինչ խնդրէ՝ և ոչ զԱստուած, և հոգւոյն իւրոյ զփրկութիւն միայն, նա ոչ այլ ինչ գտանէ, եթէ ոչ զվիշտ՝ և զցաւ։ Եւ, որ ոչ ջանայ գոլ փոքրագոյն՝ և հլու ամենեցուն, նա ոչ կարէ զժամանակ ինչ կեալ 'ի խաղաղութեան։

3. Կոչեցար 'ի ծառայութիւն, և ոչ յիշխանութիւն. հրաւիրեցար 'ի համբերութիւն՝ և յաշխատանս, և ոչ 'ի յուլութիւն՝ 'ի դատարկաբանութիւն։ Ահա աստ փորձին

մարդիկք, որպէս՝ փորձի ոսկի 'ի հնոցի. սաստ ոչ ոք կարէ կեալ, և թէ ոչ զինքն կամիցի բոլորիւ սրտիւ վս̃ ա̃յ խոնարհեցուցանել:

Գլուխ ԺԸ̃:

Յաղագս օրինակաց սրբոց հարց:

1. Նկատեա՛ յօրինակս կենդանարարս սրբոց հարց, յորս ճշմարիտ կատարելութիւն՝ և հաւատք պայծառացան. և տեսցես թէ՝ որքան նուա՛զ լինի է, և գրեթէ ոչ ինչ է զոր մեք առնեմք: Ո՛հ թէ զինչ են կեանք մեր, եթէ համեմատիցին նոցին կենաց: Սուրբք՝ և բարեկամք Քի̃, ծառայեցին Տն̃ ընդ սովում, և* ընդ ծարաւում, ընդ ցրտութե̃, և ընդ մերկութե̃, 'ի յաշխատանս՝ և 'ի վաստակս, ընդ աքնութե̃, և ընդ ծոմում, 'ի յաղօթս՝ և 'ի մտածմունս սրբս̃. 'ի հալածանս՝ և 'ի նախատինս բազումս: 2 Կոր. 6. 4

2. Վա՛շ թէ որքան զբազումս, և զծանունս նեղութիւնս կրեցին առաքեալք, մարտիրոսք՝ խոստովանողք՝ կոյսք՝ և այլք ամէն, որք շաւղացն Քի̃ կամեցան հետև

իլ։ Քանզի առեցին զանձինս յաշ-
խարհի այսմիկ, զի զկեանս յաւի-
տենականս ժառանգիցեն. վաշ
թէ որպէս զխստակրօն կեանս
հարք սուրբք յանապատի վարե-
ցին, որպէս երկարից՝ և ծանուց
փորձութեանց ըմբերեցին, որպէս
յանձին՝ 'ի թշնամւոյն վշտագնե-
ցեալք եղեն, որքան զբազում՝
և զջերմեռանդ, աղօթս առ Ած
մատուցին, զորքան պահս խիստս
պահեցին, որպէս զմեծ նախանձ՝
և զջերմութիւն 'ի յառաջադիմու-
թիւնս հոգեկանս ունէին, որպէս
արիաբար պատերազմեցան առ 'ի
ճընշել զկիրս իւրեանց, որպէս
զմաքուր՝ և զուղիղ դիտաւորու-
թիւն ունէին, զորս աշխատէին,
և զգիշերս պարապէին յաղօթս
ածայինս, այլև՝ մինչ աշխատէին,
յաղօթելոյ մտաւորապէս ո՛չ դա-
դարէին։

3. Զա̃մ ժամանակ օգտութ̃
ծախէին, և պահք ամենեքեան
պարապելոյ յածայինս կարճա-
ռօտք թուէին. յաղագս մեծի
քաղցրութեան, համախոհմանն՝
մուանային փհարկաւորութիւն
մարմնականի զօրացուցման։

Եւ

Եւ զընտա փարթամութիւն, զարժանաւորութիւնն՝ զպատիւս, զըբարեկամս՝ և զազգայինս ուրանային. զո՛չ ինչ յաշխարհէ ունիլ ըղձային. և հազիւ զհարկաւորն կենաց առնուին. ՚ի ծառայելն մարմնոյն, թէև հարկաւորապէս՝ ցաւէին: Ուրեմն էին աղքատք իրօք երկրայնօք, բայց փարթամք յոյժ շնորհիւ՝ և առաքինութե̃: Արտաքոյ կարօտէին, բայց ՚ի ներքոյ շնորհիւ՝ և մխիթարութեամբ Աստուածայնով զօրանային:

4. Օտարք էին յաշխարհէ՝ բայց մերձաւորք, և ընտանեկիցք բարեկամք այ̃: Ինքեանք ինքեանց ոչ ինչ թուէին, և յաշխարհէ աստի էին խոտեցեալք, բայց յաչս Տ̃ն ազնիւք էին, և սիրելիք. ըն ճշմարտում խոնարհութեան կային՝ ըն զըտում հնազանդութեան ապրէին, ըն սիրոյ՝ և ըն համբերութեան շրջէին: Եւ վ̃ն այնորիկ որ ըստ օրէ հոգւով արդիւնաւորէին, և զշնորհ մեծ առաջի այ̃ ընդունէին: Եղեն օրինակք ամենեցուն կրօնաւորաց. և առաւել պարտին զմեզ սոքա յորդորել ՚ի բարի յառաջադիմութիւն, քան

թէ

թէ՝ թիւ յուլացելոց զմեզ՝ 'ի թուլութիւն։

5. Վասն զի թէ որքան էր ջերմութիւն կրօնաւորաց ամենեցուն 'ի յսկզբան սրբոյ կարգաւորութեանն. թէ որքան խիստ աղօթից, և որքան նախանձ առաքինութե։ Որքան մեծամեծք կրթութիւնք ճոխացան, և որքան պատկառանք՝ և հնազանդութիւնք 'ի ներքոյ կանոնաց Աւանդութին, 'ի յիրս ընտրս. ծաղկեցան։ Վկայ են մեզ դեռևս թողեցեալքն շաւիղք 'ի նոցունց, թէ արք սուրբ՝ և կատարեալք էին եղեալք. որք այնքան քաջապէս զինեալք՝ յաղթեցին աշխարհի։ Իսկ այժմ մեծ համարի նա, որ ոչ լիցէ օրինազանց. և որ կրեացն՝ եթէ համբերութի տանել կարիցէ։

6. Ո՜հ հեղգութեան, և զանցառութեան կացից մերոց, զի այնքան վաղվաղակի խոտորիմք 'ի նախկնոյ ջերմութե, մինչ զի ձանձրանայցեմք կեալ օակս աշխատութե, և լքման։ Երանի թէ ոչ էր բէք ննջէր 'ի քեզ յառաջադիմութիւն առաքինութե, որ բազմիցս տեսեր զօրինակս յոքունս առաքինեաց։

Գլուխ

Գլուխ ԺԹ։

Յաղագս կրթութեան բարւոյ կրօնաւորի։

1. Կեանք բարւոյ կրօնաւորի ամենայնիւ առաքինութեամբ զարդարել պարտի. զի լիցի այնպէս՝ 'ի ներքուստ, որպէս երևի մարդկան արտաքուստ։ Եւ իրաւի՝ առաւել պարտի գոլ 'ի ներքուստ, քան որ տեսանիցի արտաքուստ. զի զննիչ մեր Տէր է, յորմէ ըստ կարեաց պատկառել պարտիմք՝ ուր և իցեմք, և իբրև զհրեշտակս մաքուրս առաջի նորա շրջել։ Յամենայնում աւուր նորոգել պարտիմք զառաջադրութիւն մեր, և 'ի ջերմեռանդութիւն զմեզ զարթուցանել, որպէս թէ այսօր իցէ առաջին օր դարձման մերոյ 'ի Տէր, և ասել. * Օգնեա ինձ Տէր Աստուած Սաղմ.
իմ, ընդ բարւոյ խորհրդում յառաջադրութեան՝ և ընդ քում սրբոյ պաշտաման. և տուր ինձ այսօր կատարելապէս սկսանիլ, զի ոչ ինչ մինչև ցայժմ գործեցի։ 108.26

2. Ընթացք յառաջադիմութեան մերոյ, են ըստ յառաջադրութեան մերում. և զզգուշութիւն բազում

պարտի ունիլ, որ կամի բարւոք
յառաջադիմել: Եթէ հաստա
տապէս յառաջադրողն՝ բազմիցս
նուազի. զի՞նչ լինիցի այնմ, որ հա
զիւ երբեք՝ կամ անկայտապէս յա
ռաջադրէ զինչ: Ո՛րդ զանազա
նիւք կերպիւք հանդիպի լքումն
'ի յառաջադրութեանց մերոց. և թե
թեւ ինչ առունկանումն վարժման,
հազիւ թարց տուժանի լինիք ան
ցանի: Սրբոցն յառաջադրութիւն՝
մանաւանդ 'ի շնորհացն այ, քան
թէ 'ի սեփականէ յիմաստութենէ
իւրեանց կախի. յոր և յուսան
միշտ, մինչ սկսանիցին զիր ինչ առ
նել: Զի մարդ յառաջադրէ, այլ
Յեր Աստուած յօրինէ. * և շաւիղ նո
10.23 րին ոչ է ըն մարդումն:

3. Եթէ 'ի պատճառս առաքի
նութե, կամ 'ի յօգուտ եղբօրն,
թողանիցի երբեմն սովորեցեալ
կիրառութիւնն, դիւրաւ յետոյ
կարելի է դառնիլն: Բայց եթէ
վն ձանձրութե սրտի, կամ զանցա
ռութե ապագաւ՝ ընդվայրաբար
թողանիցի, յոյժ վշտագնելի է, և
վնասակար համարելի: Ջանաս
ցուք ուրեմն որքան կարեմք, զի
և ս փոքրագունապէս՝ տայցեմք
տե

տեղի նուաղման, և միշտ զիմն ճշգրիտ մեզ յառաջադրիցուք, մանաւանդ ընդդէմ այնոցիկ, որք զմեզ առաւել նեղեն: Զներքինս մեր՝ և զարտաքինս միանգամայն որոնել, և կարգաւորել պարտիմք՝ վասն զի երկաքանչիւրն պատկանին յառաջադիմութեան:

4. Եթէ ոչ կարես ժողովել ըզքեզ յարաժամ, գոնեայ ժողովեայ զքեզ երբեմն, և թերևս յաւուրն միանգամ, այսինքն յառաւօտու՝ կամ յերեկոյի: Յառաւօտու յառաջադրեա՛ քեզ, և յերեկոյի քըննեա՛ զվարս քոյս, թէ որպէս զայն օր անցուցեր, 'ի բանս՝ 'ի գործս, և 'ի խորհուրդս, մի գուցէ մեղուցեալ իցես ընդդէմ ա̃յ՝ և ընկերին: Պնդեա՛ զմէջ քո արիութ̃ ընդդէմ նենգութեանց սատանայի. սանձեա՛ զորկոր քո, և զա̃մ յօժարութի̃ մարմնական դիւրաւ ծընչել մարթիցես: Մի՛ սիրեր զդատարկութիւն ամենևիմբ. այլ կամ ընթերցիր, կամ գրեա՛, կամ աղօթեա՛, կամ խորհեաց, և կամ յաղագս հասարակաց օգտութե̃ աշխատեաց: Բայց՝ զմարմնական կիրառութիւնս ընտրել պարտիմք,

և

ն ոչ զամենեսեան հաւասարապէս առնել։

5. Որք ոչ են հասարակաց, մի ցուցաներ արտաքոյ. քանզի՝ երբեն յատուկք առանձնականի դիւրաւ գործին։ Բայց զգուշանալ պարտիս, մի գուցէ ծուլանայցես յիրաց հասարակաց, և արխանայցես ՚ի յիւրս առանձնականս. այլ՝ յոր ժամ կատարիցես լրապէս՝ և հաւատարմաբար զպարտս, և զբաժինս, և թէ լիցէ դեռևս պարապորդ ժամանակ, արա՛ և զքոյս՝ ըստ ըղձից քոց։ Ամենեքեան ոչ կարեմք ունել զմի՝ և զնոյն կրօնութիւն, այլ՝ այլումն այսմիկ. և այլումն այնմիկ առաւել պիտոյանայ։ Այլև ըստ պատշաճի ժամու՝ կրօնութիւնք զանազանք հաճոյք թուին. զի զան որք պատշաճին աւուրց տօնախմբութեց, և զան որք աւուրց լրոց։ Ոմանք պիտոյանան յաւուրս փորձութեց, և ոմանք յաւուրս խաղաղութե, և յանդորրութեան։ Ոմանք մինչ տրտմիմք, և ոմանք մինչ ուրախ եմք ՚ի Տր։

6. Յաւուրս հանդիսաւորս նորոգել պարտիմք զկրօնաւորութիւ

քա

բարիս. եւ զօգնութիւնս սրբոց ջերմեռանդապէս մաղթել: 'Ի սոնէ 'ի սօն զնոր իմն մեզ յառաջադրել պարտիմք, որպէս թէ՝ յայն ժամ յաշխարհէ աստի չուելոց իցեմք, եւ 'ի սօնն մշտնջենաւոր ժամանակաց: Վ՞ որոյ զգուշապէս զմեզ պատրաստել պարտիմք 'ի ժամանակս շնորհաւորս, եւ առաքինապէս վարիլ, եւ զամ̃ հեստաղօտութիւն բարեպէս՝ պահել, ոմ̃ թէ՝ զկնի սակաւուց զվարձս աշխատանաց մերոց 'յԱստուծոյ առնելոց իցեմք:

7. Իսկ եթէ այլապէս դիպեսցի, պարտիմք հաւատալ՝ թէ ոչ իցեմք զմեզ բարեպէս պատրաստեալ, այլեւ՝ թէ ոչ իցեմք դեռեւս արժանիք այնքանեաց փառաց, որք յայտնելիքն են մեզ 'ի ժամանակի նախավախճանեցելում. եւ ջանասցուք զմեզ բարեգունապէս՝ պատրաստել 'ի մահ, զի ասէ Տրն. * Երա Ղու.
նի է ծառային այնմիկ, զոր եկեալ 12. 37.
Տրն գտանիցէ արթուն: Ամէն ասեմ ձեզ 'ի վերայ ամենեցուն ընչից իւրոց կացուսցէ զնա:

Գլուխ Ի:

Յաղագս ոճոյ առանձնութեան, և լաւութեան:

1. Խնդրեա՛մ զպատշաճ ժամանակ պարապման, և խորհեաց յաճախապէս զբարերարութեանցն ա̃յ. Թող զանօգուտս: Ընթերցիր զայնպիսիս, որք յարուցանիցեն 'ի քեզ մանաւանդ զխղճմտանս, քանթէ զաշխատանս: Եթէ խոտորիցիս յաւելորդաբանութենէ՝ և 'ի դատարկաբանութենէ, այլև՝ 'ի լսելոյ զլուրս նորագոյնս, և զհամբաւս, գտցես բաւական՝ և զպատշաճ ժամանակ պարապելոյ 'ի խոկմունս բարիս: Գերագանցքն 'ի սրբոց յընկերակցութենէ մարդկան (որքան կարէին) հրաժարէին, և զառանձնական պաշտօնն ընտրէին:

2. Ասաց ոմն. Որքանիցս եղէ 'ի մէջ մարդկան՝ գտայ մարդ փոքրագոյն: Զայս բազմիցս տեսանեմք, մինչ զժամ ինչ դատարկաբանեմք: Դիւրագոյն է ամենևին լռելն, քան զչափաւորապէս խօսիլն: Դիւրագոյն է գաղիլն 'ի տան, քան արտաքոյ զինքն բաւ-

ակա

տկանապէս պահելն։ Որբեմն՝ որ ըղձայ առ ներքինս, և առ հոգեորս ժամանել, պարտի ընդ քեն յամբոխէ խոտորիլ։ Ո՛չ որք աներկեան զինքն ցուցանէ, եթէ ոչ այն՝ որ յօժարապէս թաքչի։ Ո՛չ որք աներկեանապէս խօսի, եթէ ոչ այն՝ որ յօժարապէս լռէ։ Ո՛չ որք աներկեանապէս առաջնորդէ, եթէ ոչ այն՝ որ յօժարապէս զինքն ստոր արկանէ։ Ո՛չ որք աներկեանապէս հրամայէ, եթէ ոչ այն՝ որ յօժարապէս հնազանդի։

3. Ո՛չ որք աներկեանապէս խընդայ, եթէ ոչ այն՝ որ բարեաց խղճմտանաց զվկայութիւն յինքեան ունի։ Բայց՝ սրբոցն աներկեանութիւն միշտ լի երկիւղիւն այ արտաւկայացաւ։ Եւ ոչ երբեք թուլացան յաշխատութեանց՝ և կամ նուաղեցան ՚ի խոնարհութենէ, զի առաքինութիւնք բազմօք՝ և շնորհօք պայծառացեալք էին։ Իսկ վատիցն աներկեանութիւն ՚ի հպարտութէ, և ՚ի մնապարծութէ ծնանի, և ՚ի վախճանի պատրեցեալք զինքեանս գտանեն։ Ո՛չ երբեք խոստացիր քեզ զաներկեանութիւն յայսմիկ աշխարհի, թէև՝ իցես

կրօ-

կրօնաւոր, և մտակեաց առաքինի։
4. Բազմիցս՝ որք բարեգոյնք
կարծին 'ի մարդկանէ, անկանին
'ի փորձութիւնս ծանրագոյնս, վն ինք
նահաւանութե. ուստի օգտակար է
բազմաց, թէ՝ ոչ իցեն ամենևին
թարց փորձութեանց, այլ թէ՝
երբեմն զփորձութիւն կրիցեն. և
մի իցեն բնաւին աներկեանք, զի
մի գուցէ հպարտանայցեն, և մի
մխիթարութիւնս արտաքինս ընդ-
արձակապէս մտոյցեն։ Ո՜հ եթէ
որ՝ ոչ երբեք խնդրեր զմխիթարու-
թիւնս անցաւորս, և ոչ երբեք
զբաղէր 'ի յիրս աշխարհի, զո՜րպի
սի բարիս ունելոց էր խղճմտանս։
Ո՜հ եթէ որ զամ զբաղումն ու-
նայն 'ի բաց հատանէր, և միայն
զկենսականաց և զածայնոց խոր
հէր, այլև՝ զյոյս իւր ամենայն
'ի Աստուած դնէր, որքան զմեծ
խաղաղութիւն, և զյանդորրու-
թիւն ընդունելոց էր։
5. Ո՛չ որք արժանի է երկնայնոյ
մխիթարութեան, եթէ ոչ՝ որ
զգուշապէս կրթիցէ զինքն սրբա
զանիւ ներխայթեցմամբ սրտի։
Եթէ կամիս փղձկիլ սրտիւ, մուտ
'ի սենեակ քո, և արտաքսեա զա

մէ

մենայն վրդով աշխարհային, որ
պէս՝ և գրեցեալ է: * Յանկողինս Սաղմ.
ձեր զղջացարուք: 'Ի սենեկի 4. 5
քում գտանես, զոր արտաքս կո
րուսեր: Եթէ ոք յարատևիցէ 'ի
սենեկի զգայ զքաղցրութիւն,
իսկ՝ որ ոչ պահէ զսենեակ իւր,
ծնանի նմա ձանձրութիւն:
Եթէ 'ի սկզբան դարձման քոյ 'ի
Տր՝ բարւոք պաշտեալ, և պա
հեալ էիր զսենեակ քո, լեալ էր
քեզ յետ այնորիկ սիրելի, և բարե
կամ, և սփոփումն քաղցրագունեղ:
6. 'Ի լռութեան՝ և յանդորրու
թե, օգտի հոգի առաջինասէր՝ և
ուսանի զխորհուրդս գրոց: Անդ
գտանէ զհեղումն արտասուաց, ո
րովք յիւրաքանչիւրում * գիշերի Սաղմ.
լուանայ զինքն՝ և մաքրէ. զի ըս 6. 7
տեղծողին իւրում այնքան ընտե
լանայ, որքան հեռանայ յաշխար
հայնոց վրդովմանց: Ուստի որոք
հրաժարի 'ի ծանօթից՝ և 'ի բարե
կամաց իւրոց; մերձենայ նմա ած
ընդ հրեշտակաց իւրոց սրբոց:
Բարեգոյն է թաքչիլն, և ունիլն
զխոյթ զինքենէ, քանթէ՝ անփոյթ
ելով զանձնէ, զհրաշս գործել:
Գովութիւն է կրօնաւորի, եթէ՝
հա:

հաղիւ երբեմն ելանիցէ արտաքս, և եթէ փախչիցի՝ զի մի տեսանիցի․ այլև, եթէ՝ ոչ կամիցի տեսանել զմարդիկ։

7․ Ընդէ՞ր կամիս տեսանել զայն,
զոր ոչ է պարտ քեզ ստանալ։
1 Յով. * Անցանէ աշխարհ՝ և ցանկութիւն
2. 17 նորին․ քարշէ զքեզ յօժարու-
թիւնն զգայականութեան առ'ի
զբօսնուլ․ բայց յորժամ էանց
ժամ ըղձին, զի՞նչ՝ եթէ ոչ զծանրութիւն խղճմտանաց, և զտարացրումն սրտի դառնես։ Բազմիցս խնդալից ելումն 'ի սենեկէ, զտրտմալից դարձումն ծնանի․ և զուարճ հսկումն երեկոյի, զտրտմալից առաւօտ բերէ։ Այսպէս ամենայն խնդութիւն մարմնական համոզելով մտանէ․ բայց 'ի վախճանի խայթէ՝ և սպանանէ։ Զի՞նչ կարես այլ ուրեք տեսանել՝ զոր ոչ տեսանես 'ի քում սենեկի․ ահա երկինք՝ և երկիր, և ամ տարերք․ քանզի 'ի սոցանէ են հանուրքն եղեալք։

8․ Զի՞նչ կարես այլ ուրեք տեսանել, որ տևել մարթիցի 'ի ներքոյ արեգականն․ Հաւատաս ըղ քեզ յագեցուցանել, բայց ոչ կարես

րես այնմ առ ժամանել։ Եթէ
տեսանէիր և զբնաւս ներկայո
րէն, զի՞նչ էր՝ եթէ ոչ ունայն տե
սութիւն։ Ամբարձ զաչս քոյս 'ի
բարձունս, և աղաչեա՛ զԱծ վն մե
ղաց քոց՝ և յանցանաց։ Թող զունա
ախս ունայնեացն, և ունկնդիր այ
նոցիկ՝ զորս հրամայեաց քեզ Ած։
* Փակեա՛ զդուռն քո առաջի երե Եսայ
սաց քոց, և հրաւիրեա՛ առ քեզ 26. 20
զՅս զսիրելին քո։ Կաց ընդ նմա
'ի սենեկի քում, զի այլուրեք ոչ
գտցես զայնքան խաղաղութիւն։
Եթէ՝ ոչ էիր ելեալ 'ի սենեկէ
քումմէ, ոչ էիր լուեալ զվրդով
ինչ՝ և բարեգունապէս ընխաղա
ղութե մնացեալ էիր։ Յորմէ հա
ճիս լսել երբեմն՝ զնոր ինչ համ
բաւ, յայնմանէ պարտ է քեզ ըն
չփոթութիւն սրտի կրել։

Գլուխ ԻԱ։

Յաղագս համախոհութեան սրտին։

1\. Եթէ կերպիւ իւիք օգ
տիլ կամիս, պահեա՛ 'ի
քեզ զերկիւղն Այ. և մի՛ լինիր այն
քան ընդ արձակ, այլ 'ի ներքոյ
սանձահարութեան՝ ճնշեա՛ ըզ

բնաւ

քնաւ զգայութիւնս, և մի մտաներ զքեզ անհամեստից խնդութեանց։ Տո՛ւր զքեզ 'ի խղճմտանս, և գտանիցես զառաքինութի։ Խղճմտանք զբարիս բաղձմս գտանեն, զորս տարալուծումն ամօ՛րէ վաղվաղակի կորուսանել։ Զարմանք են՝ թէ ո՛րպէս կարէ ոք երբէք կատարելապէս յաշխարհի այսմիկ խնդալ, եթէ զաքսորանս իւր, և զայնքան կասկածանս հոգւոյ իւրոյ դիտիցէ, և մտածիցէ։

2. Յաղագս անհոգութեան սրտի մերոյ, և զանցառութեան մերոյ պակասութեանց՝ ո՛չ զգամք ըզցաւս հոգւոյ մերոյ. իսկ՝ բազմիցս՝ ունայնաբար ծիծաղիմք՝ մինչ իրաւի լալ պարտիմք։ Ո՛չ ուրեք գտանի ճշմարիտ ազատութիւն՝ և ճշմարիտ խնդութիւն, եթէ ո՛չ յերկիւղի ա՛յ՝ հանդերձ խղճմտանօք բարեօք։ Երանի՝ որ կարէ 'ի բաց ձգել զա՛մ արգելուածս զբաղական, և ժողովել զինքն 'ի միութիւն սրբազանի համախոյթեան։ Երանի՝ որ յինքենէ 'ի բաց հերքէ զա՛մ ինչ, որ կարէ բծաւորել, և ծանրացուցանել զխղճմտանս։ Զի

նեա-

նեամ արիաբար՝ սովորութիւն սո
վորութե՛ յաղթի։ Եթէ դու գի
տես թողուլ զայլս, այսպէս՝ այլք
եւ թողցեն զքեզ առնել զքոյս
առնելիս։

3. Մի՛ զստացուածս օտարաց
'ի քեզ առքարշէր, եւ մի՛ 'ի բանս
մեծազօրութեանց զքեզ ներխառներ.
զարձո՛ նախ զաչս քոյս 'ի քեզ, եւ
առաջադեա՛ քեզ յատկապէս՝ մա
նաւանդ՝ քանթէ ամենից սիրե
լեաց։ Եթէ անխնամ իցես դու
'ի մարդկանէ, մի՛ տրտմիր ընդ այն.
այլ տրտմիր ընդ այն միայն, զի
ոչ վարիցիս բարեպէս՝ եւ զգուշա
ւորս, որպէս վայելէ ծառայից քոյ, եւ
առաքինեաց կրօնաւորացն վարիլ։
Օգտակար է յոյժ՝ զի ոչ ունիցի ոք
զմխիթարութիւն բազում յաշխար
հի այսմիկ, եւ մանաւանդ ըստ մար
մնոյ։ Այլ եթէ ոչ ունիցիմք
զԱստուածային մխիթարութիւն պատ
ճառ արդ եմք. զի ոչ խնդրեմք
զխղճմտանս, եւ զունայնս՝ եւ զարտա
քինս 'ի մէնջ ամենեւին 'ի բաց ոչ
տարմերջեմք։

4. Վարկեա՛ զքեզ դու անար
ժան մեծայնոց մխիթարութեց, եւ
արժանի բազմաց նեղութեանց։

Յոր

Յորժամ ոք կատարելապէս՝ յինքեան ներփղձկի, յայնժամ ծանր՝ և դառն թուի նմա բոլոր աշխարհ։ Այր բարի գտանէ զբաւական նիւթ ցաւելոյ, և լալոյ՝ եթէ յինքն նկատիցէ, և եթէ զմերձաւորէն խորհիցի, զի գիտել կարէ՝ թէ ոչ ոք է աստ թարց նեղութեան։ Եւ որքան բարեպէս յինքն նկատէ, այնքան առաւել ցաւի։ Նիւթք ճշմարտի ցաւոյ, և ներքնայնոյ խղճահարութեան, են մեղք մեր՝ և յանցանք, որովք այնպէս կամք պարուրեցեալք մինչ զի հազիւ զերկնայնոց խորհիլ մարթիցիմք։

5. Եթէ առաւել խորհէիր զմահուանէ քումմէ, քանթէ զերկարից քոյոց կենաց, ոչ էր երկբայելի՝ թէ ոչ զգաստացուցանէիր զքեզ ջերմագունապէս։ Եւս՝ եթէ զտանջանս ապառնիս դժոխոց, և զվիշտս քաւարանին 'ի միտածէիր, համարիմ թէ յօժարաբար տանէիր աշխատանաց՝ և ցաւոց, և յոչընչէ խստութէ երկնչէիր։ Բայց քանզի՝ ոչ թափանցեն այսոքիկ 'ի սիրտս մեր, և սիրեմք դեռևս զհամոզութիւ մարմնոյ

մնոյ, վա՜ որոյ՝ մնամք ցրտացեալք,
և յուլացեալք:

6. Բազում անգամ սխալիմք
սակս աղքատութե մերոց մտաց,
և դատապարտեմք զողորմելի մար
մինն: Աղօթեա՛ ուրեմն առ Տր
խոնարհաբար, զի տայցէ քեզ զհո
գի խղճմտանաց, և ասա՛ ընդ մար
գարէին. Ջամբեա՛ ինձ Տր զհաց Սաղմ.
արտասուաց, և արբո՛ ինձ զարտա 79. 7.
սուս չափով:

Գլուխ իբ:

Յաղագս համանկատման մարդկային Թշուառութեան:

1. Ուրև լիցես՝ յո. և դնայ
ցես՝ ողորմելի ես, եթէ
ոչ՝ առ Այ զքեզ դարձուցանի
ցես: Ընդէ՞ր վրդովիս՝ մինչ ոչ
յաջողի քեզ ո՞պ կամիս՝ և ցանկաս.
ո՞վ է որ ունիցի զամ ինչ ըստ հա
ճոյից իւրոց: Ո՛չ ես, ոչ դու, և
ոչ այլոք մարդկան 'ի վերայ երկ
րի: Ո՛չ ոք է յաշխարհի այսմիկ
թարց իմիք վշտի՝ կամ նեղութե,
թէև լիցէ Թագաւոր, կամ Քահա
նայապետ: Ո՛վ է նա՝ որ բարե
ալէս կեայ, եթէ ոչ այն՝ որ վասն

Աս

Աստուծոյ տանի փորձութեանց։

2. Բազումք 'ի տկարաց՝ և 'ի հիւանդաց ասեն. ահա այր մի, որ որքան զկեանս բարիս ունի, որքան փարթամ է, որքան մեծատուն է, որքան կարօղ է, որքան գերազանց է։ Բայց նայեաց 'ի բարութիւնս երկնայինս, և տեսանիցես թէ այնպիսի ամենեքեան ժամանակաւորք ոչինչ են՝ այլ յոյժ անհաստատիք, և առաւել ծանրացուցիչք, զի ոչ երբեք ստանին թարց վրդովման՝ և երկիւղի։ Ո՛չ է առն երջանկութիւն, ունելն առատապէս զժամանակաւորս. այլ բաւական է թէ՝ ունիցի ոք չափաւորապէս։ Իսկապէս՝ թշուառութիւն է, կեալն 'ի վերայ երկրի։ Որքան ոք կամի գոլ հոգևորագոյն, այնքան կեանք ներկայականք լինին նմա դառնագոյնք. քանզի զգայ բարեպէս՝ և տեսանէ պարզապէս, զպակասութիւնս մարդկայնոյ թշուառութեան. Քանզի՝ ուտելն, ըմպելն, հսկելն, ննջելն, հանգչիլն, աշխատիլն, և այլոց կարեաց բնութեան 'ի ներքոյ գոլն. տրտմաբեր թշուառութիւն է մեծ, և տառապանք առն առաքինւոյ, որ

յօ

յօժարապէս կամի գոլ ընդ ար
ձակ, և ազատ յամենեցունց մեղաց։
3. Քանզի յոյժ ծանրանայ ներ
քինն մեր մարդ կարիւք մարմնա
կանօք յաշխարհի այսմիկ։ Ուստի
մարգարէն զի 'ի սոցանէ զերծա
նիցի ջերմեռանդապէս աղօթէ,
ասելով։ * 'Ի վշտաց իմոց հան Սաղմ.
զիս, Տր։ Բայց վայ ոչ ճանաչո 24. 17.
ղաց զթշուառութիւնս իւրեանց.
և առաւել վայ այնոցիկ՝ որք սի
րեն զկեանս ապականացուս, և զա
մոլմելիս։ Վ՞զի ոմանք այնպէս
փարին զսոքօք (թէև՝ հազիւ մար
թիցեն հոգալ զհարկաւորս աշխա
տանօք կամ աղորմութեամբ այլոց)
մինչ զի եթէ կարէին աստ միշտ
կեալ, զարքայութենէն այ ոչ
ինչ փոյթ ունէին։
4. Ո՛վ յիմարք՝ և թերահաւ
ատք սրտիւ, որք այնքան ախորժա
կօք 'ի յերկրի անկեալք կան, մինչ
զի՝ ոչ ինչ զայլմէ, իմէքէ՝ եթէ
ոչ զմարմնականաց խորհիցին։
Բայց են եղկելիք՝ զեռևս 'ի վախ
ճանի ծանրապէս զգայցեն, թէ
զորպիսի ինչ սիրեցին։ Իսկ սրբքն
այ՝ և ամենեքեան առաքինի բարե
կամքն Քի, ոչ երբէք հետևեցան
այ

այնոցիկ՝ որք հաճելիք են մարմնոյ, և ոչ ծաղկեցան ըն կենցաղում․ այսմիկ։ բայց բոլոր յոյս նց̃· և դիտաւորութիւն ձկտէր առ մըշտնջենաւոր բարութիւնն։ Բոլոր իղձ նց̃ տարիւր 'ի վեր առ յարամնացականն՝ և յանտեսանելիս, մի-գուցէ· սիրով երևելեացս տարաքարշեցին 'ի ստորայինս։ Դու՛ եղբայր՝ մի՛ վհատիր 'ի յառաջելոյ 'ի հոգևորս, դեռևս ունիս զժամ, և զժամանակ։

5․ Ընդէ՞ր ձգես 'ի վաղիւն զառաջեդեալն քո։ Արի՝ և վաղվա-
2 Կորն ղակի սկսեաց ասել· * Ահա ժա-
6․2 մանակ առնելոյ, ահա ժամանակ ընդդիմամարտելոյ, և ահա ժամանակ ընդունակ զգաստանալոյ։ Եթէ 'ի նեղութեան իցես, ասա՝ ահա ժամանակ արդիւնանալոյ։
Սաղմ պատրաստ է քեզ * անցանիլ ընդ հուր՝
65․12 և ընդ ջուր, յառաջ քան թէ հասանիցես 'ի զովացումն։ Եթէ ոչ աշխատիցիս, յաղթահարել զվատթարութիւնս ոչ կարասցես։ Որքան եմք ըն տկարում այսմիկ մարմնի, թարց մեղաց գոլ ոչ կարեմք, և ոչ կեալ թարց ձանձրութեան՝ և ցաւոյ։ Յօժարիմք ու-

նիլ

նիլ զյանդորրութիւն յամենից
թշուառութեանց, բայց քանզի՝
կորուսաք մեղօք պանծեղութիւն մեր,
և զերջանկութիւն մեր ճշմարիտ։
Վ̃ո որոյ՝ համբերել պարտիմք, և
սպասել ողորմութեանն Աստու
ծոյ. * մինչև անցցէ անօրէնու Սաղմ
թիւնս այս, * և ջնջեսցի մահկա 56. 2
նացութիւնս այս 'ի կենաց։ I Կորն
6. Ո՛հ թէ՝ որքան է տկարութի̃ն 5. 4
մարդկային, զի ձկտի միշտ 'ի վատ
թարութի̃ս։ Այսօր խոստովանիս
զմեղս քոյս, և 'ի վաղիւն վերստին
գործես զխոստովանեցեալն։ այժմ
յռ̃ջադրես քեզ զգուշանալ և ըղ
կնի միոյ ժամու դարձեալ գործես,
ո̃պ թէ, զո՛չ ինչ էիր յառաջեդե̃լ։
Վասն որոյ՝ ըստ իրաւանց կարեմք
զմեզ խոնարհեցուցանել, և ո՛չ
կարծել զմէնջ զմեծ ինչ, որովհե
տև այնքան տկարք՝ և անհաստատք
եմք։ Եւս զանցառութե̃ մերով
վաղվաղակի կորուսանեմք, զոր աշ
խատանօք բազմօք 'ի ձեռն շնորհաց
հազիւ երբեք ստացեալ եմք։
7. Զի՛նչ դիպելոց է մեզ 'ի
վախճանի, որք այնքան կանխա
պէս՝ թարշամիմք։ վայ մեզ է, ե
թէ այսպէս կամիցիմք խոտորիլ
'ի

'ի յանդորրութին, ոչ թէ՝ իցեմք ըն խաղաղութեան, և յանհերկեւանութեե, որք՝ և ոչ զշաւիղ սրբութե ըն կենցաղավարութեան մերում տեսաք։ Բարեգոյն էր թէ՝ թերևս կրթեէաք իբրև զնորա վարժս վարուք բարեօք, գոնեա ունէաք զայս ապառնւոյ զգաստութեան, և մեծագունի յառաջադիմութե հոգեկանի։

Գլուխ ԻԳ։

Յաղագս խոկման մահու։

1. Այժ վաղվաղակի հասանէ քեզ օր մահու, տես թէ զինչ առնելոց իցես. քանզի այսօր է որ և 'ի վաղիւն ոչ երևի։ Իսկ մինչ հեռանայ ոք յաչաց, բառնի ևս յիշատակ նորին 'ի մտաց։ Ո՜հ թմրութե՝ և խստութե սրտի մարդկայնոյ, որ միայն զներկայից խորհի՝ և զապառնիս առաւել ոչ նկատէ։ Պարտէիր զքեզ յամենայնում, և ըն խոկման այնպէս ունիլ, ոչ թէ այսօր մեռանելոց էիր։ Եթէ զբարիս ունեցեալ էիր խղճմտանս, ոչ այնքան 'ի մահուանէ երկնչէիր։ Բարեգոյն է զգու

չունելն 'ի մեղաց՝ քան զփախչելն 'ի մահուանէ։ Եթէ այսօր ոչ ես պատրաստ, որպէս եղիցիս 'ի վաղիւն։ Վաղիւն է օր անհաստատի. և որպէս գիտես, թէ տեսանելոց իցես զվաղիւն։

2. Զի՞նչ օգուտ է մեզ կեալն երկար օրէն, որովհետև հազիւ երբեք զգաստանամք։ Ո՜հ, կեանք երկարք ոչ միշտ զգաստացուցանեն, այլ մանաւանդ յաւելուն զյանցանս։ Երանի թէ՝ գոնեա՛ զմի օր բարեպէս կեցեալ էաք յաշխարհի այսմիկ։ Բազումք թուեն զամս դարձմանն իւրեանց առ Տր. բայց զսակաւ գտանեն 'ի նմա պտուղս զգաստութեան։ Եթէ զարհուրելի է մահ, գուցէ ահաբեկագոյն իցէ երկարապէս կեալն։ Երանի այնմ, որ զժամ մահուն իւրոյ ունի հանապազ առաջի աչաց իւրոց, և 'ի մահ հանապազորդ զինքն պատրաստէ։ Եթէ տեսեր երբեմն ուրումն զմահ, խորհեաց՝ զի և դու ընդ այն ճանապարհ անցանելոց ես։

3. Յորժամ առաւօտ լինի վարկեաց թէ ոչ ես ժամանելոց յերեկոյ։ Իսկ յերեկոյի՝ մի խոստա

նար քեզ զժամ առաւօտուն:
Մինչ ուրեմն լեր պատրաստ, և
կենցաղավարեաց այնպէս՝ զի մի
երբեք անպատրաստ մահ զքեզ
գտանիցէ: Բազումք վաղվաղա
կի՝ և յանկարծ մեռանին: Վ՟ զի՝
Ղուկ 'ի ժամուն, *յորում ոչ կարծեմք,
12. 4 գայ Որդի մարդոյ: Յորժամ
այն յետին ժամ գայցէ, կարի այ
լապէս զգալոց եմք զկեանս մեր
զանցեալս բոլորս, և յոյժ ցաւե
լոց եմք. զի այնքան զանցառարաք՝
և թուլացաք:

4. Որքան երջանիկ է նա՝ և
իմաստուն, որ ջանայ այժմ այնպ͞
կեալ, որ͞պ ըղձայ գտանիլ 'ի ժա
մու մահուան: Զի տայ զմեծ հա
մարձակութիւն երջանկապէս մեռա
նելոյ, կատարեալ խոտումն կենցա
ղոյս, ջերմեռանդ սէր յառաջանա
լոյ յառաքինութիւն, իղձ կոծման
անձին, աշխատանք ապաշխարու
թեան, յօժարութիւն հնազանդութեան,
ուրացումն անձին, և ըմբերումն
փորձութեանց վ՟ սիրոյն Քրիս
տոսի: Մինչ առողջ ես կարօղես
զբազումս գործել բարիս, այլ
մինչ տկարես, ոչ գիտեմ զինչ կա
րօղիցես առնել: Սակաւք 'ի առ
կա

կարութեան բարեգործութեան. այսպ
և հոգւոյ՝ որք յաճախ՝ պանդխտա
նանն, արդարանան:

5. Մի՛ յուսար 'ի բարեկամս՝ և
'ի մերձաւորս, և մի՛ ձգեր յապառ
նիս զքոյդ կեցութիւն. քանզի՝ վաղ
վաղագոյն մոռանալոց են զքեզ
մարդիկ, քան թէ կարծես: Բա
րեգոյն է՝ այժմ 'ի պատշաճում
ժամանակի նախապատրաստել, և
զբարի ինչ յառաջառաքել, քան
թէ՝ յուսալ 'ի յօգնութիւնս այ
լոց: Եթէ դու ոչ հոգաս այժմ
վս քո, ո՜վ 'ի վախճանի վասն քո
հոգալոց է բարեգոյն՝ քան զքեզ:
Այժմ յոյժ ազնիւ է ժամանակ:
Այժմ է* օր փրկութեան: այժմ 2 Կորն 6. 2
է ժամ ընդունելի: Բայց ո՜հ
ցաւոյս, զի օգտակարապէս 'ի կիր
ոչ արկանես զայն, նորաւ արդիւ
նաւորիլ կարես, որովք և յաւիտե
նականապէս կեցցես: Եկեսցէ
ժամանակ, յորում զմի օր՝ կամ զմի
ժամ զղջանալոյ ցանկասցես
ունել, և ոչ գիտեմ թէ գտա
նիցես:

6. Ա՛յլ՝ ուրեմն ո՜վ սիրելի, յոր
քան փորձութեանց զքեզ ազա
տիցես, և 'ի մեծէ յերկիւղէ զքեզ
փըր

փրկիցես, եթէ միայն երկնչիցիս
միշտ 'ի մահուանէ՝ և զարհուրի
ցիս: Ջանա՛ այժմ այնպ̃ կեալ,
զի 'ի ժամու մահուան մանաւանդ
խնդայցես՝ քան թէ տրտմիցիս:
Ուսիր այժմ մեռանիլ յաշխարհի,
զի յայնժամ 'ի Քս̃ կենդանանայ
ցես: Ուսիր այժմ խոտել զա̃մ,
զի յայնժամ ազատապէս կարիցես
փութալ առ Քս̃: Ճնշեա՛ այժմ
զմարմին քո ապաշխարութ̃բ, զի
յայնժամ ունիցիս զյոյս ճշմարիտ:

7. Ո՛վ յիմար, ընդէ՞ր խորհիս
զերկարից կենաց, որովհետև՝ և ո՛չ
զօր մի ունիս հաւաստի: Ո՛րքան
բազումք այդպէս պատրեցան, և
յուսահատեցեալք ելին 'ի մարմ
նոյ: Որքանի՞ցս լուա՛ր յասողաց,
թէ ոմն անկաւ 'ի սրոյ, և ոմն 'ի
ծով ընկղմեցաւ, մինն 'ի բար
ձանց բարավէժ եղեալ հերձ ըղ
գաղաթ իւր, և միւսն մինչ ու
տէր կարկամեցաւ, միոմն մինչ
զբօսնոյր վախճանեցաւ: Ա՛յլ
ոմն հրով կիզեցաւ, մինն սրով,
միւսն մահուամբ, և այլոմն աւա
զակութ̃բ կորեաւ. և այսպէս ամե
Սաղմ. նեցուն վախճանն մա՛հ է, * և աւ
101. 10 ուրք նոյնն որպ̃ հովանի անցանեն:

Ո՛վ

8. Ո՛վ յիշելոց է զքեզ զկնի մա-
հուան, և ո՛վ է աղօթելոց վ̄ քոյ:
Արդ այժմ, արի սիրելի, և գոր-
ծեա՛ զոր ինչ գործելոց ես. զի ոչ
գիտես թէ ե՛րբ ես մեռանելոց,
այլև՝ ոչ գիտես թէ զի՛նչ է գալե-
լոց քեզ զկնի մահուան: Մինչ
ժամանակն ՚ի ձեռին քոյ է, ժողո-
վեա՛ քեզ զգանձ անմահական:
Բաց ՚ի փրկութէ քումմէ, զո՛չ
ինչ հոգայցես. զայնմանէ միայն,
որ ա̄յն է, զփոյթ ունիցիս: * Կա՛լ Ղուկ
քեզ այժմ զբարեկամս, պատուե- 16. 9
լով զս̄ս ա̄յ, և հետևելով նոցին
շաւղաց. զի մինչ նուաղիցիս նայս
միւս կենցաղում, նոքա ընկալցին
զքեզ ՚ի յարկսն յաւիտենականս:

9. Պահեա՛ զքեզ իբրև զպան-
դուխտ՝ և օտար ՚ի վերայ երկրի,
որում ոչ ինչ է փոյթ զիրաց աշխար-
հի:— Պահեա՛ զսիրտ քո ազատ, և
առ ա̄ծ վերուղղեցեալ, զի ոչ ու-
նիս աստ քաղաք մնացական. առ-
նա զաղօթս՝ և զհառաչանս արտա-
սուալիս առուղղեա՛ հանապազ,
զի հոգի քո արդիւնաւորիցի երև-
իլ երջանիկ առաջի Տեառն՝ զկնի
մահուան:

Գլուխ ԻԴ:

Յաղագս դատաստանի, և պատժոց մեղաւորաց:

1. Ամենայնում իրի նկատեա սեամ զվախճանն, և թէ որպէս կայցես առաջի անաչառ դատաւորին, յորմէ ոչ ինչ ծածկի, որ ընծայիւք ոչ համոզի, և զպատճառանս ոչ ընդունի, այլ միայն ըստ իրաւանց դատէ: Ո՛վ յիմար՝ և ողորմելի մեղաւոր, զի՞նչ պատասխանի տացես այ, որ գիտէ զքոյս բնաւս չարութիւնս, որ երբեմն երկնչիս ակնարկել յերեսս առն բարկացելոյ: Ընդէ՞ր ոչ պատրաստես զքեզ վն աւուր դատաստանի, յորում ոչ ոք այլով միջնորդիւ կարէ, կամ ջատագովել, այլ իւրաքանչիւրոք է բեռն բաւական իւրեան: Այժմ արգիւնաւորք են քոյք աշխատանք, ընդունելիք են քոյք արտասուք, լսելիք են քոյք հեծութիւնք, հատուցիչ և մաքրիչ մեղաց են քոյք ցաւք:

2. Զմեծ, և զառողջարար ապաշխարութի ունի այրն, որ համբերէ փորձութեանց, և որ ընկա

լեալ

լեալ զանխրաճութիւնս, առա-
ւել ցաւի վ՟ա չարութեան գործողին,
քան վ՟ա անխրաւութեանցն զորս
ընկալաւ. որ յաղագս ընդդիմա-
կաց իւրոց յօժարութե՟ն աղօթէ, և
'ի բոլորէ սրտէ նոցին յանցանաց
ներէ, որ 'ի խնդրելոյ զթողութի
յայլմէ ոչ յուլանայ. և որ դիւրա
պէս գթայ քան թէ բարկանայ. որ
զանձն իւր յաձախապէս մշտա
դնէ, և զմարմինն հոգւոյն իւ-
րում ջանայ բոլորովիմբ հնազանդ-
առնել: Բարեգոյն է այժմ մաք-
րել զմեղս, և հատանել զմոլութիւս,
քան թողուլ մինչև 'ի վախճան
գբաւելիսն: Ճշմարտապէս պատ-
րեմք զմեզ սակս աննկարգի սիրոյն՝
զոր ունիմք առ մարմինս մեր:

3. Զի՞նչ կլանելոց է հուրն այն,
եթէ ոչ զմեղս քոյս: Որքան ա-
ռաւել անխնայես այժմ 'ի քեզ, և
հետևիս մարմնոյ քում, այնքան
սաստկապէս յապա պատժեսցիս,
և զմեծագոյն նիւթ հրոյն կիզման
ժողովեսցես: * Որով ոք մեղանչէ, Իմաստ. 11. 17
նովիմբ կարծրապէս տանջի:
'Ի դժոխս ժանտք, խայթոցիւք
հրացելովք կիզեսցին. և որկրա
մոլք ծարաւով անհագնով՝ և սո
վով

վով տագնապեցին, անդ ըղձա
խոհք՝ և հեշտութեանց սիրողք,
ընկալթսայս եռացուցելս կպրով,
և ծծմբով գարշահոտիւ մաշես
ցին. և նախանձոտք իբրև զշունս
կատաղիս սակս ցաւոց խուրեանց
կծեցին:

4. Ո՛չ են յանցանք որք զպա
տիժս նոցա յատուկս ոչ ունիցին:
Ա՛նդ գոռոզք ցնդմամբ մեծաւ
ահաբեկեցին. և ագահք թշուա
ռիւ կարօտութբ̃ վշտանկեցին:
Ա՛նտ ծանրագոյն է կալն զժամ
մի ընպատժում, քան աստ զամս
հարիւրս 'ի մէջ ծանուցից ապաշխա
րութեանց: Ա՛նտ ոչոք է հան
գիստ, և ոչ լինի մխիթարութիւն
դատապարտեցելոց. բայց՝ աստ
երբեմն հանգչիլ կարիցէ ոք յաշ
խատանաց, և կամ սփոփիլ մխի
թարութբ̃ 'ի բարեկամաց: Արդ՝
զգոյշ լեր աստ, և ցաւիր սակս
քոյոց մեղաց, զի յաւուր դատաս
տանի լինիցիս աներկեան ընդ ար
Ի Իմաստ. դարոց: * Քանզի յայնժամ կաց
5. 1 ցեն արդարքն մեծաւ համարձա
կութբ̃ յանդիման այնոցիկ՝ որք
վշտագնեցին զնոսա, և տառապե
ցուցին: Յայնժամ ոչ դատեսցին

այ

այնոքիկ, որք աստ դատողութեց մարդկան խոնարհաբար զինքեանս ստորարկեցին: Յայնժամ զմեծ համարձակութիւն ունիցի աղքատն՝ և խոնարհն, և ահաբեկ լիցի յամենայնէ կողմանէ հպարտն:

5. Յայնժամ համարեսցի նա ի միատնապէս կեցեալ յաշխարհի այսմիկ, որ ուսեալէ լինել յիմար և խոտելի վն Քի: Յայնժամ հաճոյ թուեսցի ամ նեղութիւն համբերութբ կրեցեալ, * և ամ անօրէն խցցէ զբերան իւր: Յայնժամ Սաղմ. 106.42
խնդասցէ ամ բարեպաշտ, և տրտմեսցի ամ ամբարիշտ: Յայնժամ առաւել զուարճասցի մարմին վշտագնեցեալ, քան զմարմին հեշտութեբ՝ յար սնուցեալ: Յայնժամ փայլեսցին հանդերձք խոտելիք, և խաւարեսցին հանդերձք ազնիւք: Յայնժամ առաւել գովեսցի տուն ինչ աղքատաշէն, քան զպալատ ինչ ոսկենկար: Յայնժամ առաւել օգնեսցէ համառօտ համբերութիւն, քան զամ աշխարհի զօրութիւն: Յայնժամ առաւել բարձրասցի զուտ հնազանդութիւն, քան զամենայն աշխարհի նրբահայեցութիւն:

6. Յայնժամ առաւել համա
րեսցին խղճմտանք մաքուրք, քան
զհմուտ փիլիսոփայութիւն։ Յայն
ժամ առաւել վարկեսցի խոստումն
փարթամութեանց, քան զբնաւս
գանձս երկրածնեայց։ Յայն
ժամ առաւել մխիթարեսցես մտ̃
քոյոց ջերմեռանդից աղօթից,
քան մտ̃ քոյոց նրբից ուտելակե
րութեանց։ Յայնժամ առաւել
խնդասցես մտ̃ քոյոց լռապահու
թեանց, քան մտ̃ քոյոց երկարից
առասպելաբանութեանց։ Յայն
ժամ առաւել արժեսցին գործք
սրբք, քան զբանս բարձունս և գե
ղեցիկս։ Յայնժամ առաւել հա
ճոյ թուեսցի խստակրօնութիւն,
և կարծր ապաշխարութի, քան
զամ հեշտութիւն երկրային։
Ուսի՛ր տրտմել այժմ զդոյն
ինչ նեղութիւն, զի յայնժամ 'ի
մեծագունից կարիցես զերծանիլ։
Անդ՝ նախ փորձեա՛ զքեզ թէ
զի՞նչ կարիցես յետոյ տանել։
Եթէ այժմ զսակաւ ինչ փորձու
թիւն ոչ կարես կրել, որպէս մար
թասցիս կրել զմշտնջենաւոր պա
տիժս։ Եթէ այժմ սակաւ ինչ
կիրք զանհամբերութիւն բերեն,
զի՞նչ

զի՞նչ առաբերելոցք են քեզ յայն ժամ դժոխք: Ահաւասիկ արդարև՝ ասեմ, ոչ կարես ունիլ միանգամայն զերկուս խնդութիւնս, այսինքն՝ զզուարճանալն յաշխարհի այսմիկ, և զթագաւորելն անդէն ընդ Քրիստոսի:

7. Եթէ մինչև ցայսօր միշտ պատուովք՝ և հեշտութեամբ կեցեալ էիր, զի՞նչ օգուտ լինէր քեզ այժմ, թէ հանդիպէր քեզ մահ: Ունայնութիւն ամենայն ինչ ունայնութիւն է, բաց 'ի սիրոյն Աստուծոյ՝ և 'ի ծառայութենէ նորին: Քանզի՝ որ զԱստուած յամենայն սրտէ իւրմէ սիրէ, նա ոչ 'ի մահուանէ, և ոչ 'ի տանջանաց, և ոչ 'ի դատաստանէ, և ոչ 'ի դժոխոց երկնչի. զի սէր կատարեալ զաներկեւան մատչումն առ Աստուած մեզ շնորհէ: Իսկ՝ որ դեռևս մեղօք հեշտանայ, ոչ են զարմանք, թէ երկնչիցի 'ի մահուանէ՝ և 'ի դատաստանէ: Սակայն բարի է, զի եթէ ոք սիրով ոչ հեռանայ 'ի չարէ, երկիւղն գոնեա՞ դժոխոց, զսասցի: Իսկ՝ որ զերկիւղն Աստուծոյ ոչ այնքան համարէ, 'ի բարիս տևել ոչ կարէ, այլ վաղվաղակի՝ անկանի յորոգայթս սատանայի:

Գլուխ

Գլուխ ԻԵ.

Յաղագս ջերմեռանդի ուղղման բոլորից մերոց վարուոց:

1. Լե՛ր զգաստ՝ և զգոյշ 'ի պաշտաման Տեառն, և խորհեաց յաճախապէս, առ ի՞նչ կոչեցար, և ընդէ՞ր թողեր զաշխարհ: Ո՛չ ապաքէ՞ն վասն այնր, զի Այ կեցցես, և այր հոգեւոր լինիցիս: Ուրեմն փութա՛ 'ի քոյդ յառաջադիմութիւն, զի զվարձս աշխատանաց քոց փութով ես ընդունելոց. և յայնժամ ոչ եղիցի ևս երկիւղ, և ոչ ցաւ 'ի սահմանս քոյս: Փոքր ինչ այժմ աշխատիս, և զմեծ հանգիստ, և առաւել ևս՝ զմշտնջենաւոր խնդութի գտցես: Եթէ դու միայցես հաւատարիմ, և անվհատ 'ի յառնելիս, Թարց ումեք կարծեաց եղիցի ևս Ած հաւատարիմ, և ձոխ 'ի հատուցմունս: Զյոյս բարի ունիլ պարտիս, թէ ընդունելոց իցես զյաղթանակն. բայց զաներկիւանութիւնն ոչ է պարտ ունիլ, մի՛ գուցէ յուլանայցես, կամ փքանայցես:

2. Մինչ ոմն նեղութեբ 'ի մէջ երկիւղի, և յուսոյ յաճախապէս ալէ

ալէկոծիւր, և երբեմն ախորժութբ
խանձեալ յեկեղեցւոջն առաջի
սրբոյ սեղանոյն ուրուք, անկեալ 'ի
վը երեսաց խորոց կայր յաղօթս,
և զայս 'ի միտ խորում խորհէր
ասելով, մա՞չ թէ գիտէի՝ թէ տա
կաւին յարատեւելոց իցեմ, և յան
կարծակի՝ լռեա զմծայինն ներ
յինքեան պատասխանի. եթէ գի
տէիր զայդ՝ զի՞նչ կամէիր առնել:
Արա այժմ, զոր յայնժամ կամէ
իր առնել, և եղիցիս աներկեան:
Ուստի մխիթարեցեալ՝ և արիացեալ
յանձնեաց զինքն կամացն այ, և
հանգեաւ 'ի տառապչէ անախ ալէ
կոծմանէ: Եւ ո՛չ կամեցաւ հե
տաքրքրութբ խուզել, թէ զի՞նչ
լիցէ դիպելոց նմա 'ի հանդերձե
լումն, այլ մանաւանդ ջանաց
խնդրել թէ զի՞նչ լիցէ կամն այ
բարեհաճելին՝ և կատարեալն,
առ 'ի սկսանելն՝ և կատարել զամե
նայն գործ բարի:

3 · Յուսա՛ 'ի Տր, և արա՛ զբա Սաղմ
րի (ասէ մարգարէն) բնակեաց 36 · 3
յերկրի, և հովուեսցիս 'ի մեծու
թեան նր: Մի խնն է՝ որ զբա
զում 'ի յառաջադիմութե, և 'ի
ջերմեռանդէ զգաստութե տարա

քար

քարշէ, այսինքն՝ երկիւղ դժուա րութեան, կամ աշխատանք պա տերազմաց։ Այլ սակայն այնո քիկ առաւել քան զայլս 'ի յառա ջինութիւն յառաջանան, որք առաւ ել ծանուցեալ՝ և հակառակք լինել արիաբար յաղթել ջանան։ Քանզի անդ ոք առաւել շահի, և արդիւնաւորի շնորհիւ մեծաւ, ուր զինքն առաւել յաղթէ, և հո գւորապէս ճնշէ։

4. Բայց ոչ ամէքն ունին զյաղ թելիս հաւասարս՝ և զճնշելիս։ Սակայն հետազօտն նախանձաւոր, հզօրագոյն է առ'ի յառաջել, թէև զբազում ունիցի զփորձութիւնս, քան զբարեկրօն ոք, որ ոչ իցէ ջերմեռանդ 'ի յուքինութիւն։ Երկու են՝ որք աւսակաբար օգնեն մեծի զգաստութեան, այսինքն, ստորա քարշել զինքն բռամբ յայնմանէ, առ որ բնութիւնն վատթարաց հակէ. և քաջապէս պատերազմիլ սակս բարւոյն, որում առաւել ոք կարօտի։ Քանզի յայնցանէ 'պար տիս զգուշանալ, և զայնպիսիս յաղթել, որք քեզ անհաճելիք յա ճախապէս թուին։

5. Ամենայն ուրեք զգաստութեն

քո կալցես. զի եթէ զօրինակս
բարիս գտանիցես, կամ լուիցես,
համաձայնեալ նոցին ջանայցես։
Բայց՝ եթէ զպարսաւելի ինչ տե-
սանիցես, զգոյշ լեր, մի՛ զնոյնն առ-
նիցես. կամ եթէ գործեալ իցես
երբեմն, վաղվաղակի ուղղել
զքեզ ջանայցես։ Որպէս տեսա-
նես զայլս, այնպէս եւ տեսանիս
յայլոց։ Վա՛հ թէ որպէս վայե-
լուչ է՝ եւ քաղցր, տեսանել զջեր-
մեռանդս, եւ զբարեպաշտս եղբարս,
բարեկրօնս, եւ զկրթեցեալս։
Ո՛րպէս տրտմալի է՝ եւ ծանր, տե-
սանել զշրջօղս անկարգապէս,
որք զայնոսիկ՝ առ որս են կոչե-
ցեալք, ՚ի կիր. ոչ արկանեն։
Եւ ո՛րպէս վնասակար իցէ, զանց
առնել զառաջադրութեամբ կոչման
իւրոյ, եւ առ յայլ հրամայեցեալն
զզգայութիւն իւր ձկտեցուցանելն։

6. Լե՛ր յիշող առեցելոյն ՚ի
քէն յառաջադրութեան, եւ դի՛ր ա-
ռաջի աչաց քոց զխաչեցելոյն
պատկեր։ Եւ յոյժ պատկառես-
ցիս տեսանելով զկեանս Յի̄ Քի̄,
զի չեւես զքեզ նմին առաւել համա-
կերպել ջանացեր, թէ եւ՝ զբազում
ժամանակս շրջեցար ՚ի շաւիղս այ̄։

Կրօ-

Կրօնաւոր՝ որ կրթէ զինքն զգու
շապէս, և ջերմապէս 'ի վարս սըր
բազանս, և 'ի չարչարանս Տ՟ն մե
րոյ Յ՟ի Ք՟ի, զա՟մ ինչ օգտակար՝
և զկարևոր ինքեան առատապէս
գտանէ. և ոչ է հարկ, թէ խնդրի
ցէ զինչ բարեգոյն բաց 'ի Ք՟է:
Ո՜հ թէ խաչեցեալն Յ՟ս բնակէր
'ի սրտի մերում, որքան փութով,
և բաւականապէս լինէաք հմուտք:

7. Կրօնաւոր ջերմեռանդ՝ բա
րեպէս կրէ, և առնէ զա՟մ ինչ պա
տուիրեցեալ նմա: Կրօնաւոր
ծոյլ և թոյլ, ունի զվիշտս 'ի վե
րայ վշտաց, և յա՟մէ կողմանէ կրէ
զնեղութիւնս, զի ոչ ունի զներքին
մխիթարութիւն, և 'ի խնդրելոյ
զարտաքինն արգելանի: Կրօնաւ
որ՝ որ կեայ արտաքոյ խրատու,
արտադրէ զինքն մեծի գլորման:
Որ զթուլագոյնս, և զհեշտագոյնս
խնդրէ, կայ միշտ 'ի նեղութեան.
քանզի մինն, կամ միւսն անհաճոյ
թուի նմա:

Որպէս կարեն տանիլ այլք կրօ
նաւորք, որք այնքան խստութ՟ք
կան 'ի ներքոյ վանականի կառա
վարութեան: Հազիւ երբեք ելա
նեն 'ի դուրս, բնազանցապէս՝
կեան

կեան, աղքատապէս՝ ուտեն, խոշորապէս՝ զգենուն, շատ աշխատին, սակաւ խօսին, երկարապէս՝ հսկեն, կանխապէս՝ յառնեն, զաղօթս երկարեն, յաճախապէս՝ ընթեռնուն, և զինքեանս բնաւիւք ներկրթութ̃ք պահպանեն։ Հայեաց 'ի Կարթուզեանսն, և'ի Չիստերցեանսն, և յայլս միակեացս, և'ի կուսանս զանազանից կրօնից. որպէս յանուն գիշերի յառնեն 'ի սաղմոսել Տն։ Ուստի անպատեհ իմն է, թէ դու 'ի յայնքան սրբազանէ գործոյ ծուլանայցես, որով այնքան բազմութի կրօնաւորաց սկսանին առ Աճ հրճուիլ։

9. Ո՜հ, եթէ ոչ բոլորիւ սրտիւ՝ և բերանով, պարտաւիւր 'ի գովութիւն Տեառն Այ. և ոչ յայլ ինչ։ Ո՛հ, թէ ոչ երբեք կարօտէր ուտել, և ոչ ըմպել, և ոչ ննջել. կարող էր միշտ գովել զԱծ, և 'ի յիրս հոգևորս միայն պարապիլ. յայնժամ՝ առաւել երջանկագոյն լինէր քան այժմ, զի այժմ սակս իւրաքանչիւրոց կարեաց ծառայէ մարմնոյ։ Երանի թէ ոչ էին այսպիսի կարիք, այլ միայն անձին հոգևորականքն սնուց

մունք

մունք, զորս սակայն հազիւ՛ եր
բէք ճաշակեմք։

10. Յորժամ ոք առժամանեա
յայն աստիճան, զի ոչ խնդրիցէ
'ի յառեղծուածոյ ումեքէ զմխիթա
րութիւն, յայնժամ նմա ած նախնա
պէս՝ և կատարելապէս սկսանի
քաղցրանալ. յայնժամ և զոհու
նակ զամենեցունց դիպուածոց լի
նի։ Յայնժամ ոչ յաղագս մեծի
իրի ուրուք խնդայ, և ոչ յաղագս
փոքու իրի ուրուք տրտմի, այլ
դնէ զյոյս իւր բոլորովին՝ և հաւ
ատարմապէս 'ի յած, որ է ամ յա
մենայնում որում ոչ ինչ կորնչի՝ և
ոչ ինչ մեռանի, այլ բնաւքն 'ի նմա
կեան, և 'ի նշմարելն նորին,
թարց ումեք նեղխաւդութեան
ծառայեն նմին։

11. Լե՛ր միշտ յիշօղ քոյոյ վախ
ճանի՝ և այնորիկ, թէ ժամանակն
կորուսեցեալ անդրէն ոչ դառնայ։
Թարց ումեք հետազօտութե, և
զգուշութեան ոչ երբէք ստանին
առաքինութիւնք։ Եթէ սկսա
նիցիս թուլանալ. սկսանիս և չա
րակրապէս կեալ։ Իսկ՝ եթէ տայ
ցես զքեզ 'ի ջերմեռանդութիւն,
գտանես զխաղաղութիւն սակս
շնոր

շնորհացն մոյ, և սիրոյն առաքինու-
թեանն։ Այր ջերմեռանդ՝ և ըղ-
դոյլ պատրաստ է առ ամ ինչ։
Մեծագոյն աշխատանք են, ընդ-
դիմամարտիլն վատթարութեց՝ և
ախտից, քան մարմնականօք աշխա-
տութք քրտնիլն։ * Որ զպակասու- Ժղվ.
թիւնս փոքունս ոչ 'ի բաց ձգէ, 19. 1
որ ըստ օրէ 'ի մեծագոյնս սահի։
Ուրախանաս միշտ յերեկոյի, եթէ
արդեամբք զտիւն անցուցեր։
Զգաստացի՛ զքեզ, զարթի՛ զքեզ,
առաջադրեա՛ քեզ, և որ ինչ զայլոց
ասիցի, մի զանցառներ սակայն
զքեզ։ Այնքան յառաջադիմես-
ցես, որքան ջանայցես։

ՎԵՐՋ։

Ութ

Ութսուն և իններորդ։

Բան Սրբոյն մերոյ Գրիգորի, Նարեկայ Վանաց Վանականի, հոգեմաքրեան Հանեփորի, և Հրեշտակամարմին Վարդապետի Հայոց։

Աստուած՝ և Տէր. կեանք՝ և արարիչ. ողորմած. գթած. լոյս. երկայնամիտ. անոխակալ. մարդասէր. ամենագութ. պարգևատու. Փրկիչ. Օրհնեալ. Գովեալ. Բարեբանեալ։ Դարան ամրութեան։ Պատսպարան վստահութեան։ առանց նենգութեան բարի։ առանց խաւարի ճառագայթ։ քաւիչ մեղաց։ ողջացուցիչ վիրաց։ անհասանելեաց հնար։ անմատչելեաց հպաւոր։ անյուսութեան ելք։ անուն քո խոստովանեալ՝ Աստուծոյ որդի։ Եւ Հօր քոյ ընդ քեզ հզօրի, և Հոգւոյդ ամենակալի, և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք, և պաշտօն գոհաբանութեան՝ յաւիտեանս.
Ամէն։

Աղօթանս. ուր մի փոքր ինչ ճաշյէ պարապ։

Թ. Օ



Իմա. զինչ Հոգին ճշմարտութեն խօսի ընդ քեզ:
Յայտ. Բ. 17:

ԹՈՄԱՅԻ ԿԵՄՓԻՍՑԻՈՅ։

Յաղագս

ՀԱՄԱՀԵՏԵՒՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ։

Առաջնորդութիւնք տանողք առ ներքնայինս։

Գլուխ Ա։

Յաղագս ներքնայնոյ կենցաղավարութեան։

Ա*ՐՔԱՅՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒծոյ 'ի ներքս 'ի Ղուկ. 17. 21
ձեզ է, ասէ Տրն։ Դարձի՛ր առ Տր 'ի բոլորէ սրտէ քումմէ, և թող զաշխարհս ողորմելի, և գտցէ հոգի քո զհանգիստ։ Ուսի՛ր խոտել զիրս արտաքինս՝ և պարապել 'ի ներքինայինս, և տեսցես գալ

գալ 'ի քեզ զարքայութիւնն քո։
Հռօմայ 14.17 * Քանզի արքայութիւնն քո է խա
ղաղութիւն, և խնդութիւն 'ի
Հոգին սբ, որ ոչ շնորհի երբեք
ամբարշտաց։ Եկեսցէ առ քեզ
Քս ցուցանելով քեզ զիւրն մխի
թարութիւն, եթէ զարժանաւո
նակն բնակութիւն նմին ներքսա
կես պատրաստիցես։ Նորին ամե
նայն փառք, և վայելչութիւնք
են ներքնայինք, և անդ հաճոյա
ձի ինքեան։ Նորին յաճախ այցե
լութիւն է ընդ մարդոյն ներքնոյ,
քաղցր խօսակցութիւն, դիւրա
զգած մխիթարութիւն, բազում խա
ղաղութիւն, և զարմանազոյն ըն
տելութիւն։

2. Աղէ ուրեմն ով դու Հոգի
հաւատարիմ, պատրաստեա այս
միկ փեսայի զսիրտ քո, զի արժա
նացուցանիցէ զքեզ գալ՝ և բնա
Յովհան կիլ 'ի քեզ։ Քանզի ասէ, * եթէ
14.23 ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ,
և առ նա եկեսցուք, և օթեվանս
առնմա արասցուք։ Տուր ու
րեմն զտեղի Քի, և այլոց ամենե
ցուն փակեա զմուտ։ Մինչ զՔս
ունիցիս, փարթամ իսկ ես, և
բաւական է քեզ։ Նա ինքն նա

խրատեսուչ քո լինիցի, և հաւատա
րիմ հոգաբարձու յամ̃նում, և ոչ եր
բէք կարօտիցիս յուսալ 'ի մարդիկ։
Քանզի՝ մարդիկ վաղվաղակի փո
փոխին, և փութապէս նուաղին.
իսկ Քս̃ մնայ 'ի յաւիտեան, և կայ
քեզ մերձ հաստատապէս մինչև 'ի
վախճան ։

3. Ո՛չ է պարտ դնել * զյոյս Երեմ.
մեծ ընդ մարդւում ումեք բեկանե 17. 5
լւում և մահկանացուում, թէև՝
օգտակար, և բարեկամ իցէ, և ոչ
է վայելուչ տխրել այնքան, թէև՝
դարձցի երբեմն, և ընդդիմամար
տիցի։ Ով որ այսօր ընդ քեզ է,
վաղիւն կարէ դառնալ 'ի քէն. և
հակադարձեալ, բազմիցս իբրև
զօդ կրկնափոխիլ։ Դի՛ր զբոլոր
յոյս քո ընդ յԱստուծում, և նա ե-
ղիցի յերկիւղ քո, և սէր քո։
Նա պատասխանեսցէ վն̃ քոյ, և
արասցէ բարեպէս, զի բարեգոյն
լիցի։ Ո՛չ ունիս աստ զքաղաք
մնացական, այլ ուրեք իցես, օտար
ես՝ և * պանդուխտ, և ոչ երբեք Սաղմ.
գտցես զհանգիստ, եթէ ոչ ընդ 118. 19
Քն̃ հարազատապէս միաւորիցիս։

4. Ընդէ՞ր ակնարկես այսր՝ և
անդր, որովհետև ոչ է այս տեղի

քոյ

քոյոյ յանդորրութե՛ն։ ՚Ի յերկինս պարտ է լինել քոյդ բնակութե՛ն․ և երբ անցաւոր՝ միայն պարտիս նկատել զբնաւս։ Անցանի ամենչ միանգամայն, և դու ընդ նոսին, զգոյշ լեր, զի մի՛ ապաւինեցուս ՚ի նոսա, զի մի՛ և դու ընդ նոսին ըմբռնեցիս, և կորնչիցիս։ Քոյդ խորհուրդ առ Ած միշտ վերացի, և աղերսանք քոյդ առ Քս անդադարապէս ուղղեսցին։ Եթէ ոչ կարես նկատել զվեհագոյնս՝ և զերկնայինս, հանգիր ՚ի չարչարանս Քի, և ՚ի վէրս նորին սրբազանս յօժարութբ բնակեաց։ Զի եթէ ՚ի խոցս՝ և ՚ի սպիս սրնիս Յի, ջերմեռանդապէս ապաւինեցիս, զմեծ մխիթարութի գտցես ՚ի մէջ նեղութեան․ և ոչ այնքան զփոյթ ունիցիս զարհամարհանացն մարդկայնոց, և դիւրապէս մարթեսցիս տանել զբանս պարսաւականս։

5․ Քրիստոս ևս մինչ էր յաշխարհի, պարսաւեալ ՚ի մարդկանէ․ և՝ ըն հարկաւորում ժամու, ՚ի ծանօթից՝ և ՚ի բարեկամաց իւրոց թողանիւր ՚ի մէջ նախատանաց։ Քս կամեցաւ չարչարիլ՝ և

 խո

խօսիլ, և դու վասն քոյ լինիս մը
բեժխնդիր: Քրիստոս ունէր զհա
կառակորդս, և զընդդիմամարտս,
և դու կամիս, զի ընաւք իցեն
քեզ բարեկամք՝ և բարերարք:
Ո՛րպէս կամիս արդիւնաւորիլ
սակս քոյոյ համբերութե: Եթէ
ոչ ինչ ընդդիմամարտութի քեզ
աղխալիցի: Ո՛րպէս լինիցիս բա
րեկամ Քի, եթէ ոչ կամիս տա
նիլ հակառակաց քոց: Ըմբերեա՛
ընդ Քի, և վասն Քի, եթէ կա
միս թագաւորել ընդ Քի:

6. Եթէ միանգամ կատարելա
պէս մտեալ էիր 'ի խորս Քի, և
սակաւ ինչ 'ի սիրոյ նորին ճաշակա
նէ ճաշակեալ էիր, ոչ ինչ զփոյթ
ունէիր զնախատանաց, զյանդոր
րութեանց՝ և զանյանդորրութեց,
այլ մանաւանդ խնդայիր սակս
պարսաւանաց քեզ աղխալեցե
լոց. զի սէրն Յի առնէ զմարդ քա
մահօղ ինքեան: Սէրն Յիսուսի,
և ճշմարտութեանն առնէ զմարդ
խաղաղէս ներքին, և ազատ յամե
նեցուն կրից անկարգից. և որ ու
նի զնա, կարէ ազատապէս դառ
նալ առ Աստուած, և վերա
նալ հոգւով 'ի վեր քան զինքն,

և զմայլապէս՝ յարահանգիլ:

7. Որ համարէ զիմաստս ըստ այնմ որ են, և ոչ ըստ այնմ որ ասին, կամ վարկեցեալք լինին, նա է ճշմարիտ իմաստուն, և ուսուցեալ մանաւանդ յԱյ, քան 'ի մարդկանէ: Որ ներքսապէս գիտէ գնալ, և զիրս արտաքինս իբր զոչինչ վարկանել, նա ոչ խնդրէ տեղի, և ոչ սպասէ ժամանակաց, առ 'ի առնել զհոգևոր ներկրթութիւն: Այր ներքին վաղվաղակի՝ զինքն ժողովէ. քանզի ոչ երբէք հեղանի բոլորապէս՝ առարտաքինս: Ո՛չ արգելուն զնա աշխատանք արտաքինք, կամ պարապմունք առ ժամանակ ինչ հարկաւորք. այլ ըստ իրաց եկելոց, զինքն պատրաստէ: Որ ըստ ներքնոյն բարեպէս է յօրինեալ, և կարգաւորեցեալ, ոչ հոգայ զզարմանալեաց՝ և զվատթարից առնից մարդկայնոց: Այնքան մարդ արգելանի՝ և տարացնդի, որքան զիրս արտաքինս առ ինքն քարշէ:

8. Թէ ներքսապէս ուղղեցեալ էիր, և բարեպէս մաքրեցեալ, ամ ինչ աջողիւր քեզ բարեպէս,

և

և արդիւնաւորապէս։ Վասն այն
բազում ինչ քեզ անհաճոյ լինի,
զի դեռևս ոչ ես կատարելապէս
ներ 'ի քեզ մեռեալ, և ոչ որոշե
ցեալ յիրաց երկրայնոց։ Ո՛չինչ
այնքան բծաւորէ՝ և վրդովէ զսիրտ
մարդկան, որքան սէր անմաքուր
արարածոց։ Եթէ ոչ հրաժա
րիցես 'ի մխիթարութենէ արտաք
նոյ, ոչ կարես նկատել զվերս երկ
նայինս, և յաճախապէս հրճուել
ներքնապէս։

Գլուխ Բ։

Յաղագս խոնարհականի զիջման։

1. Մի՛ համարիցիս մեծ ինչ,
եթէ ունիցիս զոք բա
րեկամ քեզ՝ և կամ ընդդէմ քեզ.
բայց զայս խնամ՝ և հոգա զի իցէ
ած ընդ քեզ յամենայնում զոր
առնես։ Ունիցիս զխղճմտանս բա
րիս, և ած բարեպէս ջատագովես
ցէ վասն քո։ Քանզի որում ած
օգնել կամի, նմին ոչ ուրուք թիւ
րութիւն վնասել կարէ։ Եթէ
գիտիցես լռել՝ և համբերել, տես
ցես աներկբայապէս Տեառն զօգ
նութիւն։ Նա գիտէ զժամանակն՝
և

և զեղանակ զքեզ ազատելոյ, վս որոյ՝ պարտիս զքեզ նմին ուսանա գրել: Այս է օգնելն, և յաւէտ չփութեմանէ զմեզ ազատելն: Բայց միջն՝ յոյժ օգտակար է մեզ առ ՚ի պահել զմեծ խոնարհութիւն, մինչ այլք խնանան զմերս պակասութիւնս, և յանդիմանեն զմեզ:

2. Յորժամ ոք վասն պակասութեց իւրոց խոնարհի, յայնժամ դիւրապէս զայլս հաճեցուցանէ, և թեթևապէս՝ զիջուցանէ զցասումն նախատչաց իւրոց: Զխոնարհս պահէ ա͞ծ՝ և ազատէ, զխոնարհս սիրէ, և մխիթարէ. առ խոնարհս միտէ. խոնարհաց ընձեռէ զմեծամեծս շնորհս, և զկնի նուաստութե՝ բարձրացուցանէ զնոսա ՚ի փառս: Խոնարհաց յայտնէ զխորհուրդս իւր, և առ ինքն քաղցրապէս քարշէ՝ և հրաւիրէ: Խոնարհն մինչ ընդունի զվիշտս, բաւականապէս է ՚ի խաղաղութե. զի կայ յԱստուծում, և ոչ յաշխարհի: Մի կարծիցես զքեզ յառաջադիմել կերպիւ իւիք, եթէ ոչ ստորնագոյն գոլ քան զամենեսեան զքեզ զգայցես:

Գլուխ

Գլուխ Գ։

Յաղագս Առն բարւոյ՝ և խաղաղարարի։

1․ Խաղաղացո՛ նախ զքեզ, և ապա կարասցես զայլս խաղաղացուցանել։ Օգտակարագոյն է այր խաղաղարար՝ քան զայր հմուտ։ Այր ախտաւոր զբարին ևս՝ ՚ի չարն առքարշէ, և դիւրապէս հաւատայ չարին։ Այր բարի՝ և խաղաղարար զամ ինչ դարձուցանէ ՚ի բարին։ Որ բարեպէս կայ ՚ի խաղաղութեան, յոչ ումեքէ բամբասի, իսկ որ դժգոհունակն է՝ և վրդովեցեալ, զանազանիւք բամբասանօք տարբերի․ և ոչ ինքն հանգչի, և ոչ զայլս հանգուցանէ։ Բազմիցս արտաբերէ զայն, զոր ոչ պարտի արտաբերել, և զանցանէ զայն միմնէ, որ առաւել նմա վայելէ։ Նշմարէ թէ զինչ առնել պարտին այլք, և ըստունկանէ զայնմանէ, զոր ինքն պարտի առնել։ Նախանձեաց ուրեմն զբարի նախանձն նախ վ՚ քոյ, և ապա իրաւապէս նախանձիլ կարասցես սակս ուղղութեան մերձաւորին քոյ։

2․ Բա

2․ Բարւոք՝ գիտես զարիւնս
քոյս արտաքսարել՝ և կերպաւո
րել, բայց ոչ կամիս ընդունիլ
զպատճառանս այլոց։ Արդիւ
նաւորագոյն լինէր, թէ ամբաս
տանէիր զանձնէ, և պատճառէ
իր զարարմունս եղբօրն։ Եթէ
կամիցիս թէ այլք ներիցեն քեզ,
ներեա՛ և դու այլոց։ Տես թէ
որքան հեռի իցես 'ի սիրոյ Ճշմար
տէ, և 'ի խոնարհութենէ․ որ ոչ
գիտէ երբեք ցասնուլ՝ կամ զայրա
նալ, եթէ ոչ ինքեան ևեթ։
Ո՛չ է մեծ ինչ, ընդ արս բարիս՝
և ընդ հեզս կենցաղավարիլ․ (զի
այսմիկ բնականաբար ամենեքեան
հաճին, և իւրաքանչիւրոք յօժա
րապէս կամի զխաղաղութիւն, և
զհամաձայնօղս ինքեան սիրէ) բայց
ընդ խստից՝ և ընդ մոլորեցելոց,
կամ ընդ բրտից, և կամ ընդ հակա
ռակաց մերոց խաղաղութեամբ
կեալն՝ մեծ իմն շնորհ է, և գործ
իմն յոյժ գովելի՝ և օգտակար։

3․ Են ոմանք, որք են միշտ 'ի
խաղաղութեան, և ընդ այլ ևս ու
նին զխաղաղութիւն։ Եւ են,
որք ոչ ինքեանք ունին զխաղաղու
թիւն, և ոչ թողուն զայլս կալ 'ի

խաղ

խաղաղութեան. այլոց են ծառայք, սակայն ինքեանց են միշտ ծանրագոյնք: Են ևս ոմանք, որք զինքեանս ունին 'ի խաղաղութե, և ջանան զայլս ևս առածել անդր: Բայց նոյնպիսի աշխարհի ողորմելուամ, զբոլոր խաղաղութիւնն մեր պարտիմք դնել ընդ խոնարհական համբերութեան, քան թէ ընդ հակառակում: Որ բարեպէս գիտէ համբերել, ունի զմեծ խաղաղութիւն: Սա է յաղթօղ ինքեան, և տէր աշխարհի, բարեկամ Քի, և ժառանգորդ երկնից:

Գլուխ Գ:

Յաղագս մաքրամտութեան, և պարզադիտութեան:

1. Երկու են թևք, որովք վերանալ կարէ ոք յերկրայնոց, այսինքն՝ պարզութիւն՝ և մաքրութիւն: Պարզութիւնն գոլ պարտի ընդ դիտաւորութեան, և մաքրութիւնն 'ի յիղձս: Պարզութիւնն նկատէ զԱծ, և մաքրութիւնն ըմբռնէ՝ և ճաշակէ: Ոչ ինչ գործ բարի կարէ զքեզ արգելուլ, եթէ իցես ազատ ներքսա

պէս

պէս 'ի յղձից անկարգից։ Եթէ զոչ այլինչ, այլ միայն զհաճոյս այ, և զօգտութիւն եղբօրն կամիցիս՝ և խնդրիցես, ներքնայնով ազատութեամբ զմայլիլ կարես։ Եթէ ունէիր սրտի յայնժամ զամ ստեղծուած իբր զհայելի կենաց, և գիրք սրբազանի վարդապետութեան համարէիր։ Ո՛չ ինչ ստեղծուած է այնքան խոտան, որ ո՛չ յարացուցանիցէ զբարութիւնն Ա. Յ։

2. Եթէ էիր ներքսապէս բարի՝ և մաքուր, զամ ինչ Թարց արգելման տեսանէիր՝ և իմանայիր։ Սիրտ մաքուր Թափանցէ 'ի յերկինս՝ և 'ի յանդունդս. Որպէս ոք է 'ի ներքուստ, այնպէս դատէ յարտաքուստ։ Եթէ գտանիցի խնդութիւն ինչ յաշխարհի այսմիկ, վայելէ զնա այր, որ սուրբ է սրտիւ։ Եւ եԹէ գոյ ուրեք վիշտ և նեղութիւն, ճանաչէ զայն բարեպէս՝ այր անխիղճ։ Որպէս եր կաԹ արկեցեալ 'ի հուր, կորուսանէ զժանկահարութիւնն, և բոլորովիմբ ջեռուցեալ լինի. այսպէս այր՝ որ դարձուցանէ զինքն ամենևիմբ առ Աձ, 'ի Թմրու

Թե

թենէ մերկանայ, և՛ի նոր մարդ-
փոխարկի:

3. Յորժամ ոք սկսանի զանդա-
ղիլ, յայնժամ երկնչի 'ի սակաւ
յաշխատանաց, և յօժարութի̃ ըն-
դունի զարտաքին մխիթարութի̃:
Բայց՝ յորժամ ոք սկսանի կատա-
րելապէս յաղթահարել զինքն, և
քաջապէս շրջիլ 'ի շաւիղս Տ̃ն,
յայնժամ առ ոչինչ վարկանի
զայնոսիկ, զորս յառաջագոյն գոլ
ծանունս հաւատայր:

Գլուխ Ե:

Յաղագս նկատման անձին իւրոյ:

1. ՈՉ պարտիմք հաւատալ
մեզ յոյժ, զի բազմիցս
նուաղիմք 'ի շնորհաց՝ և՛ի յիմացո-
ղութենէ: Զգոյշն ինչ լոյս ու-
նիմք 'ի մեզ, և զայն եւս լատունկ
անմամբ մերով կորուսանեմք:
Բազմիցս ևս՝ սակս ներքնայնոյ մե-
րոյ կուրութեան ոչ զգուշանամք:
Եւ բազմիցս զչար ինչ առնեմք,
և զչարագոյնս պատճառեմք:
Երբեմն շարժիմք յախտից մերոց,
և կարծեմք թէ իցէ 'ի բարւոյ
նախանձէ: Սակս սակաւուց պա-

կատարելութեց յանդիմանեմք զայլս․ իսկ զմերովք մեծամեծօք սխալանօք զանցանեմք։ Յոյժ վաղվաղակի զգամք՝ և կշռեմք, թէ զի՛նչ կրեմք յայլոց․ բայց թէ ո՛ր քան այլք կրիցեն ՚ի մէնջ, ո՛չ մտածեմք։ Վասն որոյ՝ եթէ ոք բարեպէս կշռէր զայն՝ զոր ինքն առնէր, ո՛չ այնքան ծանրապէս դատէր զայլս։

2․ Այր ներքին առաւել հանարի զհոգս անձին, քան զհոգս ընդնաւս այլոց իրաց․ և որ զգուշապէս նկատէ զինքն, դիւրապէս լռէ զայլոց իրաց։ Ո՛չ երբէք եղիցիս այր ներքին՝ և առաքինի, եթէ ո՛չ լռիցես զիրաց օտարաց, և ՚ի քեզ տեսակաբար ակնարկիցես։ Եթէ ՚ի քեզ՝ և յԱ՟ծ բոլորապէս դիմիցես, փոքր ինչ՝ կարիցեն զքեզ շարժել իրքն զորս արտաքուստ ըմբռնես։ Ո՞ւր ես, մինչ՝ ո՛չ ես ընդ քեզ։ Եւ զի՛նչ օգտիս, մինչ զանցանելով զքեն խորհիս զբնաւից իրաց։ Եթէ պարտիս ունիլ զխաղաղութիւն, և զմիաւորութիւն ճշմարիտ, արժան է, զի զամենայն ինչ ոսցին ստորադրիցես, և զքեզ միայն ա-

ռա

ուշին աչաց քոց ունիցիս:

3. Զարդիւնս բազումս ունիցիս, եթէ զքեզ ազատ 'ի ընաւից ժամանակականաց հոգոց պահիցես: Յոյժ նուաղիցիս, եթէ զկէն ցաղականս իր ինչ վարկանիցես: Ո՛չ ինչ քեզ մեծ, ո՛չ ինչ բարձր, ո՛չ ինչ դիւրազգած, և ո՛չ ինչ ընդունելի թուիցի, եթէ ո՛չ պարզ Ած, կամ որ զԱծ ակնյայ է: Թէ դիպիցի քեզ մխիթարութիւն յիմեքէ ստեղծուածոյ, զամենայնն ունայնութիւն վարկցիս: Հոգի, որ սիրէ զԱծ, արհամարհէ զամենայն ինչ՝ որ է արտաքոյ Այ: Ած միայն է յաւիտենական, և անչափ, լցուցիչ զամենայն, մխիթարութիւն անձին, և ճշմարիտ խնդութիւն սրտի:

Գլուխ Է:

Յաղագս խնդութեան բարի խղճմտանաց:

1. Փառք առն բարւոյ, * է վկայութիւն բարի խղճմտանաց: Ունիցիր զբարի խիղճ մտաց, և ունիցիս միշտ զուարթութ- 2. Կորն 1. 12.

թի

թի: Բարի խիղճ մտաց տանի
բազմաց իրաց, և յոյժ ուրախ լի
նի 'ի մէջ ընդդիմութեանց: Զոր
խիղճ մտաց միշտ է երկիւղալից՝ և
անյանդորր: Քաղցրապէս յարա
1. Յով հանգիցես, * եթէ սիրտ քո զքեզ
3. 21 ոչ ըստգտանիցէ: Մի կամիր խըն
դալ, եթէ ոչ մինչ զբարիս գոր
ծես: Զարք ոչ երբէք ունին ըզ
ճշմարիտ խնդութիւն, և ոչ զգան
Եսայ զխաղաղութիւն ներքնական. * քան
57. 21 զի ոչ գոյ խաղաղութիւն ամբարշ
տաց, ասէ Տէր: Եւ եթէ ասի
ցեն. թէ եմք 'ի խաղաղութեան, և
ոչ եկեսցեն 'ի վերայ մեր չարիք.
և ով է որ մեղանչել կարիցէ մեզ,
մի հաւատայցես նոցին. վս զի՝ յան
կարծակի յառնէ բարկութիւնն
այ, և յոչինչ փոխարկին նոցին ներ
գործութիւնքն, և խորհուրդք
նոցին կորնչին:

2. Պարծիլն 'ի նեղութեան, ոչ է
ծանր առն ջերմեռանդի. քանզի
Գաղա այսպէս պարծիլն, * է պարծիլ 'ի
6. 14 խաչն Տն: Սուղ են փառք՝ որք
'ի մարդկանէ ընծեռին, և առնա
նին: Աշխարհայնոց փառաց միշտ
ուղեկցի տրտմութիւն: Պարծանք
բարեաց, են 'ի խղճմտանս նոցին,
և

և ոչ 'ի բերանս մարդկան: Խնդու-
թիւն արդարոց է յաստուծոյ,
և ներ յաստուծոյ: և ուրախու-
թի նոցին, է ի վն ճշմարտութեան:
Որ ոք ցանկայ ճշմարտից, և յարա
մնայից փառաց, զժամանակաւո
րաց զփոյթ ոչ առնէ: Եւ որ
զժամանակաւորս խնդրէ փառս,
կամ 'ի սրտէ զնոսա ոչ խոտէ, ցու-
ցանէ թէ՝ զերկնայինս սակաւ
ինչ սիրէ: Որ ոք զգովութեանց,
և զպարսաւանաց զփոյթ ոչ առնէ,
ունի նա 'ի սրտի իւրում զմեծ յան
դորրութիւն:

3. Դիւրաւ լինի ոք գոհունակ՝
և խաղաղ, եթէ խղճմտանք նորին
իցեն մաքուրք: Ո՛չ լինիս սրբա
գոյն, եթէ գովիցիս. և ոչ խոտե
լի, եթէ պարսաւիցիս: Զի ես
դու, զոր ինչ եսդ. և ոչ կարես
ասել մեծագոյն քան զայն, զոր ած
զքեն վկայէ: Եթէ նկատիցես
ներքսապէս, թէ զինչ իցես դու
'ի քեզ. ոչ հոգասցես՝ թէ զինչ խօ
սին զքէն մարդիկ: * Մարդ նկա 1. Թագ.
տէ յերեսս, իսկ Այ 'ի սիրտս: 16. 7
Մարդ համարի զգործս, իսկ ած
նայի 'ի դիտաւորութիս: Միշտ զբա
րիս գործելն, և զգոյն ինչ զինքն
նէ

նէ կարծելն, է անձին խոնարհի
դատողութիւն։ Ո՛չ կամիլն սփո
փիլ յիմեքէ ստեղծուածոց, է նը
շան մեծի մաքրութեան, և ներք
նայնոյ համարձակութեան։

4. Որ զո՛չ ինչ վկայութիւն ար
տաքին վ̅ն ինքեան խնդրէ, նշա՛ն
է՝ թէ բոլորովին զինքն ա̅ծ է յանձ
2, Կորն նեալ։ * Քանզի՝ ո՛չ որ զանձն ըն
10. 18 ծայեցուցանէ, նա է կատարեալ,
այլ զոր ա̅ծ ընտրէ. ասէ երանե
լին Պօղոս։ Շրջիլն ընդ ա̅ծ ներքս
սապէս, և զգածմամբ իւիք ո՛չ պա
րաճանդիլն արտաքսապէս, է կա
ցութիւն ներքնայնոյ մարդոյն։

Գլուխ։ Է

Յաղագս սիրոյն յիսուսի 'ի վեր քան զամենայն։

1. Երանի՛ որ իմանայ թէ
զի՞նչ իցէ սիրելն զյի
սուս, և խոտել զանձն վասն յ̅ի։
Պա՛րտ է թողուլ զըղձալին վասն
ըղձալւոյն, քանզի՝ կամի յ̅ս միայն
սիրիլ 'ի վեր քան զա̅մ։ Սէր ըս
տեղծուածոյ սո՛ւտ է՝ և անկայուն.
իսկ սէրն յ̅ի հաւատարիմ է՝ և յա
րատե։ Որ առ յենու 'ի ստեղծու
ածս

ածս, գլորեսցի ընդ սահմանաց.
որ փարի զյիսուսիւ՝ հաստատես
ցի 'ի յաւիտեան։ Զնա սիրեա՛,
և կալ քեզ բարեկամ. որ 'ի հե
ռանալն ամենեցուն ո՛չ թողու
զքեզ, և ո՛չ թոյլ տայ, զի կորնչի
ցիս 'ի վախճանի։ Պա՛րտ է քեզ
յամենեցունց երբեմն բաժանիլ,
եթէ կամիցիս, և եթէ ո՛չ կամի
ցիս։

2. Կա՛լ զքեզ մերձ յի, կելով
իբր զմեռեալ. և հաւատարմու
թեան նորին առ յանձնեա՛ զքեզ.
որ 'ի նուաղիլն ամենեցուն, կարէ
քեզ միայնակ օգնել։ Ըղձաւորդն
քոյ այսպիսիք են բարք, որ ո՛չ
հաճի թէ ձգիցես առ այլ ինչ
զսէր քո, այլ կամի ինքն միայն ու
նիլ զսիրտ քո, և որպէս արքայ 'ի գա
հի իւրում սեփականի բազմիլ 'ի
նմին։ Եթէ կարեիր զքեզ դա
տարկել բարեպէս յամէ արարծու
ածոյ, իրաւի յս յօժարապէս ընդ
քեզ բնակէր։ Գրեթէ զբնաւն
կորուսեցեալ գտանիցես, զոր ինչ
արտաքոյ յի 'ի մարդիկս եդեալ
ես 'ի պահեստ։ Մի՛ յուսայցես,
և մի՛ յենուցուս 'ի վերայ եղեգան
հողմակոծի. * զի ամ մարմին խոտ
է Եայ

40. 6 է, և համայն նորին փառք իբրև
զծաղիկ խոտոյ անկանին:
3. Փութով խաբեսցիս, եթէ
նկատիցես միայն 'ի յարտաքին ե-
րևոյթ մարդկան: Քանզի՝ եթէ
խնդրես 'ի յայլս զքոյդ մխիթա
րութի, և զշահ, զդայցես բազ
միցս զտուժանս: Եթէ խնդրի
ցես նմանում զՅս, գտցես արդա
րև՝ զՅս. իսկ եթէ խնդրիցես
զքեզ, գտցես և զքեզ, բայց 'ի
կորուստ քո: Զի առաւել մեղան
չէ այր ինքեան, որ ոչ խնդրէ զՅս,
քան թէ բոլոր աշխարհ, և բնաւք
իւրքն հակառակք:

Գլուխ Ը:

Յաղագս ընտանեկան սիրելութեան Յիսուսի:

1. Մինչ մերձ է Յս, ամե
նայն ինչ բարի է, և
ոչ ինչ դժուարին թուի. իսկ յոր
ժամ ոչ է մերձ Յս, ամ ինչ խիստ
է: Մինչ Յս, 'ի ներքուստ ոչ
խօսի, մխիթարութիւնն է սնոտի.
իսկ՝ եթէ Յս զբան իմն և եթ խօ
սիցի, մեծ իմն մխիթարութի իմա
նի. Ո՛չ ապաքէն Մարիամ մագ

դա

դալենացին յարեւու փաղփաղակի
'ի տեղւոջէն, նորուն լոյս, մինչ
ասաց նմա մարթա թէ * Վարդա Յոհան
պետն եկեալ է, և կոչէ զքեզ: 11. 28
Երջանիկ է ժամն, յորում Յս ա-
կոչէ զմեզ յարտասուաց 'ի խնդու-
թիւն հոգեկան: Վա՜յ թէ որպէս
ցամաքի, և կարծրանայ ոք թարց
Յի, և որքան յիմարի և ունայ-
նանայ ոք, մինչ ըղձայ զիր ինչ
բաց 'ի յիսուսէ: Ո՛չ ապաքէն
առաւել է այս տուժան, քանթէ
կորուսանիցէ ոք զբոլոր աշխարհ:

2. Զի՞նչ կարէ քեզ շնորհել
աշխարհ թարց Յի: Գոլն թարց
Յի, դժոխ է դժնէարին. և գոլն
ընդ Յի, արքայութիւն է ըղձալի:
Եթէ իցէ ընդ քեզ Յս, ոչ ոք
թշնամի կարէ քեզ մեղանչել: Որ
գտանէ զՅս, գտանէ զգանձ բա-
րի, մանաւանդ զբարի գերքան
զբարի. և որ կորուսանէ զյիսուս,
յոյժ առաւել կորուսանէ, և գեր
քան զընաւ աշխարհ: Աղքա-
տագունեղ ոք է նա, որ կեայ թարց
Յի. և փարթամագունեղէ նա որ
բարւոք է ընդ յիսուսի:

3. Մեծ արհեստ է, գիտելն ը-
Յի զկենցաղավարելն, և գիտելն
ու-

ունիլ զՅն, մեծ խոհեմութիւն է։ Լեր խոնարհ՝ և խաղաղարար, և եղիցի ընդ քեզ Յն։ Լեր ջերմեռանդ՝ և յանդորր, և բնակեսցէ ընդ քեզ Յս։ Եթէ կամիցիս միտել առ արտաքինս փութով փախուցանես զՅն, և զշնորհս նորին կորուսանես։ Եւ եթէ զնա փախուցանիցես, և կորուսանիցես, առ ո՞ գնասցես, և զո՞ խնդրեսցես քեզ սիրելի։ Թարց սիրելւոյ, ոչ կարես կեալ բարեպէս, և եթէ Յս ոչ եղիցի քեզ գեր քան զբնաւս սիրելի, եղիցիս յոյժ տըրտում, և անօգնական։ Ուրեմն զյիմարութիւն գործես, եթէ 'ի [illegible] յուսայցես, կամ այլով իւիք խնդայցես։ Ընտրելի է մանաւանդ զբոլոր աշխարհս ունիլ ընդդէմ, քան զՅն զայրացուցանել։ Այս ուրեմն առաւել քան զբնաւս տուփալիս, եղիցի քեզ միայն սեփական սիրելի Յս։

4. Սիրեսցին այլք բնաւք յաղագս Յի, իսկ Յն միայն վասն իւքեան։ Միայն Յն Քն, է եզականապէս սիրելի. և նա միայն գտանի բարի, և հաւատարիմ 'ի մէջ սիրելեաց։ Վասն նորա՝ և նո-

վաս

վաւ, թէ բարեկամք՝ և թէ թշնամիք լիցին քեզ սիրելիք. և յաղագս նոցին բնաւից աղերսել պարտիս զՅն, զի ամենեքեան լիցին արժանիք ճանաչել զնա, և սիրել։ Մի՛ ըղձայցես երբեք առանձնապէս սիրիլ՝ կամ գովիլ, զի այս է միայնոյ այ, որ զնման ինքեան ոչ ունի։ Մի՛ կամիցիս թէ ոք 'ի սրտէ քո զմայլեսցի, և մի՛ ևս դու զբաղեսցիս այլայնով սիրով. այլ միայն Յս լիցի ընդ քեզ, և նմանայնում անձին բարւում։

5. Լեր ներքսապէս մաքուր՝ և ազատ, թարց ունելոյ ստեղծուածոյ ներշաղկապմանէ։ Եթէ կամիս պարապիլ և տեսանել թէ որպէս քաղցր է Տր, պարտ է քեզ զմերկ և զուտ սիրտ առ այծ կրել։ Եւ իրաւի ոչ մարթեսցիս առ այս ժամանել, եթէ ոչ շնորհօք նորին նախապատրաստեսցիս՝ և ներքաշեսցիս. զի յամենեցունց դատարկացեալ և արձակեցեալ, միայնոյ այ միայնում միաւորիցիս։ Վասն զի մինչ շնորհն Տեառն գայ առ մարդիս, լինին կարօղք առ ամ ինչ. և մինչ հեռանայ 'ի նոցունց, լինին աղքատք՝ և անզօրք, որպէս թէ

թո

թողեցեալք լիցին 'ի պատիժս:
Յայնպիսիս ոչ պարտի վհատիլ ոք՝ և յուսահատիլ, այլ խնդութեամբ կալ ըստ հաճութեան Տեառն. և զընաւս պատահմունս կրել 'ի գովութիւնն Յի Քի. քանզի՝ զկնի ձմեռան հետեւի ամառն. և զկնի գիշերոյն լինի վերստին տիւ. և զկնի ամպոց, լինի մեծ պարզութի:

Գլուխ Թ.

Յաղագս նուաղման բնաւի սփոփմանն:

1. ՈՉ է ծանր ինչ՝ խոտել զմխիթարութիւն մարդկային, մինչ ունի ոք զԱծային: Մեծ է և յոյժ մեծ, ոչ ունիլն զմարդկային՝ և զԱստուածային մխիթարութիւն. և վս փառացն այ տանիլն աքսորման սրտի. և ոչ խնդրելն զիւրն ներ յումեք. և ոչ նկատելն 'ի յարդիւնս յատուկս:
Վա՛չ թէ ով մեծ է զոլն զուարթ՝ և ջերմեռանդ 'ի գալն շնորհաց, զի ըղձալի է այս ժամ բնաւից անձանց: Յոյժ դիւրապէս ձիաւորի, զոր շնորհն այ առեալ տանի:
Եւ ոչ են զարմանք՝ թէ ոչ զգայ

ցէ զբեռն ինչ այնպիսին, որ տարեալ լինի յամենակարողէ. և ածի ՚ի վեհէ յառաջնորդէ:

2. Յօժարաբար կամիմք ունել զկր ինչ վն մերոյ մխիթարութեան, և դժուարաւ մերկանայ մարդ ՚ի յինքենէ: Յաղթեաց սուրբն Լաւրէնցիոս հանդերձ իւրով քահանայիւ. զի զամ ինչ՝ որ հրճուելի տեսանիւր ընկենցաղում այսմիկ, արհամարհեաց. և զբարձումն ՚ի յինքենէ մեծի քահանային այ Սիքստոսի՝ զոր յոյժ սիրէր, վն սիրոյն Քրիստոսի, հեզաբար կրեաց: Ուրեմն սիրով ըստեղծողին, զսէր մարդկային յաղթահարեաց. և առաւել քան ըզ մարդկային սփոփումն, զածային բարեհաճութիւնն ընտրեաց: Ուսի՛ր այսպէս՝ և դու թողուլ զքոյս հարկաւորս՝ և զըղձալիս բարեկամս, վն սիրոյն այ: Եւ մի դժուարին թուեսցի քեզ թողանիլն ՚ի բարեկամաց, գիտելով զայն, թէ պարտ է մեզ ամենեցուն բաժանիլ երբեմն ՚ի միմեանց:

3. Բազմիցս՝ երկարապէս՝ պարտի ոք ընդ ինքեան պատերազմիլ, նախ քան թէ գիտիցէ զինքն բոլո-

րո

րովլխմբ յաղթահարել, և զխղճմ
ընտաւս առ ած ուղղել: Յորժամ
ոք ապաւինի 'ի յինքն, դիւրաւ
առաւաձի 'ի մխիթարութիւնս մարդկայ
նս: Իսկ՝ ճշմարիտ սիրողն քի,
և հոգունական հետևողն առաքինու
թեց, ոչ ձգտի 'ի մխիթարութիւնս,
և ոչ խնդրէ զզգայականս քաղց
րութիւնս. այլ խնդրէ մանաւանդ
զներկրթութիւնս ծանունս, և զաշ
խատանս խիստս վն Քի կրել:

4. Մինչ շնորհի քեզ յաստուա
ծուստ հոգեկան մխիթարութիւն
ինչ՝ ընկալ զնա մատուցմամբ գո
հութեանց. բայց վարկեա զնա
ձիր Այ, և ոչ պտուղ քոյոց ար
դեանց: Մի փքանար, մի առաւ
ել քան զչափն խնդար, և մի ունայ
նաբար մեծաբաներ. այլ մանաւ
անդ լեր խոնարհագոյն ձրիւն այ
նու, զգուշագոյն՝ և երկիւղածա
գոյն յամս քոյս ընտաւս. զի անցա
նէ ժամն այն, և հետևի փորձու
թն: Մինչ բառնի 'ի քէն մխիթա
րութիւնն, մի իսկոյն յուսահատիր,
այլ խոնարհութբ՝ և համբերութբ
սպասեա երկնայնոյ այցելութե.
քանզի կարող է ած զառաւելա
գոյն մխիթարութիւն քեզ վերա
շնոր

շնորհել: Ո՛չէ այս նոր ինչ, և ոչ
այլանդակ ինչ ճանաչողաց զճանա
պարհս Տր̅ի. վասն զի՝ մեծամեծաց
ևս սրբոց, և հնոց մարգարէից դի
պեցաւ բազմիցս այսպիսի այլայլու
թեան եղանակ:
5. Ուստի՝ ոմն, մինչ ներկայն էր
շնորհն՝ ասէր. * Ես ասացի 'ի բա Սաղմ.
րեկենդանութեան իմում, թէ ոչ 29. 7
սասանեցայց 'ի յաւիտեան: Եւ
մինչ շնորհն էր 'ի բացեայ, թէ
զինչ լցէ յինքեան զգացեալ, առա
դրէ ասելով. * Դարձուցեր զե 29. 8
րեսս քո յինէն, և ես եղէ խռովե
ցեալ: Բայց սակայն՝ նայսոսիկ ոչ
երբէք յուսահատի, այլ արիաբար
զՏր̅ աղերսէ՝ ասելով. * Առ քեզ 29. 9
Տր̅ կարդացի, և առ Ա̅ծ իմ աղա
ղակեցի: 'Ի վախճանին՝ զպտուղս
աղօթից իւրոց առաբերէ, և զինքն
ընկալեալ գոլ վկայէ ասելով:
* Լուաւ ինձ Տր̅՝ և ողորմեցաւ. և 29. 11
Տր̅ եղև ինձ օգնական: Բայց՝ նո
րուս արդեօք: * Դարձուցեր՝ ա 29. 12
սէ, Տր̅ զսուգ իմ 'ի խնդութիւն,
հերձեր յինէն զքուրձ, և շուրջ պա
տեցեր զիս ուրախութ̅բ: Արդ՝
եթէ այսպէս դիպեցաւ սրբոց մե
ծաց, ոչ պարտիմք յուսահատիլ
մեք

մեք տկարքս, և աղքատքս, թէ
իցեմք երբեմն ընջերմեռանդու-
թեան, և երբեմն ընցրտութե. զի՛
Հոգին մերձենայ, և հեռանայ ըստ
բարեհաճութեան կամաց իւրոց:
Իօբ Ուստի երանելին Իօբ ասէ. * այց
7. 18 առնես 'ի նա յառաւօտու, և յա-
կոյն փորձես զնա:

6. Յո՞ւ ուրեմն յուսալ կարեմ, կամ յո՞ արդեօք ապաւինել, եթէ ոչ միայն 'ի մեծ ողորմութիւնն քո, և միայն 'ի յոյսն շնորհին երկնայնոյ: Քանզի՝ թէև ունիցիմ զայրս, կամ զեղբարս առաքինիս, կամ զբարեկամս հաւատարիմս, կամ զգիրս սրբազանս, կամ զընձեռուածս գեղեցիկս, կամ զգանձս՝ և զերգս քաղցունս. սակայն ամենեքեան այսոքիկ սակաւ ինչ օգնեն, և դոյն ինչ համոյին, եթէ լիցեմ զրկեցեալ 'ի շնորհաց, և մնայցեմ տակաւին յիմում սեփականում աղքատութեան: Յայնժամ ոչ է այլ ինչ դեղ լաւագոյն, քան զհամբերութիւնն, և զխոստումն անձին ըստ հաճութեան Աստուծոյ:

7. Ո՛չ գտի զոք երբեք այնքան առաքինի, և ջերմեռանդն, որ ոչ

լինէր կրեալ երբեմն զհեռաւորու-
թիւնն, և կամ ոչ լինէր զգացեալ
զնուազումն ջերմեռանդութեանց։
Մինչ ՚ի սորեղ այնքան բարձրա
պէս յառաջադիմեցաւ՝ և վսեմացաւ,
որ ՚ի յսկզբան՝ կամ ՚ի վախճանի
ոչ փորձեցաւ։ Քանզի՝ որ ոչ է
կրեալ զփորձութիւն ինչ վս այ,
նա ոչ է արժանի համանկատմանն
այ։ Զի փորձութիւն նախընթաց
է նշան հետևեցելոյ՝ մխիթարու-
թեն։ Վասնզի՝ փորձութեամբք
զննելոցն, երկնայինն խոստանի
մխիթարութիւն։ * Որ յաղթէ, Յայտն. 2. 17.
ասաց՝ տաց նմա ուտել ՚ի փայտէն
կենաց։

8. Տրի ուրեմն Աճայլն մխի
թարութեն մարդոյ, զի լիցէ հզօրա
գոյն ՚ի կրելն զպատերազմունս։
Հետևելի ևս փորձութիւն, զի մի՝
սակս բարւոյն, հպարտանայցէ։
Ո՚չ ննջէ սատանայն, և ոչ մարմինն
դեռևս է մեռեալ. վասն որոյ՝
մի դադարիր ՚ի պատրաստե
լոյ զքեզ ՚ի պատերազմ.
զի՝ յաղթէ, և յանհեկէ
թշնամիք ոչ եր
բեք դադա
րին։

Գլուխ Ժ։

Յաղագս երախտագիտութեան, որ վասն շնորհացն Աստուծոյ։

1. Ընդէ՞ր խնդրես զհանգստութիւն, որովհետեւ ծնիցեալ ես 'ի յաշխատութիւն։ Պատրաստեա՛ զքեզ մանաւանդ 'ի համբերութիւն, քանթէ 'ի մխիթարութիւն. եւ 'ի բառնալ զխաչն տն, առաւել քանթէ գտանել զխնդութիւն։ Քանզի՝ ո՞վ ոք յաշխարհայնոց յօժարաբար ո՛չ ընդունի զմխիթարութիւն՝ եւ զխնդութիւն հոգեկան, եթէ միշտ գտանել զնա մարթիցի։ Զի մխիթարութիւնք հոգեկանք գերազանցեն զհեշտութիւնս աշխարհի ընաւս, եւ զփափկութիւնս մարմնոյ։ Վասն զի՝ համայնք հեշտութիւնք աշխարհի, կամ ունայնք են, կամ աղտեղք։ Այլ հոգեկանք զուարճութիւնք, են միայն նաեւք վայելուչք՝ եւ համեստք, նախածնիցեալք յառաքինութեանց, եւ յաստուծոյ 'ի միտս մաքուրս ներհեղանեցեալք։ Բայց այսպիսեօք Աստուածայնովք մխիթարութե̃ք ո՛չ ոք միշտ ըստ ըղձից իւրոց

րոց զմայլիլ կարէ, զի ժամանակ փորձուԹեան ոչ այնքան լուէ:

2. Յոյժ մարտնչի ընդ վերնոյ նոյ այցելուԹեան պատրողական ազատուԹիւն հոգւոյն, եւ ապաւէ նուԹիւն անձին: Աճ բարուօք անէ, մինչ տայ զշնորհս մխիԹա րուԹեան, իսկ մարդիկ չարապէս վարին, մինչ զբնաւն ինչ ընդ շնոր հակալուԹեան ոչ առընձեռնեն: Վ՜որոյ՝ հեղանիլ 'ի մեզ ոչ կարեն ձիրք շնորհաց, քանզի՝ ապերախ տանամք առաջի հեղինակին. եւ զբոլորն ոչ առհեղումք 'ի ծագն աղբիւրական, Զի այնմիկ պատ շաճի շնորհն, որ արժանապէս շնորհակալ լինի, եւ բառնի 'ի վերա ցելոյն, այն՝ որ սովոր է առն խոնարհի:

3. Ո՛չ խնդրեմ ես զայնպիսի մխիԹարուԹիւն, որ բերէ ինձ զխղճմտանս. եւ ոչ ըղձամ այնպի սւոյ համանկատման, որ ածէ զիս 'ի սնապարծուԹի: Քանզի՝ ոչ ամ բարձրուԹիւն, է սրբազան. եւ ոչ ամ քաղցրուԹի, բարի. եւ ոչ ամ իղձ, է մաքուր, եւ ոչ ամ ցանկուԹիւն, հաճելի Աստու ծոյ: Յօժարաբար ընդունիմ

զայն

զայնպիսի շնորհ, որով կարիցեմ միշտ խոնարհիլ, և երկիւղած լինիլ, և առ՚ի խոտել զիս պատրաստ գտանիլ։ Համառօտ սակս ձրբոյն շնորհաց, և ներկրթեցեալն ՚ի պատճառս պատժոյ ամփոփման, ոչ իշխէ զբարի ինչ ինքեան առընձեռել, այլ մանաւանդ աղքատ՝ և մերկ զոլ զինքն խոստովանի։

Ղուկ * Տուր զպատուածոյն ԱՅ. և կալ
17. 18 զքոյն ՚ի քեզ, այս է՝ առընձեռելնոյ զշնորհս փոխանակ շնորհաց. իսկ քեզ միայնում զյանցանս, և զարժանի պատիժս յաղագս յանցանաց, ըմբռն զոլ վարկեալ։

Ղուկ 4. * Կալ զքեզ միշտ ընտեղւոջ
14. 10 խոնարհում, և շնորհեցի քեզ տեղի բարձրագոյն. քանզի թարց ստորնոյն, ոչ կայանայ վերինն։ Սուրբք՝ որք վեհագոյնք են առաջի այ, են նուաստագոյնք ՚ի յին քեանս. և որքան անդ փառաւորագոյնք, այնքան առ խոնարհագոյնք։ Լրացեալք ճշմարտութբ՝ և փառօք երկնայնօք, անոտեաց փառաց ոչ երբեք ցանկան։ Հիմնեցեալք յԱստուած՝ և համահաստատեցեալք ՚ի նմին, բնաւ ոչ կարեն մեքանալ։ Եւ որք զբարի ինչ

ինչ ընդունելին առ Այ՛ վերարե-
րեն, *զփառս 'ի միմեանց ոչ խընդ- Յոհան
րեն. այլ զփառսն՝ որք միայն յաս- 5. 44
տուծոյ են, կամին և ցանկան,
զի Այ 'ի յինքեանս, և'ի բնաւս
սուրբս գովիցի, և այսպէս յամ՟
'ի յոյս փուլթան:

5. Լե՛ր ուրեմն հաւատարիմ ըն-
փոքում, և արժանի լինիցիս ըն-
դունիլ զմեծագոյնն: Փոքրա-
գոյն ձիրն եղիցի քեզ իբր զմե-
ծագոյն. և առաւել արհամարհե-
լին, իբր զտեսակաւոր իմն շնորհ:
Եթէ արժանաւորութիւն տու-
ողին նկատիցի, ոչ ինչ ձիր է նուաղ՝
և կամ խոտելի: Զի ոչ է փոքր
ինչ՝ որ 'ի բարձրելոյն տյ ընձեռի:
Թէև զպատիժս՝ և զկոփմունս
տայցէ, հաճելի թուիլ պարտի,
վն զի՝ միշտ սակս կեցութեան մե-
րոյ առնէ, մինչ թոյլ տայ, զի իր
ինչ մեզ առդխախիցի: Որ ըղձա-
պահել զշնորհն տյ, լիցի երախտա-
գէտ շնորհացն տյ ինքեան ընձե-
ռեցելոց, և համբերող վասն 'ի
բաց բարձեցելոյն: Աղօթիցէ՝ զի
վերստին տացի. *Զգոյշ իսկ 2. Յօհ
լիցի՝ և խոնարհ, զի մի կորուսա 1. 8
նիցէ զորեցեալն:

Գլուխ

Գլուխ ԺԱ:

Յաղագս սակաւութեան սիրողաց խաչին Յիսուսի:

1. Ունի թերևս Յս̄ զյոգունս սիրողս արքայութեան իւրոյ երկնայնոյ, բայց զսակաւս բարձողս խաչին իւրոյ: Ունի զբազումս ցանկացողս մխիթարութեան, բայց զսակաւ կըրողս նեղութեան. գտանէ զյոգունս սեղանակիցս, բայց զսակաւ պահօղս: Ամենեքեան ըղձան ընդ նմին խնդակցել, բայց սակաւք կամին վս̄ նորա կրել զդըժուարութիւն ինչ: Բազումք հետևին ք̄ի մինչև 'ի բեկումն հացին. բայց սակաւք մինչև 'ի յըմպումն բաժակին չարչարանաց: Յոքունք զհրաշս նորա պատուեն, սակաւք նախատանաց խաչին հետևին: Բազումք զՅս̄ սիրեն, մինչդեռ ընդդիմութիւն ինչ ոչ դիպի նոցին: Բազումք գովեն ըզնա, և բարեբանեն, մինչդեռ զսփոփումն ինչ 'ի նմանէ ընդունին: Բայց թէ Յս̄ զինքն թաքուցանիցէ, և դոյն ինչ զնոցունց անփոյթառնիցէ. կամ անկանին 'ի

տըր

տրտնջմունս, և կամ 'ի վհատութիւնս մեծամեծս։

2. Իսկ՝ որք զՅս վասն Յի, և ոչ վասն իւրայնոց սեփականաց մխիթարութեանց սիրեն, զնա յամենայնում դժուարութեան, և նեղասրտութեան՝ իբր ըն մխիթարութե մեծի բարեբանեն։ Թէև ոչ երբէք տայցէ զմխիթարութեան ինչ նոցին, սակայն զնա միշտ գովեն, և զնմանէ շնորհակալք լինին։

3. Վա՛յ թէ որքան կարող է մաքուր սէրն Յի, մինչ ոչ է խառնեցեալ օգտութե մարմնականաւ, կամ սիրով սեփականաւ։ Ո՞չ ապաքէն վարձկանք են առձայնելիք ամենեքեան այնոքիկ, որք միշտ խնդրեն զմխիթարութիւն։ Ո՞չ ապաքէն սիրողք ինքեանց մանաւանդ երևին այնոքիկ՝ քանթէ Քի, որք խորհին միշտ զօգտութենէ, և զշահից իւրեանց։ Ո՞ւր գտանի այնպիսի ոք, որ կամիցի ձրի ծառայել Այ։

4. Հազիւ երբէք գտանի ոք այնքան հոգևոր, որ լցէ մերկացեալ յամենեցունց իրաց։ Քանզի՝ զճշմարիտ աղքատն հոգւով, և

և յամէ ստեղծուածոյ զմերկա-
ցեալն, ո՛ գտանիցէ, զի՛ 'ի հեռաս-
տանէ՝ և 'ի վերջնոց սահմանաց է
գին նր: Եթէ տայցէ ոք զգոյս
իւրս ընաւս վասն նորա, դեռևս
ոչինչ է: Եւ թէ արասցէ զապաշ-
խարութիւն մեծ, դեռևս դոյն
ինչ է: Եւ եթէ ունիցի զամ՛ գի-
տութիւն, դեռևս երկար է:
Եւ թէ ունիցի զառաքինութիւ
մեծամեծս, և զջերմեռանդու-
թիւս յոյժ բորբոքեցեալս, դեռ-
ևս բազում ինչ ինքեան պակաս
է. այսինքն՝ մի ինչ, որ է դերքան
զամենայն ինքեան հարկաւոր:
Զի՛նչ արդեօք: Զի՝ թողլով
զընաւս, թողցէ և զինքն, և յին
քենէ բոլորովիմբ մերկասցի, զոչ
ինչ առանձնական սէր արգելցու-
յինքեան: Եւ մինչ առնէ զամե-
նայն, զոր առնելի է, զինքն իբր
զոչ ինչ արարեալ խոստովանիցի:
5. Մի՛ զմեծ ինչ վարկանիցէ
զայն; որ մեծ ինչ համարիլ կարէ.
բայց ճշմարտապէս զինքն ծառայ
անպիտան խոստովանիցի, որպէս
Ղուկ. Ճշմարտութիւնն ասէ. * Մինչ
17. 10 առնէք զընաւս՝ որք ձեզ են պա-
տուիրեցեալք, ասացէք թէ՝ ծա-
ռայք

ռայք անպիտան եմք: Յայնժամ
գոլ կարէ ճշմարիտ աղքատ, և
մերկ հոգւով, և մարթի ասել ը՟
մարգարէին. * Զի միամօր, և Սաղմ.
աղքատ եմ ես: Բայց սակայն՝ 24. 16
ոչ ոք փարթամագոյն քան զնա,
ոչ ոք հզօրագոյն, ոչ ոք ազատա
գոյն, զի՛ զինքն, և զամենայն ինչ
թողուլ, և՛ի ստորինս զետեղել
կարէ:

Գլուխ Ժ՟Բ:

Յաղագս արքունւոյ ճանապարհի սրբոյ Խաչին:

1. Խիստ թուի բազմաց
բանս այս. * Ուրացիր Մատթ.
զանձն քո. բարձ զխաչ քո, և հե 16. 24
տևեաց Յ՟ի: Բայց առաւել խիս
տագոյն եղիցի, լսել զվերջինն
զայն բարբառ. * 'Ի բաց կացէք Մատթ.
յինէն անիծեալք 'ի հուրն յաւ 25. 41
իտենական: Քանզի՝ որք այժմ
յօժարաբար լսեն, և հետևին բա
նի խաչին, յայնժամ ոչ երկիցեն
'ի լրոյ յաւիտենականին դատա
պարտութեան: Այս նշան խա
չի եղիցի 'ի յերկինս, մինչ եկեսցէ
Տ՟ր 'ի դատել: Յայնժամ հիմացնք

ծառայք խաչին, որք խաչեցելոյն զինքեանս համակերպեցին 'ի կեանս իւրեանց, մատիցեն 'ի դատաւորն Քրիստոս մեծաւ համարձակութեամբ։

2. Զմ՞ ուրեմն երկնչիս բառնալ զխաչն Տն, որով կարասցես ժամանել յարքայութիւնն։ Խաչիւն է փրկութի, խաչիւն կեանք, խաչիւն պահպանութիւն 'ի թշնամեաց. խաչիւն ներհեղումն վերնայնոյ քաղցրութեան, խաչիւն կարողութիւն մտաց, խաչիւն խնդութիւն հոգւոյն. խաչիւն լրումն առաքինութե, խաչիւն կատարօնութիւն սրբութեան։ Ո՛չ գոյ փրկութիւն հոգւոյ, և ոչ յոյս յաւիտենականաց կենաց, եթէ ոչ ընխաչին ուն։ Բա՛րձ ուրեմն զխաչն քո, և հետևեաց Յի, և երթիցես 'ի կեանս յաւիտենականս։ Նա՛ բարձեալ զխաչ իւր նախընթացաւ, և մեռաւ վասն քո 'ի խաչին, ո՛ր զի և դու բարձցես զխաչն քո, և ըղձայցես մեռանիլ
Հռօմ. 'ի խաչին։ * Վասն զի՝ եթէ համա
6. 8. մեռանիցիս, ընդ նմա և համայառնիցես։ Եւ եթէ լինիցիս չարչարակից, եղիցիս և փառակից։

Ահա

3 • Ահաւասիկ բոլորն կայանայ 'ի խաչին, և բոլորն պարունակի ըն մահուան. և ոչ գոյ այլ իմն շաւիղ 'ի կենաս, և 'ի ճշմարիտ խաղաղութիւնն յաւիտենական, բայց 'ի շաւղէ սրբոյ խաչին, և 'ի շաւղէ հանապազորդականի մահա ցուցման: Շրջեաց ուր և կամիս, խնդրեա՛ զոր ինչ և հաճիս. և ոչ գտանիցես զվեհագոյն ինչ ճանա պարհ 'ի վեր, և ոչ զապահովա գոյն ինչ շաւիղ 'ի վայր, բայց 'ի շաւղէ սրբոյ խաչին: Տրամադը րեա՛, և կարգադրեա՛ զամ ինչ ըն հաճոյից քոց, և տեսութեանց. և ոչ զայլ ինչ գտցես, եթէ ոչ զայն, թէ պարտ է միշտ զեր ինչ կրել: թէ կամաւ, թէ ակամայ. և այս պէս միշտ զխաչն գտցես: Քանզի՝ կամ ըն մարմնով զցաւ ինչ զգաս. և կամ ըն հոգւով զնեղս ինչ կրես:

4: Երբեմն թողանիս յայ, եր բեմն 'ի մերձաւորաց վշտագնիս. և որ առաւելագոյնն է, բազմիցս ըն քեզ ինքեան ծանրանաս. և ոչ իւիք ապեղանեօք, կամ սփոփա նօք ազատիլ, կամ թեթեւանալ մարթիս. որքան հաճեսցի ած

համ

համբերել պարտիս։ Քանզի՝ կամի Ա̃ծ, զի ուսանիցիս թարց մխիթարութեան զվիշտս կրել, և նըմին բոլորովին հպատակիցիս, և լինիցիս խոնարհագոյն նեղութեն. այնու։ Ո՛չոք 'ի սրտէ այնպէս զգայ զչարչարանս Ք̃ի, եթէ ո՛չ այն որ սովորէ զայսպիսիս կրել փորձութիւնս, ուրեմն խաչն միշտ պատրաստ է, և յա̃մ ուրեք քեզ սպասէ։ Ո՛չ կարասցես զերծանիլ 'ի նմանէ, ուր և ընթանայցես, զի յո՛ր և գնասցես, զքեզ ընդ քեզ տարցես, և միշտ զքեզ գտցես։ Դարձի՛ զքեզ 'ի վեր, դարձի՛ զքեզ 'ի վայր. դարձի՛ ըզքեզ յարտաքս, դարձի՛ զքեզ 'ի ներքս. և յայսմիկ ամենեսեան գտցես զխաչն։ Եւ 'ի հարկէ պարտիս ունիլ յամենայնում ուրեք զհամբերութիւն, եթէ կամիցիս ունիլ զներքին խաղաղութիւն, և արժանաւորիլ զմշտնջենաւորն պսակ։

5. Եթէ յօժարաբար բառնաս զխաչ քո, բարձցէ և նա զքեզ, և ածցէ առ վախճանն ցանկալի, ո՛ւր ուր եղին է համբերութ̃ե, թէև աստ ո՛չ լիցէ։ Եթէ կամիս ակամայ

մայ բառնալ, բեռն քեզ առնես,
և զքեզ առաւել ծանրացուցանես.
բայց սակայն պարտ է՝ զի առնիցես։
Եթէ 'ի բաց ձգես զմի խաչն, զայլ
իմն թարց կարծեաց գտանիցես,
և թերևս զծանրագոյնն։

6. Համարիս զերծանիլ յայն
մանէ, յորմէ ոչ ոք մահկանացու
աց զերծաւ։ Ո՞վ ոք 'ի սրբոց յաշ
խարհի այսմիկ եղև թայց խաչի,
և վշտակրութե։ Զի՛ և ոչ Տէրն
մեր Յս Քս ժամ մի առանց
ցաւոց չարչարանաց եկաց, որքան
սպրեցաւ։ Վասն այնորիկ՝ ասաց
* պարտ էր չարչարիլն Քի, և յառ Ղուկ.
նելն 'ի մեռելոց, և այսպէս մտա 24. 46
նել 'ի փառս իւր։ Եւ զիարդ
դու զայլ իմն շաւիղ խնդրես,
թողլով զարքունի այս ճանապարհ,
որ է ճանապարհ սրբոյ խաչին։

7. Բոլոր կեանն Քի, խաչ էր և
մարտիրոսութի. և դու խնդրես
քեզ զհանգստութի, և զխնդու
թիւն։ Մոլորիս, մոլորիս, թէ
զայլ ինչ խնդրես, բաց 'ի կրելոյ
զվշտագնութիւնս. քանզի՝ բոլոր
այս կեանս մահկանացու, լի՛ է
թշուառութեք, և շրջափակեցեալ
խաչիւք։ Եւ որքան ոք մեծամասնու
նու.

նապէս մօրք յառաջէ, այնքան
զծանրագոյնս խաչս բաղմիցս գը
տանէ, զի պատիժ աքսորման նո
րին՝ առաւել աճի 'ի սիրոյ։

8. Բայց սակայն այնպիսին՝ որ
բազմապատկաբար վշտագնի, ոչ է
Թարց Թեթեւութեան իմիք սփո
փականի. զի զգայ առաւել զա
ճումն պտղոյ իւրոյ 'ի համբերմա
նէ խաչին իւրոյ։ Քանզի՝ մինչ
կամաւ զինքն նմին ստորանկէ, ըղ
բնաւ բեռն վշտագնութեան իւ
րոյ փոխարկէ 'ի յոյս Աստուծոյ
մխիթարութե̃։ Եւ որքան առա
ւել մարմինն վշտակրութբ̃ մաշի,
այնքան հոգին առաւել ներքնայ
նով շնորհիւ կարողանայ։ Եւ եր
բեմն այնքան համազօրանայ կրիւք
անձկութեանց՝ և ընդդիմադրու
թեանց, վ̃ս սիրոյ համակերպու
թեան խաչին ք̃ի, զի ոչ կամի
գոլ Թարց ցաւոյ՝ և վշտակրու
թեան. վ̃ս զի՝ այնքան ընդունե
լի գոլ հաւատայ զինքն ա̃յ, որքան
զբաղումս, և զծանունս վասն նո̃
կրել կարէ։ Այս ոչ է մարդկայ
ին կարողութիւն, այլ շնորհն ք̃ի,
որ այնքան կարէ՝ և ներգործէ ըն
մարմնոջ բեկանելուամ. մինչ զի՝
ջեր

չերմեռանդութիւն հոգւոյն փարի և սիրէ զայն, յորմէ բնականաբար զարհուրի, և փախչի։

9. Ո՛չ է մարդկային ինչ՝ զխաչն բառնալ, զխաչն սիրել, զմարմինն ճնշել, և 'ի ծառայութիւն ներածել. 'ի պատուոց փախչել, զնախատինս յօժարութեամբ յանձնառնուլ, զանձն խոնարհել, և բղձալն արհամարհիլ. զընդդիմադարձութիւնս ընդ տուժանաց կրել, և աջողութեան խնդք 'ի կենցաղումս այսմիկ ոչ ցանկալ։ Եթէ 'ի քեզ նայիս, ոչ ինչ յայնցանէ քև կարես։ Բայց թէ յա՛ծ յուսաս, տրի քեզ արիութիւն յերկնից, և ստորանեկանի իշխանութեան քում աշխարհ, և մարմին։ Այլ և ոչ երկիցես 'ի թշնամւոյն սատանայէ, եթէ իցես զինաւորեցեալ հաւատով, և խաչիւն քո կնքեցեալ։

10. Դիր ուրեմն զքեզ՝ իբրև զբարի, և հաւատարիմ ծառայքի, առ 'ի բառնալ արիաբար ըզխաչն տն քոյ, սիրով խաչեցելոյն վասն քոյ։ Պատրաստեա զքեզ առ 'ի կրել զբազումս ընդդիմադրութիւնս, և զզանազանս անյանդրրութիւնս յայսմիկ թշուառականնում

նում կենցաղում. քանզի այսպէս
ընդ քեզ լինելոց է, ուր և եղիցիս.
և այսպէս իրաւի գտանիցես զնա,
ուր և թագչիցիս: Պարտ է այս
պէս գոլ, և ոչ գոյ այլ իմն ճար
զերծանելոյ 'ի նեղութենէ չա
րեաց՝ և ցաւոց, եթէ ոչ այն, զի
համբերիցես: Զբաժակ Տն սի
րով ըմպեա, եթէ կամիս գոլ բա
րեկամ, և մասնակից նմին: Զմխի
թարութիւնս քոյս յանձ յանձ
նեա, և նա հոգասցէ այնպէս, որ
պէս ինքեան հաճոյ թուեսցի:
Իսկ դու դի՛ր զքեզ առ 'ի կրել
զփորձութիւնս, և համարեաց զնո
մեծագոյնս մխիթարութիւնս.
Հռովմ 8. 18 քանզի * Ո՛չ են համարժանիք չար
չարանք այսորիկ ժամանակի, առ
'ի յարդիւնաւորութիւն հանդերձե
լոցն փառաց, թէև՝ կարէիր միայ
նակ կրել զվիշտս ընաւս:

11. Յորժամ առ այն հասանի
ցես, զի նեղութիւնք քաղցունք
քեզ թուիցին, և վարկիցին գոլ
վասն Քի, յայնժամ համարեա՛
գոլ զքեզ բարւոք ընդ քեզ, քան
զի զարքայութիւնն 'ի յերկրի գը
տեր: Եւ որքան համբերութիւն
ծանր քեզ թուէր, և զփախուստ
խնդ

խնդրես, այնքան վշտագնեցիս, և հետևեսցի քեզ յա̃մռում ուրեք փախուստն 'ի նեղութեանց:

12. Եթէ առ որ պարտիս, պատրաստիցես զքեզ, այսինքն՝ 'ի համբերութիւն՝ և 'ի մահ, եղիցի քեզ իսկոյն բարի, և գտցես զխաղաղութիւն: Թէև յափշտակիցիս ընդ Պօղոսի մինչև 'յերրորդ երկինն, ոչ եղիցիս ապահով 'ի կրից պատերազմաց: (տե՛ս Յ̃)
* Ես ցուցից նմա, թէ որքան Գործ.
պա՛րտ է նմա համբերել վ̃ անուան 9. 06
ան իմոյ: Ուրեմն միայն քեզ կրելն զփորձութիւնս, եթէ սիրես զյ̃ս՝ և յար նմին ծառայել կամիս:

13. Երանի թէ էիր արժանի կրել զինչ ինչ վ̃ անուանն Ք̃ի̃. զի մեծամեծք փառք քեզ պատրաստէին, վա՜շ թէ որքան խնդութիւն լինէր սրբոցն ա̃յ, և որքան օգուտ մերձաւորաց քոց: Եւ թէ պէտ ամենեքեան պատուեն զհամբերութիւն, բայց սակաւք են որք համբերեն: Իրաւի պա՛րտ է քեզ սակաւ ինչ տանել վ̃ Քրիստոսի, որովհետև բազումք զծանունս կրեն վ̃ աշխարհի:

14. Իմա՛ զայս հաւաստապէս.

զի

զի պարտ է քեզ կեալ՝ գոլով իբր զմեռեալ: Եւ որքան ոք առաւել մեռանի 'ի յինքեան, այնքան առաւել սկսանի կենդանանալ 'յԱծ: Ո՛չ ոք է ընդունակ զերկնայինս ընդունելոյ, եթէ ոչ զիջանիցի 'ի կրել զփորձութիւն ինչ վասն Քրիստոսի: Ո՛չ ինչ ընդունելի Այ, ոչ ինչ առաւել օգուտ քեզ նայսմիկ աշխարհի, եթէ ոչ յօժար համբերութիւն վն Քի: Եթէ ընտրելի էր քեզ առաջակայն, պարտ էր քեզ մանաւանդ ընտրել զկիրս պատերազմաց վն Քի, քան զզբօսանս մխիթարութեանց. զի լինէիր Քի նմանագոյն, և ամենեցունց սրբոց առաւել համակերպագոյն: Քանզի մեր արդիւնք ոչ կայանան 'ի քաղցրութիւնս բազումս, և 'ի մխիթարութիւնս. այլ մանաւանդ 'ի ծանրութիւնս մեծամեծս, և 'ի կրմունս փորձութեանց:

15. Եթէ էր այլ ինչ բարեգոյն, և օգտակարագոյն կեցութեան մարդկան, քան թէ զկրելն. արդարև բանիւ՝ կամ օրինակաւ ցուցեալ էր մեզ Քս: Քանզի՝ և զաշակերտս, որք հետևէին ինքեան և,

և զայնոսիկ՝ որք ցանկային հետև
իլ նմին, յայտնապէս յորդորէ
բառնալ զխաչ իւր, և ասէ.
* Եթէ ոք կամի գալ զկնի իմ, ու Ղուկա
րացցէ զանձն իւր, և բարձցէ 9. 23
զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ։
Սիրեմն համընթերցեալք, և զըն
նեալք զայս ամ, դիցուք զայս
վախճանական պարփակումն։
* Քանզի բազմօք նեղութք պարտ Գործ.
է մեզ մտանել յարքայութիւնն 14. 21
Աստուծոյ։

ՎԵՐՋ։

Բան սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն։

Գլուխ հա։

ՍԻ քանզի՝ երջանիկքն, և փա
ռաւորեալքն սրբոցն պարք.
յորոց ոմանք դոյզն ինչ դժեցին.
և յաճախագոյնս հաստատեցան։
Փոքունս սասանեցան՝ և մեծա
գոյն վառմամբ նշուլից Հոգւոյն
մաքրութք լուսաւորեցան։ Յորոց
մինն զզանգուածոյն յայտնէ՝ զհա
սարակատեղծն տկարութի. իսկ
միւսն զգերազանցն՝ քան զբնու
թեանն օրէնս՝ վարս, և առաքի
նու

նութիւս հրեշտակականս: Եւ մարդ՝
նոքա՝ օրհնեալք են յամէն՝ իշխան
բերանոյ Հօրն Քի. ընտրեալքն.
տօնեալքն. խնկեալքն. և բարե
բանեալքն. իբրև զանդամս Քի
պաշտեցեալք, և իբրև զօթեվանս
Հոգւոյն սրբոյ յարդարեալք:
Ցորս չէք ինչ նշմարանք՝ և կամ
գիւտք խաւարի. այլ ամենևին ան
կեղծութիւն, և լուսաւոր արդա
րութի. և որքան մարթ է զմարդն
ոյ՝ ոյ նմանեցուցանել: Երևաք
պարզք, և անպատկառելիք: Կրօնք
բարձունք՝ և անխոնարհելիք:
կեանք զգաստք՝ և անբաղդատանե
լիք: Պաշտօն առ Ած՝ կարծր, և
անփոփոխարկելի: Ընթացք արիա
կանք՝ և անկասելիք: Ճշմարտու
թիւն միատարր՝ և անցնդելի:
Դիմադրութիւն զօրեղ՝ և անհեր
քելի: Տեսաւորութի պայծառ՝
և անամփչելի: Իմաստասիրութի
վերնական՝ և անկոխելի: Պատկեր
մաքուր՝ և անաղարտելի: Զորոց
կերպարանս, և գլխաւորս անու
անցն աղաչել՝ Ած իսկ վարդապե
տեաց: Եւ նոքօք հանճութիւն 'ի
մէջ խաւարութեան Աւարչիր-
բան լուսաւորեաց:

ԹՕ



Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն. ընդ չորն զինչ լինիցի:
. Ղուկ. 23. 31:

ԹՕՄԱՅԻ ԳԵՄՓԱՑԻՈՅ

Յաղագս

ՀԱՄԱՀԵՏԵՒՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ։

Յաղագս ներքնային մխիթարութեն։

Գլուխ Ա։

Յաղագս ներքնային խօսակցութեանն Քի, ընդ հոգւոյ հաւատարիմ։

Լ*ՈՒԱՅՑ, ԶԻՆՉ ԽՕՍԻ յիս ՏՐ Աստուած։ Սաղմ 84. 9

Երանի՜ անձին՝ որ ունկնդիր լինի Տեառն 'ի յինքեան խօսողի, և 'ի բերանոյ նր, ընդունի զբան մխիթարութեան։ Երանի՜ լսելեաց, որք զերակունս ածայնոց շնչմանց

ներ

ներընդունելին, և զաշխարհայնոց
զփոյթ ոչ առնեն: Արդարև ե-
րանելի ականջաց, որք ոչ ձայնի ար
տաքուստ հնչողի, այլ ՚ի ներքուստ
զճշմարտութիւնն ուսուցանողի
հպատակին: Երանի՛ աչաց, որք
առ արտաքինս են խփեցեալք,
բայց առ ներքինս զգաստացեալք:
Երանի՛ այնոքիկ՝ որք թափանցեն
՚ի ներքնայինս, և ՚ի յիմանալ զխոր
հուրդս երկնայինս առաւել՝ և ա-
ռաւել հանապազորդականաւ ներ
կրթութեամբ ջանան զինքեանս պատ
րաստել: Երանի՛ այնոցիկ՝ որք պա
րապին ՚ի պաշտօն Տեառն, և ՚ի
բնաւից արգելմանց կենցաղոյս այ
սորիկ զինքեանս ՚ի բաց քարշեն:
Մտադիր լեր առ այս ով անձն իմ,
և փակեա զզգայութեան քոյ ըղ
ձութս, զի կարիցես լսել, զինչ
խօսի ՚ի քեզ Տր Ած քո:

2. Զայս ասէ ցանկալին քո.
Սաղմ * Փրկութիւն քո ես եմ, խաղա
34. 3 ղութիւն քո՝ և կեան քո: Պահեա
զքեզ առ իս՝ և գտցես զհանգիստ.
թող զբնաւս անցաւորս, խնդ
րեա զմշտնջենաւորս: Զի՞նչ են
համայնք այսոքիկ ժամանակաւ
որք, ոչ ապաքէն խաբէութիւնք:
Եւ

Եւ զի՞նչ օգուտք են քեզ համայնք
ստեղծականք, եթէ 'ի ստեղծո
ղէն քումմէ զրկիցիս։ Հրաժա
րեաց ուրեմն 'ի բնաւից, ստեղծո
ղին քում լեր հաճոյ՝ և հաւատա
րիմ, զի կարիցես վայելել զճշմա
րիտն երջանկութիւն։

Գլուխ Բ։

Թէ ճշմարտութիւնն խօսի 'ի ներքս
առանց շշնջման բառից։

1.* ԽՕսեաց՝ Տր, զի լուի 1. Թգ
ցէ ծառայ քո։ 3. 1
* Ծառայ քո եմ, իմաստուն արա՛ Սաղմ
զիս, և ծանեայց զվկայութիւնս 118.
քո։ Խոնարհեցո՛ զսիրտ իմ 'ի 125։
բանս բերանոյ. իջցէ իբրև զցօղ 118. 36
պատգամ քո։ Ասէին երբեմն որ
դիքն Իսրայելի ցՄովսէս. * Խօ Ելից
սեաց դու ը̅ մեզ, և լուիցուք. և 20. 19
մի խօսեսցի ընդ մեզ Տր, մի գուցէ
մեռանիցիմք։ Ո՛չ այսպէս Տէր,
ո՛չ այսպէս աղօթեմ ես. այլ մա
նաւանդ ընդ Սամուելի մարգարէ
ին խոնարհաբար, և ըղձանօքա
պէս՝ աղերսեմ. * Խօսեաց Տր, 1. Թգ
զի լուիցէ ծառայ քո։ Մի խօսեսցի 3. 10
ընդ

ընդ ինս մօլաէս, կամ այլոք 'ի մար դարէից. այլ դու միայն խօսեաց Տէր իմ, և Աստուած իմ. որ ես ներկրթիչ՝ և լուսաւորիչ ամենե ցուն մարգարէից: Քանզի՝ դու միայն Թարց նոցին կարօղ ես զիս հմտացուցանել. իսկ նոքա Թարց քեզ զո՛չ ինչ արդիւն առնել կա րեն:

2. Զբանս Թերևս հնչել կա րեն, բայց զշնորհ ո՛չ համառօտ րեն: Գեղեցկապէս ասեն. բայց Թէ դու լռիցես, զսիրտ ո՛չ ջեր մացուցանեն: Զգիրս մեզ աւան դեն, բայց դու զդիտաւորութիւ բացայայտես: Զխորհուրդս ար տաքերեն, բայց դու բանաս զի մացուցանս կնքեցելոց: Զպատու իրանս մեզ հրամայեն, բայց դու լինիս նպաստ առ 'ի կատարել: Զճանապարհս ցուցանեն, բայց դու կազդուրես զընթացս: Նոքա արտաքուստ միայն գործեն, իսկ դու զսիրտս ներկրթես՝ և լուսա որես: Նոքա արտաքուստ առո գեն, իսկ դու զպարարտութիւն շնորհես: Նոքա հնչեն բանիւք, բայց դու լսելեաց զիմացուցանս շնորհես:

3. Այլ ուրեմն մի՛ խօսեսցի ընդ իս Մովսէս, բայց դու՝ Տէր իմ, և Աստուած իմ, որ ես ճշմարտութիւն յաւիտենական, մի՛ գուցէ մեռանիցիմ, և անպտուղ լինիցիմ, եթէ եղէց միայն արտաքուստ զգաստացեալ և ոչ 'ի ներքուստ բորբոքեցեալ. մի՛ լիցի ինձ 'ի դատապարտութիւն. բանն լուեալ՝ և ոչ արարեալ. ճանաչեցեալ՝ և ոչ սիրեցեալ. հաւատացեալ՝ և ոչ պահեցեալ: Խօսեաց ուրեմն՝ Տէր, զի լուիցէ ծառայ քո. * Զի զբանս կենաց յաւիտենականաց ունիս: Խօսեաց ը̄ իս՝ 'ի յիւրաքանչիւր մխիթարութիւն անձին իմոյ, և առ 'ի զպարունն բոլորից կենաց իմոց. իսկ և 'ի զովութիւն՝ և 'ի փառս քոյս, և 'ի պատիւ մշտնջենաւորս: Յովհ. 6. 69

Գլուխ Գ:

Թէ բանք Աստուածայինք խոնարհութեամբ լսել պարտին. և թէ բազումք ոչ նոսա խոկեն:

1. Ուր որդեակ բանից իմոց, բանից քաղցրագունեղից, որք զամ գիտութիւն փիլիսոփայից՝ և իմաստնոց այսորիկ

Յոհան աշխարհի գերազանցեն։ Իմ* բանք
6. 64 հոգի, և կեանք են, և ոչ մարդ-
կային զգայութիւ կշռելիք։
Ո՛չ են 'ի յունայն ինչ հաճութի
առաքարշելիք, այլ՝ ներլռութեան
լսելիք, և ամենայնիւ խոնարհու-
թի, խակ՝ և մեծաւ ըղձիւ վերըն
դունելիք։
Սաղմ 2. Եւ ասացի. * Երանի մար
93. 12 դոյ, զոր խրատես դու՝ Տէր, և յօ
րինաց քոց ուսուցանես նմա. զի
զցածուցանիցես նմա յաւուրց չա
րաց, և մի՛ ապականիցի 'ի յերկրի։
3. Ես՝ ասէ տր, ուսուցի զմար
գարէս յսկզբանէ, և մինչև ցը՝
այժմ ոչ լռեմ 'ի խօսելոյ ընդ ամե
նեսեան. բայց՝ բազումք խլանան՝
և խստանան առ 'ի յոչ լսել զձայն
իմ։ Բազումք յօժարագոյնս
լսեն աշխարհի, քան թէ՝ ինձ. դիւ
րագոյնս հետևեին մարմնոյ
ցանկութեանն, քան թէ՝ բարեհա
ճութեանն ինձ։ Խոստանայ աշ
խարհ զժամանակաւորս՝ և զաս
կաւս, և ըղձիւ մեծաւ ծառայի
նմա. խոստանամ ես զվեհագոյնս,
և զմշտընջենաւորս, և թըմրին
սիրտք մահկանացուաց։ Ո՞վ այն
քանիւ հոգաբարձութի յամեալ
ծա

ծառայէ ինձ՝ և հնազանդի, որքա
նիւ ծառայէ աշխարհի, և տէ
րանց նորին։ Ծովն ասէ՝ սիդոնն,
ամաչեաց։ Եւ թէ զառիթն խնդ-
րիցես, լուր թէ զմէ է։ Յաղագս
նուէրի գունոյ՝ երկար ճանապարհ
ընթանի․ իսկ՝ յաղագս յաւիտենա
կանից կենաց՝ հազիւ ’ի բազմաց
յերկրէ քայլ ոտից բառնի։
Դոյն ինչ գին պահանջի․ վս̃ միոյ
նումի երբեմն մախիզապէս վէ
ճի․ և սակս ունայնի իրի, և փո
քեր խոստման, զտիւ՝ և զգիշեր
առ ’ի ջանալ աներկեայպէս դիմի։
4․ Բայց՝ ո՛հ ամօթոյս․ յուլա
նանք ’ի սակաւուց աշխատանաց
որք են ’ի շնորհս բարւոյն անփո
փոխելւոյ, և ’ի շնորհս վարձուն
անվարկանելւոյ, ’ի շնորհս ծայրա
գունի պատուոյն, և ’ի շնորհս փա
ռաց անվերջելեաց։ Յամօթ լեր
ուրեմն, ծառայ ալղերգ, և մեճու
նակ, զի արկքն ’ի չարս, պատրաս
տագունեղք են ’ի կորուստ, քան
թէ՝ դու ’ի կեանս։ Նոքա առա
ւել խնդան ’ի յունայնութի, քան
թէ՝ դու ’ի ճշմարտութի։ Եւ թէ
ըստ ’ի յուսոյն իւրեանց երբեմն
դատարկանան, բայց խոստումն
իմ

իմ զմնչոք պատրէ, և ոչ զապաւի
նեցեալս 'ի յիս արձակէ ունայնս:
Շնորհեմ, զոր խոստացայ. լնում,
Յոհան զոր ասացի. բայց սակայն՝ * եթէ
15. 10 ոք յարամնայցէ 'ի սէրն իմ հաւա
տարիմ մինչև 'ի վախճան: Ես եմ
վարձատրիչ ամենից բարեաց, և
հզօր հաճեցօղ ամենից առաքինեաց:

5. Գրեա զիմ * բանս 'ի սրտի
2. Կորն քում, և առձեռնեա զնոսա ուշի
3. 3 մաբար. զի 'ի ժամանակի փորձու
թեան լիցին յոյժ օգտակարք:
Զոր ոչ իմանաս այժմ մինչ ըն
թեռնուս, իմասցես յաւուր այցե
լութեան: Երկպատկաբար՝ սո
վոր եմ յայցելանել իմոց ընտրեցե
լոց, այսինքն՝ փորձութք, և մխի
թարութք: Եւ զերկուս ընթերցու
ածս յամնում աւուր ընթեռնում
նոցին. միոմն՝ յանդիմանելով ըզ
վատթարութիւն նոցին. և միւ
սումն՝ յորդորելով զնոսա յառաջի
Յոհան նութեան յաճումն: * Որ ունի
12. 48 զիմ բանն՝ և խոտէ զնոսա, արդէն
ունի զդատաւոր, զի դատիցէ
զնա յաւուրն վերջին:

Աղօթք՝ վասն հայցելոյ 'ի Տեառնէ
զշնորհս առաքինութեան:

6. Տէր իմ, և Աստուած իմ, դու ես
ամե

ամենայն բարի իմ: Եւ ո՞վ եմ ես՝
զի կարիցեմ խօսիլ ընդ քեզ:
Ես եմ ծառայ քո նուաստագոյ
նեղ՝ և որդնուկ իմն 'ի բաց ընկե
ցեալ. առաւել աղքատագոյ
նեղ, քանթէ ճանաչիցեմ ես, և
իշխիցեմ ասել: Բայց յիշեա՛ տէր
իմ, զի ոչինչ եմ ես, ոչինչ ունիմ,
և ոչինչ արժեմ: Դու միայն բա
րի, միայն արդար, և միայն սուրբ.
դու միայն ամենակարող, ամենա
ձիր, և ամենալիր. իսկ ես միայն
մեղաւոր ունայն թողեցեալ: Յի
շեա՛ զողորմութիւնս քո, և լից
զսիրտ իմ քոյով շնորհիւ, որ ոչ
կամիս՝ թէ քոյք ստեղծուածք
իցեն թափուրք:
7. Զի՞արդ կարեմ ես տանել
նայսմիկ թշուառականի կենցա
ղում, եթէ ոչ՝ քոյդ ողորմութի
և շնորհ կարողացուցանիցէ զիս:
*Մի՛ դարձուցաներ զերեսս քո յի
նէն. մի՛ զայցելութիւն քո 'ի բաց Սաղմ. 101. 1
առներ. և մի՛ զմխիթարութիւն քո
'ի բացքարշեր յինէն, զի՝ մի՛ լիցի
անձն իմ, իբրև զերկիր ծարաւ
ուտ: *Ուսո՛ ինձ տէ՛ր իմ՝ առնել Սաղմ.
զկամս քո. ուսո՛ ինձ, վարիլ ար 142. 10
ժանապէս՝ և խոնարհաբար առա

Զի

Ձի աչաց քոց. զի՝ դու ես խնամատու-
թիւն իմ, որ իսկութբ̄ ճանաչես
զիս, և ծանեար յառաջ՝ քան զսի-
նելն աշխարհի, և յառաջ՝ քանթէ
ծնեցեալ էի յաշխարհի ։

Գլուխ. Է̄ ։

Թէ պարտ է ճշմարտութբ̄, և խոնարհու-
թբ̄ առաջի այ̄ կենցաղավարիլ ։

1. Որդեակ՝ շրջեաց առաջի
իմ ճշմարտութբ̄, և
պարզութբ̄ սրտի քոյ միշտ խնդ-
րեա՛ զիս ։ Որ շրջի առաջի իմ
ճշմարտութբ̄, պահպանի 'ի դի-
պուածոց չարաց, և ազատէ զնա
ճշմարտութիւնն 'ի պատրողաց,
և 'ի բամբասողաց անիրաւաց ։
* Եթէ ճշմարտութիւնն ազատի
Յօհան 8. 36 ցէ զքեզ, եղիցիս արդարև՝ ազատ,
և ոչ ունիցիս զփոյթ զբանից ա-
րանց սնոտեաց ։

2. Տ̄ր իմ, ճշմարիտ է ։ Զոր
հրամայես, այդպէս՝ խնդրեմ, զի
ճշմարտութիւն քո եղիցի ընդ իս,
և ուսուսցէ զիս. ինքն զիս պահպա
նեսցէ, և մինչև 'ի փրկականն վախ
ճան պահեսցէ ։ Ինքն զիս ազատի
ցէ 'ի բնաւից նեղութեանց չա
րաց

րաց, և յանհարդից ցանկութեանց. և շրջեցիմ ը̄ քեզ մեծաւ ազատութեամբ սրտի:

3. Ես ուսուցից քեզ (ասէ Ճշմարտութիւնն) զուղղս, և զհաճելիս առաջի իմ: Խորհեաց դու զմեղս քոյ մեծաւ ապաշաւանօք, և տխրութը̄. և մի երբէք վարկանիցես զքեզ դոլ ինչ՝ սակս քոյոց բարեգործութեանց: Արդարև դու մեղաւոր ես, և ախտիւք բազմօք զգածեցեալ, և պարտաւանդեցեալ: Ինքնին միշտ ձգտիս 'ի յունայնութիւն. իսկոյն սահիս, իսկոյն յաղթիս. իսկոյն շփոթիս. իսկոյն վհատիս: Ոչ ունիս թերևս զեր ինչ, որով կարիցես պարծիլ, բայց ունիս զբազումս, որովք զքեզ պարսաւել պարտիս. զի տկարագոյն ես առաւել քան զոր համարել մարթիս:

4. Ստուգի ոչ ինչ թուեսցի քեզ մեծ, ներ յամենայն զոր գործես: Ոչ ինչ ահագին, ոչ ինչ ազնիւ, ոչ ինչ զարմանալի, ոչ ինչ արժանի պատուոյ, ոչ ինչ վեհագոյն, ոչ ինչ իսկապես գովելի, կամ ցանկալի, եթէ ոչ այն՝ որ է յաւիտենական: 'Ի վեր քան զամ հաճոյ

աս

ասցի քեզ յաւիտենական ճշմար
տութիւնն, և անհաճոյասցի քեզ
յա՛ր քոյդ մեծագունեղ նանրու
թիւն: Զի՛նչ ինչ իր այնքան խոտի
ցես, և յո՛չ իմեքէ իրէ այնքան եր
կնչիցիս, և փախչիցիս, որքան 'ի
վատթարութեց՝ և 'ի մեղաց քոց.
որք առաւել ուրհաճոյք պարտին
թուիլ քեզ, քան զիւրաքանչիւր
տուժանս իւրաց: Են ոմանք, որք
ո՛չ շրջին պարզութբ առաջի իմ,
այլ հետաքրքրութբ, և հոլանու
թեամբ իւիք առաջնորդեցեալք,
զխորհուրդս իմ գիտել կամին, և
զբարձունս ի՛մ իմանալ, իսկ՝ ըզ
փրկութբն իւրեանց ըստուգա
նեն. Անկանիք՝ սակս հպարտու
թե, և հետաքրքրութե իւրեանց,
սահին բազմիցս 'ի մեծամեծ փոր
ձութիւնս, և 'ի մեղս, մինչ ընդ
նոսին ընդդիմամարտիմ:

5. Երկի՛ր 'ի դատաստանէն իմ,
ահաբեկի՛ր 'ի բարկութենէ ամե
նակարողին: Եւ մի՛ զններ զգործս
բարձրագունեղին, այլ՝ որոնեա՛
զքոյս անօրէնութիւնս, և տես,
թէ՝ որքան մեղար, և զորքանիւք
բարեօք ըստունգանեցեր: Ոմանք
զիղձս իւրեանց միայն եղերեն 'ի

գիրս

զխրս, ոմանք 'ի պատկերս, և ոմանք
'ի նշանս, և 'ի ձևս արտաքինս։
Ոմանք ունին * զիս 'ի շրթունս Եսայ
այլ՝ սակաւ ըն սրտում։ Ոմանք 29. 13
լուսաւորեցեալ մտօք, և մաքրե Մատ
ցեալ ըղձիւ 'ի մշտնջենաւորս յար 7. 6
ձկտին, զերկրայնոց ծանրապէս
լսեն, և կարեաց բնութեան վշտա
գնաբար ծառայեն. և այսոքիկ
են, որք զգան, թէ՝ զինչ * Հո Տիմ
գին ճշմարտութեան խօսի 'ի նո 2. 17
սա։ Զի ուսուցանէ նոցա՝ խո
տել զերկրայինս, և սիրել զերկ
նայինս. մոռանալ զաշխարհ, և
ցանկալ երկնից զտիւ՝ և զգիշեր։

Գլուխ Է։

Յաղագս պարծանաւորութեան ներգործութեան սիրոյն Աստուածայնոյ։

1. Բարեբանեմ զքեզ՝ Հայր երկնաւոր, Հայր Տեառն իմոյ ՅՆ ՔՆ, որ արժանի արարեր յիշել զնուաստացեալս։ ՈՎ Հայր ողորմութեանց, և ԱԾ ամենայնի մխիթարութեան, գոհանամ զքէն, որ զանարժանս համայնի մխիթարութեան, մերթ սփոփես քոյով մխիթարութբ։ Բարե

քանեմ զքեզ միշտ, և փառաւո րեմ ընդ Որդւոյ քում միածնի, և ընդ սրբոյ Հոգւոյդ մխիթարչի, 'ի յաւիտեանս յաւիտենից: Ա՛ղէ ով Տր̃ իմ, և Ած̃ իմ սիրող իմ սրբազան, յորժամ գայցես 'ի սիրտ իմ, ցնծասցեն բնաւ ներքնագոյնք իմք: Դու ես փառք իմ, և ցնծութիւն սրտի իմոյ: Դու ես յոյս իմ՝ և * ապաւէն իմ, յաւ

Սաղմ. 58. 17 ուր նեղութեան իմոյ:

2. Բայց՝ քանզի դեռևս թոյլ եմ 'ի սէր քո, և անկատար յառաքինութեան. վասն այնորիկ՝ հարկաւոր է ինձ, զի քև համազօրանայցեմ, և մխիթարիցիմ: Արդ՝ այցելեա՛ ինձ ցանկ, և ներհմտացո՛ զիս սրբազանիւք կրթմամբք: Ազատեա՛ զիս 'ի յախտից չարաց, և առողջացո՛ զսիրտ իմ յամենից ապակարգելից զգածմանց, զի ներքսապէս առողջացեալ, և բարեոքէս մաքրեցեալ, լինիցիմ յարմար առ 'ի սիրել զքեզ, կարող առ 'ի համբերել, և հաստատուն առ 'ի տևել:

3. Մեծ ինչ է սէրն, և բարի է յոյժ, որ միայն թեթևացուցանէ զամ̃ ծանրութիւն, և կրէ հաւասա

րա

ըսպակէս զիմ անհաւասար ։ Քանզի
տանի զբեռն թարց բեռան, և
զամ դառնութիւն քաղցր՝ և ա-
նոյշ առնէ ։ Ազնիւ է սէրն Յի-
սուսի, յորդորէ առ'ի գործել զմե-
ծամեծս, և զարթուցանէ միշտ 'ի
ցանկութն իրաց կատարելագու-
նից ։ Սէրն միշտ կամի 'ի վեր ձըգ-
տիլ, և իրօք ստորնայնոք ոչ արգե-
լանիլ ։ Սէրն կամի գոլ միշտ
ազատ, և օտար յամենից ըղձից
աշխարհականաց, զի՛ մի գուցէ ար-
գելանիցի ներքնային նորին հայ-
եցուած․ մի հեշտութք իւիք ժա-
մանակականաւ կրիցէ զդժուա-
րութիւն՝ կամ, անհանդորրութե
ստորանկանիցի ։ Ոչինչ է * քաղց- Երգ
րագոյն քան զսէրն, ոչինչ հզօրա- 7 • 6.
գոյն, ոչինչ բարձրագոյն, ոչինչ
լայնագոյն, ոչինչ գեղեցկագոյն,
ոչինչ լիագոյն, և ոչ բարեգոյն
ինչ 'ի յերկինս, և 'ի յերկիր․ * զի 1 • Յով
սէրն յԱյ է ծնեալ, և ոչ կարէ 4 • 7.
հանգչել, եթէ ոչ՝ յաստուածում,
վեր քան 'ի բնաւ ստեղծականս ։

4․ Որ սիրէ՝ սլանայ, ընթանայ,
և խնդայ․ ազատ գոյ, և ոչ ըմբռ-
նի ։ Տայ զամ վն ամենեցուն, և
ունի զամ յամենայնում․ քանզի 'ի
մի

միում՝ ծայրագոյնում, գեր քան
՚ի բնաւս՝ հանգչիր, յորմէ ամ բա
րի զեղանի, և յորջածի: Ո՛չ հայի
՚ի ձիրն, այլ՝ ՚ի ձրօղն գեր քան
՚ի բնաւս բարիս: Սէրն ոչ գիտէ
բազմիցս զեղանակ, այլ՝ ՚ի վեր քան
զամ՝ եղանակ բորբոքի: Սէրն ոչ
զգայ զբեռն, ոչ թուէ զաշխա
տանս. ջանայ առաւել՝ քան զկարն.
զփոյթ ոչ առնէ զանկարելեաց,
զի զամ ինչ կարելի՝ և պատշաճ ին
քեան վարկանի: Կարող է ու
րեմն առ ամ, և զբազում ինչ
լնու, և ներգործութիւն հպատակ
առնէ անդ, ուր պակասն ՚ի սիրոյ
նուաղի, և անկանի:

5. Սէրն զուարթուն կայ, և ՚ի
ննջելն ոչ ննջէ: Յաշխատիլն ոչ
վաստակի, նեղացուցեալ ոչ տագ
նապի, զարհուրեցուցեալ ոչ ահա
բեկի, այլ՝ որպէս հուր կենդանի, և
ջահ վառեցեալ ՚ի վեր ցոլանայ, և
աներկեւան օրէն անդր անցանէ:
Եթէ ոք սիրէ, գիտէ, թէ՝ զի՞նչ
ձայնս այս հնչէ: Հնչումն մեծ է
յականջս այ՝ իղձ անձին ջերմե
ռանդ, որ ասէ. Ած իմ, սէր իմ.
դու իմ ես բոլորովին, և ես քո
եմ ամենևին:

6 Ծոխացո՛ զիս սիրով, զի կարեցեմ սրտի ներքնայնով շրթամբք ճաշակել, և իմանալ, թէ՝ որպէս քաղցր իցէ սէրն, և 'ի նմին մեղմիլ, և յարատևել: Ըմբռնեցայց 'ի նմանէ, սակս կարևոյ ջերմեռանդութեան, և զմայլման: Երգեցից զերգս սիրոյ, հետևեցայց ըղձալւոյդ իմում 'ի բարձունս, նուաղեսցի անձն իմ ընդ գովութեան քում, հրճուելով 'ի սիրոյ: Սիրեցից զքեզ առաւել քան զիս, և զիս ոչ երբեք, եթէ ոչ վն քոյ. և զամենեսեան 'ի քեզ՝ որք ճշմարտապէս սիրեն զքեզ, որպէս հրամայեն օրէնք սիրոյ, որք 'ի քէն ճառագայթեն:

7. Սէրն է արագ, զուտ, համեստ՝ վայելուչ՝ հանդարտ՝ համբերող՝ հաւատարիմ, հանճարեղ՝ երկայնամիտ՝ արի, և ոչ երբեք զանձնէ խնդրող. զի որ զանձնէ խնդրէ, 'ի սիրոյ անկանի: Սէրն է շրջահայեաց, խոնարհ՝ և ուղիղ. ոչ թոյլ՝ ոչ թեթև՝ ոչ ընդվայրաբար ներդիտող 'ի յիրս. զգոյշ՝ ողջախոհ՝ հաստատ՝ խաղաղ և բնաւիւք զգայութեամբք պահպանեցեալ: Է՛ սէրն հլու՝ և հնազանդ

առաջ

5. Մի՛ ուրեմն վրդովեցուցա
նիցեն զքեզ այլայլինք երևակայու
թիւնք, յաղագս որոյ ուրուք և
իցեն նիւթոյ ներգործեցեալք։
Համատարածէս պահեա՛ զառաջա
դրութիւնդ, և զդիտաւորութիւնդ
ուղիղ առ իմ։ Ո՛չ երևոյթ ինչ՝
որ երբեմն յանկարծակի արտացն
դեալ յափշտակի, և խկոյն 'ի սո
վորութիւն անհամեստ քոյոյ սրտի
անդրէն փոխի։ Զի առաւել
ակամայ կրես զայնպիսիս, քան
թէ առնես. և որքան անհաճոյք
ելով զքեզ տագնապեն, այնքան
զարդիւն ունիս, և ոչ զկորուստ։
6. Գիտեա՛ և՛ զի հնացեալ
թշնամին ջանայ ամենևիմբ արգե
լուլ զինչ քո 'ի բարին, և 'ի բնաւ
ից կրթութեց համեստից զքեզ ու
նայնել. այսինքն՝ 'ի պաշտամանց
սրբոց, 'ի յիշատակէ բարւոյ իմոց
չարչարանաց 'ի յիշմանէ օգտակա
րէ անցելոց մեղաց, 'ի պահպան
մանէ քոյոյ սրտի անփոփանի՝ և յա
մուր յառաջադրութենէ շահաւոր
լոյ նառաքինութիս։ Զխոկմունս
չարս քեզ ներժողովէ՝ զի ձանձրա
ցուցանիցէ զքեզ՝ և ահաբեկիցէ.
յաղօթից՝ և յընթերցմանց սրբոց
զքեզ

զքեզ զրկիցէ, և՛ի խոստովանու-
թեանց խոնարհից, խոկ և՛ի հա
ղորդութեանց (թէ գուցէ հնար)
դադարեցուցանիցէ։ Մի՛ հաւա
տար նմա. և մի՛ զփոյթ ինչ ունի
ցիս, թէև՝ բազմիցս լարեալ իցէ
քեզ զորոգայթս խաբէութեան։
Քեզ ներհամարէ, մինչ զչարիս՝
և զապականութիւնս սերմանէ։
Ասա ցնա. երթ՝ ո՛վ այսդ պիղծ.
պատկառեա՛ց՝ ո՛վ ողորմելիդ. սաս
տիկ է գարշութիւն քո, որ զայս
պիսիս 'ի լսելիս իմ ներբերես։
'Ի բա՛ց կաց յինէն՝ ո՛վ արբանեակդ
չարադունեղ, ո՛չ ունիցիս մասն
ընդ իս. այլ՝ միայն Յս՛ն իմ եղիցի
ընդ իս, իբրև հզօր պատերազմօղ,
և դու մնասցես ամօթիւ պաշարե
ցեալ։ Կամիմ մանաւանդ մեռա
նիլ՝ և կրել զբնաւ պատիժս,
քան՝ հաւանիլ քեզ։ *Լռեաց՝ և Մար
պապանձեաց, ո՛չ ես եղէց քեզ 4. 39
ունկնդիր՝ թէև զբազում հնա
րիցես ինձ տառապանս. *Տր լոյս Սաղմ
իմ, և կեցութի իմ՝ ես յումմէ եր 26. 7
կեայց։ Թէ յարիցէ 'ի վերայ իմ
պատերազմ, ո՛չ երկիցէ սիրտ իմ։
Տր է օգնական իմ, և փրկիչ իմ։ Սաղմ
7. Զինեա՛լ իբրև զբարի զինու- 18. 15
որ

զի աչաց քոց. զի՝ դու ես իմաստութիւն իմ, որ իսկութե̃ ճանաչես զիս, և ծանեար յառաջ՝ քան զլինիլն աշխարհի, և յառաջ՝ քանթէ՝ ծնիցեալ էի յաշխարհի։

Գլուխ Դ.

Թէ պարտ է ճշմարտութե̃, և խոնարհութե̃ առաջի այ կենցաղավարիլ։

1. ՈՐդեակ՝ շրջեաց առաջի իմ ճշմարտութե̃, և պարզութե̃ սրտի քոյ միշտ խնդրեա՛ զիս։ Որ շրջի առաջի իմ ճշմարտութե̃, պահպանի ՚ի դիպուածոց չարաց, և ազատէ զնա ճշմարտութիւնն ՚ի պատրողաց, և ՚ի բամբասողաց անիրաւաց։ * Եթէ ճշմարտութիւնն ազատի-
Յօհան 8. 36 ցէ զքեզ, եղիցիս արդարև՝ ազատ, և ոչ ունիցիս զփոյթ զբանից արանց սնոտեաց։

2. Տէր իմ, ճշմարիտ է։ Զոր հրամայես, այդպէս՝ խնդրեմ, զի ճշմարտութիւն քո եղիցի ընդ իս, և ուսուսցէ զիս. ինքն զիս պահպանիցէ, և մինչև ՚ի փրկականն վախճան պահեսցէ։ Ինքն զիս ազատեսցէ ՚ի բնաւից նեղութեանց չա-

րաց, և յանկարգելից ցանկութեանց. և շրջեցից ը̃ քեզ մեծաւ ազատութեամբ սրտի:

3. Ես ուսուցից քեզ (ասէ Ճշմարտութիւնն) զուղիղս, և զհաճելիս առաջի իմ: Խորհեաց զումեղս քոյ մեծաւ տրտմաշաւանմբ, և անխռովութը̃. և մի երբէք վարկանիցես զքեզ գոլ ինչ՝ վասն քոյոց բարեգործութեանց: Արդարև դու մեղաւոր ես, և ախտիւք բազմօք զգածեցեալ, և պարտաւանդեցեալ: Ինքնին միշտ ձգտիս ՚ի յունայնութիւն. խակոյն սահիս, խակոյն յաղթիս, խակոյն շփոթիս, խակոյն վհատիս: Ո՛չ ունիս թերես զինչ ինչ, որով կարիցես պարծիլ, բայց՝ ունիս զբազումս, որովք զքեզ պարսաւել պարտիս. զի՝ տկարագոյն ես առաւել՝ քան զոր համարել մարթիս:

4. Ուստի ոչ ինչ թուեսցի քեզ մեծ, նեւ յամենայն զոր գործես: Ո՛չ ինչ ահագին, ոչ ինչ ազնիւ, ոչ ինչ զարմանալի, ոչ ինչ արժանի պատուոյ, ոչ ինչ վեհագոյն, ոչ ինչ խակալես գովելի, կամ ցանկալի, եթէ ոչ այն՝ որ է յաւիտենական: ՚Ի վեր քան զամ̃ հաճոյ-

ասցի քեզ յաւիտենական ճշմարտութիւնն, և անհաճոյասցի քեզ յար քոյդ մեծագունեղ նանրութիւն։ Զի՞նչ ինչ իր այնքան խոտիցես, և յո՞չ իմեքէ իրէ այնքան երկնչիցիս, և փախչիցիս, որքան 'ի վատթարութենէ՝ և 'ի մեղաց քոց․ որք առաւել տըհաճոյք պարտին թուիլ քեզ, քան զկորուսանչիւր տուժանս իրաց։ Են ոմանք, որք ո՛չ շրջին պարզութբ առաջի իմ, այլ հետաքրքրութբ, և հոլանութեամբ իւիք առաջնորդեցեալք, զխորհուրդս իմ գիտել կամին, և զբարձունս իմյ իմանալ, իսկ՝ ըզ փրկութբն իւրեանց ըստունգանեն․ Այնպիսիք՝ սակս հպարտութն, և հետաքրքրութե իւրեանց, սահին բազմիցս 'ի մեծամեծ փորձութիւնս, և 'ի մեղս, մինչ ընդ նոսին ընդդիմամարտիմ։

5․ Երկի՛ր 'ի դատաստանէն իմյ, ահաբեկի՛ր 'ի բարկութենէ ամենակարողին։ Եւ մի՛ զննէր զգործս բարձրագունեղին, այլ՝ որոնեա՛ զքոյս անօրէնութիւնս, և տես, թէ՝ որքան մեղար, և զորքանիւք բարեօք ըստունգանեցեր։ Ոմանք զկիղձս իւրեանց միայն եղերեն 'ի գիրս

գիրս, ոմանք 'ի պատկերս, և ոմանք
'ի նշանս, և 'ի ձևս արտաքինս:
Ոմանք ունին * զիս 'ի շրթունս Եսայե
այլ՝ սակաւ ըն սրտում: Ոմանք 29. 13
լուսաւորեցեալ մտօք, և մաքրե Մաթ
ցեալ ըղձիւ 'ի մշտնջենաւորս յար 7. 6
ձկտին, զերկրայնոց ծանրապես
լսեն, և կարեաց բնութեան մշտա
գնաբար ծառայեն. և այսոքիկ
են, որք զգան, թէ՝ զինչ * Հո Տեու
գին Ճշմարտութեան խօսի 'ի նո 2. 17.
սա: Զի ուսուցանէ նոցա՝ խո
տել զերկրայինս, և սիրել զերկ
նայինս. մոռանալ զաշխարհ, և
ցանկալ երկնից զտիւ՝ և զգիշեր:

Գլուխ Ե:

Յաղագս զարմանալւոյ ներգործութե՛ սիրոյն Աստուածայնոյ:

1. Օրհնեմ զքեզ՝ Հայր երկնաւոր, Հայր Տեառն իմոյ Յի Քի, որ արժանի արարեր յիշել զնուաստացեալս: Ո՛վ Հայր ողորմութեանց, և Աստ ամենայնի մխիթարութեան, գոհանամ զքէն, որ զանարժանս համայնի մխիթարութեան, մերթ սփոփես քոյով մխիթարութ՟բ: Բարե

բանեմ զքեզ միշտ, և փառաւո
րեմ ընդ Որդւոյ քում միածնի, և
ընդ սրբոյ Հոգւոյդ մխիթարչի,
'ի յաւիտեանս յաւիտենից: Աղէ
ով Տր̄ իմ, և Ած̄ իմ սիրող իմ
սրբազան, յորժամ գայցես 'ի սիրտ
իմ, ցնծասցեն բնաւ ներքնագոյնք
իմք: Դու ես փառք իմ, և ցն
ծութիւն սրտի իմոյ: Դու ես
Սաղմ յոյս իմ՝ և * ապաւէն իմ, յաւ
58 . 17 ուր նեղութեան իմոյ:

2. Բայց՝ քանզի դեռևս թոյլ
եմ 'ի սէր քո, և անկատար յառա
քինութեան. վասն այնորիկ՝ հար
կաւոր է ինձ, զի քև համազօրա
նացցեմ, և մխիթարեցայց: Ուստի՝
այցելեա ինձ ցանկ, և ներհմտացո
զիս սրբազանիւք կրթմամբք:
Ազատեա զիս 'ի յախտից չարաց,
և առողջացո զսիրտ իմ յամենից ա
նկարգից զգածմանց, զի ներք
սապէս առողջացեալ, և բարե
ոքէս մաքրեցեալ, լինիցիմ յարմար
առ'ի սիրել զքեզ, կարող առ'ի
համբերել, և հաստատուն առ'ի
մնալ:

3. Մեծ իմն է սէրն, և բարի է
յոյժ, որ միայն թեթևացուցանէ
զամ ծանրութիւն, և կրէ հաւասա

րա

րապէս զամ անհաւասար։ Քանզի
տանի զբեռն թարց բեռան, և
զամ դառնութիւն քաղցր՝ և ա-
նոյշ առնէ։ Ազնիւ է սէրն Յի-
սուսի, յորդորէ առ՚ի գործել զմե-
ծամեծս, և զարթուցանէ միշտ ՚ի
ցանկութիւն լրման կատարելագու-
նից։ Սէրն միշտ կամի ՚ի վեր ձըգ-
տիլ, և իրօք ստորնայնօք ոչ արգե-
լանիլ։ Սէրն կամի գոլ միշտ
ազատ, և օտար յամենից բղձից
աշխարհականաց, զի՝ մի՛ գուցէ ար-
գելանիցի ներքնային նորին հայ-
եցուած. մի՛ հեշտութեամբ իւիք ժա-
մանակականաւ կրիցէ զդժուա-
րութիւն՝ կամ, անհամբերութեամբ
ստորանկանիցի։ Ոչինչ է * քաղց- Երգ 7. 6.
րագոյն քան զսէրն, ոչինչ հզօրա-
գոյն, ոչինչ բարձրագոյն, ոչինչ
լայնագոյն, ոչինչ գեղեցկագոյն,
ոչինչ լիագոյն, և ոչ բարեգոյն
ինչ ՚ի յերկինս, և ՚ի յերկրի. * զի 1. Յօհ.
սէրն յԱյ է ծնեցեալ, և ոչ կարէ 4. 7.
հանգչիլ, եթէ ոչ՝ յԱստուածում,
վեր քան ՚ի բնաւ ստեղծականս։

4. Որ սիրէ՝ սլանայ, ընթանայ,
և խնդայ. ազատ գոյ, և ոչ ըմբռ-
նի։ Տայ զամ վն ամենեցուն, և
ունի զամ յամենայնսեան. քանզի ՚ի
մի

միում՝ ծայրագունում, գեր քան 'ի բնաւս՝ հանգչի, յորմէ ամ բա րի զեղանի, և յոլ(?)ջածի։ Ո՛չ հայի 'ի ձիրն, այլ՝ 'ի ձրօղն գեր քան 'ի բնաւս բարիս։ Սէրն ոչ գիտէ բաղմիցս զեղանակ, այլ՝ 'ի վեր քան զամ՝ եղանակ բորբոքի։ Սէրն ոչ զգայ զբեռն, ոչ Թոմէ զաշխա տանս. ջանայ առաւել՝ քան զկարն. զփոյԹ ոչ առնէ զանկարելեաց, զի զամ իւչ կարելի՝ և պատշաճ իւն քեան վարկանի։ Կարօղ է ու րեմն առ ամ, և զբազում ինչ լնու, և ներգործուԹե հպատակ առնէ անդ, ուր պակասն 'ի սիրոյ նուաղի, և անկանի։

5. Սէրն զուարԹուն կայ, և 'ի ննջելն ոչ ննջէ։ Յաշխատիլն ոչ վաստակի, նեղացուցեալ ոչ տագ նապի, զարհուրեցուցեալ ոչ ահա բեկի, այլ՝ ոմ հուր կենդանի, և ջահ վառեցեալ 'ի վեր ցոլանայ, և աներկեւան օրէն անդր անցանէ։ ԵԹէ ոք սիրէ, գիտէ, ԹԷ՝ զի՞նչ ձայնս այս հնչէ։ Հնչումն մեծ է յականջս տն՝ իղձ անձին ջերմե ռանդ, որ ասէ. Աճ իմ, սէր իմ. դու իմ ես բոլորովիմք, և ես քո եմ ամենեիմբ։

6 Ճոխացո՛ զիս սիրով, զի կարե
ցեմ սրտի ներքնայնով շրթամբք
ճաշակել, և իմանալ, թէ՝ որպէս
քաղցր իցէ սէրն, և ՚ի նմին մեղ
միլ, և յարատևել։ Ըմբռնեցայց
՚ի նմանէ, սակս կարևոյ ջերմեռան
դութեան, և զմայլման։ Երգե
ցից զերգս սիրոյ, հետևեցայց ըղ
ձալւոյդ իմում ՚ի բարձունս, նուա
ղեսցի անձն իմ ընդ գովութեան
քում, հրճուելով ՚ի սիրոյ։ Սիրե
ցից զքեզ առաւել քան զիս, և զիս
ոչ երբէք, եթէ ոչ վն՟ քոյ․ և զա
մենեսեան ՚ի քեզ՝ որք ճշմարտա
պէս սիրեն զքեզ, որպէս հրամայ
են օրէնք սիրոյ, որք ՚ի քէն ճա
ռագայթեն։

7 ․ Սէրն է արագ, ջերմ, հա
մեստ՝ վայելուչ՝ հանդարտ՝ համբե
րող՝ հաւատարիմ, հանճարեղ՝ եր
կայնամիտ՝ արի, և ոչ երբէք զանձ
նէ խնդրող․ զի որ զանձնն խնդ
րէ, ՚ի սիրոյ անկանի։ Սէրն է
հրջահայեաց, խոնարհ՝ և ուղիղ․
ոչ թոյլ՝ ոչ թեթև՝ ոչ ընդվայրա
բար ներդիտող ՚ի յիրս․ զգոյշ՝
ողջախոհ՝ հաստատ՝ խաղաղ և
բնաւիւք զգայութեք պահպանե
ցեալ։ Է՛ սէրն հլու՝ և հնազանդ

առաջ

առաջնորդաց, խոտելի, և պարսաւելի յինքենէ. առաքինի՝ և հաճոյ Այ, ապաւինող՝ և յուսացող միշտ 'ի նա, եւ մինչ տհաճոյ թուի նա նմա. զի՝ թարց ցաւոյ ոչ կարէ կալ ոք ըն սիրելութեան։

8. Որ ոչ է պատրաստ կրել զամենայն ինչ՝ և ոչ կայ ըն հաճելութեան իւրոյ սիրեցելոյն, նա ոչ է արժանի սիրող անուանիլ։ Պարտ է սիրողին՝ զամ խստութիւն, և զդառնութիւն՝ վն ըղձալւոյն իւրոյ՝ յօժարութբ յանձնառնուլ. և ոչ՝ սակս ընդդիմակայից պատահմանց, դառնալ 'ի նմանէ։

Գլուխ Զ։

Յաղագս փորձութեան ճշմարիտ սիրողի։

1. Որդեակ՝ դեռևս ոչ ես կարող, և ոչ հանճարունակ սիրող։

2. Զի՞ արդ՝ Տէր իմ։

3. Զի՝ վն սակաւոյ ընդդիմութեան 'ի սկսեցելոյդ նուաղիս, և յոյժ անյագաբար՝ զմխիթարութիւն խնդրես։ Քաջ սիրողն կայ 'ի

'ի փորձութենէ, և ոչ հաւանի խորամանկելից համոզութեանց թշնամւոյն: Որպէս նախընթութիւն նմա հաճոյանամ, այսպէս՝ և ոչ ընձանխորդութիւնս անհաճոյ թուիմ նմա:

4. Սիրօղն հանճարութեամբ, ոչ այնքան զպարգևս սիրեցելոյն, որքան զսէրս տուողին նկատէ: 'Ի յիղձն մանաւանդ, քանթէ 'ի նուէրն դնէ. և 'ի վայր սիրեցելոյն, զբնաւ ինչ շնորհեցելոյն դնէ: Սիրօղն ազնուական ոչ 'ի նուէրսն՝ այլ 'ի յիս, 'ի վերայ քան զամ ինչ՝ հանգչի: Ո՛չ է ուրեմն բոլորն 'ի կորուստ, թէ երբեմն ոչ այնքան բարեպէս՝ որքան հաճիս. զինէն, և կամ զօրբոց իմոց՝ ճգնայ ցես: Իղձն այն քաղցր, և անոյշ՝ զոր մերթ զգաս, է ներգործութիւն ներկայականն շնորհի, և զեռևս առհաւատչեայ պսաւոյն երկնայնոյ. այր վերայ ոչ այնքան յենուլ պարտիս, զի գայ, և գնայ: Վեհագոյնի առաքինութեանն, և մեծի արդիւնաւորութեան է՝ ընդդիմամարտիլն ընդդէմ չարաժամեաց չարեաց անձին, և խոտել զշորշոքորթմունս ատամանցն:

5. Մէ

5. Մի՛ ուրեմն վրդովեցուցանիցեն զքեզ այլայլինք երևակայութիւնք, յաղագս որոյ ուրուք և իցեն նիւթոյ ներգործեցեալք: Հաստատապէս պահեա՛ զառաջադրութիւնդ, և զդիտաւորութիւնդ ուղիղ առ ած: Ո՛չ երևոյթ ինչ՝ որ երբեմն յանկարծակի արտացնդեալ յափշտակիս, և իսկոյն 'ի սովորութիւն անհամեստս քոյոյ սրտի անդրէն փոխիս: Զի առաւել ակամայ կրես զայնպիսիս, քան թէ առնես. և որքան անհաճոյք ելով զքեզ տագնապեն, այնքան զարդիւն ունիս, և ոչ զկորուստ:

6. Գիտեա՛ և՛ զի հնացեալ թշնամին ջանայ ամենևիմբ արգելուլ զխղձ քո՛ 'ի բարին, և 'ի բնաւից կրթութեց համեստից զքեզ ունայնել. այսինքն՝ 'ի պաշտամանց սրբոց, 'ի յիշատակէ բարւոյ իմոց չարչարանաց 'ի յիշմանէ օգտակարէ անցելոց մեղաց, 'ի պահպանմանէ քոյոյ սրտի սեփականի՝ և յամուր յառաջադրութէ շահաւորելոյ նառաքինութիս: Զխոկմունս չարս քեզ ներժողովէ՝ զի ձանձրացուցանիցէ զքեզ՝ և ահաբեկիցէ. յաղօթից՝ և յընթերցմանց սրբոց

զքեզ

զքեզ զրկիցէ, և 'ի խոստովանու-
թեանց խոնարհից, խակ և 'ի հա
ղորդութեանց (թէ գուցէ հնար)
դադարեցուցանիցէ: Մի՛ հաւա
տար նմա. և մի՛ զփոյթ ինչ ունի
ցիս, թէև՝ բազմիցս լարեալ իցէ
քեզ զորոգայթս խաբէութեան:
Քեզ ներհամարէ, մինչ զչարիս՝
և զաղտեղութիւնս սերմանէ:
Ասա՛ ցնա. երթ՝ ո՛վ այսդ պիղծ.
պատկառեա՛ց՝ ո՛վ ողորմելիդ. սաս
տիկ է. գարշութիւն քո, որ զայս
պիսիս 'ի լսելիս իմ ներբերես:
'Ի բա՛ց կաց յինէն՝ ո՛վ արբանեակդ
չարագունեղ, ո՛չ ունիցիս մասն
ընդ իս. այլ՝ միայն Յս̃ն իմ եղիցի
ընդ իս, իբրև հզօր պատերազմօղ,
և դու մնասցես ամօթիւ պաշարե
ցեալ: Կամիմ մանաւանդ մեռա
նիլ՝ և կրել զբնաւ պատիժս,
քան՝ հաւանիլ քեզ: *Լռեա՛ց՝ և Մար
պապանձեաց, ո՛չ ևս եղէց քեզ 4. 39
ունկնդիր՝ թէև զբազումս հնա
րիցես ինձ տառապանս. *Տր̃ լոյս Սաղմ
իմ, և կեցութի իմ՝ ես յումմէ եր 26. 7
կեայց: Թէ յարիցէ 'ի վերայ իմ
պատերազմ, ո՛չ երկիցէ սիրտ իմ:
Տր̃ է օգնական իմ, և փրկիչ իմ: Սաղմ
7. Զինեա՛լ իբրև զբարի զինու- 18. 15

որ

որ, եթէ գուցէ երբեմն սակս քոյ ոյ բերկանելութեան սահեցից, կալ քեզ վերստին զօրութիւնս հաստատագոյնս՝ քան զառաջինն՛ յուսալով յառատագոյն շնորհս իմ. եւ ես զգոյշ լեր 'ի յունայնէ սնապարծութենէ, եւ 'ի փքացմանէ: Բազումք վն այսորիկ ածին 'ի մոլորութիւնս, եւ անկանին բազմիցս 'ի կուրութիւն անբժշկելիս: Եղիցի քեզ 'ի պատրաստութիւն, եւ 'ի խոնարհութիւն մշտնջենաւոր՝ գահավիժումն այն ամբարտաւանից, յիմարապէս զանձնէ պարծողացն.

Գլուխ: Է

Յաղագս ծածկելոյ զշնորհս 'ի ներքոյ պահպանութեանն հեզութեան:

1. Որդեակ՝ օգտակարագոյն է քեզ, եւ ապահովագոյն. ծածկելն զշնորհն առաքինութե, եւ ոչ փքանալն այնու, եւ ոչ խօսելն բազմիցս զնմանէ, եւ ոչ մեծամտելն. այլ մանաւանդ՝ խոնարհել միշտ զանձն քո՝ եւ իբր զանարժան այնմիկ շնորհի, երկնչիլ: Եւ մի յենուլ խստապէս 'ի զգացմունս

այս

այսպիսիս, որք դիւրաւ կարեն փոխարկել 'ի հակառակն։ Մինչ կեաս 'ի շնորհս, խորհեա՛ց՝ թէ ո՛րպէս ողորմելի՝ և աղքատ լինիս թարց շնորհաց։ Եւ ո՛չ է այնքան հոգևորաց կենաց յառաջադիմութիւն, մինչ ունիս զշնորհս մխիթարութեան. այլ՝ մինչ խոնարհաբար, զանձնառապէս, և համբերութբ՛ տանիս նոցին 'ի բաց բարձմանցն. և այնպէս՝ մինչ զի յայն ժամ, 'ի հոգւոց աղօթից ոչ յուլանայցես, և ո՛չ ներկցես խափանարել զքոյոց գործոց սովորականաց. այլ՝ ո՛պ կարես, և իմանաս ազատաբար (որ 'ի քեզն է) առնիցես. և ո՛չ յաղագս հաւատարմութեան՝ և կամ տառապանաց միտաց զոր զգաս զքեզն ամենևին անփոյթ լինիցիս։

2. Քանզի բազումք են՝ որոց մինչ ո՛չ բարեպէս աջողի, իսկոյն անհամբերութեամբ վհատին։
* Զի ո՛չ 'ի ձեռին մարդոյ է ճանա Եբր. 10. 23
պարհ նորա, այլ Այ է տալն՝ և մխիթարելն, մինչ կամի՝ որքան կամի, և որում կամի, ըստ որում հաճոյ թուի ինքեան՝ և ո՛չ աւելի։
Ոմանք անզգոյշք գոլով՝ տակս

շնոր

չնորհաց առաքինութեանն՝ աւերեցին զինքեանս․ զի կամեցան առնել առաւել քան զկարս իւրեանց, ոչ ճանաչելով զչափ պակասութեանն իւրեանց, այլ հետևելով մանաւանդ ըղձիցն սրտի, քան դատողութեանն բանի։ Եւ քանզի զմեծամեծաց իրաց զբուռն արկին, և ոչ զայնցանէ՝ որք հաճելիքն էին Այ, սակս որոյ՝ զչնորհս իւրեանց փութով կորուսին։ Եղեն չքաւորք՝ և թողեցեալք՝ իբր չընչինք, որք վարկանէին՝ գոլ զբնակութիւն իւրեանց յերկինս․ զի խոնարհեցեալք՝ և աղքատացեալք՝ ուսանիցեն ոչ զթռչիլն թևօք սեփականօք, այլ զընդ հովանեաւ թևոց իմոց յուսալն։ Որք դեռևս են նորագոյնք՝ և անփորձք ՚ի շաւիղս Տն, եթէ ոչ խորհրդով կատարեցելոց ուղղիցեն զինքեանս, դիւրաւ պատրեսցին՝ և անկցին։

3․ Եւ այնոցիկ՝ որք հաճին մանաւանդ հետևիլ ընտրութեան իւրեանց, քան ընտրութեն կրթեցելոց՝ եթէ ոչ ՚ի բացկայցեն ՚ի դիտմանէ իւրեանց յառկէ, վախճանն է կասկածելի։ Իսկ՝ որք յաչս իւրեանց ոչ երևին գիտունք՝

յանձն

յանձնառութիւն խոնարհաբար զուղղելն յայլոց: Լաւագոյն է զսակաւ ինչ գիտելն խոնարհութ̄բ, և դուզնաքէիւ իմացողութ̄բ, քան զմեծամեծ գանձս գիտութեանց՝ սնոտեաւ հաճութ̄բ: Բարւոք է՝ զդոյն ինչ ունիլն, քան զբազումս՝ յորոց ծնանիլ մարթի փքացումն: Ո՛չ այնքան ուշիմաբար գործէ, որ տայ բոլորովին զինքն խնդութեան, մոռանալով զչքաւորութիւնն առաջին՝ և զողջախոհ երկիւղ տն̄՝ որով զգուշանայր, զի մի զշնորհն առձրեցեալ կորուսանիցէ: Եւ ոչ բաւականօրէն՝ առաքինաբար վարի, որ ընդ ժամանակաւ փորձութեան, և իւրաքանչիւրոյ ծանրութ̄ե, յոյժ յուսահատապէս գործէ, և նուազագունիւ յուսով զինէն՝ քանթէ պիտոյ է, խորհի՝ և զգայ:

4. Որ 'ի ժամու խաղաղութ̄ե Ճշգրտագունեղ գոլ կամի, ցանկ 'ի ժամու պատերազմի վհատագունեղ՝ և երկիւղալից գտանիցի: Եթէ գիտէիր միշտ խոնարհ՝ և փոքրոգի 'ի քեզ մնալ, և զքոյս բարս գեղեցկապէս կարգաւորել՝ և կառավարել, ոչ անկանէիր այն-

քան

քան փութանակի 'ի վտանգս՝ և
'ի յանցանս: Արդ եղիցի քեզ
այս բարւոք խորհուրդ, մինչ ըն
դունիս զհոգի ջերմեռանդու
թեան, խորհեաց՝ թէ զինչ լիցէ
քեզ հանդերձելոց, մինչ վերասցի
'ի քէն շնորհն: Մինչ այս պատա
հիցի, խորհեա՛ց՝ թէ վերստին կա
րելի է դառնալ 'ի լոյս, զոր՝ քեզ
'ի զգուշութիւն, և ինձ 'ի փառս՝
զժամանակ ինչ 'ի բացբարձի:

5. Օգտակարագոյն է քեզ բազ
միցս այնպիսի փորձութեան, քան
զունիլն միշտ զաջողութիւն ըստ քոյ
ոց կամաց: Քանզի՝ արդիւնք ոչ
անդուստ են վարկանելիք, եթէ
ոք զբազումս տեսութիւնս կամ
զմխիթարութիւնս ունիցի. կամ թէ՝
հմուտ իցէ գրոց սրբոց, և կամ՝
զետեղիցի ընդ վեհագունում աստի
ճանի. այլ՝ թէ իցէ խոնարհութե
հիմնեցեալ, և ածայնով սիրով
լցեալ. եթէ զփառս տյ պար
զապէս՝ և կատարելապէս միշտ
խնդրիցէ. զինքն ոչ ինչ վարկանի
ցի, և ճշմարտապէս խոտիցէ,
այլև՝ յայլոց մանաւանդ քամա
հիլ և նուաճիլ, քան թէ պատու
իլ կամիցի:

Գլուխ

Գլուխ Է:

Յաղագս համարելոյ զինքն անարգ առաջի աչացն Աստուծոյ:

1 · Խօսեցայց * ընդ Տեառն Ծննդ. 18 · 27
իմում, մինչ իցեմ հող՝
և մոխիր: Եթէ առաւել կարծի
ցեմ զիս, ահա դու ընդդիմամար
տիս ընդ իս. և անօրէնութիւնք իմ
զճշմարիտ վկայութիւն առերեսն
ինձ, որում ոչ կարեմ ընդդիմա
բանել: Այլ թէ՝ խոտեցեմ զիս,
և ունայնացուցանիցեմ, և առ ոչ
ինչ զիս վարկանիցեմ, և ընդ փո
շւոյ համարեցուցանիցեմ, որ
և եմ իսկ, եղիցի ինձ այցելու
քոյդ շնորհ՝ և մերձակայ սրտի
իմում լոյս քո, և ամ զինչ վար
կումն՝ թէև գուզնաքեայ, ըն խորս
ունայնութե իմոյ ենթասուզեսցի՝
և կորիցէ 'ի յաւիտեան: Անդ
ցուցցես ինձ զիս, թէ՝ զինչ իցեմ,
թէ՝ զինչ եղէ, և յորմէ եղէ. քան
զի՝ ոչինչ եմ, և ոչ գիտացի:
Եթէ թողցես զիս 'ի յիս՝ ահա
ոչինչ եմ, և բնաւին տկարութի.
իսկ՝ եթէ փութով ակնարկիցես
առ իս, իսկոյն կարողանամ, և նո
րով յարաճնանիմ խնդութեամբ:

Եւ

Եւ զի զարմանք են, թէ՝ ո՞չ փու
թանակի բարձրամտիցիմ, և ո՞չ
անխայակի 'ի քէն խրատիցիմ, որ
միշտ սեփականաւ իմով ծանրու
թեամբ ստորահակիմ:

2. Զայս առնէ ընդ իս սէր քո,
լինելով ինձ ձրի նպաստ, և օգ
նելով ինձ 'ի կարիս բազումս, պա
հելով իսկ զիս 'ի վտանգից բազ
մաց. և (զի զճշմարիտն ասիցեմ)
'ի յանթիւ չարաց ազատելով զիս:
Զիս թերևս չարաբար սիրելով,
կորուսի զանձն իմ. և զքեզ միայն
խնդրելով, և պարզապէս սիրե
լով, զիս՝ և զքեզ միահաղոյն՝ գտի,
այլև՝ իսկականաւ սիրով քոյով
զանձն իմ ունայնացուցի: Զի
դու ո՛վ քաղցր՝ իմ, առնես ընդ
իս 'ի վեր՝ քան զիմ բնաւ ար
դիւնս, և 'ի վեր՝ քան զայն, զոր
համարձակիմ յուսալ, կամ հայ
ցել:

3. Իցես դու բարեբանեցեալ՝
Աստուած իմ. զի՝ թէպէտ ես բը
նաւից բարեաց եմ անարժան, սա
կայն քոյդ ազնուութիւն, և անհուն
բարութիւն, ո՛չ երբէք դադարի
զբարիս առնել և ապերախտից,
և հեռապէս՝ 'ի քէն դարձելոց:

Դարձո՛ զմեզ առ քեզ, զի կարիցեմք լինել քեզ հաճոյք, խոնարհք, և առաքինիք. քանզի դու ես փրկութիւն մեր, զօրութիւն, և կատարողութիւն մեր:

Գլուխ Թ:

Թէ ամենայն ինչ վերաբերելի է առ ԱԾ, որպէս առ վերջին վախճանն:

1. Որդեա՛կ՝ եթէ ճշմարտապէս ըղձաս լինել երանելի, պարտիմ ես լինել քոյդ ծայրագոյն՝ և վերջին վախճան: Այսու դիտաւորութեամբ իղձ քո պարզել մարթի; որ բազմիցս զքեզ առ քեզ, և առ արարածս հակեցուցանէ: Քանզի՝ եթէ յիրում ի մէջ խնդրիցես զքեզ, վաղվաղակի նուաղեսցիս 'ի քեզ, և ցամաքեսցիս: Արդ առ իս զամ ինչ նախապատուաբար՝ վերաբերեսցես, զի ես եմ, որ ետու զամ: Այսպէս դարձեալ զիւր իւրաքանչիւր, որպէս թէ՝ 'ի վեհագոյն բարւոյ իցեն յառաջացեալք. և զի [illegible] առ իս, որպէս առ անձն իւրեանց, բնաւքն են վերադարձելիք:

2. Յինէն փոքունք, և մեծա

մեծք, աղքատք՝ և փարթամք, որ
պէս յաղբերէ կենդանեաց, յուզեն
Յօհան * զՋուր կենդանի. և որք կամին՝
4. 10 և յօժարութբ ինձ ծառայեն, ըղ
Յօհան ձորհս * փոխանակ շնորհաց առ
1. 16 նուն: Իսկ որ՝ բաց յինէն, զայլ
իմն փառս խնդրէ, և կամ նայլում
իմիք առանձնականում բարւում
կամի հրճուիլ, ոչ յարատևէ նա
կայանում խնդութե, և ոչ գտա
նէ 'ի սրտի իւրում զընդարձակու
թիւն., այլ յաճախ արգելանի, և
նեղասրտի: Մի՛ ուրեմն զբարի
ինչ քեզ առգրիցես, և մի՛ այլում
ումեք զառաքինութիւն առվար
կանիցես. այլ տուր զբնաւն ինձ,
Թարց որում ոչ ինչ է մարդոյ:
Ես եմ՝ որ զբոլորն ետու, և կա
միմ զքեզ բոլորապէս ունիլ, և մե
ծաւ յարագնմամբ՝ զշնորհակա
լութիւն 'ի քէն պահանջեմ:
Այս է ճշմարտութիւն, որով 'ի բաց
մերժի փառաց ունայնութիւն:
Եւ եթէ մտանիցէ 'ի սիրտ մեր
շնորհն երկնային, և սէրն ճշմա
րիտ, ոչ եղիցի անդ զչարութիւն՝
և հակառակութիւն, և ոչ առանձ
նական զգածումն ինչ պաշարէ
զնա: Քանզի՝ յաղթէ զամ ինչ
սէրն

սէրն Աստուածային, և առատացուցա-
նէ զբնաւ հոգւոյն կարողութիւն։
Եթէ իցես ուղղապէս խոհեմ, 'ի
յիս միայն խնդասցես, և 'ի յիս մի-
այն յուսասցես. քանզի՝ * չիք ոք Մարկ.
բարի, եթէ ոչ՝ միայն Աստուած, որ է 10. 18
'ի վեր քան զհանուրս գովելի, և
նամենայնում բարեբանելի։

Գլուխ Ժ։

Թէ զաշխարհ արհամարհողին, քաղցր է ծառայելն Աստուծոյ։

1. Արդ՝ վերստին խօսեցայց
Տէր, և ոչ լռեցից. ասա-
ցից յականջս Աստուծոյ իմոյ, Տեառն
իմոյ, և Թագաւորին իմոյ, որ է
'ի բարձունս։ * Ո՛ թէ որքան մեծ Սաղմ.
է բազմութիւն քաղցրութեան քո՝ 30. 20
Տէր, զոր պահեցեր երկիւղածաց
քոց։ Որքան ուրեմն սիրողաց
քոց, և ո՛րքան բոլորիւ սրտիւ
զքեզ պաշտողաց։ Իրաւի անճա-
ռելի է քաղցրութիւն յարանկա-
ման քո, զոր շնորհես սիրողաց
քոց։ Նայսմիկ մանաւանդապէս
ցուցեր ինձ զքաղցրութիւն սի-
րոյ, զի մինչ ոչն էի, արարեր զիս.
և մինչ մոլորեալ էի՝ 'ի բացեայ ե-
լով

լով 'ի քէն, վերածեր զիս, զի ծառայեցեմ քեզ, և պատուիրեցեր, զի սիրեցեմ զքեզ:

2. Ո՛վ աղբիւր սիրոյ մշտնջենաւորի, զի՞նչ ասացից զքէն: Ո՞րպէս կարացից մոռանալ զքեզ, որ զիս յիշման արժանի արարեր, ևս մինչ թարշամեցայ, և կորեայ: Արարեր ընդ իս ողորմութիւն, 'ի վեր քան զբնաւ յոյս իմ, և 'ի վեր քան զամ արդիւն իմ, ցուցեր ինձ զշնորհս, և զընտանութիւնս: Զի՞նչ տաց փոխանակ քեզ յաղագս այսորիկ շնորհի: Քանզի ո՛չ ամենեցուն տուեալ է այս, զի հրաժարեալ յամենից՝ ուրանայցեն զա կենցաղս, և զկեանս միակեցականս ընտրեցեն: Ո՛չ արդեօք մեծ իմն է, զի ծառայեցեմ քեզ, որում ստեղծուածք բնաւք պարտին ծառայել: Ո՛չ թուէի ինձ մեծ ինչ այն, զի ծառայեմ քեզ. այլ մանաւանդ մեծ ինչ, և զարմանալի ինձ տեսանի այն, զի զիս՝ զայսքան սորուկս, և զանարժանս հաճեցար ընդունել 'ի ծառայութի քո, և սիրեցեալ ծառայից քոց առ միաւորել:

3. Ահաւասիկ քոյք են բնաւք՝

զորս

զորս ունիմ, և որովք քեզ ծառայեմ։ Բայց առաւել անդրադարձուցես, դու մանաւանդ ինձ ծառայես, քան թէ՝ ես քեզ։ Ահա երկինք՝ և երկիր, զորս 'ի ծառայութիւն մարդկան ստեղծեր, պատրաստ են, և առնեն յամենայնաւ աւուր, զոր ինչ նոցին պատուիրեցեր։ Եւ այս թերևս դոյն ինչ է. զի՝ և զհրեշտակս 'ի պաշտօն մարդկան կարգադրեցեր։ Եւ որ գերազանցն է քան զամ, դու ինքդ արժանի վարկեր՝ մարդկան ծառայել, * և տալ զքեզ ինքն նոցին խոստացար։ Մար 10. 45

4. Զի՞նչ տաց փոխատուր քեզ յաղագս այսոցիկ բիւրուց բարեաց։ Երանի թէ՝ կարէի քեզ ծառայել զամենայն աւուրս կենաց իմոց։ Երանի թէ՝ և 'ի միում աւուր բաւականանայի զարժանի պաշտօն քեզ մատուցանել։ Ճշմարտապէս արժանի ես դու ամենայնի սպասաւորման, ամենայնի պատուոյ, և մշտնջենաւորի գովութե։ Իրաւի Տէր իմ ես դու, և ես քո տրուկ ծառայ քո, որ բնաւին ի մով կարողութեամբ պարտաւորեցեալ եմ քեզ ծառայել, և ոչ եր

բէք

բեք ձանձրանալ ՚ի գովութենէ քումմէ: Այսպէս համբիմ, և այսպէս ըղձամ. և որ ինչ ինձ պակաս է, արժանի արա լցուցանել:

5. Մեծ է պատիւ, մեծ են փառք՝ քեզ ծառայելն, և զա̃մ ինչ խոտելն վ̃ն քոյ: Քանզի՝ զմեծամեծ շնորհս ընդունելոց են այնոքիկ, որք կամաւ զինքեանս ստորարկեցին քում սրբազանի պաշտաման: Զքաղցրագունեղ հոգւոյդ քոյ սրբոյ գտցեն զմխիթարութի, որք վասն սիրոյ քոյ զա̃մ վայելչութիւն մարմնական ՚ի բացընկեցին: Հասցին մեծի ազատութե մտաց, որք վ̃ն անուան քոյ յանձուկ ճանապարհ կամեցան մտանել, և խոտուգանեցին զբնաւ հոգս աշխարհի:

6. Ո՛ դիւրին՝ և վայելուչ ծառայութիւն ա̃յ, որով իրաւի լինի ոք սուրբ՝ և ազատ: Ո՛ սրբազան կացութիւն կրօնաւորականի պաշտաման, որ զմարդիկ առնէ հանգէտս հրեշտակաց, հաճելիս ա̃յ, զարհուրելիս դիւաց, և հանրից հաւատացելոց գովաբանելիս: Ո՛ փարելի, և յարալղձալի ծառայութիւն ա̃յ, որով վերաշահի ծայրագոյն բարին, և առատանի խըն

դու

դութիւն թարց վախճանի մնացա կան։

Գլուխ ԺԱ։

ԹԷ ՔՆՆԵԼԻՔ ԵՆ ԻՂՁՔ ՍՐՏԻ, ԵՒ ՉԱՓԱՒՈՐԵԼԻՔ։

1. Որդեակ՝ պարտիս դեռևս զբազում գիտել, զորս չևես բարեպէս ուսեալ ես։
2. Ո՞րք են այնոքիկ, Տէ՛ր իմ։
3. Զի զիղձ քո կարգաւորիցես բոլորովիմբ ըստ հաճոյից իմոց. և մի՛ իցես լինքնասէր՝ այլ իմոյ կամաց նախանձայոյզ։ Բազմիցս իղձք զքեզ սաստկապէս վառեն. բայց՝ զննեա՛, թէ՝ իցեն արդեօք վա՛ փառաց իմոց, կամ թէ՝ իցես դրդեցեալ մանաւանդ սակս քոյ-ոյ դիւրութեան։ Եթէ ես իցեմ առիթ. բարեպէս գոհունակ՝ ի-ցես, ոմն կարգադրիցեմ. իսկ ե-թէ 'ի սեփականէ քումմէ խնդրոյ՝ գուցէ ինչ գաղտնի, ահա այն է, որ զքեզ արգելու, և ծանրացուցանէ։
4. Զգոյշ լե՛ր ուրեմն, զի մի՛ յոյժ նկրտիցիս 'ի քոյդ իղձ նա-խայղացեալ, և ո՛չ յինէն տեղեկա-

ցեալ

ցեալ. մի՛ գուցէ զկնի զղջմանս ցես, կամ անհաճոյանայցէ քեզ, որ յառաջնումն հաճոյ թուէր, որում եւ՛ իբրեւ բարւոյ՝ նախանձէիր։ Քանզի՝ ոչ իմ՛ իղձ, որ ան- սանի բարի, է վաղվաղակի հեռանելի. և ոչ իմ՛ հակառակ ախտ խոյն է փախչելի։ Ծա՛նէ երբեմն զանձահարումն լինել 'ի կիրարկա- նել, եւ ըն կրթութիւնս՝ և յեղձ ճարիս. զի մի՛ յառաքինմանէ՝ նեբար շահիցես 'ի ցընդմունս մտաց քոց. և մի՛ այլոց սակս քոյոց անվարժու- թեանց, զգայթագղութիւն ծնա- նիցես. և կամ սակս քոյոց ընդդէմ մաղապձութեանց, խոկոյն աղդկե- ցես; և համընկճիցիս։

5. Սակայն երբեմն պա՛րտ է 'ի կիրարկանել զբռնադատութիւն, և արիաբար յօժարութեանն զգայա- կանի ընդդիմամարտիլ, և ոչ ա- նիլ զփոյթ, թէ՝ զինչ կամիցի մտա- մինն, և զինչ ոչ. այլ մանաւանդ միայն զփոյթ ունիլ, զի ենթարկե- ցի հոգւոյն, թէև ակամայ։ Եւ այնքան նուաճիլ պարտի, մին- չև պատրաստեսցի առ ամենայն ինչ, և ուսանիցի սակաւուք բաւ- ականանալ, և զլոլիւք հրճուել, և

ոչ

ոչ զիր ինչ անպատեհ բարբանջել:

Գլուխ Ժ՟Ը:

Յաղագս ներքներպատուրման համբերութե, և հակառակման ընդդէմ ցանկութեանց:

1. ՏԷ՛Ր իմ, և Ա՟Ծ իմ, յորժ հարկաւոր է ինձ համբերութիւն, ոպ՟ տեսանեմ. զի բազումք են փորձութիւնք, որք ըն կենցաղում այսմիկ պատահին: Քանզի՝ ոպ՟ և կարգաւորիցեմ զխաղաղութի իմ, ոչ կարէ գոլ թարց փորձութե, և ցաւոց կեանն իմ:

2. Այս այդպէս է՝ որդեակ: Բայց՝ կամիմ, զի մի զայնպիսի խաղաղութիւն խնդրիցես, որ անմասն իցէ 'ի փորձութեանց, կամ ոչ զգայցէ զհակառակս. այլ՝ յայն ժամ ևս վարկեսջ, թէ՝ գտեալ իցես զխաղաղութիւն, մինչ իցես խոնջեցեալ զանազանիւք վշտակրութեք, և փորձեցեալ բազմօք ընդդիմամարտութեք: Եթէ ասիցես, թէ՝ ոչ կարեմ տանել զբզմն զի՛ արդ տևիցես հրոյն քաւարանին: Յերկուց չարեաց՝ փոքրագոյնն է միշտ ընտրելի: Արդ՝ զի կարիցես

ցես

ցես 'ի տանջանաց ապագայից մշանջենաւորաց զերծանիլ, ջանա՛ սակս Այ զչարիս կենցաղոյս բերկրութեամբ տանել: Մի՛ թէ համարիցես, թէ մարդիկ աշխարհիս պատրիկ՝ կամ զդոյզն ինչ, կամ զո՛չ ինչ կրիցեն. զայս ոչ երբեք գտցես, թէև զազնուականս խնդրիցես:

3. Բայց ասիցես, թէ՝ ունին նոքա զբաղումս հրճուանս, և հետևին սեփականաց իւրոց հեշտութեանց, վ̃ որոյ՝ դոյզնինչ թուին նոցին վշտակրութիւնք:

4. Դիցուք թէ՝ այսպէս լիցի, զի ունին զոր ինչ կամին. բայց զի՞նչ կարծես, թէ՝ որքան տևելոցք են: Ահա՝ իբրև զծուխ պակասեցին ճոխացեալք ընդ կենցաղումս, և ոչ եղիցի յիշատակ ինչ անցելոցն խնդութեանց: Այլև՝ մինչ կեան, ոչ առանց դառնութեան, լքման, և երկիւղի, հանդչին 'ի նոսին: Քանզի՝ 'ի նոյնոյ իրէ, յորմէ զհեշտութիւն ինքեանց ընդունելին, 'ի նմանէ և՝ յաճախապէս զպատիժս ցաւոց կրեն: Եւ զի այս արդարապէս լինի նոցին, զի մի՝ ոք անկարգապէս

զհեշ-

զհեշտութիւնս խնդրեն, և հետև
ին նոցին, թարց վրդովման, և
դառնութե վճարիցեն: Ո՜հ թէ
որպէս դիւրանցք են, որպէս
պատրիչքեն, որչ անկարգք են,
և որպէս զազիրք են այնոքիկ ամե
նեքեան: Բայց՝ սակս յիմարուէ,
և կուրութեան իւրեանց՝ ոչ իմա
նան. այլ որպէս համր կենդանիք
սակս ապականելոյ կենցաղոյս
սակաւուց հեշտութեանց, 'ի մահ
անձին զհոգեանս մատնեն: Դու
ուրեմն՝ որդեակ, * մի գնայցես Եկլէ.
զհետ քոյոց ցանկութեանց, այլ 'ի 18. 30
բացհերքեա զնոսա 'ի կամաց քոց:
* Հրճուեա 'ի Տր., և նա տացէ Սաղմ.
քեզ զխնդրուածս սրտի քո: 36. 4.
5. Քանզի՝ եթէ կրաւել կամիս
հրճուել, և առատապէս լինել ըս
փոփիլ. ահա 'ի յանարգութեան
ամենից աշխարհականաց կրաց, և
'ի բացհերքման ընաւից ստորնայ
նոց հեշտութեանց, կայացի քոյդ
օրհնութի, և ձոխապէս հատուս
ցի քեզ մխիթարութիւն: Եւ որ
քան զքեզ յամենից առեղծակա
նաց սփոփմանց 'ի բացքարշիցես,
այնքան 'ի յիս զքաղցրագոյնս, և
ըզհզօրագոյնս մխիթարութիւնս

գըտ-

գացես ։ Բայց 'ի սկզբան՝ ոչ եղի-
ցիս թարց խմէք արտմութեան,
և աշխատանաց պատերազմի, զի
առ այս նախաժամանիցես ։ Ընդ-
դիմանայցէ քեզ ներածեցեալն սո-
վորութիւն, բայց՝ 'ի բարեգունէ
սովորութենէ յաղթահարեսցի ։
Տրտնջեսցէ մարմինն, բայց՝ ջեր-
մեռանդութեամբ հոգւոյն սանձահա-
րեսցի ։ Դրդեսցէ՝ և գառնացուս-
ցէ զքեզ օձն հնագոյն, բայց՝
աղօթիւք հալածեսցի ։ և մանա-
ւանդ՝ աշխատասիրօք օգտակարիւք
նմին անցք մեծամեծք առփակեսցին ։

Գլուխ ԺԳ ։

Յաղագս հնազանդութեան հպատակին հեզոյ, ըստ օրինակին ՅԻ ՔԻ ։

1. Որդեակ՝ որ զինքն արտաքարշել ջանայ 'ի հնազանդութենէ, ինքն արտաքարշէ զինքն 'ի շնորհաց ։ և որ խնդրէ ունել զիրս յատուկս, կորուսանէ զհասարակս ։ Որ ոչ յօժարութեամբ՝ և հաճութեամբ հպատակի առաջնորդին, յայտ է՝ թէ դեռևս մարմին իւր կատարելապէս ինքեան ոչ հնազանդի, այլ՝ բազում անգամ

ապս.

տրքացէ՝ և տրտմիցէ։ Ուստի ու-
րեմն փութով զքեզ առաջնորդին
ստորանկել, եթէ կամիս զմարմինն
քո նուաճել։ Զի դիւրաւ ար-
տաքին թշնամին յաղթահարի,
եթէ ներքին մարդն ոչ իցէ կոր-
ծանեցեալ։ Ո՛չ գոյ վշտանկագա-
գոյն, և չարագոյն անձին թշնա-
մի, քան զքեզ ինքն, մինչ ոչ հո-
գւոյդ բարեաւքս համաձայնիս։
Պարտիս ամենևին բառնալ
զճշմարիտ արհամարհանն քոյոյ
անձին, եթէ կամիս նախազօրա-
նալ ընդդէմ մարմնոյ քոյ, և ա-
րեան։ Քանզի դեռևս յոյժ ան-
կարգապէս զքեզ սիրես, սակս
որոյ՝ և երկնչիս լիապէս այլոց կա-
մաց զքեզ յանձնել։

2. Բայց զի՞նչ է մեծ, թէ դու՝
որ ես մոխիր, և ոչ ինչ, վասն Այ
զքեզ մարդկան հպատակեցես. ո-
րով հետև ես ամենակարօղն՝ և
բարձրագունեալս, որ զբնաւս ըն-
ստեղծի յոչընչէ, զիս, վասն քո՝
մարդկան խոնարհաբար ստորա-
կի։ Եղէ ամենեցուն խոնարհա-
գունեղ՝ և զցածուն, զի՝ զքոյդ
հպարտութիւն իմով խոնարհութեամբ
յաղթահարեսցես։ Ուստի ուրեմն՝

քա

բարեխառնել զքեզ, ով մոխիր։ Ուսիր խոնարհեցուցանել զքեզ. ով հող, և տիղմ, և ենթարկել զքեզ 'ի ներքոյ ոտից ամենից։ Ուսիր նուաճել զկամս քոյս, և բնաւից նուաստութեանց տալ զքեզ ինքնին։

3. Վառեա զքեզ ընդդէմ իմ քեանդ, և մի ներիցես փքացման զօրանալ 'ի քեզ. այլ այնպէս նուաստ, և փոքրոգի զքեզ զուգեա, զի ամենեքեան կարիցեն շրջել 'ի վերայ քոյ, և որ̄ զկաւ գնեհաց կոխել զքեզ։ Զինչ ունիս ով մարդ նանիր, առ 'ի վիճել։ Զինչ կարես՝ ով զազրալից մեղաւոր, ընդդէմ ասել զքեզ նախատողաց, որ այնքանիցս վշտացուցեր զԱծ, և բազմիցս շահեցար զդժոխս։ Բայց անխնայեաց 'ի քեզ աչք իմ, զի պատուական է հոգի քո առաջի աչաց իմոց. զի ծանիցես զսէր իմ, և յարամնայցես՝ զինեէն միշտ. շնորհակալ 'ի վերայ բարերարութեանց իմոց. այլև տայցես յաւէժ զքեզ Ճշմարիտ հնազանդութեան՝ և խոնարհութե, և տանիցես համբերութեամբ զարհամարհանս քոյոյ. անձին։

Գ․ լու Ի․

ԳԼՈՒԽ ԺԴ։

Յաղագս նկատման դատաստանացն Աստուծոյ գաղտնեաց, զի մի հպարտանայցեմք ընդ բարիս։

1. Որոտացուցանես զիս՝
Տէր քոյով դատաստա
նաւ, և ահիւ, և երկիւղիւ քով
դողացուցանես զոսկերս իմ բնաւս,
և պակնու հոգի իմ յոյժ։ Կամ զա
հիհարեցեալ, և նշմարեմ. զի * և Յոբ
երկինք ոչ են սուրբ յանդիման քոյ 15. 15
ոց երեսաց։ Եթէ * 'ի հրեշտակս Յոբ
գտեր զանօրէնութիւն, և ոչ ան 14. 18
խայեցեր, զի՞նչ եղիցի ինձ։
* Թօթափեցան աստեղք յերկնից, Յայտն.
և ես փոշիս զի՞նչ վարկանեմ զիս։ 8. 12
Որոց գործք՝ գովելիք համարեալ
էին, անկան յատորինս, և որք ու
տէին զհաց հրեշտակաց, տեսի՝ զի
հրճուէին եղջերբք խոզից։
Ո՛չ գոյ ուրեմն սրբութիւն ինչ
իր, եթէ զձեռն քո 'ի բաց քարշի
ցես։ Ո՛չ ինչ իմաստութիւն օգ
տի, եթէ 'ի կառավարելոյ դադա
րեցիս։ Ո՛չ ինչ արիութիւն օգնէ,
եթէ 'ի պահպանելոյ լռեսցես։
Ո՛չ ինչ ողջախոհութիւն է աներ
կեան, եթէ զայն ոչ նախախնամի
ցես.

ցեա։ Ո՛չ ինչ անփական պահպանութիւն շահաւորէ, եթէ ոչ լցէ մերձ քոյդ սրբազան հսկողութի։ Քանզի թողեցեալք 'ի քէն՝ սուզիմք, իսկ՝ և կորնմք․ զայցելութի քո զտեալք՝ կանգնիմք, և զօրանամք։ Զի անհաստատք եմք, բայց քև կարողանամք․ ցրտանամք, բայց քև ջերմանամք։

3․ Ո՛ թէ՝ որպէս խոնարհաբար, և արհամարհօրէն պարտ է ինձ զինէն խորհել, և որպէս առ յոչ ինչ վարկանել զբարին, զոր թուի ինձ ունել։ Ո՛ թէ որպէս հեզաբար ենթարկել պարտիմ զիս քոյոց խորոց դատաստանաց․ ուր զիս ոչ այլ ինչ գոլ տեսանեմ, եթէ ոչ՝ ոչ ինչ, և առ ոչ ինչ։ Ո՛ բեռն անչափելի, ո՛ անդունդ անանդրանցանելի․ նորում զիս ոչ այլ ինչ տեսանեմ, եթէ ոչ՝ բնաւին ոչ ինչ։ Ո՞ւր է ուրեմն ծածկոյթ փառաց․ ո՞ւր է յոյսն յղացեալ յառաքինութեանց, ընկլաւ բնաւ ունափառութիւն, 'ի խորութենէ քոյոց դատաստանաց, որք են 'ի վերայ իմ։

4․ Զի՞նչ է ամ մարմին առաջի
Եսայ 29․16 երեսաց քոց՝ Տէր։ *Մի՞թէ պար

ծի

ծիցի երբէք կաւն ընդդէմ ձեռ
կերպողին իւրոյ։ Որպէս կանգ
նիլ կարէ անմաշնաբանութեամբ,
որոյ սիրտն ստուգապէս ենթար
կեցեալ է ինյ։ Ո՞չ բոլոր աշխարհ
կանգնել կարէ պայն, զոր Ճշմար
տութիւնն ինքեան տարանքէ, և
ո՞չ 'ի բերանոյ ընաւկից գովաբանո
ղաց շարժի, որ զբոլոր յոյս իւր
նաստուծոյ մէ հիմնեալ։ Վասն
զի՝ և որք խօսինն աշա անձինքեան
ոչինչք են. զի նուաղեացին ընդ
հնչման բանից. * Իսկ՝ բան տն Եսայ.
մնացէ յաւիտեան։ 40. 8

1 Պետ.
1. 25

Գլուխ ԺԷ։

Թէ՝ որչափ խոյլն է, և առէլն 'ի
մերս ձեռաց ընծայելն։

1. Որդեա՛կ՝ այսպէս ասիցես
'ի միտս քո. Տէր՝
եթէ քեզ հաճոյ իցէ, եղիցի այս
այսպէս։ Տէր՝ եթէ եղիցի այս
ի փառս քո, եղիցի այս յանուն քո։
Տէր՝ եթէ տեսցես ինձ պատշաճ,
և դատիցես զայս զալ ինձ օգտա
կար, յայնժամ տուր ինձ, զայս 'ի
պատիւ քո 'ի կիրարկանել։ Բայց
եթէ գիտիցես զայս զալ ինձ վնա

սա

տակար, և հոգւոյ իմոյ փրկութեան
ոչ գոլ շահաւոր, բայց յինէն
զայնպիսի իղձ: Քանզի՝ ոչ ամ
իղձ է 'ի Հոգւոյն սրբոյ, թէև
թուիցի մարդկան բարի, և ուղիղ:
Դժուարին է իսկապէս ենթադա
տելն, թէ իցէ հոգի բարի, կամ
թէ օտար, որ զքեզ ներդրդէ 'ի
ցանկութիւն այսորիկ, կամ այնո
րիկ. և կամ թէ՝ արդեօք շարժի
ցիս 'ի սեփականէ քումմէ հոգւոյ:
Բազումք՝ որք յսկզբան թուէին
են առաջնորդիլ 'ի հոգւոյ բա
րւոյ, 'ի վախճանի գտան պատրե
ցեալք:

2. Ուրեմն միշտ երկիւղիւն այս,
և խոնարհութեամբ սրտի պարտ է
ըղձալ, և խնդրել, զոր ինչ ցան
կալի տեսանի մտաց. և մանաւ
անդ յատկականաւ վերակնքմամբ
յանձնելի է ինձ բոլորն, և ասե
լի: Տէր՝ դու գիտես, թէ՝ ո՛րչ բա
րւոքէ. եղիցի այս, կամ այն, ո՛րպէս
հաճոյ թուեսցի քեզ: Տուր ինձ,
զոր կամիս, որքան՝ և կամիս, և
յորժամ կամիս: Արա ընդ իս՝
ո՛րպէս և գիտես, և ո՛րչ քեզ առաւել
հաճոյ թուի, և որպիսաբար պա
տիւ քո առաւել յայտնի: Դիր

զիս.

զիս՝ ուր և կամիս, և հարազատօ-
րէն վարեաց ընդ իս ըն բնաւս։
Եմ 'ի ձեռին քում, պարաբե-
րեա՛ զիս, և վերստին դարձ շրջա
նակօրէն։ Ահա ես ծառայ քոյ եմ,
պատրաստ առ ամ ինչ. և ոչ կա
միմ զկեանս իմ, եթէ ոչ 'ի քեզ.
երանի թէ՝ արժանապէս, և կա
տարելապէս։

Բան՝ վասն խոնարհելոյ զճշմարտութեան
ճշմարտութեանն Աստուծոյ։

3. Որդեակ իմ՝ ո՛վ բարե-
գործ վաղուց Յ̄ս, զշնորհ քո
սէր, *զի լիցի ընդ իս, և ներգործիցէ Իմաստ.
ը̄ իս, և մինչև 'ի վախճան յարամնայ 9. 8
ցէ ընդ իս։ Տուր ինձ՝ միշտ ըղ
ձալ և կամիլ զայն որ քեզ առաւ
ելէ ընդունելի, և բարեհաճելի։
Իմ կամ քում կամի միշտ հետևե
ցի, և լիցէ կամ քո իբրև զկամ
իմ. և իմ կամ քում հետևիցի կա
մի, և ուղղապէս նմին համաձայնի
ցի։ Իցէ ևս ինձ միևնոյն կամիլ,
և ոչ կամիլ ընդ քեզ. և մի՛ կարի
ցեմ կամիլ, և ոչ կամիլ, եթէ ոչ
զոր կամիցիս՝ կամ ոչ կամիցիս։
4. Տուր ինձ մեռանիլ ըն բը
նաւս, որք են յաշխարհի. և վասն

քո

քոյ սիրել զարհամարհանս, և զո՛չ
ճանաչելն ըստ կենցաղումս այսմիկ։
Տո՛ւր ինձ՝ 'ի վեր քան զա̃մ իղձս
'ի քեզ հանգչել, և զմիտս իմ 'ի
քեզ խաղաղացուցանել։ Դու ես
ճշմարիտ խաղաղութիւն սրտի, և
միայն հանգստութիւն. իսկ որք
են արտաքոյ քոյ, խիստ են ըն
նաւք, և անհանգիստք։ Յայսմիկ,
և 'ի նոյնում խաղաղութեան, այս
Սաղմ. ինքն՝ 'ի քեզ միայնում, * վեհա
4. 10 գունում, և մշտնջենաւորում բա
րւոյն ննջեցից, և հանգեայց ամէն։

Գլուխ ԺԶ։

Թէ ճշմարիտ մխիթարութիւնն ընդ մի-
այնում Աստուածում է խնդրելի։

1. Ո՛ր ինչ միանգամայն
ցանկալ կարեմ, կամ
խորհել 'ի սփոփումն իմ, ո՛չ աստ
ապասեմ, այլ՝ յապայն։ Եւ եթէ
միայն ունէի զա̃մ մխիթարութիւն
աշխարհի, և կարէի զմայլել ընդնա
իւք նորին հրճուանօք, իրաւի՛
ո՛չ կարէին ինձ, զժամանակս բա
զում՝ յարատևել։ Վա՛ որոյ՝ ո՛վ
անձն իմ, ո՛չ ուստեք լիապէս կա
րես

րես մխիթարիլ, և ոչ կատարելա
պէս սփոփիլ, եթէ ոչ ն՚Աստու
ծում, որ է մխիթարիչ աղքատաց,
և ընդունող խոնարհաց: Սակաւ
ինչ համբեր, ով անձն իմ, և սպա
սեա խոստմանն Աստուծոյ, և ունի
ցիս զառատութիւն ամենից բա
րութեանց ՚ի յերկինս: Եթէ
յոյժ անկարգապէս խնդրիցես
զներկայս այսոսիկ, կորուսցես ըզ
մշտնջենաւորս և զերկնայինս:
Իցեն քեզ ժամանակաւորքս այսո
քիկ միայն առ՚ի պէտս, իսկ՝ մշտըն
ջենաւորն առ՚ի տարփումն: Ոչ կա
րես յագիլ ժամանակաւորօք այսո
քիւք, զի ոչ ես ստեղծեցեալ առ
՚ի վայելումն նոցին:

2. Թէև ունէիր զբնաւ ստեղծա
կան բարիս, ոչ վ̃ն այնոցիկ կարէ
իր լինիլ երջանիկ, և երանելի.
այլ՝ ա̃մ երանութ̃ի, և երջանկու
թիւն կայանայ յԱստուածում, որ է
ստեղծօղ ընաւից բարեաց: Ոչ այն
պիսի երանութիւն, որ թուի, և
կամ գովլի ՚ի յիմարաց՝ սիրողաց
կենցաղոյս. այլ այնպիսի. որում
ըսպասեն արք բարիք հաւատա
ցեալք Քի̃, և մերթ նախաճա
շակեն զնա արք հոգևորք՝ և սր̃ք
որք

սրտիւք, որոց կենցաղավարութիւնն յերկինս է։ Ունայն, և փոքրոգի է ամ մխիթարութի մարդկային։ Երանելի, և Ճշմարիտ է մխիթարութիւնն, որ 'ի ներքս 'ի Ճշմարտութենէ վերըմբռնի։

Այր առաքինի յամենուրեք ընդ ինքեան տանի զմխիթարիչն իւր Յն, և ասէ ցնա. օգնեա ինձ՝ տր Յիսուս, յամենայնում տեղւոջ՝ և ժամանակում։ Այս եղիցի ինձ 'ի մխիթարութիւն, զի յօժարութբ կամիցիմ զրկիլ 'ի բնաւից մխիթարութեանց մարդկայնոց։

Իսկ՝ եթէ պակասիցի 'ի յիս քոյդ մխիթարութի, եղիցի ինձ քոյդ հաճութի, և արդար զննութիւն 'ի տեղի ափոփման ծայրագունեղի։ Սաղմ. 102. 9 Քանզի՝ * ոչ 'ի յաւիտեան բարկանաս՝ տր, և ոչ 'ի յաւիտեան պահես զոխս։

Գլուխ ԺԷ։

Թէ՝ ամ հոգ ընկէնլի է՛ յԱԾ.

1. Որդեակ՝ թո՛ղ ինձ առնել ընդ քեզ՝ զոր կամիս։ գիտեմ ես, թէ՝ զինչ իցէ քեզ պիտոյ։ Դու խորհիս իբրև զմարդ. դու

դու կարծես զիրս բազումս, բայց որում համոզէ քեզ իղձ մարդկային ։

2. Տէ՛ր իմ, իրաւի է զոր հրամայես ։ Առաւել է քոյդ հոգացողութիւն 'ի վերայ իմ, քան զբնաւ հոգս, զորս տանիլ կարեմ ես յաղագս իմ ։ Քանզի՝ յոյժ անհաստատապէս կայ նա, որ ո՛չ ընկենու զհոգս իւր բնաւ 'ի քեզ ։ Տր իմ, միայնթէ՝ կամս իմ ուղղապէս, և հաստատապէս 'ի քեզ յարամնայցէ, արա՛ ընդ իս՝ զոր ինչ քեզ հաճոյ թուեսցի ։ Վասն զի՝ զոր ինչ առնիցես ինձ բարի է ։ Եթէ կամիցիս, թէ՝ իցեմ ի խաւարի, եղիցի անուն քո բարեբանեցեալ ․ և եթէ՛ հաճիս, թէ իցեմ ի լուսում, լիցի դարձեալ անուն քո բարեբանեցեալ ։ Եթէ՝ արժանի համարիցես զիս մխիթարել, եղիցի անուն քո բարեբանեցեալ ․ իսկ՝ եթէ հաճիցիս, թէ՝ վշտագնիցիմ, լիցի նմանապէս անուն քո միշտ բարեբանեցեալ ։

3. Որդեակ՝ եթէ ըղձաս ընդ իս շրջիլ, պարտ է քեզ՝ զի այսպէս կեայցես ։ Լեր այնքան յօժար առ 'ի համբերել, որքան յօժար

ես

ես առ'ի խնդալ: Ընկալ այնքան հաճոյապէս զշքաւորութիւն, և զաղքատութիւն, որքան հաճոյապէս ընդունիս զլիութիւն, և զըփարթամութիւն:

4. Տէ՛ր իմ, կամաւորապէս կրեցից վասն քոյ զոր ինչ և կամիցիս, թէ՝ գայցէ 'ի վերայ իմ: Կամիմ զբարին, և զչարն, զքաղցրն՝ և զդառն, զխնդալին, և զտրտմալին, անզանազանապէս 'ի ձեռաց քոց առընդունիլ. և՝ վս̃ բնաւից իրաց պատահածոց շնորհակալ լինիլ: Պահեա՛ զիս յամենից մեղաց, և ոչ երկեայց 'ի մահուանէ, և 'ի դժոխոց: Միայն թէ՝ զիս մի մերժիցես 'ի յաւիտեան, և մի ջնջիցես զանուն իմ 'ի գրոյն կենաց. զոր ինչ վիշտ և դայցէ 'ի վերայ իմ, ինձ ոչ վնասեսցէ:

Գլուխ ԺԶ:

Թէ՝ մխիթարութիւնք ճշմարտականք՝ ըստ օգնականին Քի, խնդրելիք են միայն:

1. Որդեակ, ինչ ես յերկնից վասն քոյ կեցութեան. ընկալայ զքոյս թշուառութիւնս ոչ 'ի

'ի հարկէ, այլ 'ի սիրոյ քարշողէ. զի՛ դու ուսանիցիս զհամբերութի՛, և ժամանակաւորաց թշուառութեանց մի՛ զայրացաբար տանիցես: Քանզի՝ 'ի ժամէ ծննդեան իմոյ մինչև ց' վախճանն իմ 'ի խաչին, ո՛չ պակասեցաւ ինձ կրումն ցաւոյ: Իրաց ժամանակաւորաց պակասութեանցն ըմբերեցի. ըզվիճմունս յոգունս զինէն յաճախաբար լուայ. խռովութեանց, և նախատանաց հեզաբար տարայ. փոխանակ բարերարութեանցն զապերախտութիւն ընկալայ. վասն սքանչելեացս զհայհոյութիւնս. և սակս վարդապետութեանս զարհամարհանս:

2. Տ՟ր իմ, զի դու համբերող եղեր ըն կենի քում, յայսմ՟իկ մանաւանդ լնլով զպատուէրան Հօր քոյ. արժան է՝ զի ես տրուպս, և մեղաւորս ըստ հաճոյից քոց համբերաբար զիս զգայիցեմ, և մինչև 'ց երբ կամիցիս, զբեռն ապականացուի կենիս վ՟ռ փրկութե իմոյ բառնայցեմ: Վ՟ս զի՝ թէև ծանրագոյն զգայցի ներկայ կեանս, սակայն՝ այժմ շնորհիւ քով յոյժ արդիւնաւո՞ր է, այլև քոյով օրինա

կաւ, և քոյոց սրբոց շաւղիւ, ուկա
րաց սանելագոյն է։ Իսկ և յա-
ետ միխիթարականն է, քան 'ի նախ
նումն ընդ հնով օրինաւ եղև, մինչ
դուռն երկնից փակեցեալ յարա
մնայր․ և մթագոյն ևս ճանա
պարհ երևիւր առ յերկինս, մինչ
այնքան սակաւք զարքայութիւնն
երկնից հոգային խնդրել։ Այլև
ոչ որք յայնժամ արդարքն էին,
և կեցուցանելիք, յառաջ քան
զքոյդ չարչարան, և սրբազանն մա
հուան քոյ պատկանաւորութիւն
յարքայութիւն երկնից կարէին
մտանել։

3․ Ո՜հ թէ զորքանս շնորհակա
լութիւնս քեզ պարտաւորիմ վե
րաբերել, զի զճանապարհն ուղիղ՝
և զբարին արժանի վարկար ինձ,
և բնաւից հաւատացելոց առ յաւ
իտենական արքայութիւն քո ցու
ցանել։ Քանզի՝ կենցաղավարու
թիւն քո, ճանապարհ մեր է․ և
սրբազանիւ համբերութեամբ ընթա
նամք առ քեզ, որ ես պսակ մեր։
Եթէ դու ոչ առաջնորդեալ էիր,
և ոչ ուսուցեալ էիր զմեզ, ով ար
դեօք հոգայր հետևիլ քեզ։
Վա՜յ թէ որքանք 'ի բացեայ, և
յետ

լեւ մնայլին, եթէ ոչ 'ի քոյս գե
րափայ[illegible] յարացոյցս նկատէին։
Ահաւասիկ դեռևս դանդաղիմք՝
տեսանելով զքոյս նշանս, և զվար
դապետութիւնս. զի՞նչ լինելոց
էր, եթէ զայս քան լոյս առ՚ի հե
տևիլ քեզ ոչ ունէաք։

Գլուխ ԺԹ.

Յաղագս փանքելութեան անիրաւու
թեց, Ո՞րպէս ճշմարիտ համբե
րողիցէ, ևուրջիցէ։

1. Ո Ի՞նչ է զոր խօսիս, որ
դեակ։ Դադարեա՛ց
'ի տրտնջելոյ, նկատելով զխմս. և
սրբոց այլոց զչարչարանս։* Ո՛չ տա Եբրայ
կաւին մինչև ցարիւն յարատևե 12. 4
ցեր։ Դոյն ինչ է զոր կրեսդ, 'ի
բաղդատութեան այնոցիկ, որք
զայնքան մեծամեծս կրեա՛լք են.
այնքան զօրեղապէս փորձեցեալք,
այնքան ծանրապէս վտանգեցեալք՝
և այնքան բազմապատկապէս զննե
ցեալք, և վարժեցեալք։ Պա՛րտ
է ուրեմն քեզ՝ զծանրագոյնս այլոց
'ի միտս քոյս վերաբերել, զի զքոյս
դիւրապէս տանիցես նուաստա
գունեղս։ Արդ՝ եթէ քեզ նու
աս

աստաղունեղք գոլ ոչ Թուէիցին, զգուշլեր՝ մի՛ գուցէ և զայդ քոյդ-առնիցէ անհամբերութիւն:
Վասն որոյ՝ թէ մեծամեծք իցեն, թէ փոքունք, հոգա՛ ընաւէից համբերապէս ըմբերել:

2. Որքան բարեգունապէս 'ի համբերութն զքեզ տրամադրիցես, այնքան իմաստնագունապէս ըզ քեզ կառավարեսցես, և առաւել ար դիւնաւորեսցես. տարցես և թե թեւագունապէս, յօժարութե՟՝ և սովորութե՟, առ այս ոչ յուլապէս պատրաստեցելովք: Մի՛ ուրեմն ասիցես. ոչ կարեմ զայսոսիկ յառնէ այսպիսւոյ կրել, կամ թէ՝ այս պիսիք յինէն ոչ են ըմբերելիք. զի ետ ինձ զմեծ իմն տուժան, և նախատէ զիս յայնպիսիս, զորս ոչ երբեք ածեալ եմ 'ի միտ. սակայն յայլմէ լռջմտաբար կրեցից, ըստ որում տեսից կրելիս գոլ զայնո սիկ: Յիմա՛ր է այնպիսի մտածու թիւնն, որ զզօրութիւն կրելոյ ոչ յարադիտէ, և ոչ զայն, յորմէ պսակելի է. այլ մանաւանդ զան ձինս, և զվիշտս ինքեան ներբե րեցեալս վերակշռէ:

3. Ո՛չ է ճշմարիտ կրօղ, որ ոչ
կա

կամի կրել, եթէ ոչ՝ որքան բա
րւոք թուի ինքեան, և յորմէ հա
ճոյ թուի ինքեան: Զի ճշմարիտ
կրօղն ոչ նկատէ՝ թէ յորմէ մար
դոյ• արդեօք յառաջնորդէ իւրմէ,
կամ 'ի հանդիտէ նմին, և կամ ըս
տորնադունէ• արդեօք յառնէ սըր
բոյ, և բարւոյ՝ և կամ 'ի խեղա_
թիւրէ, և յանարժանէ՝ արտա
գործիցի: Այլ անտարբերաբար
յա̃մէ աւեղծուածոյ, որչափ՝ և
որքանիցս իր ինչ ընդդէմ ինքեան
պատահիցի, զբոլորն իբր 'ի ձե
ռացն ա̃յ, գոհունակապէս ընդու
նի, և զնոյնն շահ իւր մեծ վարկա
նի• քանզի՝ ոչ ինչ առաջի Աստու
ծոյ, որքան և իցէ փոքրագոյն,
միայն թէ լինիցի վ̃ն սիրոյ նորին
կրեցեալ, կարէ առանց արդիւ
նաւորութեան անցանել:

4• Լեր ուրեմն պատրաստ 'ի
պատերազմ, եթէ կամիցիս ունել
զյաղթութիւն: Առանց խաղի
ոչ կարես ժամանել 'ի պսակն
համբերութե̃: Եթէ համբերել
ոչ կամիս, հրաժարիս 'ի պսակմա
նէ: Այլ՝ եթէ ըղձաս պսակիլ,
մարտիր արիաբար, և տար համ
բերաբար: Առանց աշխատանաց՝
ոչ

ոչոք կարէ դիմել առ հանգիստն, և առանց մարտի ոչոք ժամանէ 'ի յաղթութիւն:

5. Եղիցի ինձ կարելի՝ Տէր իմ, 'ի ձեռն շնորհաց քոց, որ ինչ տեսանի ինձ անկարելի 'ի ձեռն բնութեան: Դու գիտես. որ դոյն ինչ կարեմ համբերել, և 'ի յառնելն ընդդիմութեանց՝ փութով ենթաձգիմ: Արտագործիցի ինձ իւրաքանչիւր կիրառութի̅ վշտակրութեան, որ վս̅ անուան քոյ քաղցր է յոյժ՝ և բաղձալի. վասն զի՝ սակս քոյ կրելն, և չարչարիլն, է առողջութիւն հոգւոյ իմում:

Գլուխ Ի:

Յաղագս խոստովանութեան սեպհականի տկարութե̅, և կենցաղոյս այսորիկ թշուառութեան:

1. Խոստովանիմ ընդդէմ ինձ զանիրաւութիւն իմ. խոստովանիմ քեզ՝ Տ̅ր̅, զտկարութի̅ իմ: Բազմիցս դոյն ինչ, զիս ստորանկէ, և տխրեցուցանէ: Յառաջադրեմ ինձ՝ զի հզօրապէս գործիցեմ. բայց՝ մինչ գայ սակաւ ինչ փորձութիւն, մեծ անձկու-

թիւն

թիւն ինձ տիրէ: Երբեմն յոյժ անարգ է իրն, յորմէ յառաջանայ ծանր փորձութիւն: Եւ մինչ համարիմ զիս կերպիւ իւիք յանդորր, մինչ գոչ ինչ ըղձամ, գտանեմ զիս տակաւին մերձ 'ի յաղթահարիլ'ի փոքրահոգւոյ կացութենէ:

•2 Տես ուրեմն տ̄ր, * զխոնար Սաղմ.
հութիւն իմ, և զբեկանելու 24. 18
թիւն իմ, որ յայտնի է քեզ յամե
նից կողմանց: Եւ ողորմեաց՝ * և Սաղմ.
փրկեա՛ զիս 'ի տղմոյ, զի մի ընկլու 68. 15
զեցայց, և մի՛ յարամնայցեմ ըս
տորանկեցեալ մինչև իսպառ:

Այս է, որ ձաղէ զիս յաճախապէս, և առաջի քո յամօթ առնէ զիս. քանզի եմ յոյժ սահական, և տկար առ 'ի ընդդիմանալ ը̄դէմ փորձութեանց: Զի՝ թէև ամենեւիմբ ոչ հաւանիցիմ նոցին. սակայն նեղութ̄ի է ինձ, և ծանրութիւն հալածումն նոցին, և ձանձրանամ կեալ միշտ այսպէս 'ի պատերազմի: Ուստի յայտնապէս երևի ինձ տկարութիւն իմ. զի առաւել դիւրապէս յառնեն 'ի վերայ իմ ապականելիք երևակայութիւնք, քան թէ տարամերժին:

3. Երանի թէ յարանկատէիր

ծա.

ծառայի քոյ զաշխատանս՝ և ըզ
ցաւս, ով հզօրագոյնդ ո՛ր իս
րայելի. և նախանձայոյզ հոգւոց
հաւատացելոց, և օգնէիր նմա յա
մենայնում, յո՛ և ընթանայր։
Կազդուրեա՛ զիս երկնայնովդ կարո
ղութեամբ, զի մի՛ հին մարդն, որ
մարմինն, դեռևս հոգւոյն լինայես
ո՛չ հպատակեցեալ, յանդգնիցի
տիրել. Ընդէ՛մ որում զկնի պիտոյ
եղիցի պատերազմիլ, որքան աւուրս
ցուք յայսմիկ կենում թշուառելա
գունեղի։ Վա՛յ թէ՝ որպիսի է
կեանս այս, յորում ո՛չ երբէք պա
կասին նեղութիւնք՝ և թշուառու
թիւնք, յորում լի է ամ ինչ որո
գայթիւք, և թշնամեօք։ Քանզի՛
՚ի հեռանալ միոյ անձկութեան,
և փորձութեան, մերձենայ միւսն.
և մինչ դեռ տակաւին տևէ հարու
ած առաջնոյն, այլք բազումք յան
կարծակի ՚ի վերայ յառնեն։

4. Եւ որպէս կարէ սիրել այս
պիսի կեան, որ ունի զայսքան
դառնութի՟, և է ստորանկեցեալ
այսքանից թշուառութեանց. և
խղճութեանց։ Կամ որպէս կարէ
յորջորջիլ կեան, այն՝ որ ծնանի
զմահս, և զժանտս։ Բայց սակայն
աս

տակաւին 'ի բազմաց սիրի, և յո
գունք խնդրեն հրճուիլ 'ի նմա:
Յանդիմանի յաճախապէս աշխարհ՝
իբրթէ՝ լցէ սուտ, և ընդունայն.
այլ սակայն ոչ դիւրապէս թողա
նի 'ի բաց, զի յոյժ տիրեն ցանկու
թիւնք մարմնոյ: Եւ զի՝ այլք
են, որք առաջարշեն 'ի սիրել զնա,
և այլք, որք 'ի քամահել: Առաջար
շեն 'ի սէր աշխարհի, * ցանկու 1 Յոհ.
թիւն մարմնոյ, ցանկութի աչաց, 2. 16
և հպարտութի կենցաղոյս. բայց
պատիժք՝ և թշուառութիք, որք
արդարապէս հետևին նոցին, ծնա
նին զատելութիւն աշխարհի, և
զձանձրութիւն:

5. Բայց՝ ո՜հ ցաւոյս, զի յաղթա
հարէ մախիզն զուարճութիւն
ըզ միտս նուիրեցելոյ աշխար
հի, * և համարի գոլ 'ի ներքոյ Յոբ
տատասկաց զզբօսանս. զի ոչ տե 30. 7
սին՝ և ոչ ճաշակեցին երբեք ըզ
քաղցրութիւնն այ, և զներքին
ապահովութի զօրութէ: Իսկ որք
կատարելապէս քամահեն զաշ
խարհ, և կեալ ըստ այ. 'ի ներքոյ
սրբազանի ջանան խրատու. այնո
քիկ զքաղցրութիւնն այ՝ ճշմար
տից հոգևորաց խոստացեալ՝

ոչ անգիտանան. և թէ՝ որքան ծանրապէս սխալիցի աշխարհ, և զանազանապէս խաբիցի, յայտնապէս տեսանեն:

Գլուխ ԻԱ:

Յաղագս Թէ յԱստուծոյ ՚ի վեր քան զամ բարիս, և պարգևս յորս հանգչելի է :

1. Ի վեր քան զամ, և յամենայնում միշտ յարահանգեայց՝ ով հոգի իմ, ՚ի Տէր. քանզի ՚նա է հանգիստ յաւիտենական ամենից սրբոց: Տուր ինձ, ով քաղցրագոյնդ, և սիրելագոյնդ Յս, ՚ի վեր քան զամ ստեղծուածս ՚ի քեզ յարահանգչիլ. ՚ի վեր քան զամ կեցութիւն, և գեղեցկութիւն. ՚ի վեր քան զամ փառ, և պատիւ. ՚ի վեր քան զամ իշխանութիւն, և արժանաւորութիւն. ՚ի վեր քան զամ գիտութիւն, և նրբութիւն. ՚ի վեր քան զամս փարթամութիւնս՝ և արհեստս. ՚ի վեր քան զամ խնդութիւն, և հրճուութիւն. ՚ի վեր քան զամ համբաւ, և գովութիւն. ՚ի վեր քան զամ քաղցրութիւն, և մխիթարութիւն. ՚ի

'ի վեր քան զամ յոյս, և խոստումն.
'ի վեր քան զամ արդիւն, և խիղճ.
'ի վեր քան զամենայնս պարգևս, և
զձիրս, զորս կարես տալ՝ և ներհե
ղուլ. 'ի վեր քան զամ ուրախու
թիւն, և զուարճութի, զոր կարէ
ըմբռնել միտ՝ և զգալ: Այլև՝ 'ի
վեր քան զհրեշտակս, և հրեշտա
կապետս, և 'ի վեր քան զամ զօրս
երկնից. 'ի վեր քան զամ երևելիս՝
և աներևոյթս, և 'ի վեր քան զամ,
որ ոչ ես դու Ած իմ:

2. Քանզի դու՝ Տէր իմ, և Ած
իմ, 'ի վեր քան զբնաւս բարեգու
նեղ ես. դու միայն բարձրագու
նեղ. դու միայն հզօրագունեղ.
դու միայն ամենակարողագունեղ՝ և
լիագունեղ. դու միայն քաղցրա
գունեղ, և ախորժագունեղ. դու
միայն գեղեցկագունեղ, և սիրելա
գունեղ. դու միայն պատուակա
նագունեղ, և փառաւորագունեղ
'ի վեր քան զամս: Յորում բը
նաւ բարիք իմիասին, և կատարե
լապէս գոն, և միշտ եղեն, և եղի
ցին. ուստի փոքրինչ է, և անբաւ
ական, զոր ինչ բաց 'ի քէն շնոր
հես ինձ, կամ զքէն բացայայտես,
կամ խոստանաս, սակս որոյ՝ և

Թարց:

թարց տեսանելոյ զքեզ լիապէս ոչ շահիմ. որովհետեւ ոչ կարէ սիրտ իմ իրաւապէս յարահանգչել, և ոչ բոլորապէս գոհունակել, եթէ ոչ 'ի քեզ յարահանգչիցի, և զընաւ պարգևս, զընաւ իսկ ըստեղծուածս գերազանցիցէ:

3. Ո՛վ սիրելագունեղ փեսայդ իմ Յս Քս, սիրողդ մաքրագունեղ, տիրողդ համորից ստեղծուածոց:
Սաղմ 54. 7 * Ո՛տայր ինձ զթևս ճշմարտի ազատութեան՝ առ 'ի թռչել, և դադարել 'ի քեզ: Ո՛թէ՝ երբ տրեսցի ինձ, լիապէս պարապել և տեսանել, թէ որպէս քաղցր ես, Տր իմ, և Աստուած իմ: Ե՛րբ՝ լիապէս ժողովեցից զիս 'ի քեզ, զի վասն սիրոյ քո՝ ոչ զգայցեմ զիս. այլ զքեզ միայն, 'ի վեր քան զամ զգայութիւն, և զեղանակ՝ եղանակաւ անծանօթիւ բազմաց: Իսկ այժմ յաճախապէս հեծեմ, և զաներջանկութիւն իմ ընդ ցաւոյ տանիմ: Քանզի չարիք բազումք յայս միկ ձորոջ թշուառութեան հանդիպին, որք բազմիցս զիս խռովեն, տխրեցուցանեն, և պղծեն. բազմիցս արգելուն, տարաքարշեն, շաղքորթեն, և շփոթեն, զի մի զա

զատ

զատ մատչումն ունիցիմ առ քեզ, և մի վայելչօք զմայլեցիմ փարմամբք, միշտ ընդ հոգւոց երանելեաց: Շարժեսցէ զքեզ հառաչանն իմ, և որբութիւն իմ բազմապատիկ 'ի յերկրի:

4. Ո՛Վ Յս, Ճառագայթ փառին յաւիտենականի, սփոփումն պանդխտի հոգւոյ. առ քեզ է բերան իմ թարց բարբառոյ, և լռութիւն իմ խօսի ընդ քեզ: Մինչև
ցե՞րբ * յամէ տր իմ 'ի գալ: Եկեսցէ Ղուկաս
առ իս յաղքատիկ իւր, և ուրա 12. 45
խացուսցէ զնա: *Զգեսցէ զձեռն Սաղմոս
իւր, և փրկեսցէ զիս զթշուառս 137. 7
յամէ նեղութենէ: Ե՛կ, ե՛կ. զի առանց քեզ՝ ոչ լինի օր, կամ ժամ, է խնդութեան, քանզի դու ես խնդութիւն իմ. և թարց քեզ՝ թափուր է սեղանն իմ: Եմ ողորմելի, և կերպիւ իւիք բանտարգելեալ ոտնակապօք ծանրբք. մինչև լուսով ներկայութեան քոյ զիս սփոփիցես, և ազատութեան տայցես, զերեսս քո եւ սիրական ինձ ցուցանիցես:

5. Խնդրեսցեն այլք փոխանակ քեզ զոր ինչ և կամիցին. իսկ ինձ ոչ այլ ինչ հաճոյանայ, և ոչ հաճոյ

աա

ասցի, եթէ ո՛չ դու ԱՃ իմ, յոյս իմ, և կեցութիւն յաւիտենական։ Ո՛չ լռեցից, և ո՛չ դադարեցայց ՚ի մաղթելոյ. մինչև շնորհ քո սուրբ դարձցի առ իս, և խօսիցիս ընդ իս դու ՚ի ներքուստ։

6. Ահաւասիկ մերձեմ։ Ահաւասիկ առ քեզ եմ, վ՛ն զի ներկոչեցեր զիս։ Արտասուք քոյք, և ցանկութիւն հոգւոյ քոյ, խոնարհութիւն քո, և զղջումն սրտի քոյ մեղկեցին զիս, և ածին առ քեզ։

7. Եւ ասացի. Տէ՛ր իմ, կոչեցի զքեզ՝ և ցանկացայ քև զմխիթարիլ, պատրաստեմ արհամարհել զամենայն լինչ վ՛ն քոյ։ Վասն զի՝ դու նախ զարթուցեր զիս առ ՚ի խնդրել զքեզ։ Եղիցի անուն քո օրհնեալ, որ արարեր զայսպիսի բարութիւն ընդ ծառայի քում, ըստ բազմութեան քոյոյ գթութեան։ Զի՞նչ ունի աւելի ծառայ քոյ առ ՚ի ասել քեզ, եթէ ո՛չ՝ զի խոնարհեցուցանիցէ զինքն յոյժ առաջի քոյ, յիշելով միշտ զանօրէնութիւն իւր յատուկ, և զանարգութիւն։ Քանզի՝ ո՛չ ոք է նման քեզ ընդ բնաւս զարմանալիս երկնի, և երկ

րի

րի: * Զի գործք քոյք բարիք են Ծննդ.
յոյժ: * դատողութիւնք քոյք 1. 31
Ճշմարիտք, և * Նախատեսութիւն Սաղմ.
քոյ կառավարին համայնք: 18. 10
Փառք ուրեմն, և գովութիւն Իմաստ.
քեզ, ով իմաստութիւն Հօր. գովել 14. 3
ցէ՛ զքեզ, և բարեբանեցէ՛ բերան
իմ, և հոգի իմ, իմաստին ընդ հա
նուր ստեղծուածոց:

Գլուխ ԻԷ:

Յաղագս յիշման բազմապատկաց բարերարութեանցն Աստուծոյ:

1. Բա՛ց Տէր զսիրտ իմ յօրէնս քո, և ուսո՛ ինձ շրջիլ 'ի պատուիրանս քոյս: Տուր ինձ իմանալ զկամս քո, և մեծապատկառանօք, և հոգունակայարադիտմամբ, թէ ըստ սեռին, և թէ՝ ըստ տեսակին յիշատակել զբարերարութիւնս քո. զի արժանապէս կարիցեմ այսուհետև զշնորհակալութիւնս վերընծայել քեզ: Թէպէտ գիտեմ, և խոստովանիմ, զի՝ և ոչ զմն փոքրագունեղն իմեք կլինի, մարթիմ զարժանաւոր շնորհակալութեանց գովութիւնս քեզ մատուցանել: Փոքրագոյն եմ

եմ ես քան զընաւ բարիս ինձ պարգևեցեալս. և մինչ զքոյդ պատուականութիւն նշմարեմ, նուաղի հոգի իմ՝ ի մեծութենէդ:

2. Զամ ինչ, զոր ունիմք ընդ հոգւոյ, և ընդ մարմնում, և զոր ինչ արտաքսապէս, և ներքսապէս, բնականաբար՝ կամ գերբնաբար ըստացեալ ունիմք, քոյքեն բարերարութիւնք, և զքեզ բարի՝ և գթած բարերար գոլ հռչակեն, յորմէ զհանուր բարիս ընկալեալք եմք: Եւ թէպէտ ոմանք զբազումս, և այլք զսակաւս ընկալեալք են, սակայն քո է ամենայնն. և առանց քեզ՝ և ոչ փոքրագոյնն կարելի է ունիլ: Որ զմեծամեծս ընկալեալ է, ոչ կարէ պարծիլ յարդիւն իւր, և ոչ գոռոզանալ ՚ի վերայ այլոց, այլ և ոչ յառնել ՚ի վերայ փոքրագունին. զի նա է մեծագոյն՝ և բարեգոյն, որ ինքեան զսակաւագոյնն առագրէ, և ՚ի շնորհակալութիւնս խոնարհագոյն է, և ջերմեռանդագոյն: Եւ որ յամենայն զինքն անարգագոյն համարէ, և անարժանագոյն գոլ դատէ, յարմարագոյն է առ ՚ի ընդունիլ զմեծագոյնս:

3. Իսկ

3. Իսկ՝ որ զսակաւագոյնս ընկալեալ է, ոչ պարտի տրտմիլ. և ոչ զայրանալ. այլև ոչ զչարանալ ընդդէմ այնմ, որ հարստագոյն է. այլ միայն զքեզ նշմարել, և զքոյդ բարութիւն մանաւանդ գովել, որ այնքան առատապէս, այնքան ձրապէս, և այնքան ազատապէս առանց աչառութեան, շնորհես զքոյս պարգևս: Բնաւքն են 'ի քէն, ուստի յամենայն ես գովովելի: Դու գիտես, թէ զի՞նչ իւրաքանչիւր ումեք ըմբռն իցէ շնորհել. և թէ՝ ընդէ՞ր այս սակաւ, և այն առաւել ունիցի. այսամ ոչ մեզ՝ այլ քեզ է՛ զննելի, առ որ իւրաքանչիւրոց սահմանեցեալ է արդիւնն:

4. Ուստի՝ տէ՛ր իմ, և Ա՛Ծ իմ, ես զոչ ունիլն զբազումս, մեծ իմն բարերարութիւն վարկանիմ, յորմէ արտաքսապէս, և ոչ մարդկան գովութիւն, և փառք երևին. մինչ զի՝ նկատելով իւրաքանչիւր ոք զաղքատութիւն իւր, և զանարգութիւն իւրոյ անձին, ոչ եթէ զծանրութիւն, կամ զտրտմութի՛ւն, և կամ զքամահութիւն 'ի միտս ածիցէ, այլ մանաւանդ զմխիթարութիւն՝ և զմեծ

զմեծ զուարթութի. քանզի՝ դու տր
իմ զաղքատս. և զխոնարհս, այլև
զխոստանիս այսօրիկ աշխարհի ընտ
րեցեր քեզ բարեկամս՝ և ընտա
նիս: Վկայք են ինքեանք իսկ
Սաղմ. քոյք առաքեալք, զորս *իշխանս
44. 17 'ի վերայ ամի երկրի հաստատեցեր:
Որք կենցաղավարեցան նոյանիկ
աշխարհի թարց իմեք կագի, դո
լով այնքան խոնարհք՝ և միամիտք,
և առանց զչարութեան՝ և նենգու
թե, մինչ զի 'ի կրելն զնախատինս
Գործ. * վս անուան քոյ խնդային. և փա
5. 41 րեկին ընձիւ մեծաւ զայնոքիւք, զո
րոց խորշի աշխարհ:

5. Ո՛չինչ ուրեմն այնքան զխ
րօղդ քո, և զձանաչօղն քոյոց բա
րերարութեց ուրախացուցանել
պարտի, որքան կամք քո 'ի նմա, և
բարեհաձութիւն յաւիտենականի
տրամադրութե քոյ. զորմէ այնքան
պա՛րտ է գոհանալ, և մխիթարիլ,
մինչ զի այնպէս յօժարաբար կամի
ցի դու փոքրագունեղ, որպէս ոք
ընձայ լինիլ մեծագունեղ. և այն
պէս խաղաղարար և գոհունակ
Ղուկ. * 'ի յետնոջ, ոպ ըն տեղւոջ նախ
14. 10 կնում. և այնպէս յօժարաբար
պարտի հաձիլ դուլ պարսաւելե,
և

և անարգելի, անանուն, և անհամ-
բաւ, որպէս հասարակապէս մար-
դիք հաճին լինել պատուաւորա-
գոյնք՝ և մեծագոյնք յաշխարհի։
Վա՜յ զի՝ կամ քո, և սէր պատուոյ
քոյ, զոր ինչ գերազանցել պար-
տի. և առաւել մխիթարել զնա,
և հաճոյանալ նմա, քան թէ՝ բնաւ
բարերարութիւնք նմա տրեցեալք՝
և տրելիք։

Գլուխ ԻԳ։

Յաղագս Չորից ներբերողաց մեծի խաղաղութեան։

1. Որդեակ, այժմ ուսուցից
քեզ զճանապարհ խաղա-
ղութե, և ճշմարտի ազատութե.
2. Արա՛ տէր, զոր հրամայես,
քանզի՝ հաճոյ է ինձ լսել զայդ։
3. Ջանա՛ որդեակ, առնել մա-
նաւանդ զկամս այլոց՝ քան զքոյդ։
Ընտրեա՛ միշտ ունել զսակաւն,
քան զբազումն։ *Խնդրեա՛ միշտ Ղուկա
զյետնագոյն տեղին, և ամենե 14. 10
ցուն լեր հպատակ։ Ըղձա՛ միշտ՝
և աղօթեա՛, զի կամ Տեառն ամ-
բողջապէս 'ի քեզ լիցի։ Ահա՛
այսպիսի մարդն հասանէ 'ի վախ-
ճանն

ձան խաղաղութեան, և յանդոր րութեան:

4. Տէ՛ր իմ, այս բան քո համառօտ, զկատարելութիս բազումս պարունակէ յինքեան: Յանէ՛ն փոքր երևի, բայց լի՛ է իմացմամբ, և ձո՛խ է պտղով: Քանզի՝ եթէ կա՛ր էր հաւատարմաբար յինէն պահիլ, ոչ էր պարտ՝ այնքան դիւրաբար ծնանիլ 'ի յիս ամբոխումն: Զի՝ որքանիցս անխաղաղացեալ զիս զգամ, և ծանրացեալ, այնքանիցս յայտմանէ վարդապետութէ հեռացեալ զիս գտանեմ: Բայց դու, որ զա՛մ ինչ կարես, և զհոգւոյ զյառաջումն միշտ կամիս, յաւել ինձ զմեծագոյն շնորհ. զի կարիցեմ լնուլ զբան քո մբ̃, և կատարել զփրկութիւն իմ:

Աղօթք ընդդէմ խորհրդոց չարաց:

Սաղմ 70. 12 5.* Տէ՛ր իմ՝ և Այ̃ իմ, մի հեռանար յինէն. Այ̃ իմ յօգնել ինձ նայեաց. քանզի՝ յարեան 'ի վերայ իմ խորհուրդք զանազանք, և երկիւղք մեծամեծք, որք վշտանկեն զհոգի իմ: Զիա՛րդ կարացից անցանել անվնաս, զիա՛րդ ներբեկեցից զնս̃:

8.* Ես

8. * Ես՝ ասէ, երթայց առաջի Եսայի
քո, և զփառաւորս երկրի խոնար 45. 2
հեցուցից: Բացից զդրունս բան
տից, և զծածուկս խորհրդոյ յայտ
նեցից քեզ:

7. Արա՛, տէր իմ, ո՞պ և խօսիս.
և * փախիցեն յերեսաց քոց հա Սաղմ
մայնք խոկմունք անզգամք: Այս 67. 1
է միակ յոյս իմ, և մխիթարութի
իմ, ըն բնաւ նեղութիւնս դիմել
առ քեզ, 'ի քեզ յուսալ, զքեզ 'ի
խորոց սրտէ ներկոչել, և համբե
րութեամբ զմխիթարութիւն իմ
'ի քէն սպասել:

Աղօթք վասն լուսաւորութեան մտաց:

8. Պայծառացո՛ զիս՝ ո՛վ բարի
Յս՟, պայծառութ՟բ լու
սոյն ներքնայնոյ. և ելուզեա՛ 'ի
սենեկէ սրտի իմոյ զխաւարս հա
մայնս: Համարդել զցնդմունս
բազումս, և ընկեա՛ 'ի բաց զբըռ
նաւոր պատերազմունս: Մարտիր
զօրեղապէս վ՟ս իմ, և հակազինեա՛ց
ընդդէմ գազանաց չարաց, այս
ինքն՝ ընդդէմ տուփութեանց ան
պատեհից. զի * լինիցի խաղաղու Սաղմ
թի 'ի զօրութե՟ քում, և առատու 121. 7
թիւն գովութեան քոյ վերահնչէ
ցի

ցի ըն զաւութիս սուրբս, այսինքն՝
Մարկ 'ի խղճմտանս մաքուրս: * Հրա
4. 39 մայեա՛ հողմոց, և մրրկաց. սաստ ծո
վուն, դադարեա՛ց. և հիւսիսոյ,
մի հնչիցես. և եղիցի հանդարտու
թիւն մեծ:

Սաղմ 9. * Առաքեա՛ զլոյս քո, և զճշ
42. 3 ճշմարտութիւն քո, զի ծագիցեն
'ի վերայ երկրի. քանզի երկիր
եմ ես ունայն, և թափուր, մինչև
լուսաւորիցես զիս: Առաջնորդեա՛
զշնորհ քո 'ի վերուստ. և զեղ 'ի
սիրտ իմ զցօղ երկնային. տեղեա՛
զջուրս ջերմեռանդութե, առ 'ի
ոռոգել զերեսս երկրի, առ 'ի յա-
ռաջածել զպտուղս բարիս, և զբա
րեգունեղս: Վերացո՛ զմիտս տագ
նապեցեալս 'ի բազմութէ մեղաց,
և առ երկնայինս զբոլոր խղճ իմ
ուղղեա՛. զի՝ ճաշակելով զքաղց
րութի վերնոյ երջանկութեան,
զզուեցի 'ի խորհելոյ զստորնայինս:

10. Յափշտակեա՛ զիս, և զեր
ծո՛ 'ի բնաւից ստեղծուածոցան-
տւելեաց սփոփմանցն. քանզի ոչ
ինչ ստեղծական զբաղձանս իմ
լիապէս հանգուցանել, և լցու
ցանել կարէ: Առակցեա՝ զիս
ընդ քեզ անբաժանելեաւ սիրոյդ
կա

կամապանաւ. քանզի՝ դու միայն բա-
ւական ես քում սիրողին, և առանց
քեզ անօտիք են հանուրքն:

Գլուխ ԻԴ:

Յաղագս խափանելոյ հետաքննականի ներ խուզմանն վարուց այլոց

1. ՈՐդեակ՝ մի լինիր հետա-
քրքիր, և մի սիրեր ըզ-
բաղմունս դատարկս: * Զի՞նչ Յօհան
փոյթ է քեզ զայսմանէ, կամ զայն 21. 22
մանէ, դու միայն հետևեաց ինձ:
Քանզի՝ զի՞նչ փոյթ է քեզ՝ թէ
ոք այսպէս իցէ, կամ այնպէս. և
թէ՝ ոք խօսիցի, կամ առնիցէ, այս
պէս՝ կամ այնպէս: Ո՛չ է քեզ
հարկ, զի վ՟ն այլոց պատասխանի
ցես, այլ հարկ է քեզ՝ զի վ՟ն քոյ
զհամարս տայցես: Ընդէ՞ր ուրեմն
պատաղիս: Ահաւասիկ՝ ես զբը-
նաւս ճանաչեմ, և զհամայնս, որք
լինին 'ի ներքոյ արեգական՝ տեսա-
նեմ. և գիտեմ, թէ՝ զի՞նչ իւրա
քանչիւրոք իցէ, զի՞նչ խորհիցի,
զի՞նչ կամիցի, և առ ո՛ր վախճան
դիտաւորութիւն նորին ձկտիցի:
Ինձ ուրեմն յանձնելիք են հա
նուրքն

նուրբքն, իսկ դու պահեա՛ զքեզ
ըն բարւոյ խաղաղութե՛ե, և թող
սուր շարժողին շարժել՝ որքան
և կամիցի։ Եկեսցէ 'ի վերայ նր՝
զոր ինչ. և առնիցէ, և ասիցէ.
քանզի խաբել զիս ոչ կարէ։

2. Մի՛ եղիցի քեզ փոյթ զշքոյ
անուան մեծի, մի՛ զընտելութե
նէ բազմաց, և մի՛ զառանձին սի
րելութենէ մարդկան։ Քանզի՝
յայսցանէ ծնանին ցնդմունք, և
մթութիւնք մեծամեծք 'ի սրտի։
Յօժարապէս խօսէի ընդ քեզ
զբանս իմս, և յայտնէի քեզ ըզ
Ղուկա գաղտնիս, եթէ իմում * գալս
12. 36 տեան զգուշապէս սպասէիր, և
ինձ զդուռն սրտի քոյոյ բանայիր։
Լեր նախատեսուչ, և հսկեա՛ յա
ղօթս, խոնարհեցո՛ իսկ զքեզ նա
մենայնում։

Գլուխ ԻԷ։

Նորա արգելոյ հասարակաց խաղաղու
թիւնն, և ճշմարիտ շահաւէտու
թիւնն կայանայցէ։

1. Որդեակ՝ ես խօսեցայ.
Յովհան * Զխաղաղութիւն թո
14. 27 ղում ձեզ, զխաղաղութիւն իմ

 տամ

տամ ձեզ. ո՛չ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ: Արդ որք ցանկայք խաղաղութեան. բայց ո՛չ այնմ որք հոգայ ղայն՝ որ պատշաճի առ ճշմարիտ խաղաղութիւն: Խաղաղութիւն իմ է՝ ընդ խոնարհս, և ընդ հեզամտօք: Խաղաղութիւն քո եղիցի 'ի համբերութիւնս բազումս: Եթէ լուիցես ինձ, և հետևիցես ձայնի իմում, կարասցես զբազում ինչ խաղաղութեան վայելել:

2. Զի՞նչ արարից ուրեմն:

3. Յամենայնում զգուշ լեր 'ի քեզ, թէ զի՞նչ առնիցես, կամ զի՞նչ ասիցես. և զբոլոր դիտաւորութիւն քո ուղղեա՛ առ այն, զի ինձ միայնում հաճոյանայցես, և բաց յինէն զո՛չ այլ ինչ ըղձայցես, կամ խնդրիցես: Այլև զասացուածս, կամ զառս այլոց մի՛ անզգուշաբար դատիցես. և 'ի յիրս ո՛չ յանձնեցելս քեզ մի՛ պատաղիցիս. և այսպէս մարթ եղիցի քեզ, զի սակաւ ինչ՝ կամ նուաղապէս վրդովիցիս: Քանզի՝ ո՛չ զգալն երբեք զվրդովմունս ինչ, և ո՛չ կրել զվշտանկութիւն ինչ սրտի՝ կամ մարմնոյ, ո՛չ է՝ ներկայի կենցաղոյս, այլ կայութեանն յաւիտենականի

յանդորրութեն: Մի՛ ուրեմն վարկանիցես՝ թէ գտեալ իցես զճշմարիտ խաղաղութիւն, եթէ ո՛չ ըզգայցես զծանրութիւն ինչ. և մի՛ յայնժամ համարիցես զբոլորն գոլ բարի, մինչ զո՛չ իմն կրես զընդդիմութիւն. մի՛ վարկանիցես զայն ինչ գոլ կատարեալ, եթէ բնաւքն լինիցին ըստ քոյոց ըղձից: Եւ մի՛ յայնժամ կարծիցես գոլ զքեզ մեծ ոմն, կամ սիրելի ա̃յ, եթէ ըն մեծի իցես ջերմեռանդութեան, և քաղցրութեան. քանզի յայսպիսիս ո՛չ ճանաչի ճշմարիտ սիրողն առաքինութեան. և ո՛չ կայանայ յայսպիսիս՝ շահաւէտութիւն, և յառաջադիմութիւն մարդոյ:

4. Որո՞ւմ ուրեմն Տ̃ր:

5. 'Ի յանձնելն զքեզ 'ի բոլորէ սրտէ քումմէ կամացն ա̃ծայնոց, ո՛չ խնդրելով զքոյն, ո՛չ ըն փոքունս, և ո՛չ ըն մեծամեծս, ո՛չ 'ի ժամանակի, և ո՛չ 'ի յաւիտենականութեան. մինչ զի միով՝ և հանգիտիւ դիմաւ 'ի շնորհակալութիւն յարամնայցես, 'ի մէջ աջողութեանց՝ և անաջողութեանց, զամենայն ինչ թաթիւ հաւասարիւ

կշռե

կշտելով։ Եւ եթէ լինիցիս այն քան հզօր, և երկայնամիտ յու սով, մինչզի 'ի նուաղիլն ներքնայ նոյ մխիթարութեան, առ'ի ըմբե րել և կարծրացուցանել զսիրտ քո պատրաստիցես, և ոչ արդարա ցուցանիցես զքեզ, ոչ թէ զայս պիտիս, և զայսքանս ոչ էր ըմբռն քեզ կրել. այլ զիս նամենայն տը րամադրութիւնս արդարացուցա նիցես, և զանուն իմ սբ գովիցես. յայնժամ ըն ճշմարիտ, և յուղիղ ճանապարհօք խաղաղութեան շրջես ցիս, և եղիցի քեզ յոյս անտարա կուսելի, թէ վերստին հրճուա նօք զերեսս իմ տեսանելոց իցես։ Իսկ՝ եթէ առ կատարեալ քամա հումն քոյոյ անձին ժամանիցես. գիտեմ զի յայնժամ առատու թեամբ խաղաղութեան զմայ լեսցիս, ըստ կարողութեան քոյոյ պանդխտու թեան։

Գլուխ

Գլուխ ԻԶ։

Յաղագս գերազանցութեան ազատական մտաց, զոր մանաւանդ աղօթն թախանձական, քանթէ ընթերցուածն արդիւնաւորէ։

1. ՏԷՐ իմ, այսէ գործ առն կատարելոյ, ոչ երբէք 'ի գիտմանէ երկնայնոց թուլացուցանել զմիտս. և 'ի մէջ բազմաց հոգոց կենցաղավարիլ իբր անհոգ, ոչ ըստ սովորութեան ընդարմացելոյ, այլ մանաւանդականութեամբ իւիք ազատական մտաց, ոչ իմեք առեղծանածոյ ապականութիւ զգածմամբ առյենլով։

2. Աղերսեմ 'ի քէն, ո՜վ ամենաբարեգութ Տր իմ, նախապահեա զիս 'ի հոգոց այսորիկ կենցաղոյս, զի մի յաճախ պատաղեցայց. 'ի բազմաց կարեաց մարմնոյ, զի մի 'ի փափկութեանց ըմբռնեցայց. և 'ի բնաւից ընդդիմակայից հոգւոյն, զի մի 'ի վշտանկութեանց բեկեցեալ տորանկեցայց։ Ո՛չ ասեմ յիրաց այնցանէ, զորովք փարի բոլորով ըղձիւ աշխարհային ունայնութիւնն. այլ յայնցանէ թշուառութեանց, որք զմիտս ծառայի քոյ

հա

հասարակաց անիծիւ մահկանացու-թեան՝ պատժականապէս ծանրացուցանեն, և յաւելցուցանեն. զի մի՛ 'ի յազատութիւն հոգւոյն, որ քանիցս և ըմբռն իցէ, մտանել կարողանայցէ:

3. Ո՛վ Ած իմ, քաղցրութիւն անճառելի, փոխարկեա՛ ինձ 'ի դառնութիւն, զհանուր մխիթարութիւն մարմնոյ, որ 'ի սիրոյն մշ-տնջենականաց զիս 'ի բաց քարշէ. և նկատմամբ ներկայի իմեք բարւոյ բերկրականի, առ ինքն չարապէս համոզէ: Մի՛ յաղթահարեսցէ զիս, Ած իմ, մի՛ յաղթահարեսցէ զիս մարմինն, և արիւն. մի՛ պատրեսցէ զիս աշխարհ, և սուղ փառք նորա. մի՛ տորանկեսցէ զիս սատանայ, և խորամանկութիւն նորին: Տուր ինձ զարիութիւն ընդդիմադրելոյ, զհամբերութիւն տանելոյ, և զհաստատութիւն յարատևելոյ: Տո՛ւր ինձ՝ փոխանակ հանուրց աշխարհի սփոփմանց, զօծումն քաղցրագունեղ քոյոյ հոգւոյդ, և փոխանակ մարմնականի սիրոյ, ներհեղ 'ի յիս զսէր քոյոյ անուան:

4. Ահաւասիկ կերակուր, ըմպելի, հանդերձ, և այլ կիրարկանելիք:

լեք, որք պատշաճին 'ի պահպա-
նութեն մարմնոյն, են 'ի ծառայու-
թիւն հոգւոյն ջերմեռանդի։
Շնորհեա՛ զայսպիսիս դարմանս
բարեխառնապէս 'ի կիրարկանել,
և ո՛չ 'ի նոսին՝ կարօտութեան սաստ
կագունիւ պատրաստիլ։ 'Ի բացձըլ-
գել զնոյն ինչ՝ անպատեհ իմն է,
քանզի բնութեան պահպանիլ պար-
տի. իսկ բաղձալն առաւելորդաց
իրաց, և այնոցիկ, որք առաւել
բերկրեցուցանեն, յօրինաց սրբոց
արգելանի. քանզի՝ այլապէս մար-
մինն ընդդէմ հոգւոյն անզգամի։
Աղաչեմ ('ի մէջ սոցա) ձեռն քո
զիս ուղղեսցէ, և ուսուսցանիցէ, զի
մի իր ինչ առաւելորդագոյն լինիցի։

Գլուխ ԻԷ։

Թէ սէրն առանձնական յամեցուցանէ յոյժ 'ի ծայրագունէ բարւոյ։

1. Որդեակ՝ պարտիս զքեզ
բոլորովիմբ տալ փոխա-
նակ բոլորին, և 'ի քեզ ինքեան
ո՛չ ինչ գոլ։ Գիտեա՛՝ զի սէր քոյոյ
անձին առաւել վնասէ քեզ, քան
թէ՝ այլ իր ինչ աշխարհի։ Ըստ
սիրոյ՝ և ըստ ըղձին, զոր 'ի կիրար-
կա

կանես խուրաքանչիւր իր առաւել՝ կամ նուազ՝ քեզ առյենու։ Եթէ եղիցի սէր քո զուտ, և պարզ՝ և բարւոք կարգաւորեցեալ, եղիցիս Թարց գերութեան իրաց։ Մի կամիր ցանկալ այնմ, զոր ոչ է պատեհ քեզ ունիլ. մի ունիցիս զայն, որ կարէ արգելուլ զքեզ, և զըրկել յազատութենէ ներքնայնոյ։ Զարմանք են, որ ոչ 'ի բոլոր յատակէ սրտի քոյ զքեզ ինձ յանձնես՝ համդերձ բնաւիւք, որոց ցանկալ կարես, կամ ունիլ։

2. Ընդէ՞ր մաշիս ունայնիւ տխրութեամբ։ Ընդէ՞ր աշխատիս հոգովք անօգտիւք։ Կա՛ց ըստ բարեհաճութեան իմում, և ոչ կրեսցես երբէք զտուժանս։ Եթէ խնդրիցես զայս ինչ՝ կամ զայն, և կամիցիս գոլ աստ, կամ անդ, վն քոյոյ անդորրութեան, և առ 'ի զատնել մանաւանդապէս զքոյդ առանձնական հաճութիւն. ոչ երբեք հանգիցիս, և ոչ ազատեսցիս 'ի զբաղմանէ. քանզի՝ նմանում գտանիցի իմն պակասութիւն, և յամենայնում տեղւոջ եղիցի ոք, որ ընդդիմանայցէ։

3. Օգնէ՜ ուրեմն՝ ոչ խուրաքան

չիւր

չիւր ինչ առաջացեալ, կամ բազմօ պատկեցեալ արտաքսաբար, այլ մանաւանդ քամահեցեալ՝ և արմատաքի հատեցեալ 'ի սրտէ: Զոր ոչ միայն զհաշուէ արծաթոյ, և զփարթամութեանց, այլև զփառ մանէ պատւոյ, և զըղձէ ունայնի գովութե իմանայցես, որք միանգամայն անցանեն ընդ աշխարհի: Դոյն ինչ նպաստ գոլ կարէ տեղին, եթէ նուաղիցէ լիզձ ջերմեռանդութեան. և ոչ է յարամնալոց խաղաղութիւնն արտաքուստ ներխնդրեցեալ, եթէ թափուր իցէ 'ի ճշմարտէ հիմանէ կայութիւն սրտի, այսինքն՝ եթէ ոչ իցես հաստատեալ 'ի յիս. փոփոխել զքեզ կարես, այլ ոչ բարւոքոյն ցուցանել: Զի 'ի ծագելն և յառնանելն առթին, գտանիցես՝ յորմէ փախեար, և մանաւանդ զառաւելագոյնն:

Աղօթք վասն մաքրութեան սրտի, և երկնային իմաստութեան:

4. Հաստատեա զիս՝ Ա՛ծ իմ, շնորհիւ Հոգւոյն սրբոյ: Տուր ինձ զզօրութիւն քաջալերութեան ըստ ներքին մարդոյն,

և

և զսիրտ իմ դադարկել 'ի բնաւից անօգտից զբաղմանց` և անձկուԹեց. և մի քարշել 'ի զանազանից ըղձից իւրաքանչիւրոյ իրի, Թէ խոտանի` և Թէ մեծագնի. այլ ըզ բնաւսն նշմարել իբրև զանցաւորս, և զիս նմանապէս ընդ նոսին զուլ անցանելոց. քանզի` ոչ ինչ յարամնայուն 'ի ներքոյ արեգական, ուր * զամ ինչ ունայնուԹիւն է, և տառապումն մտաց: Ո՞հ Թէ որպէս իմաստունն է այն, որ զայսմիտս յարանկանէ: Ժողով. 12. 8

5. Տուր ինձ տէր, զիմաստուԹիւն երկնային, զի ուսանիցիմ զքեզ գերքան զամ ինչ խնդրել` և գտանել, գերքան զամ ինչ իմանալ` և սիրել, և զայլս` ըստ կարգադրուԹե քոյոյ իմաստուԹեան, ըստ որում են, իմանալ: Տուր ինձ խոհեմապէս խուսափել յանէ շողոքորԹողէ, և ըմբերաբար տանիլ ընդդիմամարտին. քանզի` այս է մեծ իմաստուԹի, ոչ շարժիլն յամէ հողմոյ բանից, և ոչ լինիլն ունկնդիր չարապէս համոզողին սիրենայի. (յուշկապարի) զի այսպէս սկսանելով զճանապարհ, ճեպեմք ապահովապէս:

Գլուխ ԻԸ:

Ընդդէմ լեզուաց բամբասողաց:

1. Որդեակ՝ մի՛ զայրանայցես, եթէ ոմանք զքէն զդայցեն չարապէս. և ասիցեն, զոր ոչ լուիցես յօժարաբար: Դու զչարագոյնս զգալ պարտիս զքէն, և զոչ ոք հաւատալ քան զքեզ տկարագոյն: Եթէ շրջիցիս ներքսապէս, մի՛ այնքան կշռիցես զբանս թռուցեալս: Ո՛չ է դոյն ինչ
Ամօս * իմաստութիւն, լռելն ՚ի ժամանա
5. 13 կի չարի, և ՚ի ներքուստ դառնալն առ իս. և ոչ մարդկայնով աղմկիլն դատողութեամբ:

2. Մի՛ լինիցի խաղաղութիւն քո ՚ի բերանս մարդկան. քանզի՝ թէ բարեպէս, և թէ չարապէս մեկնիցեն զառս քոյս, ոչ վասն այնորիկ եղիցիս այլ իմն մարդ: Ո՞ւր է ճշմարիտ խաղաղութիւն, և ճշմարիտ փառք: Ո՞չ առաջէն ՚ի յիս: Ուստի որ ոչ բաղձայ հաճոյանալ մարդկան, և որ ոչ երկնչի յանհաճոյանալոյ, մեծաւ վայելեսցի խաղաղութեամբ: ՚Ի սիրոյ անկարգէ, և յերկիւղէ սնոտւոյ՝ ծնանի ամ̃ անհանգստութիւն սրտի, և տարացրումն զգայութեանց:

Գ. Ը.

Գլուխ ԻԸ։

Որպիսաբար 'ի մէջ վշտագնութեան կարդալ պարտ է՝ առ Աստուած, և բարեբանել։

1. Եղիցի* անուն քո՝ Տ̅ր, Սաղմ.
բարեբանեցեալ 'ի յաւ- 71. 17
իտեան, որ թոյլ ետուր այսմիկ
փորձութեան, և վշտագնութեան
գալ 'ի վերայ իմ։ Ո'չ է ինձ մարթ
փախչել յայնմանէ, այլ հարկ է, զի
դիմեցից առ քեզ. օգնեսցես
ինձ, և 'ի բարին զնոյնն դարձու-
ցանիցես։ Տ̅ր իմ, նարդեանս եմ
'ի վշտագնութեան, և ոչ է ըստ
հաճոյից իմոց, այլ յոյժ տագնա-
պիմ 'ի ներկայէ յախտէ։ Զի՞նչ
ասացից այժմ՝ ով Հայր իմ սի-
րելի։ Ըմբռնեցայ 'ի մէջ նեղու-
թեանց։ *Կեցո՛ զիս 'ի ժամու Յօհան.
յայսմիկ։ Եւ վ̅ս այսորիկ ժամա- 12. 27
նեցի 'ի ժամս յայս, զի դու փա-
ռաւորիցիս, մինչ յաւէտ խոնար-
հիցիմ, և 'ի ձեռն քո ազատիցիմ։
*Հաճեա՛ց ուրեմն Տէր՝ զերծու- Սաղմ.
ցանել զիս. քանզի ես աղքատ զո- 39. 14
րով՝ զինչ կարեմ առնել, և յո՞ կա-
րեմ ընթանալ առանց քեզ։
Տուր ինձ՝ Տ̅ր իմ, եւ յայսմ նուա-

գի.

գի զհամբերութիւն: Օգնեա՛ ինձ ա̄ծ իմ, զի՝ որքանիցս ծանրանայ ցեմ, ոչ երկեւոյց:

2. Եւ այժմ, 'ի մէջ այսոցիկ, զի՞նչ ասացից: Տէ՛ր իմ, եղիցի կամք քո: Բարեպէս արժանաւորեցայ ես վշտանկիլ՝ և ծանրանալ: Պա՛րտ է ուրեմն, զի տանիցեմ. և երանի՜ թէ համբերութեամբ, մինչև անցանիցէ մրրիկս այս, և բարեգոյն լինիցի: Բայց հզօր է ամենակարող ձեռն քո, առ 'ի բառնալ յինէն եւ զայս փորձութիւն, և առ մեղմել զթափս նորին, զի մի բընաւին սասանիցիմ. ըստ որում 'ի նախնումն բազմիցս արարեր ը̄ իս, Ա̄ծ իմ՝ և գթութիւն իմ: Եւ որքան է ինձ այս դժուարագոյն,
Սաղմ. 76. 11 այնքան է քեզ դիւրագոյն * այս նորոգումն աջոյն Բարձրելոյ:

Գլուխ Լ:

Յաղագս խնդրելոյ զօգնութիւնն Աստուծոյ. և յուսոյ վերստանալոյ շնորհին:

1. Որդեակ՝ ես եմ Տ̄ր քաջալերող յաւուր նեղութեան: Եկ առ իս, մինչ ոչ բարեպէս անձկիցի քեզ: Այս է որ մա-

մանաւանդապէս արգելու զմխի-
թարութիւնն երկնային, զի յամ-
րապէս դարձուցանես զքեզ առ
աղօթս: Քանզի յառաջ քան զթէ
զգուշացապէս աղերսիցես զիս, խնդ-
րես ներ այնքանեաւ զմխիթարու-
թին, և սպասես զքեզ իրօք արտաք-
նօք, վասն որոյ՝ բնաւքն սակաւ
ինչ օգնեն, մինչև խնդամանիցիս.
* զի ես եմ՝ որ փրկեմ զյուսա-
ցեալս 'ի յիս. և ոչ է արտաքոյ Սաղմ. 16. 7.
իմ հզօրագոյն օգնութիւն, ոչ օգ-
տակար խորհուրդ, և ոչ դեղ հաս-
տատուն: Բայց այժմ՝ առեցե-
լով հոգւով զկնի մրրկին, զօրա-
ցիր 'ի մէջ լուսոյ ողորմութեանց
իմոց. զի մերձ եմ (ասէ Տէր) առ
'ի կանգնելոյ զբնաւս, ոչ միայն
ամբողջապէս, այլև առատապէս
և կուտակօրէն:

2. * Միթէ իցէ ինձ ինչ ինչ դը-
ժուարին, կամ թէ՝ նման իցեմ Երեմ.
ես ասողի, և ոչ առնողի: Ո՞ւր է 32. 17.
հաւատ քո: Կաց հաստատապէս՝
և յարատևապէս: Եր երկայնա-
միտ, և այր զօրութեան. եկեսցէ
քեզ մխիթարութիւն 'ի ժամանա-
կի իւրում: Սպասեա ինձ, սպա-
սեա. ես եկից՝ և հոգացից զքեզ:

Փոր-

Փորձութիւն է՝ որ զքեզ վշտանկէ.
և անոտի երկիւղ, որ զքեզ ահաբե-
կէ: Զի՞նչ օգուտ է զբաղումն
զիրաց հանդերձելոց ներդխելա-
2 Կոր. կանաց, եթէ ոչ * զտրտմութիւն
2. 3 'ի վերայ տրտմութեան ունիցիս:
Մատ. * Շա՛տ է աւուրն չար իւր: 'Ի
6. 34 զո՞ւր է, և անօգուտ ինչ վ̃ ապա-
ռնեաց աղմկիլ՝ կամ խայտալ, որք
գուցէ՝ թէ ոչ երբեք աջողիցին:
3. Ապաքէն՝ մարդկային ինչ է
այդպիսիք խոկմամբք կատակիլ.
և է նշան փոքրահոգութեան՝ այդ-
քան թեթևաբար քարշիլն 'ի հա-
մոզմանց թշնամւոյն: Քանզի ոչ է
նմա փոյթ, թէ արդեօք հաւաս-
տիւք՝ կամ խաբէութեամբք ծի-
ծաղիցի զքև, և պատրիցէ. որ-
դեօք սիրով ներկայից, կամ երկիւ-
ղիւ ապառնեաց̃ ապականիցէ զքեզ:
Յովհ. * Մի՛ ուրեմն խռովեսցի սիրտ քո,
14. 27 և մի՛ զանգիտեսցէ: Հաւատա՛ յիս,
և յուսա՛ յողորմութիւն իմ: Մինչ
վարկանիս զքեզ հեռացեալ յի-
նէն, մերձ եմ ես բազմիցս: Մինչ
համարիս, թէ կորուսեալ իցես
զբոլորն, յայնժամ մերձ է շահաւէ-
տութիւն մեծ արդինաւորման:
Ո՛չ է կորուսեալ բոլորն, մինչ հան-
դի.

դիպի ինչ ներհակութիւն։ Ո՛չ պարտիս դատել ըստ ներկայի զգացման, և ոչ ներյենուլ, և ընդունիլ զծանրութիւն իմն՝ յիւրաքանչիւրմէ ուստեքէ առեկեալ, իբր թէ 'ի բացբարձեալ իցէ բոլոր յոյս արտազերծման։

4. Մի կարծիցես զքեզ բնաւին 'ի բացթողեցեալ, թէև զժամանակ ինչ առաքիցեմ առ քեզ զվշտադնութիւն, և կամ 'ի բացբառնայցեմ զցանկալին մխիթարութի· զի այսպէս՝ պա՛րտ է ճեմել առ արքայութիւնն երկնից։ Եւ այս թարց երկբայութե յաւէտ վայելուչ է քեզ, և այլոց իմոց ծառայից, զի զարթուցանիցիք յընդդիմադարձութեանց, քան թէ՝ զամ ինչ ըստ հաճոյից ձերոց ունիցիք։ Ես ծանեայ զխորհուրդս գաղտնիս, որ յոյժ հարկաւոր է վն կեցութեան քոյ, զի երբեմն թողանիցիս առանց քաղցրութե. մի գուցէ փքանայցես յաջողմունս բարիս, և քեզ ինքեան հաճոյանալ կամիցիս յայնմիկ որ ո՛չդ ես։ Զոր տուեալ եմ, կարեմ 'ի բաց բառնալ· և վերստին շնորհել, մինչ հաճոյ թուիցի ինձ։

5. Մինչ

5. Մինչ տայցեմ, իմ է. և մինչ
'ի բաց բառնամ, ոչ զքոյդ բառ-
Յակոբ նամ. * զի իմ է ամ տուր բարի, և
1. 17 ամ պարգև կատարեալ: Եթէ
յղեցեմ առ քեզ զծանրութիւն ինչ,
կամ զընդդիմամարտութիւն, մի
խռովիցիս, և մի բեկանիցի սիրտ
քո. զի ես փութով զնոյնն փարա-
տել կարեմ, և փոխարկել զամե-
նայն ծանրութիւն 'ի խնդութիւն:
Բայց սակայն՝ արդար եմ, և յոյժ
գովաբանելի, մինչ այսպէս առ-
նեմ ընդ քեզ:

6. Եթէ ուղղապէս խմանայցես,
և ճշմարտութե՟ նշմարիցես, ոչ
պարտիս երբէք սակս ընդդիմա-
դարձութեանց այդքան վհատա-
պէս տխրիլ, այլ յաւէտ խնդալ,
և գոհանալ. մանաւանդ զայն
Յօբ քեզ * միայնակ վարկանել խնդու-
6. 10 թիւն, որ 'ի վշտանկելն զքեզ
Յոհան ցաւովք՝ ոչ խնայիցեմ քեզ: * Որ՟պ
15. 9 սիրեաց զիս Հայր, և ես սիրեմ
զձեզ, ասացի սիրեցելոց իմոց աշա-
կերտաց. զորս իրաւի ոչ առաքե-
ցի առ խնդութիւնս կենցաղականս,
այլ առ մեծամեծ մենամարտութիւնս.
ոչ առ պատիւս, այլ առ քամա-
հանս. ոչ առ դատարկութիւնս,

այլ.

այլ առ աշխատանս. ոչ առ հանգստութիւն, այլ ՚ի յաճախ պտղաբերութի ընհամբերութէ։ Յիշեա՛ որդեակ, զայսոսիկ բանս։

Գլուխ լա։

Յաղագս ըստամենականման բնաւից ստեղծուածոց, զի ստեղծօղն կարիցէ գտանիլ։

1. Տէ՛ր իմ՝ կրաւէի կարօտիմ ես մեծագունի շնորհի, եթէ պա՛րտ իցէ ինձ առ այն ժամանել, ուր՝ ոչոք յստեղծուածոց կարասցէ զիս արգելուլ։ Քանզի՝ ց՚որքան ժամանակ արգելանիմ յիրէ իմիքէ, ոչ կարեմ ազատաբար առ քեզ սլանալ։ Բաղձայր ընդարձակապէս առ քեզ սըլանալ այն՝ որ ասէր. Ո՛ տացէ ինձ զթեւս *իբրեւ աղաւնւոյ, եւ թռեայց, եւ յարահանգեայց։ Սաղմ. 54. 7

Զի՞նչ է յանդորրագոյն քան զակն մաքուր։ Եւ զի՞նչ ազատագոյն քան զայն, որ ոչ բաղձայ իմիք ՚ի վերայ երկրի։ Պա՛րտ է ուրեմն գերազանցել զստեղծականս բընաւս, եւ լքել զանձն իւր կատարելապէս՝ եւ յափշտակութեան մտաց կալ.

կալ, և տեսանել զքեզ՝ զկերտօղդ համայնից զոչինչ նմանութիւն ունիլ ընդ ստեղծուածոց: Եւ թէ ոք ոչ լիցէ 'ի բնաւից ստեղծուածոց քաջ զերծեցեալ, ոչ կարէ արձակապէս նկատել առ ածայինս: Եւ վա այնորիկ սակաւք գտանին վերանկատիչք, զի սակաւք են, որք գիտեն զինքեանս 'ի կորստականաց, և 'յստեղծականաց լիապէս ուրոյն կացուցանել:

2. Ահա այս խնդրի մեծ իմն շնորհ, որ ամբառնայցէ զմիտս, և 'ի վերայ ինքեան յափշտակիցէ: Եւ եթէ ոք ոչ իցէ վերացեալ մտօք, և ազատեցեալ 'ի բնաւից ստեղծուածոց, միաւորեցեալ իսկ ընդ այ, զոր ինչ և գիտիցէ, զոր ինչ և ունիցի, ոչ է համարելի մեծ իմն: Զժամանակս բազումս նուաստ եղիցի, և յորսայսեցեալ կայցէ այն, որ համարի գոլ զայլ ինչ մեծագոյն, քան զմի միայն՝ զանչափ, և զյաւիտենական բարին: Եւ որ ինչ ոչ է Ած, է ոչինչ, և առ ոչինչ համարելի է: Մեծ է զանազանութիւն 'ի մէջ իմաստութե առն լուսաւորեցելոյ, և ջերմեռանդի, և 'ի մէջ գիտութեան

եկե

եկեղեցականի գրոց աշակերտի, և ուսումնասիրի: Պատուականագոյն է վարդապետութիւնն որ 'ի վերուստ յածայնոյ ներհեղմանէ տեղայ, քան զայն, որ մարդկայնով ուշիմութեամբ աշխատապէս ստանանի:

3. Գտանին բազումք, որք բաղձան վերանկատման, բայց զայնս՝ որք ախտոյանան առ այն, ոչ փութան 'ի կիրարկանել: Եւ գոյ տրտմելումն մեծ, զի 'ի նշանս՝ և յիրս զգալիս զկայ առնումք, և զկատարելոյ մահացուցմանէ ախտից սակաւ ինչ հոգամք: Ո՛չ գիտեմ, թէ զի՞նչ իցէ՝ կամ յորպիսի հոգւոյ առաջնորդիցիմք, և թէ առ ինչ դիմիցեմք մեք, որք հոգևորք գոլ ասասիմք. զի զայնս աշխատանս, և զառատագոյն հոգաբարձութիւնս սակս անցաւորաց՝ և խոտելեաց 'ի կիրարկանեմք, և զներքնայնոց մերոց հազիւ երբեք լիապէս ժողովեցելով զգայութիւնս ներխորհիմք:

4. Ո՛հ ցաւոյս. փաղփաղակի ըղ կնի փոքու վերաժողովման արտաքս պայթուցանիմք. և զառամեր ներքաւ արտաքնոյնութիւն ընու-

ոչ կշռեմք։ Թէ ուր արդեօք ձր
գիցին մերքն զգածմունք, ոչ տե
ղեկանամք. և թէ որպիսի տեղեք
լիցին, ոչ երբեք ողբամք։ Քանզի
Ծննդ *ամ մսեղի ապականեալէր զճանա
7. 17 պարհ իւր, և վասն այնորիկ հե
տեւէր հեղեղն ջուրց մեծ։ Եւ
որովհետև խիղճն մեր ներքին ապա
կանեցեալէ, հարկ է, զի և ներգոր
ծութիւնն հետևեցեալ, որ է նշան
չքաւորութեան ներքնայնոյ կարո
ղութեան, ապականիցի։ 'Ի սրտէ
մաքրոյ յառաջածի պտուղ բարեց
կենաց։

5. Որքան ոք արարեալ լիցէ,
խնդրի. բայց թէ որքանիւ առա
քինութե՛ առնիցէ ոչ այնքան հո
գաբարձապէս մտածի։ Եթէ ոք
լիցէ զօրեղ, փարթամ, գեղեցիկ,
ուշիմ, կամ բարի դպիր, բարի եր
գիչ, բարի գործունեայ, հետազօ
տի. բայց թէ՝ որքան աղքատ լիցէ
հոգւով, որքան համբերօղ՝ և հեզ,
որքան առաքինի՝ և ներքսադի
տակ, 'ի բազմաց լռի։ Բնութիւն
առ արտաքինս մարդոյն վերանկա
տէ, իսկ շնորհն առ ներքինս զինքն
դարձուցանէ։ Նա յաճախապէս
պատրի, իսկ սա յուսայ յԱծ՝ զի
մի խաբիցի։ Գրուի

Գլուխ ԼԶ:

Յաղագս 'ի բացուրացման անձին և 'ի բացհրաժարման 'ի բնաւից ցանկու- թեանց:

1. Որդեակ՝ ոչ կարես ստանալ զկատարեալ ազատութիւն, եթէ ոչ բոլորովին ուրանայցես զքեզ: Զի կապանաւորեցեալք են բնաւք ինքնահաճք, և անձնասէրք, տռփօղք, հետաքրքիրք, վտարանդիք, խընդրօղք միշտ փափկութեց՝ և ոչ այնր, որ ըստ Յիսուսի Քրիստոսի է. որք թէև բազմիցս զիր ինչ կեղծեցեն, և շարադրիցեն, սակայն ոչ կայցէ հաստատուն: Քանզի կորիցէ բնաւն, որ ոչ յԱյ ծնաւն: Ահա՛ կա՛լ քեզ զայս համառօտ, և զկատարուն բան. Թո՛ղ զամն, և գտցես զհամայնն. Լքեա՛ զտռփումն, և գտցես զյարահանգութիւն: Զայս մտօք քովք առձեռնեա՛. և մինչ լցուցանիցես, զբնաւն իմանայցես:

2. Տէ՛ր իմ, այդ ոչ է գործ միոյ աւուր, և ոչ կատակ փոքրիկանց. քանզի՝ նայդմիկ համառօտութեն ներպարունակի ամենայն կատարե

ընկերութիւն կրօնաւորաց։

3. Որդեակ՝ ոչ պարտիս ընդոստնուլ, և ոչ վհատիլ, լսելով զչաղէ կատարելոց, այլ յաւէտ առ վսեմագոյնսն առածիլ, և տակաւտակաւ ի ըղձից քոց առ այնոսիկ փութալ։ Վա՜յ թէ քեզ լեալէր այս, և առ այս էիր ժամանեալ, զի ոչ գոյիր անձնասէր, այլ ըստ նշմարման իմում զտապէս՝ կենցաղավարէիր, և ըստ ակնարկութեան Հօր իմոյ, զոր քեզ յառաջադրեցի. յայնժամ ինձ յոյժ հաճոյանայիր, և բոլոր կեանքն քո ըն խնդութեան, և ըն խաղաղութեան անցանէր։ Դեռևս զբազում ինչ ունիս առ՚ի բացթողուլ. զորս եթէ ոչ ամբողջապէս ինձ յանձնիցես, ոչ ստանայցես՝ որում բաղ-
Յայտն. ձաս։ * Համոզեմ քեզ գնել յինէն
3. 18 զոսկի հրացեալ, զի ճոխանայցես, այսինքն, զերկնային իմաստութի՛, որ զբնաւ ստորնայինս առ ոտս արկանէ։ Յետայրեա՛ զերկրային իմաստութի՛, և զբնաւ մարդկային, և զառանձնական հաճոյութիւնս։

4. Ասացի՝ կարևոր գոլ քեզ գնել զիրս խոտանս, փոխանակ

ազ

աղնուէից, և գերազանցից, 'ի յերա մարդկայինս: Քանզի՝ յոյժ քամահեցեալ, և նուաստ, մոռացման իսկ աւանդեցեալ տեսանի, ճշմարիտ իմաստութիւնն երկնային: Ո՛չ է իմաստուն, որ զվեհագոյնս խորհի զինքենէ, և ո՛չ է արժանի մեծայարգութե՝ որ զնոյն իմաստութիւնն խնդրէ 'ի յերկրի: Բազումք են՝ որք զնոյնն բերանով քարոզեն, բայց վարուք հեռաւէս տարաձայնին: Իսկ ինքն իմաստութիւնն է * մեծագին իմն Մատ.
մարգարիտ թաքուցեալ 'ի բազմաց: 13·46

Գլուխ ԼԳ:

Յաղագս անհաստատութեան սրտին, և դիտաւորութեան վախճանականին ուղղոյ առ ԱԾ:

1. ՈՐդեակ՝ մի հաւատայցես քում ներգործութեան ներկայականի, զի վաղվաղակի փոխարկիլ կարէ 'ի յայլ: Որքան և ապրեսցիս, թէև ակամայ, ենթակայ ես փոփոխութեանց. մինչ զի՝ երբեմն ուրախ, և երբեմն տրտում. երբեմն խաղաղ, և երբեմն վրդովեցեալ. մերթ՝ առաքինի,

մերթ

այ՝ առ Մարթայ, և Մարիամ. ոչ միայն վն Յն, այլ զի և *զՂազար տեսանիցեն: Մաքրելի է ուրեմն ակն դիտաւորութեան, զի իցէ պարզ՝ և ուղիղ, և բաց յայլոց ըղնաւից զանազանից միջնորդաց. առ իս ուղղելի: Յովհան 12. 9

Գլուխ ԼԴ:

Թէ սիրողին զԱծ ճաշակէ զնա գոլ 'ի վեր քան զամ ինչ, և նամենայնի:

1. Ահաւասիկ Ած իմ, և ամենայն ինչ: Զի՞նչ առաւել կամիմ, և զի՞նչ երջանկագոյն բաղձալ կարեմ: Ո՛հ համեղ՝ և քաղցր բանդ. բայց սիրողի ըղբանն՝ այլ ոչ զաշխարհ, և ոչ զայնս, որք յաշխարհի են: Ած իմ, և ամ ինչ: Իմացողին բաւականապէս ասացեալ է. և վայելուչ է սիրողին՝ առէպ կրկնել զնոյնն: Եւ իրաւի՝ մինչ ներկայ ես դու, վայելուչ է ամ ինչ. բայց մինչ 'ի բացեայ ես, զզուելիք են համայնք: Դու տաս սրտի զհանդարտութիւն, և զխաղաղութիւն մեծ, զխնդութիւն խնկ երկրողական: Դու առնես՝ զի զգայցեմք բա

բուոք զհամայնից, և գովաբանիցեմք զքեզ ըստ ամի։ Ո՛չ ինչ է՝ որ կարիցէ զժամանակ ինչ թարց քեզ հաճոյանալ. բայց թէ՝ պիտոյանայցէ, զի իր ինչ իցէ ախորժելի, և բարեհամ, պարտ է՝ զի քոյդ շնորհ առդուցէ, և համեմիւ քոյոյ իմաստութեան համեմիցի։

2. Որ զքեզ ճանաչէ, զի՞նչ է, զոր ոչ ճանաչիցէ ուղղապէս։ Եւ որ զքեզ ոչ ճանաչէ, զի՞նչ է որ նմա վայելուչ գոլ կարիցէ։ Բայց նուաղին յիմաստութեան քում իմաստունք այսորիկ աշխարհի, և որք ըստ մարմնոյ իմանան. քանզի անդ ունայնութիւն բազում, իսկ աստ մահ գտանի։ Բայց՝ որք քամահմամբ կենցաղականաց, և մահացուցմամբ մարմնոյ՝ հետևին քեզ, իրաւի իմաստունք գոլ ճանաչին. զի յունայնութէ առ ճըշմարտութիւնն, 'ի մարմնականութենէ առ հոգեկանութիւն անդրաբերին։ Այսոքիկ են, որք ճանաչեն զքեզ, և որ ինչ բարւոյ 'ի ըստեղծուածս գտանի, զբոլորն վերաբերեն 'ի գովութիւն կերտողին գնոյնս։ Աննման է սակայն, և յոյժ աննման համեղութի առեղծո

ծնողին, և ստեղծականաց. յաւի-
տենականուԹեանն, և ժամանա-
կականի. լուսոյն անստեղծի, և լու-
սոյն լուսաճառեցելոյ:

3. Ո՛վ լոյս մշտնջենաւոր, գե-
րազանցօղ բնաւից ստեղծականաց
լուսոց, * Փայլեա՛ զփայլատակունս Սաղմ.
քոյս 'ի վերուստ, զԹափանցօղն 143. 6
ընդ բնաւ խորս սրտի իմոյ: Մաք-
րեա՛, ուրախացո՛, պայծառացո՛, և
կենդանացո՛ զհոգի իմ, հանդերձ
զօրուԹեամբ նորին, առ 'ի ներյե-
նուլ քեզ 'ի հրճուական ափշու-
Թիւնս: Ո՛հ Թէ յորժամ եկեսցէ
ժամս այս երանելի, և տենչալի,
զի քոյով յագեցուցանիցես զիս
ներկայուԹե՛, և լցցիս ինձ ամ յա-
մենայնում: Մինչ տակաւին այս
ոչ է որեցեալ, խնդուԹիւն իմ ոչ
է լրացեալ: Ո՛հ ցաւոյս, զի դեռ
ևս հին մարդն կենդանի է ներ յիս,
ոչ է բոլորն խաչեցեալ, ոչ ևս կա-
տարելապէս մեռեալ: * Դեռևս Գաղտ.
ցանկայ ուժգնապէս ընդդէմ հո- 5. 17
գւոյս, շարժելով զպատերազմ ան-
դստական, և ոչ է անդորրուԹիւն
յիշխանուԹե հոգւոյ իմում:

4. Բայց * դու որ տիրես զօրու- Սաղմ.
Թե ծովու, և զշարժումն ալեաց 88. 10
նո-

նորա ցածուցանես, Տէ՛ր, և օգնեա ինձ։ * Ցրուեա՛ զհեթանոսս՝
Սաղմ. 67. 31 որք կամին զպատերազմ, և խորտակեա՛ զնոսա զօրութ̃բ քով։ Ցո՛յց ինձ, մաղթեմ 'ի քէն՝ զմեծամեծս քոյս, և փառաւորեսցի աջ քո. զի ոչ է ինձ այլ իմն յոյս, և ոչ տեղի ապաւինի, բայց 'ի քէն՝ Տէր իմ, և Աստուած իմ։

Գլուխ ԼԷ։

Թէ ո՛չ իցէ ապահովութիւն 'ի փորձութեանց ըն կենցաղում այսմիկ։

1. Որդեակ՝ ո՛չ երբեք գտցես զապահովութիւն յայսմիկ կենցաղում. այլ՝ որքան ապրեսցիս, զզէնս հոգևորս ունիլ պարտիս։ Շրջիս 'ի մէջ թշնամեաց, որք յաջմէ և յահեկէ մարտնչին ընդ քեզ։ Արդ՝ եթէ ոչ 'ի կիրարկանիցես յամենից կող-
Եփես. 6. 16 մանց * զվահանն համբերութեան, ոչ մնայցես ընդ երկար ժամանակ թարց իմեք վիրի։ Այլև, եթէ ոչ դնիցես զսիրտ քո սևեռապէս 'ի յիս, զմտիւ հաճոյութ̃բ կրելոյ զբնաւս յաղագս իմ, ոչ կարասցես ըմբերել խորշակի այսմիկ, և

ոչ

ոչ ժամանել 'ի պսակս երանեցե-
լոցն: Պարտ է ուրեմն քեզ անցա-
նել քաջապէս ընդ ամ ինչ, և հզօ-
րիւ ձեռամբ զինել հակառակ ընդ-
դիմամարտից: Քանզի՝ * յաղթո- Տեսլ. 2. 17
ղին շնորհի մանանայ, և թմբեցե-
լոյն թողանի թշուառութիւն մեծ:

2. Եթէ խնդրես նայամիկ կեն-
ցաղում զհանգստութիւն, զի՞ արդ
ժամանեցես յայնժամ առ մշտըն-
ջենաւորն յարահանգստութիւն:
Մի՛ դնիցես զքեզ առ առաւել
հանգստութիւնն, բայց առ առա-
ւել համբերութիւնն: Խնդրեա՛
զճշմարիտ խաղաղութիւնն, ոչ 'ի
յերկրի, այլ 'ի յերկինս. ոչ 'ի մար-
դիկ, կամ յայլ ստեղծուածս, այլ
ընդ միայնում յաստուծում: Վն սի-
րոյն այ պարտիս զքեզ բնաւից յօ-
ժարապէս ենթարկանել, այսինքն
աշխատանաց, և ցաւոց. * փորձու- 2, Կոր. 8. 18
թեանց, և վշտակրութեանց. նեղու-
թեանց, և կարեւորութեանց. հիւան-
դութեանց, և զրպարտութեանց.
ընդդիմախօսութեանց, և յանդի-
մանութեանց. խոնարհութեանց,
և պատկառութեանց. նախատանաց,
և քամահանաց: Այսպիսիք օգնեն
առ առաքինութիւնն. այսպիսիք

զզե

զդեռավարժս փորձեն ծառայս
Քո. այսպէս յօրինեն զերկնային
պսակն: Ես հատուցից զվարձս
յաւիտենականս փոխանակ կար
ճառելի աշխատութեան, և զանզրաւ
փառս, փոխանակ անցաւորաց
պատկառանաց:

3. Կարծես դու, թէ ունիցիս
միշտ ըստ քոյոյ հաճոյութէ զմխի
թարութիւնս հոգեկանս: Ծա
ռայքն իմ ոչ գտին միշտ զայսպի
սիսս, այլ զբաղում ծանրութիւնս,
և զպանազան փորձութիւնս, զմեծա
մեծս նաև անմխիթարութիւնս:
Բայց համբերութ̃ ենթակրեցին
զինքեանս յամենայնում, և առաւ
ել յուսացան յած̃, քանթէ յին
Հռով քեանս. գիտելով, զի * ոչ են համ
8. 18 արժանիք չարչարանք այսորիկ ժա
մանակի, առ՛ի յարդիւնաւորու
թի հանդերձելոյն փառաց: Կա
միս փութանակի ունիլ զայն, զոր
բազումք զկնի բազմաց արտասու
աց, և մեծամեծաց աշխատանաց
Սաղմ հազիւ առստացան: * Համբերեր Տն̃,
26. 14 քաջալերեաց, և զօրացիր. մի յու
սահատիր, և մի լքանիր. այլ զհո
գի, և զմարմին քո արտադրեա յօ
ժարաբար վս̃ փառացն այ̃: Ես
հա

հատուցից քեզ լիապէս. եղէց Ը
քեզ ըն համայն նեղութիւնս:

ԳԼՈՒԽ ԼԴ:

ԸՆԴԴԷՄ ունայնից փառաւորութեանց մարդկան:

1. ՈՐդեակ՝ ընկեա զմիտ
քո հաստատապէս 'ի տէր,
և 'ի մարդկայնոց դատողութենէ
մի զանգիտեսցես, ուր՝ խիղճ մտաց
քոց վերապարէ քեզ զբարեկրօնու
թիւն, և զանմեղութիւն: Բա
րւոք է՝ և երանաւէտ ըստ այսմ
կենցաղավարել, և այս ոչ եղիցի
ծանր այնմիկ, որ խոնարհն է սրտ
իւ, և ոչ այնմ, որ մանաւանդ
այ, քանթէ ինքեան յուսայ: Բա
զումք զբազում ինչ խօսին, ուս
տի դայն ինչ նուզին հաւատալ
պարտ է: Այլև ընաւից բաւա
կան դոլն ոչ է կարելի: Եւ թէ
պէտ մեծ Պօղոս ջանայ ամենե
ցուն * հաճոյանալ 'ի տէր, և դոլ 1 Կորն
ամ ընդ ամենեսեան, սակայն ևս 9. 21
փոքրագունեղ ինչ վարկաւ, * թէ 1 Կորն
դատիւր յօրէ մարդկայնոյ: 4. 3

2. Աշխատեցաւ բաւականա
պէս սակս այլոյն շինութեան, և
կե

կեցութե՟, որքան էր յինքեան, և
որքան կարէր. բայց ոչ կարաց ար
գելուլ, զի մի յայլոց երբեմն դա
տիւր, և կամ արհամարհիւր:
Ուստի յանձնեաց յա՟ծ զբոլորն,
որ ճանաչեալ էր զբոլորն. և համ
բերութ՟բ, խոնարհութ՟բ իսկ, ընդ
դէմ բերանոց զանդգամութիւն
խօսողաց, և կամ ընդդէմ զունայ
նութիւն, և զխարդախութիւն
խորհողաց, ընդդէմ իսկ այնոցիկ,
որք ըստ հաճութեան իւրեանց
ա՟մ ուրեք մնապարծէին, զինքն
ջատագովեաց: Սակայն ետ եր
բեմն ևս զպատասխանի, զի մի
տկարաց լռութեամբն իւրով
ծնանէր զգայթակղութիւն:

Եսայ. 3. Ո՞վ դու, * հիմ երկնչիս 'ի
41. 10. մարդոյ մահկանացուէ: Այսօր է,
և 'ի վաղիւն ոչ երևի: Երկեր դու
յա՟յ, և 'ի մարդկայնոց զարհուրա
նաց մի ահաբեկիր: Զի՞նչ կարէ
ոք առնել քեզ բանիւք, կամ
զրպարտութ՟բք: Ինքեան մանա
անդ, քան թէ քեզ վնասէ. ո՛վ ոք
և իցէ նա, ոչ կարասցէ զերծանիլ
'ի դատաստանէն ա՟յ: Կա՛լ դու
միշտ առաջի աչաց քոց զա՟ծ, և մի
կամիր խստանալ բանիւք վիճակա
նօք

նօք։ Իսկ՝ եթէ տեսանիցես զքեզ ներկայապէս ընկճեցեալ, և վրդովեցեալ յայնս, նորա ոչ արդիւնաւորելիր․ մի զայրանայցես, և մի անհամբերութբ քով նուաղեցուցանիցես զպսակն քո․ այլ մանաւանդ ակնարկեամ յիս 'ի յերկինս, որ կարող եմ զերծուցանել զքեզ 'ի բընաւից խռովութեանց, և զրպարտութեանց․ և հատուցանել իւրաքանչիւրում ումեք ըստ գործոց նոցա։

Գլուխ ԼԷ։

Յաղագս աղօթի, և ամբողջի յանձնառութեան անձին առ ԱԾ, վասն ըստանալոյ զազատութիւն սրտի։

1․ Որդեակ՝ թո՛ղ զքեզ, և գտանիցես զիս։ Կա՛ց առանց ընտրութեան, և թարց բնաւից յատկութեանց, և շահեսցիս միշտ։ Քանզի յաւելցի քեզ առատագոյն շնորհ, որով իսկոյն յանձնեալ զքեզ ո՛չ՝ մի երկրորդեսցես զառաջինն։

2․ Տէ՛ր իմ, ո՛րքանիցս յանձնեցից զիս քեզ, և ն՛որս թողից զիս։

3․ Մի՛շտ, և յամենայնում

ժամու. որքան ըն փոքունս, այն
քան ըն մեծամեծս: Ոչինչ առ-
նում 'ի քէն, այլ ըն քնաւս զքեզ
մերկացեալ գտանիլ կամիմ: Այս
թէ ոչ, որպէս կարասցես գոլ իմ,
և ես քո. զի եթէ 'ի քնաւից ա-
ռանձնականաց քոյոց հաճութեանց
'ի ներքուստ, և յարտաքուստ ոչ մեր-
կանասցես: Որքան վաղվաղակի
զայս առնիցես, այնքան բարեգու-
նակէս ունիցիս զքեզ. և որքան
լիապէս՝ և պարզապէս, այնքան
ինձ հաճոյասցիս, և առաւել շա-
հեսցիս:

4. Ոմանք զինքեանս յանձնեն
առ Ած, բայց հանդերձ իւիք
բացառութբ. զի ոչ լիապէս յու-
սան յԱծ, վա որոյ զինքեանս ին-
քեանց նախատեսանելոյ բաժա-
կանս կարծեն: Իսկ ոմանք՝ թէ-
պէտ 'ի սկզբան բոլորովիմբ զին-
քեանս վերընծայեն ինձ, սակայն՝
յետոյ բաղխեցեալք 'ի փորձու-
թեց, դառնան վերստին առ առա-
ջինսն. վա որոյ՝ հազիւ երբեք յա-
ռաջանան 'ի զօրութիւնս: Այս-
պիսիք զճշմարիտ սրտի մաքրոյ
ազատութիւնն, և վայելչի ընտա-
նեկցութեան իմոյ զշնորհսն, ոչ եր-
բեք

բեք վերաշօշափեն. եթէ ոչ նախ
ամբողջապէս յանձնիցեն ինձ զին
քեանս, և հանապազորդապէս վեր
ընծայիցեն, առանց որոյ՝ ոչ կայ
անայ, և ոչ կայասցի զմայլողա
կան միաւորութիւնն:

5. Բազմիցս ասացի քեզ, և
այժմ զնոյնն կրկնեմ: Թո՛ղ ինձ
զքեզ, և յանձնեա՛ ինձ զքեզ, և
զմայլեսցիս մեծաւ խաղաղութե
ներքնայնով: Տո՛ւր բոլոր զքեզ,
փոխանակ բոլորին. մի՛ ինչ արտա
պահանջիցես, և մի՛ ինչ վերակրկ
նիցես. կա՛ց մաքրապէս, և թարց
յողդողդութեան 'ի յիս, և գըտ
ցես զիս: Եղիցիս ազատ սրտիւ,
և խաւարք ոչ պաշարեսցեն զքեզ:
Ջանա՛ տակաւին առ այն, մաղ
թեա՛, և բաղձա՛, զի կարիցես մեր
կանալ 'ի բնաւից յատկութեանց,
և մերկապէս հետևիլ Յի մերկի.
մեռանիլ քեզ, և ինձ մշտնջենա
պէս կենդանանալ: Յայնժամ
նուաղեսցին բնաւ ցնորք ընդու
նայնք, վրդովմունք անիրաւք, և
հոգք աւելորդականք: Յայնժամ
ևս հեռասցի 'ի քէն երկիւղն ան
բարեխառն, և մեռցի 'ի քեզ
սէրն անկարգ:

Գլուխ

Գլուխ ԼԸ:

Յաղագս բարւոյ կառավարութեան 'ի յիրս արտաքինս, և ապաւինման առ ԱՅ 'ի կարեաց ժամուն:

1. Որդեակ՝ առ այն ուշիմա
պէս ձգտել պարտիս, զի
յամենայնում տեղւոջ, և ներգոր
ծութե, կամ յարտաքսականում
պարապման, լիցես ներքսապէս ա
զատ, և 'ի քեզ ինքեան կարող. և
եղիցին բնաւքն 'ի ներքոյ քոյ, և
դու ոչ 'ի ներքոյ նոցին. որպէս զի
լիցես առից քոց տէր, և ուղղիչ.
ոչ ծառայ, և ոչ գնուածոյ, այլ
յաւէտ ազատ, և ճշմարիտ եբրայ
Գաղա եցի. * Ժառանգորդ վիճակի՝ և
3. 31 ազատութեան որդւոցն Այ. որք կան
'ի վերայ ներկայականաց, և նշմա
րեն զմշտնջենաւորս. որք առ ան
ցաւորս ձախու ակամբ. և առ երկ
նայինս աջովն նկատեն. զորս կեն
ցաղականք ոչ քարշեն յինքեանս
առ 'ի ներյենուլ, այլ մանաւանդ
ինքեանք քարշեն զնոսա առ 'ի բա
րեպէս 'ի կիրարկանել. Ըստ որում
կարգաւորեցեալք են յԱյ, և սահ
մանեցեալք 'ի վեհագունէ ճար
տարապետէ, որ զոչինչ եթող ան
կարգ.

կարգ 'ի ստեղծուածս իւր։

2. Իսկ՝ եթէ ես ըն համայնս գի
տուածս կայցես հաստատուն, և
ոչ արտաքնով երևութիւ, կամ
ակամբ մարմնականաւ նշմարիցես
զտեսանեցեալս՝ կամ զլսեցեալս. այլ՝
յաղագս իւրաքանչիւրիմեք պատ
ճառի մնանիցես առժամայն ընդ
Մովսիսի * 'ի տաղաւարն առ 'ի Ելից
խրատել 'ի մնէ, լուիցես մերթ 24. 25
զա̃ծային պատասխանին, և դարձ
ցես ներկրթեցեալ զերաց բազ
մաց՝ զներկայից, և զապառնեաց։
Քանզի՝ միշտ մովսէս ունէր զվերա
գիտումն առ տաղաւարն, սակս տա
րակուսութեց՝ և խնդրոց լուծա
նելեաց. փութացաւ ես 'ի յօգ
նութիւնս աղօթից, սակս կասկա
ծանաց, և ամբարշտութեց մարդ
կան 'ի բացբանալեաց։ Այս
պէս և դու ճեպել պարտիս առ
խորհրդարանն քոյդ սրտի, առ'ի
մաղթել զա̃ծային օժանդակու
թիւնն։ Զի՝ վասն այնորիկ Յե
սու, և որդիքն Իսրայէլի խաբե
ցան 'ի Գաբաւոնացւոց, զի* նա Յեսու
խապէս ոչ կամեցան զբերան տ̃ն 9. 11
հարցանել, այլ կարծի հաւատալով
քաղցերց նոցին բանից, պատրո
ղաց.

զակամեաւ առաքինութեան Նոցին, եղեն Նշանակեալք:

Գլուխ ԼԹ:

Թէ ո՛չ ինչ պարտ առն գոլ հոգահոգ գործոց 'ի յառնելիս:

1. Որդեակ, յանձնեա՛ ինձ միշտ զպատճառ քո; ես բարեպէս տրամադրեցից 'ի ժամանակի իւրում: Սպասեա՛ կարգաւորութեան իմում. և զգայցես անդուստ զաջողութիւն:

2. Տէ՛ր իմ, յոյժ կամաւորա՛պէս յանձնեմ քեզ զբնաւս. զի դոյնինչ պտղաբերիւլ կարեն խորհուրդք իմ: Վա՜ղ թէ ո՛չ այնքան առյետնուլ դիտաւորածոց հանդերձելոց, այլ զիս քում բարեհաճութեան անյապաղ վերընծայել:

3. Որդեակ, բազմիցս ոք զիր ինչ ուժդնապէս շորժէ, քանթէ բաղձայ. և մինչ առ այն ժամանէ, սկսանի զայնմանէ այլապէս զգալ. զի խղճք Նորին շուրջ զնոյնով իւ իք ո՛չ են մնայունք, այլ մանաւանդ ներդրդեօղք 'ի միոյն առ միւսն: Ո՛չ է ուրեմն փոքրագունեղ իմն; եթէ ոք զինքն ևս ըն

փոք.

փոքրագունեղս թողուցու:

4. Ճշմարիտ արդիւնաւորու-
թիւն տուն, է ուրացումն իւրոյ
անձին. * և որ ուրանայ զինքն, է Ղուկ.
ազատ յոյժ, և ապահով: Բայց 14. 26
հնացեալ թշնամին, հակառակն
բնաւից բարեաց, ՚ի փորձութե-
ոչ դադարի, այլ ՚ի տուընջեան, և
՚ի գիշերի հնարէ զծանունս դա-
ւաճանութիւնս, զի գտանէ ՚ի յո-
րոգայթս խաբէութեան դահավի-
ժել կարիցէ զանզգոյշս: Ասէ
տէրն մեր. * Հսկեցէք, և աղօթե- Մատ.
ցէք, զի մի մտանիցէք ՚ի փորձու- 26. 41
թիւն:

Գլուխ Խ:

Թէ մարդ յինքենէ ոչ ինչ բարեաց
ունիցի, և ոչ առ ոչ ինչ պար
ծել կարիցէ:

1. Տէր իմ, * զի՞նչ է մարդ, զի Սաղմ.
յիշես դու զնա. կամ 8. 5
որդի մարդոյ, զի այցելանիցես
նմա: Զի՞նչ արդիւնաւորեցաւ
մարդ, զի տայիր նմա զքոյդ շնորհս:
Ահաւասիկ ես Տէր իմ, զումմէ
կարեմ գանգատիլ, եթէ զիս ՚ի
բացընկեցես, կամ առ ինչ ըստ
երա-

իրաւանց նկրտիլ, եթէ զոր խնդրեմն ոչ առնիցես: Համառօտապէս խորհիլ կարեմ, և ասել զայս ինչ. Տր իմ, ոչ ինչ եմ, զոչ ինչ կարեմ, և զոչ ինչ բարւոյ ունիմ ես յինէն. այլ յամենայնում նուաղիմ, և ձըգտիմ միշտ առ ոչինչ: Եւ եթէ ոչ 'ի քէն նպաստաւորիցիմ, և ներքսապէս ներհմտանայցեմ, լինելոց եմ բոլորովին զաղջ, և լքնելոց:

Սաղմ. Ճ1·28 2. Իսկ դու՝ Տէր իմ, * միշտ նոյն ինքն ես, և միշտ բարի, արդար՝ և սբ, յարամնաս 'ի յաւիտեան. բարեպէս, արդարապէս, և սրբապէս ներգործելով, և տրամադրելով զամ ինչ ըստ քում իմաստութեան: Բայց ես՝ որ 'ի նուաղումն մանաւանդ, քանթէ 'ի յառաջադիմութիւն հակամիտեմ, ոչ եմ միշտ ըն միում կացութե յարամնայուն. զի եօթն ժամանակք փոփոխին 'ի վերայ իմ: Սակայն՝ եթէ քեզ հաճոյ թուիցի, զի կարկառիցես առ իս զբազուկ քո հըզօր, իսկոյն բարեգոյն եղիցի. զի դու միայն թարց իմեք մարդկայնոյ օժանդակութեան կարես ինձ օգնել. և այնքան կազդուրել զիս, մինչ զի երեսս իմ, ոչ դարձցի միւս

ան.

անդամ յիւրս տարբերս, այլ առ քեզ միայն վերափոխեսցի սիրտ իմ, և 'ի քեզ յարահանգիցէ։

3. Ուստի՝ թէ բարեպէս գիտէի զամ մխիթարութիւն մարդկան 'ի բացհերքել, յաղագս առատանալւոյ ջերմեռանդութեան, կամ յաղագս հարկաւորութեն, որով ստիպիմ խնդրել զքեզ, զի ոչ ոք 'ի մարդկանէ կարէ սփոփել զիս. յայնժամ մարթ էր ինձ ըստ իրաւանց յուսալ 'ի շնորհս քոյ, և հրճուել սակս պարգևի նորոյ մխիթարութեան։

4. Գոհանամ զքէն, յորմէ յառաջանայ բոլորն, որքանիցս ինձ բարեպէս յաջողի։ Ես եմ ունայնութիւն, և ոչինչ առաջի քո, այր անկայուն, և անհաստատ։ Առ ինչ ուրեմն պարծիլ կարեմ, կամ զմէ բաղձամ վերահամբաւիլ։ Ոչ ապաքէն զոչընչէ. որ է ունայնագունեղ իմն։ Իրաւի՝ ընաւն է նանիր փառամոլութի, և մախիզ ժանտաճորութիւն, և մեծապունեղ ընդունայնութի. զի զրկէ զիս 'ի ճշմարտէ փառաւորմանէ, և մերկացուցանէ յերկնայնոյ շնորհէ։ Քանզի՝ մինչ ոք հաճոյանայ

էն

ինքեան, անհաճոյանայ քեզ, մինչ
բաղձայ գովութեանց մարդկայնոց,
զրկի 'ի զօրութեանց ճշմարտից։

5. Է՛ ուրեմն ճշմարիտ փառք,
և ցնծութիւն սբ̄, փառաւորիլն
'ի քեզ՝ և ո՛չ 'ի յինքեան. խնդալն
յանուն քո, և ո՛չ 'ի զօրութիւնս
յատուկս, և ո՛չ բերկրիլն 'ի ստեղ-
ծուածում իմեք՝ եթէ ո՛չ վն̄ քոյ։
Գովեսցի քոյդ անուն, և ո՛չ իմ.
փառաւորեսցի քոյդ գործ՝ և ո՛չ
իմ. օրհնեսցի անուն քո սուրբ, և
ինձ ոչինչ առընձեռեսցի 'ի գովու-
թեանց մարդկայնոց։ Դու ես
Սաղմ. փառն իմ, դու ես * ցնծութիւն
118. սրտի իմոյ։ 'Ի քեզ պարծեցայց՝
111 և ցնծացայց, զօր ամ̄. իսկ՝ վասն
իմ ոչինչ, եթէ ո՛չ 'ի տկարութիւնս
իմ պարծեցայց։

Յովհան. 6. Խնդրիցեն հրէայք * զփառս
5. 44 'ի միմեանց. ես խնդրեցից զայն,
որ 'ի միոյնոյ Այ̄ է։ Վասն զի՝
ամենայն փառք մարդկան, ամե-
նայն պատիւ կենցաղական՝ ամենայն
մեծութիւն աշխարհական՝ բաղդա-
տեցեալ յաւիտենականաց քոց
փառաց, է ընդունայնութիւն՝ և
յիմարութիւն։ Ո՛վ ճշմարտութիւն
իմ. ո՛վ ողորմութիւն իմ, և ած̄
իմ.

խմ․ ամէ Երրորդութե̄ սուրբ․ քեզ միայնոյ գովութի̄, պատիւ՝ զօրութիւն, և փառք, ընդ անհուն յաւիտենից աւիտեանս։

Գլուխ ԽԱ։

Յաղագս արհամարհման բնաւից պատուոց ժամանակաւորաց։

1․ Որդեակ՝ մի՛ քեզ առաքար հիցես, եթէ տեսանիցես զայլս պատուելիլ՝ և բարձրանալ, և զքեզ քամահելիլ, և խոնարհելիլ։ Ուղղեա առ իս յերկինս զսիրտ քո, և ոչ տխրեցուսցէ զքեզ քամահումն մարդկան ՚ի յերկրի։

2․ Տէր իմ, ընկուրութեան կամք՝ և յընդունայնութեանց փութով պատրիմք։ Զի՛ եթէ ուղղապէս ՚ի յիս ակնարկիցեմ, ոչ երբեք գըտանեմ զանիրաւութի ինչ յ՚ իմէքէ ստեղծուածոյ առ իս եղեալ գոլ։ Ուստի՝ ոչ ը̄ իրաւանց տըրտնջամ ընդդէմ քեզ։ Բայց՝ քանզի յաճախապէս, և ծանրապէս մեղայ քեզ, արժանապէս զինի ընդդէմ ինձ համայն ստեղծուած։ Ինձ ուրեմն արդարապէս վայելէ ամօթ՝ և պարսաւանք․ իսկ՝ քեզ գո-

բելութիւն ինչ. եւ՝ ոչ է ճշմա
րիտ, և զուտ սիրելութիւն, զոր
ոչ չարպաղուգեմ ես: Այնպէս մե
ռանիլ պարտիս նմանիւք զգաց
մամբք սիրելեաց մարդկան, մինչ
զի՝ որքան 'ի քեզ է, բաղձայցես
գոլ առանց մարդկայնոյ ընկերակ
ցութէ: Այնքան յաւէտ մերձե
նայ մարդ առ ած, որքան յամենից
երկրայնոց սփոփմանց 'ի բացհեռա
նայ: Եւ այնքան բարձրագունա
պէս առ ած ելանայ, որքան խորա
գունապէս 'ի յինքեան զիջանէ՝ և
առաւելագունամբ յինքենէ խոտի:

2. Իսկ՝ որ ինքեան զբարութե
ինչ առընձեռէ, զգալուստ շնոր
հացն ած առ լինքն՝ արգելու. զի
շնորհ Հոգւոյն սրբոյ, միշտ խընդ
րէ * զսիրտ խոնարհ: Եթէ գիտէ Սաղմ.
իր զքեզ կատարելապէս ունայնա 50. 10
ցուցանել, և յամէ ստեղծականէ
սիրոյ դադարկել, յայնժամ ձա՛նհ
էր ինձ հանդերձ մեծաւ շնորհիւ
'ի քեզ արտաբղխել: Մինչ ակն
արկես առ ստեղծուածս, նուազե
ցուցանես 'ի քեզ զակնարկութի
ստեղծողին: Ուսի՛ր յամենայն յաղ
թել զքեզ սակս ստեղծողին, և
յայնժամ կարասցես ժամանել
առ

առ ճանաչումն ածայինն: Թէև
դոյն իցէ իւրն սիրեցեալ՝ եթէ ան
կարգապէս սիրիցի, և անհարկի
ցի, յամեցուցանէ 'ի ծայրագունէ
բարւոյն, և բծաւորէ:

Գլուխ ԽԳ:

Ընդդէմ ընդունայնի, և կենցաղակա-
նի գիտութեան:

1. Որդեակ, մի՛ շարժիցեն
զքեզ գեղեցկութիւնք,
և նրբութիւնք ասացուածոց մարդ-
1 Կորն 4.20 կան: Քանզի՝ * արքայութիւնն
իմ ոչ կայանայ 'ի բանս, այլ 'ի զօ
րութիւնս: Ունկն դիր բանից ի-
մոց՝ որք զսիրտս բորբոքեն, և
զմիտս լուսաւորեն, ներածեն
զխայթահարութիւնս, և զզանա
զանս ներբերեն մխիթարութիւնս:
Մի երբէք ընթերցուցես զբանս,
զի հմտագոյն և իմաստնագոյն գոլ
տեսանիցիս: Ջանա՛, զի մահացու
ցանիցես զմոլութիւնս՝ զի քեզ
առաւել եղիցի այս օգտակար, քան
թէ ծանօթութիւն բազմաց դժու
արիմացից խնդրոց:

2. Մինչ զբազումս ընթեր
ցուցես՝ և ճանաչիցես, պարտ է
քեզ

քեզ միշտ առ մի սկիզբն վերաչու-
ել: Ես եմ, որ ուսուցանեմ մարդ-
կան զգիտութիւն. և շնորհեմ փոքր
կանց զպայծառագոյն * իմացողու- Սաղմ
թիւն, զոր ոչ ոք 'ի մարդկանէ 118·19
կարէ ուսուցանել: Ընդ որում խօ
սիմ ես, իսկոյն իմաստնանայ, և
հոգւով յոյժ պտղաբերէ: Վայ այ
նոցիկ՝ որք զբազում վայելչալուր
խնդիրս 'ի մարդկանէ որոնեն, և
զճանապարհէ ծառայելոյ ինձ դոյն
ինչ հոգան: Եկեսցէ ժամանակ՝
յորում երևեսցի Վարդապետն
վարդապետաց Քս, և Տրն հրեշ
տակաց՝ առ 'ի լսել զհամարս, այս
ինքն՝ առ 'ի զննել զիւրաքանչիւրոց
խղճմտանս: Եւ յայնժամ * հան Սոփոն
դերձ ճրագիւք որոնեսցէ Երուսա 1·12
ղէմ, և յայտնեսցին գաղտնիք խաւ
արին, * լռեսցեն իսկ առարկու 1 Կորն
թիւնք լեզուաց: 13·8

3· Ես եմ, որ զմիտս խոնարհս
ըն կլոտում բարձրացուցանեմ. զի
զբազմագոյնս յաւիտենականին ճշշ
մարտութեան իմանայցէ զբանս,
քան զայն, որ ամօք տասամբ կրթի
'ի վարժարանս: Ես եմ, որ ու
սուցանեմ առանց շշնջման բառից,
առանց շփոթման կարծեաց, ա
ռանց

ռանց քամահման պատուոյ, և
թարց ընդդիմամարտութե. առ
արկութեանց: Ես եմ, որ ուսու
ցանեմ խոտել զերկրայինս, զզու
ել 'ի ներկայականաց՝ խնդրել ըզ
մշտնջենաւորս իմանալ՝ զաւիտե
նականս, փախչել 'ի պատուոց,
ըմբերել զայթագղութեց, դնել
'ի յիս զյոյսն բոլոր, բաց յինէն
ոչ իմիք բաղձալ, և սիրել զիս
եռանդապէս 'ի վեր քան զամ:

4. Քանզի՝ ոմն սիրելով զիս 'ի
սրտէ, ուսաւ զածայինս, և խօսէր
զզարմանալիս: Առաւել շահե
ցաւ թողլով զամ, քան թէ ուսա
նելով զիրս նրբահայեացս: Բայց՝
ընդ ոմանց խօսիմ զիրաց հասարա
կաց, և ընդ ոմանց զիրաց տեսա
կաւորաց. ոմանց նշանիւք՝ և ձե
ւովք քաղցրաբար երևիմ, և ոմանց
մեծաւ լուսով յայտնեմ զխոր
հուրդս: Մի է ձայն գրոց, բայց՝
ոչ զամենեսեան հանգիտապէս նե
րակերպէ. զի ես եմ 'ի մէջ նոցա,
Ղուկ. * վարդապետս ճշմարտութե, քըն
20. 21 նօղս սրտից, իմացօղս խորհրդոց,
յառաջացուցիչս գործոց՝ և բաշ
խօղս իւրաքանչիւրոց, ըստ որում
արժան գոլ ենթադատեմ:

Գլուխ ԽԷ։

Յաղագս ոչ քարշելոյ առ ինքն զիրս արտաքինս։

1. ՈՐդեա՛կ՝ պիտոյ է քեզ
գոլ ըն բազումս իբր տը
գէտ, և համարիլ զքեզ իբր մե
ռեալ 'ի վ̃ր երկրի, * որում ամ̃ Գաղա
թէ բոլոր աշխարհ խաչեցեալ իցէ։ 6. 14
Պիտոյ է քեզ և՝ զբազմօք խլխ
ունկամբ զանցանել, և խորհիլ
մանաւանդ զայնցանէ, որք խաղա
ղութեն քում պատկանին։ Օգտա
կարագոյն է դարձուցանել զաչս
յիրաց անհաճոյից, և թողուլ իւ
րաքանչիւրում ումեք զիւրն զգա
ցողութիւն, քան թէ զխօսս վի
ճողականս 'ի կիրարկանել։ Եթէ
կացցես բարւոք ընդ այ̃, և 'ի դա
տաստանս նորին անկանիցես,
դիւրապէս յաղթահարեցեալ ըզ
քեզ տանիցես։

2. ՈՎ ՏՐ̃ իմ, մինչև ց'ո՝ ժա
մանեցաք։ Ահաւասիկ՝ ողբացեալ
լինի վնաս կենցաղական. վ̃ս փո
քու օգտի աշխատիմք, և ընթա
նամք, և զտուժումն հոգեկան 'ի
մոռացումն արկանեմք, և հազիւ
երբեք 'ի միտ ածեմք։ Աւ այն՝

որ դոյն ինչ, կամ ոչ ինչ օգուտ է, զգուշանամք. և զայնու՝ որ ծայրագունապէս հարկաւոր է, զանց առնեմք առունկանաբար. զի ամ մարդ առ արտաքինս սայթաքի, և եթէ ոչ վաղվաղակի ապաշաւեցէ, կամաւորապէս ի յարտաքինս անկեալ կացցէ:

Գլուխ ԽԵ:

Թէ ո՛չ է հաւատալի ամենեցուն. և յաղագս դիւրին սահեցման բանից:

Սաղմ 59. 13 1. Տո՛ւր ինձ զօգնութիւն՝ տէր իմ, *՚ի նեղութէ, զի ընդունայն է կեցութիւն մարդոյ: Որքանիցս ոչ գտի յայնմիկ զհաւատարմութիւն, նորում զնոյնն ունիլ զիս վարկանէի: Եւ որքանիցս գտի յայնմիկ զնոյնն նորում սակաւագունապէս նախագիտա-

Սաղմո 93. 11 ցի: *Ընդունայն է ուրեմն գնեալն զյոյս իւր ՚ի մարդս. իսկ կեցութիւն արդարոց ՚ի քեզ է ած իմ: Լեր բարեբանեցեալ՝ տէր իմ, և ած իմ, նամենայնում, որ պատահի մեզ: Տկարք եմք՝ և անկայունք, վաղվաղակի պատրիմք, և փոփոխիմք:

2. Ո՛Վ

2. Ո՞վ է մարդ, որ այնքան ըզ-
գուշաւոր, և շրջահայեցաւոր յա-
մենայնում զինքն պահպանել մար-
թիցի, զի երբեմն 'ի խաբէութե-
նէն, կամ 'ի պատրուակ ինչ ոչ ան-
կանիցի: Այլ՝ որ 'ի քեզ ապաւէ-
նի Տէր իմ, և մաքրութեա՛մբ սրտի
խնդրէ զքեզ, ոչ այնքան դիւրա-
պէս սահի: Եւ եթէ անկանիցի
'ի նեղութիւն ինչ, նորում իւիւ-
իքիւիցէ պարուրեցեալ, վաղվա-
ղակի քև զերծանի, և քև սփոփի.
* զի դու ոչ թողուս զյուսացեալս Սաղմ
'ի քեզ մինչև իսպառ: Հազիւ գը- 9. 11
տանի բարեկամ ոք, զի ըն բնա-
տառապանս իւրոյ բարեկամին ցին
յարատևիցէ: Դու՝ Տէր իմ, դու
միայն ես հաւատարմագունեղ ըն
բնաւս, և բաց 'ի քէն՝ ոչ գոյ այլ
ոք քեզ հանգոյն:

3. Ո՜հ թէ որպէս իմաստնացաւ-
հոգին այն սբ, որ ասաց: Հաստա-
տեցեալ է միտ իմ, և 'ի Քս հիմնե-
ցեալ: Արդ՝ եթէ և ինձ այսպէս
հանդերձիւր, ոչ այնքան դիւրա-
կի վրդովէր զիս երկիւղ մարդկայ-
ին, և ոչ շարժէին զիս սլաքմունք
բանից: Ո՞վ է, որ զամ ինչ նա-
խատեսանիցէ, կամ ո՞վ է, որ յանե-
նից

նից ապառնեաց չարեաց նախա-
զգուշանալ բաւիցէ: Եթէ նախա-
տեսեցեալքն բազմիցս վնասեն.
զի՞նչ ոչ նախատեսեցեալքն, եթէ
ոչ ծանրապէս զմեզ հարուածեն:
Բայց՝ ընդէ՞ր ինձ ողորմելւոյս բա-
րեպէս ոչ նախատեսի: Եւ զմէ՞
այնքան դիւրաբար հաւատացի այ-
լոց: Այլարդ՝ եմք մարդիկ, և
ոչ այլ ինչ, եթէ ոչ բեկանելք
մարդիկ, թէև 'ի բազմաց համարե-
ցիմք հրեշտակք, և առասելցիմք:
Ո՞ւմ հաւատացից՝ Տէր իմ, ում,
եթէ ոչ քեզ: Ճշմարտութիւն
ես, որ ոչ խաբես, և ոչ խաբիլ կա-
Սաղմ րես:. Եւ հակադարձօրէն: * Ամ
115. 2 մարդ է սուտ, անհաստատ, ան-
կայուն, և սահական մանաւանդ
'ի բանս, մինչզի՝ հազիւ երբեք
հաւատալ պարտիցէ այնմիկ, որ
առ երեսս ուղիղ տեսանի:

4. Ո՞ թէ՝ որպէս խոհեմաբար
Միք նախազգեցեր մեզ *զգուշանալ 'ի
7. 6 մարդկանէ. * և զի թշնամիք առն՝
Մատ ընտանիք իւր, վ՜ որոյ՝ ոչ է հաւա-
10. 36 տալի, եթէ ոք ասիցէ: Ահաւա-
սիկ է, կամ ահաւանիկ: Հմտա-
ցեալեմ վնասու իմով, և երանի
լինէր ինձ այս՝ թէ 'ի մեծագոյն
զգու-

զգուշութիւն, և ոչ 'ի յիմարութիւն։
Ասաց ոմն. զգոյշ լեր, զգոյշ
լեր, և պահեա՛ զբանն թագու
ցեալ՝ զոր ասեմս։ Ինքն ոչ կա
րաց լուել զայն, զոր յինէն լուիլ
խնդրեաց, այլ՝ վաղվաղակի մատ
նեաց զիս, և զինքն, և գնաց։
Արդ՝ յայսպիսեաց առասպելեաց,
և անզգուշից արանց պաշտպանեա՛
զիս՝ Տէր, զի մի անկանիցիմ 'ի
ձեռս նոցին, և մի երբեք զայսպի
սեօք անցանորիցիմ։ Զբան ճշմա
րիտ՝ և կայուն տուր 'ի բերան իմ,
և * զխօսս նենգաւոր 'ի բաց արա Սաղմ.
յինէն։ Զի որում ոչ կարեմ հան 119. 1
դուրժել, յայնմանէ բոլորովիմբ
զգուշանալ պարտիմ։
5. Ո՜րքան բարի է, և
խաղաղական՝ լռելն զայլոց, և ոչ
հաւատալն անտարբերաբար ամե
նեցուն, ոչ բարբառիլն աճելոր
դաբար զիրաց դիպուածոց. վե
րայայտնելն զինքն սակաւուց
միայն։ Խնդրելն միշտ 'զքեզ *ներ Սաղմ.
նկատող սրտից. և ոչ շրջաբե 7. 10
րիլն յամէն հողմոյ բանից, այլ բաղ
ձալն, կատարել զամ ինչ՝ զներքին,
և զարտաքին ըստ հաճութե քո
ոց կամաց։ Ո՜րքան ապահո
վա

վայրոյն է սակս պահպանութեան երկնային շնորհի, փախչելն յաս- երևութենէ մարդկան, և ոչ տենչալն այնոցիկ, որք առ արտաքս զզարմացումն ինն ընծայել թուին. այլ հետևելն բոլորիւ հանճարով այնոցիկ, որք տան զզգաստումն վարուց, և զջերմեռանդութիւն: Որքանից վնասեաց զօրութիւնն յայտնեցեալ, և յաճէպ գովեցեալ: Եւ որքանից եղև օգտակար ընդ լռութեան պահեցեալն շնորհ նայս միկ բեկանաւորի կենցաղումս, որոյ բոլորն փորձութիւն է, և պատերազմ:

Գլուխ Խզ:

Յաղագս ապաւինելոյ յԱծ, մինչ վիրաւորիմք պատաճառօք բանից:

1. Որդեակ, կաց հաստատուն պէս, և յուսա՛ յիս: Բանքն զի՞նչ են բանք, եթէ ոչ լոկ խօսք: Ընդ օդս ցնդին, և քարանց ոչ լինէն վնասեն: Եթէ պատժապարտ իցես, խորհեա՛ց թէ որ
1. Յօհ պէս զուղել զքեզ կարիցես. * եթէ
3. 21 միտ քո ոչ ըստգտանիցէ զքեզ, մանաւանդ յօժարաբար կրել զնա յա

ղագս

ղազս իմ։ Դոյն ինչ է, եթէ եր
բեմն համբերիցես այլոցն բանից,
որովհետև ոչ կարես տանիլ դեռ
ևս գանից կարծրագունից։ Եւ
ընդէ՞ր այնքան սակաւ ինչ թա
փանցէ 'ի սիրտ քո, վ՜ զի՝ տակաւ
ին մարմնաւոր ես, և առաւել քան
զպատշաճն՝ լսես մարդկան։
Քանզի երկնչիս 'ի քամահանաց,
և սակս սխալանաց ոչ կամիս յան
դիմանիլ, խնդրես խոյս զստուերս
պատճառանաց։

2. Բայց՝ բարւոք նկատեա՛ 'ի
քեզ, և ճանաչեսցես, զի դեռևս
'ի քեզ կենդանի է աշխարհ, և
նանիր ցանկութիւն հաճոյանալոյ
մարդկան։ Քանզի՝ մինչ փախչիս
'ի զիջմանէ, և 'ի պատկառմանէ
սակս քոյոց պակասութեանց՝ ցու
ցանես իրաւի, թէ ոչ իցես ճշմա
րիտ խոնարհ, և ոչ ճշմարտապէս
մեռեալ աշխարհի, և ոչ ևս աշխ՜րհ
քեզ խաչեցեալ իցէ։ Բայց լո՛ր
բանից իմոց, և լիցիս անփոյթ ըզ
տասն հազարաց բանից մարդկան։
Վ՜ զի՝ եթէ ոք զբնաւ բանս կարէ
լիս չարապէս նիւթելոյ, ասէր
ընդդէմ քեզ. զի՞նչ վնասէին քեզ՝
եթէ թոյլ տայիր նոցին անցա
նել

նել, թարց. համարելոյ զնս̃ առաւ
ել քան զչեւղ լինս։ Մի՛ թէ կա
Ղուկա րէի՛ն * զհեր մի 'ի գլխոյ քումմէ
21. 16 'ի բացքարշել։

3. Բայց՝ որ ոչ ունի զսիրտ յին
քեան, և ոչ ունի զա̃ծ առաջի աչաց,
դիւրաբար շարժի 'ի բանից պար
սաւականաց։ Իսկ՝ որ ապաւինի
'ի յիս, և ոչ բաղձայ կալ նառանձ
նականի խորում դատողութեան,
ծնասցէ առանց զարհուրանա̃ց մարդ
կայնոց։ Քանզի՝ ես եմ դատաւ
որ, և ճանաչող համայնից խորհր
դոց. ես գիտեմ, թէ որպիսաբար
իրն գործեցելիցէ. ես ճանաչեմ
զհայհոյիչս, և զհամբերողս։ Յի
նէն ել բանս այս, և իմով թոյլ
Ղուկա տուութեամբ այս դիպեցաւ, *զի
2. 36 յայտնիցին 'ի բազմաց սրտից խոր
հուրդք։ Ես զպատժապարտս, և
զանմեղս դատեցից, զորս յառաջ
իմով ծածկաւ դատողութեա̃ փոր
ձել կամեցայ։

4. Վկայութիւք մարդկան բազ
միցս պատրէն. դատողութի իմ
ճշմարիտ է, կացցէ՝ և ոչ կործա
նեսցի։ Թագչի բազումանգամ,
և սակաւուց առ իւրաքանչիւրս
երևի. սակայն՝ ոչ երբեք սխալի,
և.

և ոչ սխալիլ կարէ, թէև յաչս ան
խմաստից ոչ գոլ ուղիղ տեսանի
ցի: Արդ իս ուրեմն դիմելի է նա
մենայնում դատողութեան, և ոչ է
յենլի յատկականի հանճարոյութեան:
Քանզի՝ * արդարն ոչ աղմկի, որ Առակ
ինչև յայն նմին դիպիցի: Եւ եթէ 12. 21
բան ինչ ընդդէմ նմին արտաբե
րիցի, ոչ այնքան զփոյթ առնէ:
Այլև ոչ հրճուի ընդվայր, եթէ
յայլոց բանաւորապէս անմեղադրե
կալցի: Քանզի՝ յուշածէ, թէ ես
իցեմ, * որ զննեմ զսիրտս, և զերի Սաղմ.
կամունս. և ոչ դատեմ ըստ դիմաց, 7. 10
և ըստ մարդկայնոյ առերևութե:
Քանզի՝ բազմիցս առաջս իմ դատա
նի մեղադրելի, որ ըստ մարդկայ
նոյ դատողութե երևի գովելի:
5. Տէր Աստուած, դատաւոր արդար,
* հզօր՝ և երկայնամիտ, որ ճանա Սաղմ.
չես զմարդկան բեկանելութի, և 7. 11
զվատթարութի, լեր կարողութի
իմ, և բնաւ քաջալերութիւն իմ.
քանզի՝ ոչ է ինձ բաւական խիղճ
մտաց իմոց: Դու ճանաչես զայն,
զոր ոչ ճանաչեմ ես. և վասն այսո
րիկ յամենայնում յանդիմանութե,
պարտական եմ ես խոնարհեցուցա
նել զիս, և հեզաբար ըմբերել:

Արդ՝ ներեա ինձ՝ ով քաղցր իմ,
եթէ երբեմն սոյնպէս՝ ոչ արարի,
և շնորհեա ինձ վերստին զձիր մե
ծի համբերութեան։ Քանզի՝ բա
րեգոյն է ինձ ողորմութիւն քո առատ,
առ՚ի ստանալ զներողութիւն, քան
զարդարութիւն իմ կարծեցեալ,
առ ի պաշտպանութեան թագուցելոյ
խղճի մտաց։ Եւ թէ ոչ ինչ զինէն
ըստգիտացեալ, ոչ վն այնորիկ ար
դարանալ կարեմ. զի ՚ի հեռանալ
Սաղմ. քոյոյ ողորմութեան, * ոչ արդարա
142. 2 նայ առաջի քո ամ կենդանի։

Գլուխ ԽԷ։

Թէ ամ ծանունք համբերելիք եղեն՝
առնս կենացն յաւիտենականաց։

1. Որդեակ, մի բեկանեսցեն
զքեզ աշխատութիւնք, զորս
յանձնառուեր վն իմ, և մի տառապանք
կլցեն զքեզ նեղութիւնք մինչև
իսպառ. այլ յամենայն դիպուածս
կարողացուսցէ զքեզ խոստումն
իմ, և մխիթարեսցէ։ Բաւական եմ
ես առ ՚ի հատուցանել ՚ի վեր քան
զամ եղանակ, և չափ։ Ոչ աշխա
տեսցիս աստ ընդ երկար, ծանր
նչէ, և ոչ միշտ ծանրասցիս ցաւ

օք

օք ։ Համբերեմ սակաւիկ մի, և
տեսցես զչարեաց արագահաս
վախճան ։ Եկեսցէ ինձ ժամ, յո
րում դադարեսցի ամ աշխատու
թիւն, և խռովութիւն ։ Ամ ինչ, որ
անցանէ ը ժամանակի, դոյնինչ
է, և համառօտ ։

2 . Արա՛, զոր առնելոց ես. հաւ
ատարմապէս աշխատասիրեա՛ յայ
գւոջ իմում, ես եղէց վարձ քո ։
Գրեա՛, ընթերցի՛ր, երգեա՛, հե
ծեա՛, լռեա՛, աղօթեա՛, համբերեա՛
արիաբար հակառակաց. զի արժան
է այսոցիկ ամենեցուն, և ևս մեծա
մեծաց պատերազմաց, կեանն յաւի
տենական ։ Եկեսցէ խաղաղութիւ
յաւուր միում, որ է յայտնի Տն.
* և եղիցի ոչ տիւ, և ոչ գիշեր, Յայտ 22. 5
այլ լոյս մշտնջենաւոր, անզրաւ
պայծառութիւն՝ հաստատուն խա
ղաղութիւն, և ապահով անդորրու
թիւն ։ Յայնժամ ոչ ասասցես.
* Ո՞ ազատեսցէ զիս 'ի մարմնոյ Հռով 7. 24
յայսմանէ մահկանացուոյ ։ Եւ ոչ
աղաղակեսցես. * Վա՜յ ինձ, զի ընդ Սաղմ. 119. 5
երկար եղև պանդխտութիւն իմ.
զի ընկճեսցի մահ, և եղիցի կեցու
թիւն անվախճանելի. անձկութիւն
ոչ իմն՝ վայելչութիւն երանական,
ըն

ընկերակցութիւն քաղցր, և զուարթ ծալի:

3. Ո՞ թէ տեսեալ էիր 'ի յերկինս զփառս սրբոց մշտնջենաւորս, և թէ որքան այժմ հրճուէիցին 'ի փառս այնոքիկ, որք երբեմն քամահելիք էին աշխարհի այսմիկ, և անարժանք համարեցելին կենին այնմիկ. արդարև խոկոյն խոնարհեցուցանէիր զքեզ մինչև յերկիր, և բաղձայիր մանաւանդ հպատակիլ ամենեցուն, քան թէ առաջնորդել միոյն. և ոչ տենչայիր աւուրց խնդութեան այսորիկ կենցաղոյս, այլ մանաւանդ ցնծայիր վշտանկիլ յաղագս այ. և զառոչ ինչ համարիլն 'ի մէջ մարդկան, մեծ իմն շահաւէտութիւն վարկանէիր:

4. Ո՞ թէ այսոքիկ քեզ յուշ լինէին, և խորապէս 'ի սիրտ քո թափանցէին, զի՞արդ կարէիր երբէք տրտնջալ: Ո՞չ ապաքէն բնաւ աշխատալիք բառնալիք են սակս կենին աւիտենականի: Ո՞չ է դոյն ինչ կորուսանելն, կամ շահիլն, զարքայութիւն երկնից: Համբարձ ուրեմն զերեսս քո 'ի յերկինս: Ահաւասիկ ես՝ և ամ սուրբք իմ

ընդ

ընդ իս որք ընկենցաղում այսմիկ
կրեցին զմեծամեծ պատերազ
մունս, այժմ ցնծան, այժմ մխի
թարին, այժմ են ապահովք,
այժմ յարահանգչին, և անդրաւա
պէս ընդ իս յարքայութեան հօր
իմոյ յարամնայցեն:

Գլուխ ԽԸ:

Յաղագս աւուր յաւիտենականի, և անձկութեանց այսորիկ կենցաղոյս:

1. Ո՛ Ամեներանեցեալ բնա
կութիւն քաղաքին վեր
նոյ: Ո՛ ամենապայծառ օր աւի
տենականութե, զոր ոչինչ գիշեր
մթացուցանել կարէ, զի վեհա
գոյն ճշմարտութիւնն 'ի քեզ միշտ
ճառագայթէ. օր խնդութեան
յարակայի՝ միշտ աներկեւան, որ
ոչ երբեք զկացութիւն քո փոխար
կես 'ի հակառակն: Ո՛ թէ օրն այն
ծագեալ էր ղլոյս իւր, և ընաւք
կենցաղականք առեալ էին զվախ
ճան: Որ թէպէտ ծագի առ սուրբս
մշտնջենականաւ պայծառութ առ
փայլեցեալ, սակայն՝ հեռաւպէս,
'ի ձեռն հայելւոյ միայն՝ առ պան
դխտեցեալս 'ի յերկրի:

2. Ճա

2. Ճանաչեն երկնաքաղաքացիքն զնա, թէ՝ որպէս խնդակից իցէ. հեծեծեն աքսորեցեալ որդիքն Եւայի, թէ՝ որպէս դառն, և ձանձրալի իցէ սա: Աւուրք այսորիկ կենցաղոյս փոքունք են, և չարք, լիք են ցաւովք, և անձկութ̄բք. ուր մարդիկ մեղօք բազմօք աղտեղանան, և որսանին 'ի յախտից բազմաց. բազմօք երկիւղիւք ձմլին, բազմօք հոգովք տարաձկին. բազմօք հետաքրքրութ̄բք տարացնդին, բազմօք ունայնութ̄բք պատրաղին, բազմօք մոլորութ̄բք շրջաբերին, բազմօք աշխատանօք հաշին. 'ի փորձութեց ծանրանան, 'ի հեշտութեանց մեղկանան՝ և 'ի կարօտութէ տագնապին:

3. Ո՛ թէ՝ ե՞րբ եղիցի վախճան այսպիսի չարեաց. ե՞րբ ազատեցայց յողորմելւոյ ծառայութենէ ախտից. երբ յիշեցից զքեզ միայն՝ Տէր իմ. երբ ուրախացայց լիապէս 'ի քեզ: Ե՞րբ եղէց թարց խմէք արգելման ըն ճշմարտու ազատութեան, առանց ամ̄ն ծանրութեան մտաց՝ և մարմնոյ: Ե՞րբ եղիցի խաղաղութի հաստատուն, խաղաղութ̄ի անդրդուէլի՝ և ապա-

հով

հով. խաղաղութիւն ներքին, և
արտաքին, խաղաղութի յամենից
կողմանց ամփոփեալ: Երբ կայցեմ
առ 'ի տեսանել զքեզ՝ ով բարի
Յս, երբ յարանկատեցից զփառս
արքայութեան քոյ. երբ եղիցիս
ինձ ամ յամենայնում: Ո՜հ թէ՝
երբ եղէց ընդ քեզ *յարքայութե Մատ
քում, զոր պատրաստեցեր յաւիտե 25. 34
նից քոյոց սիրելեաց: Մնացեալ
եմ աղքատ՝ և վտարանդի յերկրի
թշնամականի, նորում են պատե
րազմունք հանապազորդականք, և
վտանգաւորութիւնք մեծամեծք:
4. Մխիթեա՛ զտրտմութիւն իմ,
զնի՛ր զցաւ իմ, զի առ քեզ հառաչէ
ամ իղձ իմ: Քանզի՝ բեռն է ինձ
բնաւն, զոր 'ի սփոփանս առա՛ նու
իրէ ինձ աշխարհ: Ցանկամ ամե
նեւին քեզ վայելել, բայց՝ ոչ կա
րեմ առ ըմբռնել: Բաղձամ նեցուկ
նուլ երկնայնոց, բայց ընկճեն զիս
իրք ժամանակաւորք, և ախտք ոչ
մահացուցեալք: Մտօք քան զամ
կալ 'ի վերոյ կամիմ, բայց մարմնով
ակամայ ենթագոլ ստիպիմ: Այս
պէս՝ ես թշուառս ընդ իս հակա
մարտիմ, և ծանրացեալ եմ ինձ
ինքեան, մինչ հոգին 'ի վեր՝ և
մար

մարմնին 'ի վայր դոլ խնդրէ։
5. Ո՛հ՝ զինչ կրեմ 'ի ներքուստ,
մինչ առձեռնեմ միտք զիս երկնայ
ինս, խոկոյն ամբոխք մարմնականք
Սաղմ. ինձ առհանդիպին։ * Ած իմ, մի
70. 12 հեռանար յինէն, և մի խոտորիր
բարկութբ 'ի ծառայէ քումմէ։
Սաղմ. * Փայլեա՛ զփայլատակումս քո, և
143. 6 ցրուեա՛ զնոսա. առաքեա՛ զնետս
քո, և խռովեսցին ամ երևոյթք
թշնամւոյն։ Վերաժողովեա՛ առ
քեզ զիմ զգայութիւնս, մոռացո՛
ինձ զբնաւ իրս աշխարհականս.
տուր ինձ փութով 'ի բացմերժել
և քամահել զցնորմունս մոլութեց։
Հաս ինձ 'ի թիկունս, ո՛վ Ճշմար
տութի աւխտենական, զի մի շարժի
ցէ զիս ունայնութի ինչ։ Մատի
առ իս, ո՛վ երկնային քաղցրութի,
և փախիցէ յերեսաց քոց ամ անմաքր
ութիւն։ Անխայեա՛ յիս, և ողոր
մութբ քով ներեա՛, որքանիցս յա
ղօթելն իմ՝ բաց 'ի քէն, զայլմէ
խոկամ։ Քանզի՝ խոստովանիմ ի
րաւի, թէ սովորեալ եմ յոյժ ա
րացնդապէս զիս ունիլ։ Զի
բազմիցս անդ ոչ եմ, ուր մարմնա
պէս կամ, և զետեղիմ. այլ յաւէտ
անդ, յո՛ բերիմ 'ի խորհրդոցս։

Անդ

Ա՛նդ եմ ես, ուր է խորհուրդ իմ։
Անդ է յաճախօրէն խորհուրդ իմ,
ուր գոյ այն, զոր սիրեմն։ Այն
իսկոյն հանդիպի ինձ, որև բնա
կանաբար բերկրեցուցանէ, կամ
'ի սովորութենէ հաճոյ թուի։
6. Ուստի դու՝ ով Ճշմարտու
թիւն, յայտնապէս ասացեր. * զի Մատ
ուր գանձ ձեր է, անդ և սիրտ ձեր 6. 21
եղիցի։ Եթէ սիրեմ զերկինս, յօ
ժարապէս զերկնայնոց խորհիմ։
Եթէ սիրեմ զաշխարհ, խնդակ
ցիմ երջանկութեանց աշխարհի,
և տրտմիմ սակս նորին ընդդիմա
դարձութե̃ց։ Եթէ սիրեմ զմար
մին, զոր ինչ մարմնոյն է, բազմիցս
երևակայեմ։ Եթէ սիրեմ զհո
գի, զհոգևորաց խորհիլն զուարճա
նամ։ Քանզի՝ զոր ինչ և սիրեմ,
զնոցունց խօսիմ յօժարապէս, և
լսեմ, իսկ՝ և զպատկերս նոցին ա
ծեմ ընդ իս 'ի տուն իմ։ Բայց՝
երանի մարդոյն այնմիկ, որ՝ վասն
քոյ, բնաւից ստեղծուածոց զբա
րեաւ մնալ շնորհէ, զբնութիւնն
'ի բռնանածէ, և զցանկութիւնս
մարմնոյ իւրոյ՝ ջերմեռանդութ̃
հոգւոյն, նուաճէ. զի պարզեցե̃լ
խղճիւ մտաց, զաղօթս մաքուրս
քեզ

քեզ վերընծայիցէ, եւ արժանի լինիցի գտանիլ 'ի մէջ հրեշտակայնոց խմբից, գոլով ներքսապէս՝ եւ արտաքսապէս 'ի բնաւից երկրայնոց 'ի բացմեկնեցեալ:

Գլուխ ԽԹ:

Յաղագս փափագման կենին յաւիտենէ նախանձ. եւ թէ՝ որքան իցեն բարիքն խոստացեալ պատերազմողաց:

1. Որդեակ, մինչ 'ի քեզ ըղձումն յաւիտենականի երանութեան 'ի վերուստ զգաս հեղանիլ, եւ բաղձաս ելանել 'ի սենեկէ քոյոյ մարմնոյ, զի զպայծառութիւն իմ առանց ստուերի փոփոխման համանկատել կարիցես. Ընդարձակեա՛ զսիրտ քո, եւ ամենայն ըղձիւ զներշնչումն զայն սբ՟ վերընկալ: Մատո՛ զառատագոյն շնորհակալութիւն վերնոյն բարութեան, որ ընդ քեզ այսպէս հաճի ներգործել, գթածաբար այցանել, ջերմապէս զարթուցանել, եւ կարողապէս նպաստել, զի մի՛ յատկական քոյով ծանրութբ՟ սահիցիս առ երկրայինս: Եւ ո՛չ ընդունիս

զայս

զայս քոյովդ խոկմամբ, և ջանիւ,
այլ միայնով արժանաւորութ՟բ
վերնայնոյ շնորհի, և ա՟ծայնոյ մե
րանկամման· զի 'ի զօրութիւնս,
և 'ի խոնարհութիւն մեծագոյն յա
ռաջանայցես, և առ հանդերձեալն
մարտ զքեզ նախապատրաստիցես,
'ի յետ խոկ բոլորիւ ըղձիւ սրտի
առյեննուցուս, և ջերմեռանդիւ
համոյութ՟բ ծառայել փութայցես։

2․ Որդեակ՝ բազմիցս հուրն բոր
բոքի, բայց՝ առանց ծխոյ ոչ բարձ
րանայ բոցն։ Այսպէս՝ բազումք
են, որոց ցանկութիքն բորբոքին
առ երկնայինս, սակայն իղձք նո
ցին ոչ են ազատք 'ի փորձութեց
մարմնականաց։ Վ՟ն որոյ՝ ոչ կա
րեն աշխատիլ բոլորովիմբ զուտա
պէս վ՟ն փառացն ա՟յ, զոր այնքան
բաղձանօք 'ի նմանէ հայցեն։
Այսպէս է բազմիցս և քոյդ ցան
կութիւն, զորմէ վկայեցեր դոլ ան
տանելի։ Քանզի՝ ոչ է զուտ, և
կատարեալ, որ սեպհականաւ հեշ
տութ՟բ է ներախառնացեալ։

2․ Հայցեա՛, ոչ զայն՝ որ քեզ է
ախորժելի, այլ զայն, որ ինձ է ըն
դունելի․ զի եթէ ուղղապէս դա
տիցես, առաւել յարգել պարտիս
զհրա

զհրամանն իմ, քան զքոյդ ցանկու-
թիւն, և քան զբնաւս քոյս ցան
կալիս, և նմին հետևիլ: Ծանս
չեմ ես զքոյդ ցանկութիւն, և լը
սեմ զհառաչանս քոյս յաճախս:
Արդէն կամիս գոլ նազատութե
փառաց որդւոցն այ. այժմ բերկ
րեցուցանէ զքեզ տունն յաւիտե
նականն, և երկնայինն հայրենիք, որ
է լի խնդութե. բայց ոչ գեռևս
հասեալ է ժամն. զի գոյ տակաւին
այլ իմն ժամանակ, այսինքն՝ ժա
մանակ պատերազմի, ժամանակ
աշխատանաց՝ և փորձութեան:
Բաղձաս թերևս՝ վերաշինանիլ վե
հագունիւ բարեաւ, բայց ոչ կա
րես այժմ ստանալ զնոյնն: (Ես
իսկ եմ. սպասեա ինձ) ասէ Տր
մինչև եկեսցէ արքայութին իմ:

4. Փորձիլ պարտիս տակաւին,
և ներկրթիլ 'ի յերկրի: Տրեսցի
քեզ երբեմն սփոփումն այլ ոչ
շնորհեսցի քեզ առատ լիութիւն:
Քաջալերեաց ուրեմն, և լեր այր
զօրութեան, այնքան 'ի յառնելիս,
Եփե. որքան 'ի կրելիս զհակառակսն բը
4. 24 նութեան: * Պարտ է քեզ զգե
Ա. Թգ. նուլ զնոր մարդն, * և փոխարկել
10. 6 զքեզ 'ի յայլ իմն մարդ: Պարտ է
քեզ

քեզ բազմիցս առնել զայն, զոր ոչ կամիս. և թողուլ զայն, զոր կամիս: Յառաջացի այն, որ այլոց է հաճոյ, իսկ՝ որ քեզ է հաճոյ, ոչ աջողեսցի: Լուիցի այն, զոր այլք ասեն. իսկ այն, զոր դու ասես, առ ոչինչ համարեսցի: Խնդրեսցեն այլք, և առնուցուն. իսկ՝ զոր դու խնդրես, ոչ ընդունեսցես:

5. Եղիցին այլք մեծահամբաւեցեալք 'ի բերանս մարդկան, իսկ զքէն լռեսցի: Այլոց այս ինչ, կամ այն ինչ յանձնեսցի, իսկ դու առ ոչինչ օգտակար գոլ դատեսցիս: Վա՜ սյսորիկ՝ երբեմն բնութիւն քո տխրեսցի. և մեծ ինչ է՝ եթէ լռաբար ըմբերիցես: Նայսպէսիս, և 'ի բազումս սոցին նմանս, հաւատարիմք տն ծառայք սովոր են փորձիլ, թէ որպիսաբար ուրանալ զինքեանս, և յամենում զիջանիլ կարիցեն: Զի ոչ է այնպիսի ինչ, նորում այնքան մեռանելոյ կարօտանայցես, որքան ըն տեսանելում, և ընկրելում զայնոսիկ, որք կամաց քոց են հակառակք. մանաւանդ՝ մինչ հրամայի քեզ առնել զայնպիսիս, որք անպատեհք տեսանին քեզ, և անօգուտք: Եւ-

չի

զի ոչ իշխես ընդդիմամարտիլ բարձրագունեղի զօրութեն, գոլով 'ի ներքոյ տէրութեան. վն որոյ կարծր ինչ թուէր քեզ՝ շիջիլ ըստ նշմարման այլոյ ուրուք, և թողուլ զքոյդ սեպհական զգացողութիւն:

6. Բայց խորհեաց՝ որդեակ, ըզպտղոյ այսացիկ աշխատանաց, զարագահաս վախճանէ նոցին, և զվարձուց յոյժ մեծամեծաց. և ոչ ունիցիս անդուստ զծանրութիւն, այլ զօնեան քոյոյ համբերութեան զմխիթարութիւն: Քանզի՝ և յաղագս փոքու հաճութեան, զոր այժմ յօժարաբար 'ի բացընկենուս, ունիցիս միշտ զհաճութիւն քո յերկինս: Զի՝ անդ գացես զամ, զոր կամիս, և զամ, զոր բաղձալ կարես: Անդ ունիցիս զիշխանութն բոլորից բարեաց, թարց երկիւղի կորուսանելոյ: Անդ եղիցի կամ քո միշտ մու ընդ իս. ոչ տափացէ իմիք արտաքնոյ, կամ առանձնականի: Անդ՝ ոչոք հակառակեսցի քեզ, ոչոք տրտնջասցէ զքէն, ոչոք արգելուցու զքեզ, և ոչ ինչ ընդդիմասցի քեզ. այլ ընաւ բաղձալիք միահաղոյն եղի-

ցին

յին քեզ ներկայք, և զբոլոր իղձ քո զովացուսցեն, և առլցուսցեն մինչև ի սպառ: Անդ հաստուցից զփառս՝ փոխանակ նախատանաց. զհանդերձս գովութեան՝ փոխանակ տխրութեան. զգահոյս արքայութեան ՚ի յաւիտեան փոխանակ յետնոյն տեղւոյ: Անդ երևեսցի պտուղն հնազանդութեան. խնդասցէ աշխատութիւն ապաշխարութեան, և փառաւորապէս պսակեսցի հպատակութիւն խոնարհ:

7. Այժմ ուրեմն խոնարհապէս լեր հպատակ ՚ի ներքոյ ձեռաց ամենեցուն. և մի եղիցի քեզ փոյթ, թէ ո՞ զայս ինչ ասաց, կամ հրամայեաց: Այլ մեծաւ ջանիւ հոգա, զի եթէ նախամեծար ոք, թէ մանկագոյն ոք, և թէ հասակակից ոք, խնդրիցէ ինչ ՚ի քէն, կամ հրամայիցէ, զբոլորն փոխանակ բարւոյ ընդունիցիս, և միամտութեամբ փութասցես կատարել: Խնդրեսցէ ոմն զայս, և այլ ոմն զայն. փառաւորեսցի ոք նայսմիկ, և այլոք նայնմիկ, և գովեսցի հազարիցս հազար անգամ. բայց դու ո՛չ նայսմիկ, և ո՛չ նայնմիկ. այլ ՚ի յարհամարհանս քոյս, և ՚ի բարեհաճութիւն՝ և ՚ի

պա

պատիւ իմ միայն խնդամ։ Այս եղի
Փիլիպ ցի քեզ բաղձալի, զի՝ * թէ կենօք,
1. 18 և թէ մահուամբ, փառաւորեսցի
'ի քեզ միշտ Ած։

Գլուխ Ծ։

Թէ որպիսաբար նեղեալ ոք պարտի մատուցանել զինքն 'ի յձեռս Աստուծոյ։

1. ՏԷՐ ԱԾ՝ և Հայր սբ, լեր այժմ, և յաւիտեան բարեբանեցեալ. զի որպէս կամիս, այնպէս լինի. և զոր առնես, բարի է։ Խնդասցէ 'ի քեզ ծառայ քո, ոչ յանձն իւր, և ոչ յիր ինչ այլ. զի դու ես միայն խնդութիւն ճշմարիտ, դու յոյս իմ, և պսակ պարծանաց, դու ցնծութիւն իմ, և պատիւ իմ՝ Տէր։ Զի՞նչ ունի ծա
1 Կորն ռայ քո, զոր ոչ իցէ * ընկալեալ 'ի
4. 7 քէն, թէպէտ և առանց արդեան։
Քոյք են ամք, զորս շնորհեցեր
ինձ, և զորս արարեր ընդ իս։
Սաղմ * Տնանկ, և վաստակաւոր եմ ես
87. 16 'ի մանկութենէ իմմէ. և տխրի հո
գի իմ երբեմն մինչև յարտասուս,
և երբեմն վրդովի յինքեան՝ յա
ղագս ախտիցն յարուցելոց։

2. Փափագեմ խաղաղականին խն
դութեան. և ժտեմ զխաղաղու
թիւն որդւոց քոց, որք լուսով
մխիթարութեան 'ի քէն սնուցա
նին: Եթէ շնորհիցես ինձ զխաղա
ղութի, և հեղուցուս 'ի յիս զխըն
դութիւն սէ̃, լցցի հոգի ծառայի
քոյ օրհնաբանութեամբ, և ջերմե
ռանդասցի 'ի գովութիւնս քոյս.
Իսկ՝ եթէ հեռանայցես յինէն, ո̃ր
րում բազմիցս առնես, ոչ կարաս
ցէ * ընթանալ զճանապարհս պա Սաղմ
տուիրանաց քոց. այլ յաւէտ առ 118. 32
'ի գերծել զկուրծ իւր, ծունկք
նորին կորանան. զի ոչ եղիցի նմա
ո̃պ երէկն՝ և եռանդն, մինչ ճրագ
* քո ո̃ր ճառագայթէր 'ի վերայ Յոբ
գլխոյ նորա. * և ընդ հովանեա 29. 3
թևոց քոց նախախնամիւր 'ի փոր Սաղմոս
ձութեանց վերախառնեցելոց: 16. 8

3. Հայր արդար, և միշտ գովե
լի, հասեալ է ժամ, զի փորձիցի ծա
ռայ քո: Հայր սիրելի՝ արժան
է, զի ծառայ քո 'ի ժամուս այս‿
միկ կրիցէ ինչ վասն քոյ: Հայր
մշտնջենաւորես պատուելի, եհաս
ժամն, զոր յաւիտենից նախատե
սեր դու հանդերձեալ. զի զդոյն
ինչ ժամանակ տարանկեցի առ

տաքս ծառայ քո, բայց կեցցէ միշտ 'ի ներքս առ քեզ· դոյնէ րատին վարկեցի՝ խոնարհեցի, և նուաստեցի առաջի մարդկան, 'ի յախտից, և 'ի ցաւոց նուաղեցի· զի վերստին ընդ քեզ ընդ արշալոյս նորոյ ծագմանն յարիցէ, և 'ի յերկնայինս փառաւորեսցի: Հայր սուրբ՝ դու այսպէս հրամայեցեր, և այսպէս կամեցար· և եղև այնպէս՝ որպէս պատուիրեցեր:

4. Քանզի՝ այս է շնորհ քում բարեկամի, զի չարչարիցի՝ և վշտանկիցի վս սիրոյ քոյ յաշխարհի այսմիկ, որքանիցս՝ և յորոց դու հաճիցիս: Թարց խորհրդոյ քում, և նախատեսութեան, և Թարց պատճառի՝ ոչինչ լինի 'ի վերայ երկրի:
Սաղմ. * Բարի է ինձ՝ Տէր, զի խոնար
118.71 հեցուցեր զիս· որպէս զի ուսայց զարդարութիս քոյ, և 'ի բացընկեցից զամս գոռոզութիս, և զինքնահաւանութիւնս: Օգտակար է ինձ,
Սաղմ. * զի ծածկեաց ամօթ զերեսս իմ·
68.8 որպէս զի մանաւանդ զքեզ՝ քան թէ զմարդիկ, 'ի մխիթարութիւն ինձ խնդրիցեմ: Ուսայ ես աստուսա զարհուրիլ 'ի քումմէ անքննելւոյ դատաստանէ· որ վշտանկես զար

դարն

դարձն ընդ ամբարշտի, բայց՝ ոչ
առանց պատեհութեան, և արդա
րութեան։

5. Շնորհակալեմ զքեն, զի ոչ
ներեցեր չարեաց իմոց, այլ հարեր
զիս գանիւք դառնագունիւք, սև
եռելով 'ի յիս զցաւս, և յղելով
առ իս զնեղութիւնս, ներքինս՝ և
արտաքինս։ Ո՛չոք է 'ի բնաւից,
որք են 'ի ներքոյ երկնից, որ կարի
ցէ մխիթարել զիս, եթէ ոչ դու՝
Տէ՛ր Ա՛Ծ իմ, երկնաւոր բժիշկ
հոգեաց։ * որ հարկանես՝ և բժշ 1. Թագ
կես, ստորածես 'ի դժոխս՝ և վե 2. 9
րածես։ Եղիցի * խրատ քո 'ի վե Սաղմ.
րայ իմ, և գաւազան քո ուսուս 17. 36
ցէ զիս։

6. Ահաւասիկ՝ Հա՛յր սիրելի, 'ի
ձեռս քոյ եմ ես, 'ի ներքոյ գաւա
զանի ուղղութեն քոյ խոնարհեցու
ցանեմ զիս։ Հա՛ր զթիկունս իմ,
և զպարանոց իմ, զի կորացուցա
նիցեմ զխեղաթիւրութիւն իմ ըստ
հաճոյից քոյ։ Արա՛ զիս աշակերտ
բարեպաշտօն՝ և խոնարհ, ըստ
որում բարւոք սովո՛ր ես առնել.
զի շրջեցայց ըստ քում ա՛մի նշմա
րութեան։ Յանձնեմ քեզ զիս, և
զիմայինս առ 'ի ուղղել. բարեգոյն
է

է սաստ յանդիմանիլ, քան թէ 'ի
հանդերձելումն: Դու գիտես ըզ
ընաւս, և զիւրաքանչիւրս, և ոչ
ինչ կարէ թագչիլ 'ի քէն ըն մարդ-
կայնում ըստգիտութեան: Յա
ռաջ քան թէ լինիցին՝ ճանաչին 'ի
քէն հանդերձեալքն, և ոչ է քեզ
պիտոյ, թէ այլք ուսուցանիցեն
քեզ, կամ ազդիցեն քեզ զայնո
սիկ, որք ներգործին 'ի վերայ երկ
րի: Դու գիտես՝ թէ զինչ իցէ
ինձ պատկան առ յառաջադիմու
թի իմ, և թէ որքան պիտոյ իցէ
ինձ վշտագնութիւն, առ 'ի մաք
րել զկնճիռս մոլութեց: Արա
ընդ իս զբարեհաճութիւն քո ցան
կալի, և մի արհամարհիցես զմեղա
ւած կեանն իմ, որ ոչումեք այնքան
բարեպէս՝ և յայտնապէս ծանօթ
է, որքան քեզ միայնում:

7. Տուր ինձ՝ Տէր, գիտել զայն,
որ գիտելի է. սիրել զայն, որ սի
րելի է. գովել զայն, որ քեզ ծայ
րագոյն հաճոյ է. պատուել զայն,
որ քեզ ազնուագոյն տեսանի. ատր
սաւել զայն, որ աղտեղի է յաչս
քոյս: Մի թողուցուս ինձ ըստ տեսու
թեան աչաց արտաքնոց դատել, և
մի ըստ լրոյ ականջաց արանց ան
հրմ

հմտից դատապնդքել. այլ դատողութե՛ ճշմարտիւ զերևելեաց, և զհոգեկանաց տրամազննել, և՛ի վեր քան զամ՛ ինչ, զկամս բարեհաճութե՛ քո միշտ խնդրել:

8. Խարբալին բազմիցս 'ի դատելն՝ զգայութիւք մարդկան. խաբին ևս սիրօղք կենցաղոյս՝ զերևելիս միայն սիրելով: Զի՞նչ է մարդանտի բարեգոյն, զի համարիցի մեծագոյն 'ի մարդկանէ: Խաբեբայ զխաբեբայ, սնոտի զսնոտի, կոյր զկոյր, հիւանդ զհիւանդ պատրէ, մինչ զնա բարձրացուցանէ. և իսկապէս յամօթ առնէ զնա, մինչ ընդվայր գովաբանէ: Քանզի՝ որքան է իւրաքանչիւրոք յաչս քոյս, այնքան է, և ոչ առաւել, ասաց խոնարհին սուրբն Ֆրանչիսկոս:

Գլուխ ԾԱ̃:

Թէ 'ի գործս խոնարհս ներքնայանալի է, մինչ նուաղիմք 'ի վեհագունից:

1. Որդեակ՝ ոչ կարես կալ միշտ ջերմեռանդագունիւ ըղձիւ առաքինութեց, և ոչ կարես համազետեղիլ ըն բարձրագու

գունում աստիճանի համանկատ-
ման. այլ հարկ է քեզ, զի երբեմն
սակս սկզբնականի ապականութեան՝
առ ստորնագոյնս իջանիցես. և
բարձցես զբեռն ապականացուի
այսորիկ կենցաղոյս, թէև ակամայ,
և ընդ ձանձրութեան: Ցորքան
ժամանակ զմահկանացու այդ մար-
մին 'ի քեզ կրես, զգասցես զձանձ-
րութիւն, և զծանրութիւն սրտի:
Պարտ է ուրեմն բազմիցս 'ի մարմ-
նի գոլով, սգալ զբեռն մարմնոյ.
զի ոչ կարես անդադարապէս ներ-
յենուլ 'ի հոգեկան կրթութիւնս,
և յաստուածային համանկատմունս:

2. Այժմ վայելուչ է քեզ համա-
գիմել առ խոնարհս, և առ արտա-
քին գործս, և սփոփել զքեզ 'ի
յառս բարիս. սպասել հաստատ-
նով յուսով իմում գալստեան և
վերնոյ այցելութե. և համբերա-
բար տանիլ քում պանդխտութե.,
և ցամաքութե միտաց քոց, մինչև
վերստին այցարարից քեզ, և ազա-
տեցից զքեզ 'ի բնաւից անձկութեց:
Քանզի՝ տաց քեզ մոռանալ զաշխա-
տանս, և ներքնայնով անդորրու-
թե զմայլիլ: Տարածեցից առաջի
քո զանդաստանս գրոց սրբոց, զի

լայնացելով սրտիւ սկսանիցես ըն
թանալ զճանապարհս պատուիրա
նաց քոց։ Եւ ասիցես. * Ո՛չ են Հռոմ 8. 18
համարժանիք չարչարանք այսորիկ
ժամանակի, հանդերձելոցն փա
ռաց, որք յայտնեսցին 'ի մեզ։

Գլուխ ԾԲ։

Թէ ո՛չ է համարիցի զինքն արժանի մխիթարութեան, այլ յաւէտ պատժապարտ գանից։

1. Տէ՛ր, ո՛չ եմ արժանի
քում մխիթարութեան, և
ո՛չ հոգեկանի իմիք այցելութեան.
վասն որոյ՝ արդարապէս առնես ընդ
իս, մինչ զիս՝ տնանկ, և զանտէ
րունչ 'ի բացթողուս։ Քանզի՝ թէ
և հանգոյն ծովու զարտասուս հե
ղուլ կարիցեմ, տակաւին քում
մխիթարութեան ո՛չ եմ արժանի։
Ուստի՝ ո՛չ իմիք արժանի եմ, ե
թէ ո՛չ ծաղու, և պատժոյ. զի՞
ծանրապէս, և բազմիցս վշտացու
ցի զքեզ, և ընդ բազում կարի յան
ցեայ։ Ուրեմն՝ ըստ ճշմարտի խոկ
ման բանի, և ո՛չ փոքրագունեղի
իմիք արժանի եմ մխիթարութե։
Բայց՝ դու բարեգութ, և ողոր
մած

մած ես, որ ոչ կամիս զկորուստ *ստեղծուածոց քոց, առ'ի ցուցա-
Հռով 9・23 նել զճոխութիւն բարութեան քոյ յանօթս ողորմութեան, եւ առանց սեփականի իմիք արդեան, մխիթարես զծառայ քո 'ի վեր քան զեղանակ մարդկային Քանզի՝ քոյք սփոփութիւնք, ոչ են իբրեւ զառասպելաբանութիւնս մարդկայինս:

2. Զի՞նչ բարւոյ գործեցի, Տէր իմ, զի շնորհեցես ինձ զմխիթարութիւն իմն երկնային: Ես ոչ ինչ կերպիւ ենթադրեմ զիս, թէ զբարի ինչ գործեալ իցեմ, այլ թէ՝ միշտ 'ի մոլութիւնս յօժար լեալ իցեմ, եւ 'ի ճգնութիւնս նոցին յոյլ եղեալ իցեմ: Ճշմարիտ է, զի ոչ կարեմ 'ի բացուրանալ: Եթէ բացասէի զնոյնն, ընդդիմամարտէիր դու ընդ իս, եւ ոչոք կարէր ջատագովել զիս: Արդ՝ զինչ արժանաւորեցայ վասն մեղաց իմոց, եթէ ոչ զդժոխս, եւ զհուրն աւիտենականն: Ճշմարտութեամբ խոստովանիմ, զի արժանի եմ համայնից կատականաց՝ եւ քամահանաց, եւ ոչ է վայել, թէ համարիցիմ 'ի մէջ քոյոց պաշտօնէից: Եւ թէպէտ զայս դժուին է ինձ

ինձ լսել. սակայն ընդդէմ ինձ ին
քեան, սակս ճշմարտութե՛ յան
դիմանեմ զմեղս իմ, զի դիւրաւ
արդիւնաւորիցիմ զողորմութիւն
քո առատանալ:

3. Զի՞նչ առացից պատժա
պարտս, և լցեցեալս համայնիւք
պատկառանօք: Ո՛չ ունիմ զբե
րան խօսելոյ զայլ ինչ բան, բաց
յայնմանէ: Մեղայ, Տէր՝ մեղայ.
ողորմեաց ինձ, և ներեա՛ ինձ:
Թո՛յլ* տուր ինձ սակաւ ինչ, զի Յօբ 10. 20
ողբացայց զցաւ իմ, յառաջ քան
թէ երթայցեմ յերկիր խաւարայ
ին, և ծածկեցեալ մգաւ մահու:
Զի՞նչ այնքան՝ յամէտ պահանջես
'ի պատժապարտէ, և 'ի թշուառա
ցելոյ իմեքէ մեղաւորէ, եթէ ո՛չ՝
զի ապաշաւեսցէ, և խոնարհեսցի
սակս յանցանաց իւրոց: 'Ի ճշմար
տէ ապաշաւանէ, և 'ի խոնարհ
մանէ սրտի, ծնանի յոյս թողուէ.
հաշտեցուցանի աղմկեցեալն ըստ
գիտութիւն. վերյօրինի կորուսե
ցեալն շնորհ. պաշտպանի մարդ
յապատանւոյ բարկութենէ. և հան
դիպին միմեանց փոփոխակի, ած՝
և ապաշխարողն հոգի, 'ի համբոյր
սրբութեան:

պատիւ իմ միայն խնդամ : Այս եղի
Փիլիպ ցի քեզ բաղձալի, զի՝ * թէ կենօք,
1 . 18 և թէ մահուամբ, փառաւորեսցի
՚ի քեզ միշտ Ած :

Գլուխ Ծ̄ :

Թէ որպիսաբար վհատեալն ոք պարտի
մատուցանել զինքն ՚ի յձեռս Աստ-
ուծոյ :

1 . ՏԷՐ Ած՝ և Հայր սր̄, լեր
այժմ, և յաւիտեան
բարեբանեցեալ . զի որպէս կամիս,
այնպէս լինի . և զոր առնես, բա
րի է : Խնդասցէ ՚ի քեզ ծառայ
քո, ոչ յանձն իւր, և ոչ յիր ինչ
այլ . զի դու ես միայն խնդութիւն
ճշմարիտ, դու յոյս իմ, և պսակ
պարծանաց, դու ցնծութիւն իմ, և
պատիւ իմ՝ Տէր : Զի՞նչ ունի ծա
1 Կորն ռայ քո, զոր ոչ իցէ * ընկալեալ ՚ի
4 . 7 քէն, թէպէտ և առանց արդեանց :
Քոյք են ամ̄ք, զորս շնորհեցեր
ինձ, և զորս արարեր ընդ իս :
Սաղմ * Տնանկ, և վաստակաւոր եմ ես
87 . 16 ՚ի մանկութենէ իմմէ . և տխրի հո
գի իմ երբեմն մինչև յարտասուս,
և երբեմն վրդովի յինքեան՝ յա
ղագս ախտից յարուցելոց :

2. Փափագիմ խաղաղականին խնդութեան. և ժտեմ զխաղաղութիւն որդւոց քոց, որք լուսով մխիթարութեան 'ի քէն սնուցանին: Եթէ շնորհիցես ինձ զխաղաղութի, և հեղուցուս 'ի յիս զխնդութիւն սբ, լցցի հոգի ծառայի քո օրհնաբանութեամբ, և ջերմեռանդեսցի 'ի գովութիւնս քոյս. իսկ' եթէ հեռանայցես յինէն, ըստ
որում բազմիցս առնես, ոչ կարասցէ * ընթանալ զճանապարհս պա Սաղմ.
տուիրանաց քոց. այլ յաւէտ առ 118.32
'ի գերծել զկուրծ իւր, ծունկք նորին կորանան. զի ոչ եղիցի նմա որպէս երէկն' և եռանդն, մինչ ճրագ
* քո ո͞բ ճառագայթէր 'ի վերայ Յոբ
գլխոյ նորա. * և ընդ հովանեաւ 29.3
թևոց քոց նախախնամիւր 'ի փոր Սաղմ.
ձութեանց վերախռնեցելոց: 16.8

3. Հա՛յր արդար, և միշտ գովելի, հասեալ է ժամ, զի փորձիցի ծառայ քո: Հա՛յր սիրելի' արժան է, զի ծառայ քո 'ի ժամուս այսմիկ կրիցէ ինչ վասն քոյ: Հա՛յր մշտնջենաւորպէս պատուելի, եհաս ժամն, զոր յաւիտենից նախատեսեր դու հանդերձեալ. զի զդոյն ինչ ժամանակ ստորանկիցի ար

տաքս ծառայ քո, բայց կեցցէ միշտ 'ի ներքս առ քեզ· դոյնիւ րոտին վարկեցի՝ խոնարհեցի, և նուաղեցի առաջի մարդկան, 'ի յախտից, և 'ի ցաւոց նուաղեցի· զի վերստին ընդ քեզ ընդ արշալոյս նորոյ ծագմանն յարիցէ, և 'ի յերկնայինս փառաւորեսցի։ Հայր սուրբ՝ դու այսպէս հրամայեցեր, և այսպէս կամեցար· և եղև այնպէս՝ որպէս պատուիրեցեր։

4· Քանզի՝ այս է շնորհ քում բարեկամի, զի չարչարիցի՝ և վշտանկիցի վասն սիրոյ քոյ յաշխարհի այսմիկ, որքանիցս՝ և յորոց դու հաճիցիս։ Թարց խորհրդոյ քում, և նախատեսութեան, և թարց պատճառի՝ ոչինչ լինի 'ի վերայ երկրի։
Սաղմ. * Բարի է ինձ՝ Տէր, զի խոնար
118·71 հեցուցեր զիս· որպէս զի ուսայց զար
դարութիս քոյս, և 'ի բացընկեցից
զամեն գոռոզութիւ, և զինքնահաւ
անութիւնս։ Օգտակար է ինձ,
Սաղմ. * զի ծածկեաց ամօթ զերեսս իմ·
68·8 որպէս զի մանաւանդ զքեզ՝ քան թէ
զմարդիկ, 'ի մխիթարութիւն ինձ
խնդրիցեմ։ Ուսայ ես աստուստ
զարհուրիլ 'ի քումմէ անքննելւոյ
դատաստանէ· որ վշտանկես զար

դարն

դարձն ընդ ամբարշտի, բայց՝ ոչ
առանց պատեհութեան, և արդա
րութեան։

5. Շնորհակալեմ զքէն, զի ոչ
ներեցեր չարեաց իմոց, այլ հարեր
զիս դանիւք դառնագունիւք, սև
եռելով 'ի յիս զցաւս, և յղելով
առ իս զնեղութիւնս, ներքինս՝ և
արտաքինս։ Ո՛չ ոք է 'ի բնաւից,
որք են 'ի ներքոյ երկնից, որ կարի
ցէ մխիթարել զիս, եթէ ոչ դու՝
Տէր Ա՛ծ իմ, երկնաւոր բժիշկ
հոգեաց։ * որ հարկանես՝ և բժըշ 1. Թագ
կես, ստորածես 'ի դժոխս՝ և վե 2. 9
րածես։ Եղիցի * խրատ քո 'ի վե Սաղմ
րայ իմ, և գաւազան քո ուսուս 17. 36
ցէ զիս։

6. Ահաւասիկ Հա՛յր սիրելի, 'ի
ձեռս քոյ եմ ես, 'ի ներքոյ գաւա
զանի ուղղութե քոյ խոնարհեցու
ցանեմ զիս։ Հա՛յր զթիկունս իմ,
և զպարանոց իմ, զի կորացուցա
նիցեմ զխեղաթիւրութիւն իմ ը
հաճոյից քոյ։ Առա՛ զիս աշակերտ
բարեպաշտօն՝ և խոնարհ, ըստ
որում բարւոք սովո՛ր ես առնել.
զի շրջեցայց ըստ քում ամի նշմա
րութեան։ Յանձնեմ քեզ զիս, և
զիմայինս առ'ի ուղղել. բարեգոյն
է

է՛ սաստ յանդիմանիլ, քան թէ 'ի հանդերձելումն: Դու գիտես ըզձնաւս, և զիւրաքանչիւրս, և ոչ ինչ կարէ թագչիլ 'ի քէն ըն մարդկայնում բաստխտութեան: Յառաջ քան թէ լինիցին՝ ճանաչէին 'ի քէն հանդերձեալք, և ոչ է քեզ պիտոյ, թէ այլք ուսուցանիցեն քեզ, կամ ազդիցեն քեզ զայնոսիկ, որք ներգործին 'ի վերայ երկրի: Դու գիտես՝ թէ զինչ իցէ ինձ պատկան առ յառաջադիմութի իմ, և թէ որքան պիտոյ իցէ ինձ վշտագնութիւն, առ 'ի մաքրել զկնճիռս մոլութեց: Արա՛ ընդ իս զբարեհաճութիւն քո ցանկալի, և մի՛ արհամարհիցես զմեղամած կեանն իմ, որ ոչ ումեք այնքան բարեպէս՝ և յայտնապէս ծանօթ է, որքան քեզ միայնում:

7. Տո՛ւր ինձ՝ տէ՛ր, գիտել զայն, որ գիտելի է. սիրել զայն, որ սիրելի է. գովել զայն, որ քեզ ծայրագոյն հաճոյ է. պատուել զայն, որ քեզ ազնուագոյն տեսանի. պրսաւել զայն, որ աղտեղի է յաչքոյս: Մի՛ թողուցուս ինձ ըստ տեսութեան աչաց արտաքնոց դատել, և մի՛ ըստ լրոյ ականջաց արանց անհըմ

հմտից դատակնքել. այլ դատողութե՛ք ճշմարտիւ զերևելեաց, և զհոգեկանաց տրամադրնել, և 'ի վեր քան զմտ լինչ, զկամս բարեհաճութե քո միշտ խնդրել:

8. Խաբբալին բազմիցս 'ի դատելն՝ զդայութիւք մարդկան. խաբին և սիրողք կենցաղոյս՝ զերևելիս միայն սիրելով: Զի՞նչ է մարդանոի բարեգոյն, զի համարեցի մեծագոյն 'ի մարդկանէ: Խաբեբայ զխաբեբայ, սնոտի զսնոտի, կոյր զկոյր, հիւանդ զհիւանդ պատրէ, մինչ զնա բարձրացուցանէ. և խակապէս յամօթ առնէ զնա, մինչ ընդվայր գովաբանէ: Քանզի՝ որ քան է իւրաքանչիւրոք յաչս քոյս, այնքան է, և ոչ առաւել, ասաց խոնարհին սուրբն Ֆրանչիսկոս:

Գլուխ ԾԱ:

Թէ 'ի գործս խոնարհս ներքնայս նուէր է, մինչ նուաղեմք 'ի վէհ հագուստից:

1. Որդեա՛կ՝ ոչ կարես կալ միշտ ջերմեռանդագունի ըղձիւ առաքինութեց, և ոչ կարես համագէտեցիլ ըն բարձրագու

գունում առախձանի համանկատ
ման. այլ հարկ է քեզ, զի երբեմն
սակս սկզբնականի ապականութեն՝
առ ստորնագոյնս իջանիցես. և
բարձցես զբեռն ապականացուի
այսորիկ կենցաղոյս, թէև ակամայ,
և ընդ ձանձրութեան: Ց'որքան
ժամանակ զմահկանացուդ այդ մար
մին 'ի քեզ կրես, զգասցես զձանձ
րութիւն, և զծանրութիւն սրտի:
Պա՛րտ է ուրեմն բազմիցս 'ի մարմ
նի գոլով, սգալ զբեռն մարմնոյ.
զի ոչ կարես անդադարապէս ներ
յենուլ 'ի հոգեկան կրթութիւնս,
և յա̃ծային համանկատմունս:

2. Այժմ վայելուչ է քեզ համա
դիմել առ խոնարհս, և առ արտա
քին գործս, և սփոփել զքեզ 'ի
յաւուս բարիս. սպասել հաստա
տով յուսով իմում գալստեան և
վերնոյ այցելութե̃. և համբերա
բար տանիլ քում պանդխտութե̃,
և ցամաքութե̃ մտաց քոց, մինչև
վերստին այցարարից քեզ, և ազա
տեսցից զքեզ 'ի բնաւից անձկութե̃ց:
Քանզի տաց քեզ մոռանալ զաշխա
տանս, և ներքնայնով անդորրու
թե̃ զմայլիլ: Տարածեցից առաջի
քոյ զանդաստանս գրոց սրբոց, զի

այ

լայնացելով սրտիւ սկսանիցիս ըն
թանալ զճանապարհս պատուիրա
նաց իմոց։ Եւ ասիցես. * Ո՛չ են Հռոմ
համարժանիք չարչարանք այսորիկ 8 . 18
ժամանակի, հանդերձելոցն փա
ռաց, որք յայտնեսցին 'ի մեզ։

Գլուխ ԾԲ։

Թէ ո՛րչափ համարիցի զինքն արժանի
մխիթարութեան, այլ յաւէտ պարտ
ծաղարք գանից։

1. ՏԷ՛Ր, ոչ եմ արժանի
քում մխիթարութե՛, և
ոչ հոգեկանի իմիք այցելութեան.
վասն որոյ՝ արդարապէս առնես ընդ
իս, մինչ զիս՝ տնանկ, և զանտէ
րունչ 'ի բացթողուս։ Քանզի՝ թէ
և հանդոյն ծովու զարտասուս հե
ղուլ կարիցեմ, տակաւին քում
մխիթարութեան ոչ եմ արժանի։
Ուստի՝ ոչ իմիք արժանի եմ, ե
թէ ոչ ճաղու, և պատժոյ. զի
ծանրապէս, և բազմիցս վշտացու
ցի զքեզ, և ըն բազումս կարի յան
ցեայ։ Ուրեմն՝ ըստ ճշմարտի խոկ
ման բանի, և ոչ փոքրագունեղի
իմիք արժանի եմ մխիթարութե։
Բայց՝ դու բարեգութ, և ողոր
մած

մած ծծ, որ ոչ կամիս զկորուստ
Հռոմ * ստեղծուածոց քոց, առ՚ի ցուցա
9. 23 նել զճոխութիւն բարութեան
քոյ յանօթս ողորմութեան, և
առանց սեփականի իմիք արդեան,
մխիթարես զծառայ քո ՚ի վեր քան
զեղանակ մարդկային: Քանզի՝
քոյք սփոփութիւնք, ոչ են իբրև
զառասպելաբանութիւնս մարդկայ
ինս:

2. Զի՞նչ բարւոյ գործեցի, տէր իմ, զի շնորհեսցես ինձ զմխիթարութիւն ինչ երկնային: Ես ոչինչ կերպիւ ենթադրեալ զիս, թէ զբարի ինչ գործեալ իցեմ. այլ թէ՝ միշտ ՚ի մոլութիւնս յօժար լեալ իցեմ, և ՚ի Ճշնչումն նոցին յոյլ եղեալ իցեմ: Ճշմարիտ է, զի ոչ կարեմ ՚ի բացուրանալ: Եթէ բացասէի զնոյնն, ընդդիմամարտէիր դու ընդ իս, և ոչոք կարէր ջատագովել զիս: Արդ՝ զինչ արդիւնաւորեցայ վասն մեղաց իմոց, եթէ ոչ զդժոխս, և զհուրն յաւիտենականն: Ճշմարտութ̄բ խոստովանիմ, զի արժանի եմ համայնից կատականաց՝ և քամահանաց, և ոչ է վայել, թէ համայնիշխիցիմ ՚ի մէջ քոյոց պաշտօնէից: Եւ թէպէտ զայս դառն է
ինձ

ինձ լսել. սակայն ընդդէմ ինձ ին
քեան, սակս ճշմարտութեան՝ յան
դիմանեմ զմեղս իմ, զի դիւրաւ
արդիւնաւորեցից զողորմութիւն
քո առատանալ:

3. Զի՞նչ ասացից պատճա
պարտս, և լցեցեալս համայնիւք
պատկառանօք: Ո՛չ ունիմ զբե
րան խօսելոյ զայլ ինչ բան, բաց
յայսմանէ: Մեղայ, Տէ՛ր՝ մեղայ.
ողորմեա՛ց ինձ, և ներեա՛ ինձ:
Թո՛ղ* տուր ինձ սակաւ ինչ, զի Յոբ 10. 20
ողբացայց զցաւ իմ, յառաջ քան
թէ երթայցեմ յերկիր խաւարայ
ին, և ծածկեցեալ միգաւ մահու:
Զի՞նչ այնքան՝ յամէտ պահանջես
'ի պատժապարտէ, և 'ի թշուառա
ցելոյ իմմէքէ մեղաւորէ, եթէ ոչ՝
զի ապաշաւեսցէ, և խոնարհեսցի
սակս յանցանաց իւրոց: 'Ի ճշմար
տէ ապաշաւեմանէ, և 'ի խոնարհ
մանէ սրտի, ծնանի յոյս թողուէ.
հաշտեցուցանի աղմկեցեալն ըստ
գիտութիւն. վերյօրինի կորուսե
ցեալն շնորհ. պաշտպանի մարդ
յապառնուոյ բարկութենէ. և հան
դիպին միմեանց փոփոխակի, ամ՛
և ապաշխարողն հոգի, 'ի համբոյր
սրբութեան:

4. Խոնարհ ապաշաւումն մեղաւորաց, քեզ՝ Տէր, է պատարագ ընդունելի, որ առաւել բուրէ զանուշահոտութիւն իւր առաջի քո
Ղուկ. 7. 38 քան զտաշխ՝ և խունկն: * Այս է և օծանելին այն ազնիւ, զոր ոտից քոց սրբազանից ներհեղանիլ
Սաղմ. 50. 19 կամեցար. *զի զսիրտ փղձկեալ՝ և խոնարհ, ոչ երբեք արհամարհեցեր: Այն է տեղի ապաւինի յերեսաց բարկութեան թշնամւոյն: Անդ զսպի՝ և լուանի, որ ինչ այլուստ քարշի՝ և աղտեղանայ:

Գլուխ ԾԶ:

Թէ շնորհն Աստուծոյ ոչ խառնի ընդ երկրաւորս:

1. Որդեակ՝ ազնիւ է շնորհն իմ, և ոչ կարէ տալ, զի խառնիցի ընդ իրաց արտաքնոց, կամ մխիթարութեանց երկրայնոց: Պարտ է քեզ ուրեմն 'ի բաց ձգել զբնաւ արգելմունս շնորհի, եթէ բաղձաս զնոցին զեղումն վեր ընդունիլ: Խնդրեա՛ քեզ զառանձնութիւն, բնակեա՛ միայնակ ընդ քեզ, մի՛ յուզեր զառասպելաբանութի ուրուք. այլ մանաւանդ հեղ առա

ջի Աստուծոյ զմաղթանս քոյս ջեր-
մեռանդս, զի պահիցես զմիտ քո
խղճահար, և զզգաստութիւն քո
մաքուր: Առ ոչինչ վարկեա՛ զբո-
լոր աշխարհ. զկոչումն ձայնին
ընաւից իրաց արտաքնոց նախա-
դրեա՛: Քանզի՛ ոչ կարես պարա-
պիլ 'ի յիս, և միանգամայն իրօք
անցաւորօք զուարճանալ: Պա՛րտ
է քեզ 'ի ծանօթից, և 'ի սիրելեաց
հեռանալ, և 'ի ընաւից ժամանա-
կա՛կանաց մխիթարութեց զմիտս դա-
տարկել: Այսպէս աղերսէ սուրբ
առաքեալն Պետրոս, թէ համայնք
հաւատարիմք Քն * իբրև զնժ- 1 Պետ
դեհս՝ և զպանդուխտս ունիցին 2. 11
զինքեանս յայսմիկ աշխարհի:

2. Ո՛ թէ՝ որքան համարձակու-
թի եղիցի առն, որ մերձ է 'ի մեռա-
նիլ, զոր ոչ իմէք իրի իղձ արգելու
յաշխարհի: Այլ զունիլն այսպէս
զսիրտ իւր մեկնեցեալ յամենից
իրաց ոչ իմանայ տակաւին տկա-
րամիտ ոք, և ոչ շնչաւոր ոք ճանա-
չէ զներքնոյն մարդոյ զազատութի:
Բայց սակայն՝ եթէ արդարև կա-
միցի ոք լինել հոգևոր, պարտի ու-
րանալ զհեռաւորս՝ և զմերձա-
ւորս. և յոչումեքէ այնքան զգուշա-
նալ

նալ, որքան յինքենէ: Եթէ զինքդ
կատարելապէս յաղթահարիցես,
զմնացեալսն դիւրաւ ենթարկես
ցես: Կատարեալ յաղթութիւն
է, զինքենէ հրճուանակել: Վասնզի՝
որ զինքն հպատակեցեալ ունի ին
քեան, զի զգայութիւնն բանակա
նութեան իւրում, և բանականու
թիւն ընդ ինձ հնազանդիցի,
նա ճշմարիտ յաղթօղ է ինքեան,
և տէր աշխարհի:

3. Եթէ առ այս ծայրութիւն վե
րանալ տենչաս, պարտ է քեզ քա
ջապէս սկսանիլ, և զտապարն առ
արմին դնել, զի խլիցես, և հատա
նիցես զծածուկ, և զանկարգ ներ
միտմունս՝ ի քեզ, և առ ամ՛ մախից՝
և նիւթաւոր բարի: Յայսմանէ
մոլութենէ, որով ոք զանձն իւր կա
րի անկարգապէս սիրէ, կախի գր
նեա՛ բնաւն, որ յաղթահարելի է
արմատաբար. զայսպիսի չարն ե
թէ յաղթահարիցեմք՝ և ստորա՛ն
կիցեմք, եղիցի խաղաղութի՛ մեծ,
և անդորրութիւն յարամնայ:
Բայց՝ զի սակաւք են, որք ինքեանց
կատարելապէս մեռանիլ ջանան,
կամ ձկտիլ արտաքոյ ինքեանց, վա՛
որոյ՝ մնան պարուրեցեալք ՚ի յին
քեանս

Ընկա՛լ զիս 'ի գովութիւն, և 'ի փառս անուան քոյ, որ զմարմին քո՝ և զարիւն, 'ի կերակուր, և յըմպելի ինձ պատրաստեցեր։ Շնորհեա՛ Տէր Աստուած իմ, և կեցուցիչ իմ, զի յաճախելով առ քոյդ խորհուրդ, աճիցէ ինձ ջերմեռանդութեան իմոյ։

Գլուխ Է։

Յաղագս արժանաւորութեան սրբազնութեան, և կացութեան քահանայականի։

ԶԱՅՆ ՍԻՐԵՑԵ ԼՌՅՆ։

1. Եթէ ունէիր զհրեշտակական մաքրութիւն, և երանելւոյն Յովհաննու մկրտչի ըզսրբութիւնն․ ոչ էիր տակաւին արժանի առ 'ի ընդունիլ, կամ առձեռնել զայս սրբազնութիւն։ Քանզի ոչ է ը̅ երախտեաց մարդկան, թէ ոք սրբազնագործիցէ, կամ շօշափիցէ զսրբազնութիւնն քո, և ճաշակիցէ զհացն հրեշտակաց։ Մեծ է խորհուրդն, և մեծ է

է արժանաւորութիւն քահանայական. որոց տրեցեալ է այն, որ ոչ է շնորհեցեալ հրեշտակաց։ Ոչ միմիայն քահանայք՝ օրինակս յեկեղեցւոջ ձեռնադրեցեալք, այնին զկարողութիւն պատարագելոյ՝ և սրբագնագործելոյ զՄարմինն Քի։ Թէպէտ քահանայն պաշտօնեայ ԱՅ է, որ 'ի կիրարկանէ զբանն այ, 'ի ձեռն հրամանաց՝ և սահմանադրութեանն այ. սակայն ած է անդ առաջին հեղինակ, և անտեսանելի ներգործիչ, որոյ 'ի ներքոյ գոյ ամ ինչ՝ զոր կամի, և լինի ամ ինչ՝ զոր հրամայէ։

2. Առաւել ուրեմն հաւատալ պարտիս այ ամենակարողի, նայս միկ գերազանցագունեղի սրբագնութեան, քան թէ քումսեպհականի զգայութեան, կամ այլում իմեք նշանի երևելւոյ։ Ուստի հանդերձ երկիւղիւ, և պատկառանօք պարտ է մերձենալ առ այս գործ։ Զգոյշ լե՛ր 'ի քեզ, և տես՝ թէ որպիսի պաշտօն աւանդեցեալ իցէ քեզ ձեռնադրութեամբ եպիսկոպոսին, որ ասէ։ Ահաւասիկ՝ եղեր քահանայ, և սրբագնագործեցար առ 'ի պատարագել. տես այժմ, թէ

'ի տունս իւրեանց, զի մի՛ նքտիցին 'ի ճանապարհի: Արա՛ ուրեմն ըն այնմ և ընդ իս, որ զքեզ սակս մխիթարութեան հաւատացելոց թողեր ըն սրբազնութեն: Զի դու ես քաղցր զովացումն հոգւոց. և որ զքեզ արժանապէս ճաշակէ, լինի մասնակից, և ժառանգորդ յաւիտենականաց փառաց: Եւ իրաւի հարկաւոր է ինձ, որ այնքան բազմիցս սահիմ, և մեղանչեմ. այնքան ընդարմանամ, և նուաղիմ. զի 'ի ձեռն յաճախից աղօթից, և խոստովանութեանց, և 'ի ձեռն վերընդունման սրբազանի Մարմնոյ քոյ, վերանորոգիցեմ զիս, մաքրիցեմ, և բորբոքիցեմ. մի՛ գուցէ զբաղումս ժամանակս 'ի բացկալով, 'ի սուրբ յառաջադրութենէս անկանիցիմ:

Ծննդ 3. * Քանզի մեղկք են զգայու-
8. 21 թիւնք մարդկան առ չարն 'ի մանկութենէ իւրեանց. և եթէ ո՛չ հասանիցէ 'ի յօգնութեն ածային ըսպեղանին, վաղվաղակի սահի մարդ 'ի չարագոյնս: 'Ի բացքարշէ ուրեմն զմարդիկ 'ի չարէն հաղորդութիւնն սրբազան. և հաստատէ զնոսա 'ի բարին: Քանզի՝ եթէ այժմ

այսքան յոյլ, և յամր եմ, մինչ հա-
ղորդիմ, կամ պատրաստեմ· զի՞նչ
եղիցի յայնժամ, մինչ զգեղ ինչ
ոչ ընդունիցիմ, և ոչ խնդրիցեմ
զայսքան մեծ օգնութիւն։ Եւ
թէպէտ ոչ եմ ընդունակ յամենայ-
նում ամուր, և ոչ բարեպէս տրա-
մադրեցեալ 'ի պատրաստել· սա-
կայն տարայց զփոյթ ընդ պատեհ
ժամանակս, առ'ի ընդունել զած-
ային խորհուրդ, և առ'ի առնել
զիս մասնակից այսքանում շնորհի։
Վ՟զի այս է մանաւանդական իմն
մխիթարութիւն հոգեաց հաւա-
տացելոց, ընդ որքան ժամանակ
պանդխտին նոյամիկ մեռելոտւոյ
մարմնում, զի բազմիցս կար յիշա-
տակ այն իւրոյ, մտօք ջերմեռանդ
դիւք վերընդունիցի զբաղձալին
իւր։

4 — Ո՛ սքանչանալի քոյդ առաքի-
նութիւն 'ի դէմս մերս արժանաւո-
րութիւն, որ դու՝ Տէր իմ, և Ա՟Ծ
իմ, ստեղծօղ, և այցելու ամենից
հոգեաց, առ աղքատիկ հոգի իմ
գալ արժան համարիս, և բոլորիւ
քոյով Աստուածութեամբդ, և
Մարդկութեամբդ պարարտացուցա-
նել զախորժակ նորին։ Երջանիկ
է

է միտն, և երանեցեալ է հոգին,
որ զքեզ Տէր՝ և ա͞ծդ արդիւնաւ-
որք ջերմեռանդապէս վերընդու-
նիլ, և՛ի վերընդունիլն զքեզ հո-
գեկանաւ ընանիլ խնդութ͞ե։
Ո՞րթէ՝ որքան մեծ է Տէր, զոր ըն-
դունի, որքան բաղձալի է, զոր
ածէ 'ի յօթևան իւր, որքան վայե-
լուչ է, զոր ընդունի յընկերակ ցու-
թիւն, որքան հաճատարիմ է՝ զոր
ընդունի 'ի սիրելութի, և որքան
գեղեցիկ է, և պատուական փե-
սայն, զորով փարի, և առաւել
քան զընաւ սիրելիս, և է սիրե-
լի 'ի վերքան զընաւ ցանկալիս։
Լուեսցեն առաջի երեսաց քոց (ով
նազելի իմ քաղցրագունեղ) եր-
կին, և երկիր, և ա͞մ զարդ նո-
ցա. քանզի զոր ինչ ունին գովելի,
և վայելուչ, են յարժանաւորմա-
նէ քոյոյ ծնխութեան, և ոչ եր-
բեք ժամանեսցեն 'ի վայելչութի
քոյոյ անուճան, որոյ իմաստու-
թեանն ոչ գոյ թիւ։

Գլուխ

Գլուխ Դ:

Թէ բազում բարիք պարգեւեսցին ջերմեռանդապէս հաղորդեցելոց:

ՁԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԻ:

1. Տէ՛ր իմ, և Աստուած իմ, *ժամանեա՛ քում ծառայի Սաղմ. 20. 4
օրհնութե՟ քաղցրութեան քո, զի առ քոյդ մեծայարգու սրբազնութիւն արժանապէս, և ջերմեռանդապէս արդիւնաւորեցի՛մ առ մատչիլ: Զարթո՛ զսիրտ իմ առ քեզ, և մերկացո՛ զիս 'ի ծանրութենէ այսորիկ մարմնոյ: *Այցելեա՛ ինձ Սաղմ.
'ի փրկութեան քում, առ 'ի ճաշակել 105. 4
հոգւով զքաղցրութիւն քո, որ նայսմիկ սրբազնութեան, իբր ըն յաղբեր՝ լիապէս ծածկի:
*Լուսաւորեա՛ և զաչս իմ, առ 'ի Սաղմ.
տեսանել զխորհուրդս այս մեծ. 12. 4
և կարողացո՛ զիս՝ առ 'ի հաւատալ զնոյնն աներկբայից հաւատով: Քանզի ո՛չ է կարողութիւն մարդկան քոյդ գործառնութի, և ո՛չ է մտացածին մարդկան քոյդ սահմանադրութիւն: Ուստի՝ առ 'ի իմանալ, և ըմբռնել զայս, ո՛չ ոք յիւքենէ զօրանի ընդունակ, զի գերա-

զանց

զանցէ ես զհրեշտակային նորա-
թն: Զի՞նչ ուրեմն ես մեղաւորս,
և անարժանս, հողս՝ և մոխիրս,
կարեմ զայսքան վեհագոյն սրբազ-
նութիւն հետազօտել, և իմանալ:

2. Տէ՛ր իմ, մաքրութե՛ք սրտի
իմոյ, բարեաւ՝ և հաստատնով հաւ-
ատով, քոյով իսկ հրամանաւ, հան-
դերձ յուսով, և պատկառանօք
առ քեզ մերձենամ. և ճշմարտապէս
հաւատամ, զի դու ներկայ ես
յայսմիկ սրբազնութեան՝ Աստուած,
և Մարդ: Կամիս ուրեմն՝ զի վեր
ընդունիցիմ զքեզ, և զիս սիրով
միաւորիցեմ ընդ քեզ: Ուստի
աղաչեմ զքոյդ բարեգթութիւն,
և մաղթեմ, շնորհել ինձ զտեսա-
կանօր իմն շնորհ առ այս, զի բոլո-
րապէս 'ի քեզ հալեցեալ սիրով
քով զեղանիցիմ, և զոչինչ յօտա-
րայնոյ մխիթարութենէ զփոյթ ու-
նիցիմ: Քանզի այս բարձրագոյ-
նեղ, և ամենարժան սրբազնութիս,
է կեցութիւն հոգւոյ, և մարմնոյ,
սպեղանի բնաւից հոգեկանաց հիւ-
անդութեանց. որով մոլութիւնք
իմ փարատին, ախտք սանձահարին,
փորձութիւնք յաղթահարին, կամ
նուաղին. հեղանի մեծագոյն շնորհ-
առաւ.

առատանայ սկսեցեալն առաքինու
թիւն, հաստի համառն, հաստա
տի յոյսն, և բորբոքեցեալ սարա
ծի սէրն:

3. Քանզի զբազումս շնորհեալ
ես բարութիւնս, և տակաւին ըզ
բազումս շնորհես 'ի ձեռն սրբազ
նութեան, քոյոց սկսելեաց ջերմե
ռանդապէս հաղորդողաց, Ա՛Ծ
իմ, ընդունող հոգւոյ իմոյ, փառա
ւորիչ հիւանդութե՛ մարմնոյս,
և շնորհօղ ամ՟ մշտնջենաւորի մխի
թարութեան: Զի զբազումս մխի
թարութիւնս ներհեղուս 'ի նուաս
տղեմ զանազանից նեղութեանց,
և 'ի խորոյ յատկական ըստորանկ
ման նոցին վերածես 'ի յոյս. քոյոց
նախախնամութե՛, իսկ և նորով իւ
իք շնորհիւ ներքսապէս զուարթա
ցուցանես զնս, և լուսաւորես. զի
որք տագնապեցեալք 'ի նախնումն,
և յառաջ քանզ հաղորդութիւնն
թարց ըղձի խմբք զինքեանս զգայ
ին. զնի զուարթացեալք կերա
կրով, և ըմպելեաւ երկնայնով,
փոխարկեցեալս 'ի բարեգոյնն գը
տանիցեն զինքեանս: Եւ մն այ
նորին առատաձրապէս վարիս ը՟
ընտրեցելոց քոց, զի ճշմարտապէս

ձա,

ծանուցիցեն, և յայտնապէս ներ-
հմտանայցեն, թէ զորքան ակարու-
թիւնս ունիցիմ ինքնին, և թէ՝
զորքան բարիս, և շնորհս վերըն-
դունիցիմ 'ի քէն: Քանզի 'ի յին-
քեանց, ցուրտք, խիստք, և անա-
ռաքինիք. իսկ 'ի քէն, ջերմե-
ռանդք, զուարթք, և առաքինիք
արդիւնաւորին լինիլ: Զի ո՞վ է,
որ մերձենայ խոնարհաբար առ աղ-
բիւրն քաղցրութեան, և ոչ վերըն-
դունի անտուստ զսակաւինչ քաղց-
րութիւն: Կամ ո՞վ է՝ որ կայ մերձ
առատ հրոյն, և ոչ զգայ անտուստ
զսակաւինչ ջերմութի: Եւ դու
աղբիւր ես, ամենալի, և ամենա-
ռատ. հուր յաւէժաբար բորբոքե-
ցեալ, և անսպառ:

4. Ուստի՝ եթէ ոչ է ինձ ճահ,
յուզել 'ի լրութենէ աղբերն, և
ոչ ըմբանել մինչև ց'յագեցութիւն
արբել. եդից սակայն զբերան
իմ 'ի յական երկնայնոյն ծորակի.
զի փարթամ անտուստ զկաթիլ
իմն փոքրիկ ընդունիցիմ, առ 'ի զո-
վացուցանել զծարաւութիւն իմ,
և մի իսպառ տոչորիցիմ: Եւ եթէ
ոչ բոլորովիմբ երկնային, կամ
այնքան հրացեալ, մինչ զի Սերո-
բէ

բէ, և Քերոբէ գոլ կարիցեմ. ջա-
նացից սակայն ջերմեռանդութեն
պարապիլ, և նախապատրաստել
զսիրտ իմ, զի գտնեալ գոյնինչ՝ ած
այնոյ լուցման զբոցն, հեզակա-
նաւ ընդունմամբ կենարարի սրբ-
բաղձութեանն համաստանայցեմ:
Բայց որինչ պակասի ինձ, ով բա-
րի Յս̃, և Փրկիչ ամենասուրբ,
լրացո դու փոխանակ իմ գթածա-
պէս, և վայելչապէս. որ զամենե-
սեան արժանիս համարեցար կո-
չել առ քեզ՝ ասելով: * Եկայք Մաթ
առ իս ամենեքեան աշխատեցեալք՝ 11. 28
և բեռնեցեալք, և ես հանգուցից
զձեզ:

5. Ես թերևս աշխատիմ քրր-
տամբք երեսաց իմոց, տագնա-
պիմ ցաւօք սրտի իմոյ, ծանրանամ
մեղօք, վշտագնիմ փորձութ̃ք,
այլովք բազմօք տգեղիւք ախ-
տիւք պատաղիմ, և վարանիմ. և
ոչ է այլոք՝ որ օգնիցէ. * ոչ ոք է, Սաղմ
որ փրկիցէ. և ոչոք, որ ապրեցու- 7. 2
ցանիցէ, բաց 'ի քէն՝ Տէր Ած̃
իմ, և Փրկիչ իմ. առ որ յանձ-
նեմ զիս, և զիմայինս համայնս, զի
պաշտպանիցես զիս, և վերածի-
ցես 'ի կեանս յաւիտենականս:

Ըն

է արժանաւորութիւն քահանայական. որոց տրեցեալ է այն, որ ոչ է շնորհեցեալ հրեշտակաց։ Վասնզի միայն քահանայք՝ օրինապէս յեկեղեցւոջ ձեռնադրեցեալք, ունին զկարողութիւն պատարագելոյ՝ և սրբագործելոյ զՄարմինն Քի։ Թէպէտ քահանայն պաշտօնեայ Այ է, որ 'ի կիրարկանէ զբանն Այ, 'ի ձեռն հրամանաց՝ և սահմանադրութեանն Այ. սակայն ած է անդ առաջին հեղինակ, և անտեսանելի ներգործիչ, որոյ 'ի ներքոյ գոյ ամ ինչ՝ զոր կամի, և լինի ամ ինչ՝ զոր հրամայէ։

2. Առաւել ուրեմն հաւատալ պարտիս Այ ամենակարողի, նայել միկ գերազանցագունեղի սրբազնութեան, քան թէ քում սեպհականի զգայութեան, կամ այլում իմեք նշանի երևելւոյ։ Ուստի հանդերձ երկիւղիւ, և պատկառանօք պարտ է մերձենալ առ այս գործ։ Զգոյշ լե՛ր 'ի քեզ, և տես՝ թէ որպիսի պաշտօն աւանդեցեալ իցէ քեզ ձեռնադրութեամբ եպիսկոպոսին, որ ասէ։ Ահաւասիկ՝ եղեր քահանայ, և սրբագործեցար առ 'ի պատարագել. տես այժմ, թէ

թէ որպ̃ հաւատարմաբար՝ և ջեր-
մեռանդապէս 'ի ժամանակի խռ-
րում պայծառ իցես մատուցանել ա̃յ
զպատարագ, և ցուցանել զքեզ
անբասիր: Ո՛չ թեթեւացուցեր
զբեռն քո, այլ 'ի ներքոյ ծանրա-
գունի լծոյ կրթութեան կապե-
ցեր զքեզ, վ̃ն որոյ պիտոյ է քեզ
կատարելագոյն սրբութիւն:
Պա՛րտ է քահանային բնաւիւք զօ-
րութե̃ք զարդարիլ, և այլոց բա-
րի կենացն զօրինակ ընծեռել:
Նորին կենցաղավարութիւնն ո՛չ
ընդ աշխարհական, և ընդ հասա-
րակ ճանապարհս արանց լիցի,
այլ ընդ հրեշտակաց երկնից՝ կամ,
ընդ կատարելոց արանց 'ի յերկրի:

3. Քահանայն սրբազանիւք զար-
դուք զգեցեալ, է փոխանորդ ք̃ի,
զի զա̃ծ սակս իւր՝ և սակս համայ-
նի ժողովրդեանն հեզապէս, և խո-
նարհապէս աղերսիցէ: Ունի յետ-
կոյս, և յառաջկոյս զնշան տէրու-
նական խաչին, 'ի յիշատակ յաւէ-
ժական չարչարանացն Ք̃ի: Յա-
ռաջկոյսն շուրջառին կրէ զնշան
խաչին, զի զշաւիղն ք̃ի զգուշա-
պէս նշմարիցէ, և ջանայցէ ջերմա-
պէս նմին հետեւիլ: Յետկոյս նո-

րին

րին խաչին նշանեցեալ է, զի զիւ-
րաքանչիւր ը̃դդիմադարձութիւնս
ներբերեցեալս յայլուստ, հեզա-
բար վ̃ն ա̃յ բառնայցէ։ Առաջին
իւր տանի զխաչն, զի լայցէ զմեղս
սեփականս. և յետոյ իւր տանի
զնոյնն, զի զայլոց ևս յանցանս ցաւ-
ակցաբար ողբայցէ, և զինքն գոլ
միջնորդ 'ի մէջ Աստուծոյ, և մարդ-
կան գիտայցէ հաստատեցեալ, և
մի յապաղեցի 'ի մատուցանելոյ
զաղօթս, մինչև զշնորհս՝ և զողոր-
մութիւնս արժանաւորեսցի առըս-
տանալ։ Մինչ քահանայն մատու-
ցանէ զպատարագ, պատուէ զԱս-
տուած, ուրախացուցանէ զհրեշ-
տակս, վերաշինէ զեկեղեցին, օգ-
նէ կենդանեաց, շնորհէ մեռելոց
զհանգիստ, և զինքն ամենից բա-
րեաց առնէ մասնակից։

Գլուխ Է։

Հարցումն ներկրթութեան յառաջ քան զհաղորդութիւնն։

ՁԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԻ։

1. Ո՛ր ինչ զքոյդ արժանաւորութիւն՝ Տէր իմ, և զիմս նուաստութիւն ՚ի միտ ածեմ, կարի դողահարիմ, և պատկառիմ։ Քանզի՝ եթէ ոչ մատչիմ առ քեզ, փախչիմ ՚ի կենաց. իսկ՝ եթէ վարիմ անարժանապէս, ներընթանամ ՚ի յանցանս։ Զի՞նչ ուրեմն արարից, ով Ած իմ, օգնական իմ, և ուղղիչ իմ։

2. Դու ուսո՛ ինձ զճանապարհս ուղիղս. առաջադրեա՛ ինձ զհամառօտ ինչ կրթութիւն, պատեհ առ սրբազան հաղորդութիւնն։ Քանզի օգտակա՛ր է գիտել, թէ ո՞րպ ջերմեռանդաբար, և պատկառօրէն պա՛րտ իցէ ինձ նախապատրաստել քեզ զսիրտ իմ, առ՚ի ընդունիլ առողջատրաբար զքոյդ սրբազնութիւն, կամ առ՚ի հռչակել զայսքան մեծ, և զԱծային սրբազնագործութիւն։

Գլուխ Է։

Յաղագս քննման յափշտականի խղճի մտաց, և զղջման յառաջադրութեան Ընկան ։

ԶԱՅՆ ՍԻՐԵՑԵ ԼՈՅՆ։

1. Ի՛վեր քան զամ ինչ՝ հանգերձ ծայրագունիւ խոնարհութեամբ սրտի, և մեծաւ երկրպագութեամբ՝ լիով հաւատով, և բարեպաշտիւ դիտաւորութեամբ պատուոյն Այ, պարտ է քահանային Այ մատչիլ, առ՚ի հաղորդել՝ առ՚ի շօշափել, և առ՚ի ճաշակել զայսորբազնութիւն։ Զգուշապէս զքննեա՛ զխիղճ մտաց քոց՝ և ըստ կարողութեան քում, ճշմարտիւ ապաշխարութեամբ, և խոնարհիւ խոստովանութեամբ, մաքրեա՛ զնա՝ և պայծառացո՛. մինչզի մի՛ ունիցիս զծանրութիւն ինչ, կամ զգայցես՝ որ զքեզ համախայթիցէ, և զազատ մատչումն քո առ այն արգելուցու։ Ըստացի՛ր զանհաճոյութիւն ընաւից քոյոց մեղաց հասարակօրէն, և յաղագս հանապազորդականաց անցմանց քոց՝ առաւել յատկապէս ցաւեաց՝ և ողբա՛։ Եւ եթէ

ունիցիս զժամանակ, նաւանձնու
թե՛ սրտի քոյ զբնաւ թշուառու
թիս ախտից քոց խոստովանեաց
Աստուծոյ։
2. Հեծեա՛, և ցաւեա՛ց՝ որ դեռ
ևս այդքան մարմնաւոր իցես, և
աշխարհասէր. այդքան անմեռ ՚ի
յախտից. այդքան լի չարժութ՟բ
ցանկութեանց. այդքան անպաշտ
պան ՚ի զգայութիւնս արտաքինս.
այդքան յանձնի՛ս ՚ի բազում մնո
տիս ցնորմունս պատաղեցեալ.
այդքան յաճէտ հակամիտեցեալ
առ արտաքինս. այդքան անհոգ
առ ներքնայինս. այդքան դիւր ՚ի
ծիծաղիլ՝ և ՚ի լրբանալ. այդքան
կարծր առ ՚ի ողբալ՝ և առ ՚ի զղջ
ջալ. այդքան յօժար ՚ի յընդարձա
կութիւն, և ՚ի հեշտութիւն մարմ
նական. այդքան յամր առ ՚ի արի
ութիւն, և ՚ի ջերմեռանդութիւն.
այդքան հոգունակ առ ՚ի լսել զնո
րադոյնս, և առ ՚ի տեսանել զգե
ղեցիկս. այդքան վայրահակ առ ՚ի
խոնարհս, և առ ՚ի փարիլ զխոտե
լեօք. այդքան ցանկացող առ ՚ի
ստանալ զբազումս. այդքան ժը
լատ առ ՚ի շնորհել. այդքան պինդ
առ ՚ի պահել. այդքան անզգոյշ
առ

առ'ի խօսիլ. այդքան անժուժկալ
առ'ի լսել. այդքան անպատեհ 'ի
կենցաղավարութիս. այդքան չա
րաճըճիկ 'ի գործառնութիւնս.
այդքան ագահ 'ի վերայ կերակրոց.
այդքան խուլ առ'ի լսել զբանն
այ̃. այդքան արագ 'ի հանգստու
թիս. այդքան պղերգ 'ի յաշխա
տանս. այդքան զուարթ 'ի յա
ռաւելաբանութիւնս. այդքան
քնած 'ի հսկմունս սրբազանս.
այդքան արագ առ վախճանն. այդ
քան ցնդեցեալ 'ի յունկնդրու
թիւն. այդքան ըստունկանող 'ի
վճարել զժամս. այդքան յոյլ 'ի
պատարագել. այդքան կարճ 'ի
հաղորդութեան. այդքան վաղ
վաղ 'ի զբաղմունս. այդքան յամր
'ի ժողովուածս քոյոց մտաց. այդքան
արագ 'ի բարկութիւն. այդքան
դիւրին առ'ի ոչ հաճոյանալ այլոց.
այդքան պատրաստ առ'ի դատել.
այդքան խիստ առ'ի յանդիմանել.
այդքան ուրախ 'ի յաջողութեան.
այդքան տկար յընդդիմադարձու
թեան. այդքան յաճէտ զբարիս
յառաջադրես, և սակայն զդոյն
ինչ ներգործութի̃ յառաջածես:

3. Զայսոսիկ, և զայլ պակասու
թիւնս

թիւնս սոցին նմանս սեպհականի քոյոյ ակարութեան՝ ցաւօք, և մեծաւ անհամձայնութեամբ խոստովանելով, և ողբալով, կայացո՛ քեզ զհաստատուն յաւաջադրութիւն զսպելոյ միշտ զվարս քոյս, և յառաջանալոյ առ բարեգոյնս։

Զկնի որոյ՝ համդերձ լիով յանձն առութեամբ, և ամբողջիւ կամաւ՝ մատո՛ զքեզ 'ի պատիւ անուան իմոյ, 'ի վերայ սեղանոյ սրտի քոյ ողջակէզ մշտնջենաւոր, այսինքն՝ զհոգի, և զմարմին քո հաւատարմաբար ինձ յանձնելով։ և այսպէս՝ արդիւնաւորեսցիս մատչիլ առ 'ի մատուցանել այդ զպատարագ, և զընդունելութիւն մարմնոյ իմոյ աւողջատրաբար վերընդունիլ։

4. Քանզի ո՛չ գոյ մատուցումն այնքան արժանագոյն, և ո՛չ վճարումն այնքան մեծագոյն վն լուծանելոյ զմեղս, որքան է զուտ, և զամբողջ մատուցումն ինքեան ը մատուցման մարմնոյն Քրիստոսի, Հօր ԱՌ մատուցանել 'ի պատարագին, և 'ի հաղորդութեան։ Եթէ առնիցէ մարդ ըստ կարի իւրում, և զղջանայցէ ճշմարտապէս. որքանիցս յաղագս թողութե, և

և շնորհաց առ իս մատչիցի. Կեն-
դանի եմ ես՝ ասէ Տր̅, * որ ո՛չ կա- Եզեկի
միմ զմահ մեղաւորին, * այլ յաւէտ 18 · 23
զդարձումն նորա, և զկեալն. զի և 32:
ո՛չ ևս յիշեցից զմեղս նր̅, այլ նե- և 33·
րեցից նմա զբնաւն: 11

Գլուխ Ը:

Յաղագս Նուիրամանն՝ և պատարագին ՔԻ̅ 'ի խաչին, և հրաժարմանն իւրոյ ինքեան:

ՁԱՅՆ ՍԻՐԵՑԵԼՈՅՆ:

1· Որպէս ես զիս տարածեցեալ ձեռօք 'ի խաչին, և մերկացեալ մարմնով՝ վս̅ մեղաց քոց Հօր ԱՅ կամաւ մատուցի, մինչզի ոչինչ մնաց 'ի յիս, որ ո՛չ վերընծայիւր բոլորապէս 'ի սըրբազնագործութիւն ածայնոյ հաշտութեանն. այսպէս և դու պարտիս զքեզ ինձ կամաւորապէս, 'ի մատուցումն մաքուր՝ և սուրբ, յամենայնում աւուր ընդ պատարագով, համօրէն բնաւիւք զօրութե̃ք, և ըղձիւք քովք, ի̃ քում կարի, վերանուիրել: Զի՞նչ ևս

խնդրեմ 'ի քէն, բաց յայնմանէ. զի
ջանասցես զքեզ ամբողջապէս ինձ
վերյանձնել։ Զոր ինչ նուիրես
ցես ինձ բաց 'ի քէն, ոչ է ինձ
2 Կորն 12. 14 փոյթ. * զի ոչ զտուր քո, այլ
զքեզ խնդրեմ։

2. Եւ որպէս ոչ է քեզ բաւական, թէ զամ ինչ ունիցիս՝ բաց յինէն։ Այսպէս և ոչ հաճոյ դոլ ինձ կարէ, զորինչ տայցես ինձ, բաց 'ի քումմէ մատուցմանէ։ Մատո զքեզ ինձ, և տուր զքեզ բոլոր վասն իմ, և եղիցի մատուցումն ընդունելի։ Ահաւասիկ՝ ես զիս բոլոր վասն քո ընծայեցի Հօր իմոյ. և ետու զբոլոր մարմին իմ, և զարիւն իմ քեզ 'ի կերակուր, զի բոլորովիմբ քոյդ լինիցիմ, և դու 'ի յիս յարամնայցես։ Այլ՝ եթէ կայցես 'ի քեզ, և զքեզ յօժարապէս կամաց իմոց ոչ ընծայիցես, ոչ եղիցի մատուցումն լրացեալ, և ոչ ամբողջ միաւորութիւն 'ի միջի մերում։ Ուրեմն քոյոյ ինքեան կամաւորական մատուցումն 'ի ձեռս իմ, յառաջանալ պարտի զամ գործ քո, եթէ կամիցիս ստանալ զազատութիւն, և զշնորհ։ Զի՝ վն այնորիկ այնքան

սա

սակաւք են, որք ներքսապէս լու-
սաւորին, և ազատանան, զի ոչ կա-
րեն զինքեանս բոլորովին բացու-
րանալ։ Է՛ հաստատ դատակնիքն
իմ. Եթէ ոք ոչ ուրանայցէ զամե-
նայնն, ոչ կարէ իմ աշակերտ լի-
նել։ Ուստի դու եթէ բաղձաս
* գոլ իմ աշակերտ, մատո՛ զքեզ Ղուկ.
ինձ, հանդերձ ամենեքումբք քոյ 14. 26
ովք ըղձիւք։

Գլուխ Ը։

Թէ զինչ և զո՞ր ինչ մեր պարտիցիմք մատուցանել Աստուծոյ, և առնել ամենեցուն աղօթել։

ՁԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԻ։

1. Տէ՛ր իմ, ամ ինչ, որ է 'ի երկինս, և յերկրի, քոյ է։ Ցանկամ զիս կամաւորական պատարագ մատուցանել քեզ, և 'ի քեզ յաւէժաբար յարամնալ։ Տ՟ր իմ, մաքրութե՟ սրտի իմոյ մատուցանեմ զիս քեզ այսօր 'ի ծառայութի մշտնջենական, 'ի պաշտօնատրութիւն, և'ի պատարագ յաւիտենականի գովութե։ Ընկա՛լ զիս ընդ այսմիկ սրբազանի մատուց-

մանն

ման պատուականի քոյոյ մարմնոյ, զոր քեզ այսօր առաջի հրեշտակաց քոց անտեսաբար առկացելոց՝ մատուցանեմ. զի լինիցի ինձ, և բընաւ ժողովրդեանն 'ի կեցութի:

2. Տէր իմ, վերընծայեմ քեզ այսօր զբնաւ մեղս, և զյանցանս իմ, զորս գործեցի առաջի քո, և առաջի հրեշտակաց քոց, յօրէ յորմէ սկսայ մեղանչել քեզ մինչև ցը՛ այսօր, 'ի վերայ հաշտութեան սեղանոյ քո. զի դու զամենայնն միահաղոյն բորբոքիցես, և այրիցես հրով սիրոյ քո, և ջնջիցես զհանուր բիծս մեղաց իմոց, և մաքրիցես զխիղճ մտաց իմոց 'ի բնաւից գթմանց, և վերստին տայցես ինձ զշնորհ քո սբ̄, զոր մեղանչելով կորուսի, ներելով իսկ ինձ լիապէս զամենայնն, և ողջունիւ խաղաղութեան գթածաբար զիս վերընգունելով:

3. Զ՞ինչ կարեմ առնել վասն մեղաց իմոց, եթէ ոչ խոնարհաբար խոստովանելով, և ողբալով զնոյնս, և զքոյդ ներողութի անդադարապէս մաղթելով: Հայցեմ 'ի քէն, անսամ ինձ քաւչաբար, ուր կամ առաջի ճծութեան քո:

Մեղք

Մեղք իմ համայնք կարի անհաճոյք են ինձ, և ոչ կամիմ երբեք գործել զնոյնս կրկին. այլ ցաւիմ վասն նց, և ցաւեցայց որքան կենդանի մնացից, պատրաստ եմ առնել զապաշխարութի, և ըստ կարի իմում վճարել զնոյնս: Թո՛ղ ինձ Տէր, թո՛ղ ինձ զմեղս իմ, վս անուան քո սրբոյ. կեցո՛ զհոգի իմ, զոր պատուականաարեամբ քով ազատեցեր: Ահա՛ յանձնեմ զիս քում ողորմութեան, աւանդեմ զիս 'ի ձեռս քոյս: Արա՛ ընդ իս ըստ բարութեան քում, և ոչ ըստ չարութեան, և անօրէնութեան իմում:

4. Մատուցանեմ քեզ ես զամ բարիս իմ, թէև կարի սակաւք` և անկատարք իցեն. զի դու զնոսա ուղղիցես, և սրբիցես. իբր հաճոյս քեզ ունիցիս, և վերընկալցիս, և միշտ 'ի բարեգոյնս առաջարկիցես. իսկև զիս զծոյլս, և զանօգուտս, առ երանելի, և գովելի վախճանն վերածիցես:

5. Մատուցանեմ քեզ ես զբընաւ առաքինական բաղձանս բարեպաշտից, զկարևորութիս ծնողաց, բարեկամաց, եղբարց` քերց,

և ամենից սիրելեաց իմոց, և բարե րարաց․ և այնոցիկ, որք խնդրե ցին յինէն պատարագել վասն ին քեանց, և վն իւրայնոց․ Թէ կեն դանիք իցեն դեռևս 'ի մարմնի, և Թէ մեռեալք յաշխարհէ․ զի ամե նեքեան զօգնուԹի շնորհաց քոց, զառատուԹիւն ափոփման քոյ, ըղ նախախնամուԹի 'ի վտանգից, զա զատուԹի 'ի պատժոց, գալ յին քեանս առգգայցեն, և 'ի բնաւից չարեաց ազատեցէլք, զմեծագոյն շնորհակալուԹիւնս ուրախուԹբ քեզ ընծայիցեն։

6․ Մատուցանեմ քեզ ևս զմաղ Թանս, և զնուէրս հաշտուԹեան վն այնոցիկ մանաւանդ, որք զիս անպարգեցին, տրտմեցուցին, կամ պարսաւեցին, կամ ետուն ինձ դժնաս ինչ, կամ զնեղուԹի․ այլև վասն այնոցիկ բնաւից, զորս եր բեմն տրտմեցուցի, վրդովեցի, ծանրացուցի, և գայԹակղեցուցի, բանիւք՝ և գործովք, գիտուԹբ՝ և անգիտուԹեամբ․ զի մեզ ամենե ցուն միահաղոյն ներիցես զմեղս, և զյանցանս, որք առ իրեարս։

Բարձ Տէր 'ի սրտից մերոց զամ երկբայուԹի, զպայրացումն, զբար կոս

կութիւն, և զկնճռաբանութիւն, և որ ինչ վնասել կարէ սիրոյ, և նուազեցուցանել զեղբայրական հարազատութի: Ողորմեա՛ց, ողորմեա՛ց՝ տէր, հայցողաց զքոյդ ողորմութիւն, տո՛ւր զշնորհս կարօտելոց. և արա՛ զմեզ այնպէս կենցաղավարիլ, զի արժանի եղիցուք զմայլելոյ քոյով շնորհիւ, և ժամանիցուք կենացն յաւիտենից. Ամէն:

Գլուխ Ժ:

Թէ Սրբազան Հաղորդութեանն վասն դիւրինոյ իրիք ոչ է թողանելի 'ի բաց:

ՁԱՅՆ ՍԻՐԵՑԵԼՈՅՆ:

I. ՍՏԷՊ՝ պա՛րտ է վերադիմել առ աղբիւրն շնորհաց՝ և ծծայնոյ ողորմութե, առ աղբիւրն բարութեան, և համայնի մաքրութեան. զի յախտից քոց և 'ի մոլութեց բուժիլ կարիցես, և ընդդէմ բնաւից փորձութեանց և խաբէութեց սատանայի՝ հզօրագոյն, և հսկողագոյն գոլ արժանաւ.

նաւորիցիս։ Գիտելով Թշնամւոյն զպտուղն, և զպետղանին մեծադոնեղ, որ կայ ըն սրբազանի Հաղորդութե, ամ կերպիւ, և հնարիւ ջանայ զհաւատացեալս, և զառաքինիս, ըստ կարի իւրում 'ի բացքարշել, և արգելուլ։

2. Քանզի ոմանք մինչ պատրաստեն զինքեանս, և տրամադրեն առ սրբազան Հաղորդութիւնն. կրեն զչարագոյն զարհուրածս սատանայի։ Զի ինքն ոգին չարութե (որպէս ընթեռնանի 'ի գիրս Յոբայ) գայ 'ի մէջ որդւոցն այ, զի իւրով սովորականաւ չարութեն վրդովեսցէ զնոսա, կամ երկեցուցանիցէ, և երկբայացուցանիցէ. փոփոխեսցէ զկամս նոցին, կամ ընդդիմամարտելով բարձցէ զհաւատս նոցին. որպէսզի՝ թերևս կամ անենևին թողցեն զհաղորդութիւն, կամ գաղջութեամբ միայն մատչիցեն առ նա։ Բայց ոչ է պարտ՝ ունիլն զփոյթ զխորամանկութենէ նորին, կամ զցնորից, թէև աղտեղեաց՝ և գարշելեաց. այլ վերաշրջել պարտէ զբնաւ ցնորմունս 'ի գլուխ նորա։ Արհամարհելի է ողորմելին այն, և կատաղելի. և ոչ է

է ըմբռն թողուլ զորբազան հաղոր
դութիւնն՝ սակս վերայառման նո
րա, և համաշարժութեանց, զորս
յարուցանէ։

3. Բազմիցս ևս արգելուն զմեզ
զբաղմունք բազումք յառաքինու
թէ, և նեղութիւնք ոմանք 'ի խոս
տովանութենէ։ Արա ուրեմն զի
խորհրդոց իմաստնոց, և հերքեա
'ի բաց զտագնապումն, և զխղճա
հարութիւն. զի այսպիսիքս արգե
լուն զշնորհն այ, և քակեն զառա
քինութիւն մտաց։ Սակս փոքու
երկք վրդովման, կամ ծանրութե,
մի թողուցուս զորբազան հաղոր
դութիւնն. այլ երթ վաղվաղակի
'ի խոստովանութիւն, և ներեա յօ
ժարաբար քոյոց յանցաւորաց։
Իսկ եթէ դու ումեք յանցեալ ի
ցես, խոնարհաբար հայցեա զթո
ղութիւն, և Աստուած յօժարա
պէս թողցէ քեզ։

4. Զի՞նչ օգուտ է ընդ երկար
ժամանակ յամեցուցանել զխոստո
վանութիւնն, կամ յետաձգել զհա
ղորդութիւնն։ Արտամաքրեա
զքեզ յառաջնում նո՛րագոյն, 'ի
բացթո՛ւք 'ի քէն վաղվաղակի զդ
թոյնն, փութա առնուլ զպեղա
նիս.

նի ինչ, և զգասցես զքեզ բարե
գոյն, քան թէ զժամանակ ինչ յա
մեցուցանիցես զնոյնն։ Եթէ այս
օր սակս այսօրիկ թողուցուս, գու
ցէ վաղիւն այլ իմն մեծագոյն
հանդիպիցի. և այսպէս ընդ եր
կար ժամանակ արգելանիցիս 'ի
հաղորդութենէ, և առաւել անյար
մար լինիցիս։ Որքան զօրես, 'ի
ներկայականէ այդմանէ ծանրու
թենէ, և 'ի խելագարութենէ փու
թով զքեզ 'ի բացթօթափեա. զի
ոչ ինչ օգուտ է ընդ երկար ժամա
նակ նեղասրտիլն, զաւուսս բա
զումս հանդերձ վրդովմամբ ան
ցուցանելն, և սակս հանապազոր
դականաց ընդդիմաւորութեանց
արգելանիլն։ Այլ յաւէտ մնա
սէ բազմիցս՝ ընդերկար 'ի հաղոր
դութենէ մեկուսանալն, զի զմեծ
ճարմութին 'ի սովորութենէ ներա
ծէ։ Ո՛հ ցաւոյս. գաղջացեալք,
և լքեցեալք ոմանք զյամեցումն
խոստովանութեան յօժարապէս կա
մին, և զհաղորդութիւն սրբազան
մն այնր կամին ընդերկարել, զի
մի գուցէ պարաւանդիցին 'ի պահ
պանութիւն ինքեանց։

5. Վա՛շ թէ՝ որքան դոյն իմն է

սէր

ուերն այնոցիկ, և որքան անզօր առաքինութիւնն նոցա, որք ըստ սրբազան հաղորդութիւնն այնքան հեշտաբար յետադրեն: Որքան երջանիկ, և ո՜չ հաճելի է նա, որ այնպէս կենցաղավարի, և այնպիսեաւ մաքրութեամբ զխիղճ մտաց իւրոց պահպանէ, մինչզի յամենայնում ամսուր գտանիցի պատրաստ, և բարեխիղճ 'ի հաղորդութիւնն, եթէ պատեհ լինիցի իւրեան, և թարց նշանի կարիցէ առնել ըստ նոյնն: Եթէ ոք երբեմն 'ի բաց կայցէ սակս խոնարհութեան, կամ յաղագս այլոյ ուրուք օրինաւորի պատճառի, գովելի է նա վասն մեծաբարութեանն: Այլ սակայն՝ թէ ներապարփիցի 'ի նա թմրութիւն ինչ, զգաստացուցանել զինքն պարտի. և առնել որքան յինքեան է. և ո՜ր օգնական եղիցի բաղձանաց նորա սակս կամաց նորին բարեաց, զորս յատկապէս վերադիտէ:

6. Յորժամ ոք իրաւամբք առգելեցեալ է, և ունի զբարի հաճութիւն, և զառաքինական գիտաւորութիւն հաղորդելոյ, ոչ զրկի 'ի պտղոյ սրբազնութեանն: Զի իւրաքանչիւրոք ջերմեռանդ

կա

կարէ յանմուամ աճուր, և յամենայ
նուամ ժամու, առ հոգևոր հաղոր
դութիւն Քի առողջատրաբար, և
Թարց արգելման մերձենալ. առ
կայն պարտի նաճուրս ոմանս, և
ըն կացուցեալ ժամանակս, զմար
մին Փրկչին իւրոյ ըղձականաւ վե
րայարդութք սրբազնապէս վեր֊
ընդունիլ, և յաճախ վերադիտել
զպատիւն ԱՅ, քանթէ խնդրել
զիւրն մխիթարութիւն։ Քանզի
այնքանիցս խորհրդաբար հաղոր
դի, և աներևութաբար կերակր
ըի, որքանիցս զներմարմնութեն
Քրիստոսի խորհուրդ վերայաբ
գէ, և սիրով նորին բորբոքի։

7. Իսկ՝ որ միայն պատրաստէ
զինքն նաճուրս տօնից, կամ 'ի ըս
տիպելոյ սովորութեանն, բազմիցս
գտանի անպատրաստ։ Երանի
այնմիկ, որ զինքն ԱՅ իբր ողջա
կէզ մատուցանէ, որքանիցս պատա
րագէ, կամ հաղորդի։ Մի լինի
ցիս կարի երկար 'ի պատարագելն,
և մի կարի վաղվաղոտ, այլ պահեա
զեղանակ իմն բարի, և հասարակ
ընդ որս և կենցաղավարիս։ Այ
լոց մի ծնանիցիս զանհաճոյու
թիւն, և զձանձրութիւն, այլ

կա՛լ

կա՛լ զճանապարհն հասարակ ըստ սահմանադրութեան մեծամեծաց. և առաւել ծառայեա՛ օգտութն այլոց, քանթէ քում ջերմեռանդութեան, և ըղձի։

Գլուխ Ժ՟Ա։

Թէ Մարմինն Քի, և Գիրք սուրբ զանց յամենայն հարկաւորք են հոգւոյ հաւատացելոյ։

ՁԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԻ։

1. ՈՎ քաղցրագունեղ Տէր իմ Յս, որքան է քաղցրութիւն առաքինւոյ հոգւոյ, ընդ քեզ խրախճանողին 'ի քում երախանի. Նորում ոչ այլ ինչ կերակուր յառաջարկի նմա 'ի ճաշակել, բաց 'ի քէն միայնոյ սիրեցելոյ իւրմէ, որ ես 'ի վեր քան ըզբնաւ իղձ սրտի նր տենչալի։ Եւ. թէպէտ քաղցր է ինձ, առաջի քոյ 'ի խորոց սրտէ հեղուլն զարտասուս, և ը̄ն առաքինուհւոյն Մագ-
դաղենեայ * թանալն նոքօք զոտս Ղուկ.
քոյս։ Բայց ո՞ւր է այս ջերմեռանդ 7. 38
ութիւն, ո՞ւր սրբազան արտասուաց առատահեղումն։ Արդարև

րև առաջի քո, և առաջի հրեշտա
կաց քոց սրբոց պատրաստել սիրտ իմ
բոլորովին, և'ի խնդութենէ անտի
արտասուել· զի ունիմ զքեզ ըն
սրբազնութեան ճշմարտապէս ներ
կայացեալ, թէև 'ի ներքոյ այլոյ
տեսակի ներթաքուցեալ:

2. Վասնզի՝ աչք իմ ոչ զօրեն
հայիլ 'ի քեզ, 'ի յատկական, և
յանձային պայծառութեան քում.
այլ՝ և ոչ կարէ հանդուրժել բո
լոր աշխարհ ճառագայթի փառաց
քոյոյ հանդիսավէհութեան: Ուս
տի նայածիկ տկարութէ իմում ան
խայելով, թաղուցանես զքեզ 'ի
ներքոյ սրբազնութեան: Ունիմ
ճշմարտապէս, և երկրպագեմ, ո՜
րում երկրպագեն հրեշտակք 'ի
յերկինս, բայց ես տակաւին հաւ
տով, իսկ նոքա յայտ յանդիման
թարց վարագուրի: Պա՛րտ է ինձ
շատանալ լուսով ճշմարիտ հաւա
Ե:Գ տոյ, և շրջիլ 'ի նմա, * մինչև ծա
2. 17 գեցի օր մշտնջենականի պայծա
Տմ. 4. 6 ռութե, և խոնարհեսցի ստուեր
խաւարին: Իսկ յորժամ եկեսցէ
այն՝ որ կատարեալն է, դադարես
ցի կիրառութիւն սրբազնութեց.
զի երանեցեալքն 'ի փառս երկնայ
ինս

լինս, ոչ կարօտին սպեղանեացն սրբազնութեան. քանզի խնդան մնզրամապէս առաջի ԱՅ, երես ընդ երես զփառս Նորին դիտելով. և 'ի պայծառութենէ 'ի պայծառութիւն անհնոյն այ անդրակերպեցեալք, ճաշակեն զբան Նորին մարմին եղեալ, որպէս եղեն 'ի սկզբանէ, և այնպէս մնայ 'ի յաւիտեան:

3. Յիշելով զայսպիսի զարմանալիս, ծանր լինի ձանձրութիւն թուլի ինձ, և իւրաքանչիւր հոգեկան մխիթարութիւն. զի որքան՝ յայտնապէս ոչ տեսանեմ զՏէրն իմ 'ի փառս իւր, առ ոչինչ համարիմ զամ ինչ, զոր տեսանեմ, և լսեմ յաշխարհի: Առայս վկայ ես ինձ դու ԱԾ իմ, զի ոչինչ իր կարէ զիս մխիթարել, ոչինչ ստեղծուած հանգուցանել, եթէ ոչ դու ԱԾ իմ, զոր բաղձամ մշտնջենապէս յարանկատել, թէև անկարելի իմն իցէ ինձ, մինչ տակաւին յամեմ ընդ մահացութեան: Վասն որոյ՝ պարտ է ինձ ունիլ զմեծ համբերութիւն, և յանձնել բաղձութեան զիս քեզ հպատակել: Զի և սուրբ քո՝ Տէր, որք նարդեանս ընդ

ընդ քեզ յարքայութեանն երկնից հրճուէին, հաւատով, և համբերութե̃ մեծաւ, մինչ դեռևս ապրէին, գալստեան քոյոց փառ̃ց սպասէին։ Յոր հաւատացին նք̃, հաւատամ և ես․ յոր յուսացան նոքա, յուսամ և ես․ յո՛ նոքա ժամանեցին, յուսամ և ես շնորհիւ քով առժամանել։ Ընթեցայց տակաւին հաւատով՝ զօրացեալ օրինակօք սրբոց։ Կալայց ևս ինձ 'ի մխիթարութի գիրս սրբազանս, և 'ի հայելութիւն ինձ զվարս նոցին․ այլև՛ 'ի վեր քան զայս ա̃մ, զսրբազնագունեղ Մարմին քո 'ի միակ բժշկութիւն ինձ, և յապաւինութիւն։

4․ Երկու են, զորս զգամ յաւէտ հարկաւորս գոլ ինձ նայսմիկ կենցաղում, Թարց որոց ողորմելի կեանս այս անտանելի թուէր ինձ, 'ի բանտի այսորիկ մարմնոյ գոլով արգելեցեալ, երկուց խոստովանիմ զիս կարօտիլ, այսինքն՝ կերակրոյ, և լուսոյ։ Արդ՝ ետուր ինձ տկարացելոյս զսրբազան Մարմին քո 'ի լիութիւն մտաց, և մարմնոյ իմում․ և եդիր իբր ճրագ ոտից իմոց զբան քո սուրբ։ Թարց երկուց այսոցիկ՝ բարեպէս կեալ ոչ կա

կարէլի․ զի բանն քո, է լոյս անձին իմոյ․ և Արքայնութիւն քո՝ հաց կենաց իմոց։ Կարեն ևս ասել այսոքիկ սեղանք երկու, աստուստ՝ և անտուստ 'ի գանձարանի եկեղեցւոյ զետեղեցեալք։ Սեղանն առաջին է սրբազանի բեմին, որ ունի զհաց սուրբ, այսինքն՝ զպատուական Մարմինն Քրիստոսի։ Սեղանն երկրորդ է ծածկոց Օրէնաց, պարունակող յինքեան զսուրբ բազան վարդապետութիւնն, որ ուսուցանէ զհաճատն ուղիղ, և ներածէ հաստատապէս մինչև 'ի ներքին կողմն վարագուրին, ուր են Սրբութիւնք սրբոց։ Շնորհակալ եմ զքեն, Տէր իմ Յս, լոյս լուսոյ յաւիտենականի, յաղագս սեղանոյն սրբազանի վարդապետութեան, զոր մեզ 'ի ձեռն քոյոց Մարգարէից, Առաքելոց, և այլոց Վարդապետաց ընձեռեցեր։

Զ․ Շնորհակալ եմ զքեն, ո՛վ ըստեղծիչ, և Փրկիչ մարդկան, որ առ 'ի յայտնել բոլոր աշխարհի զգայծառութիւն սիրոյ քոյ, զընթրիսն մեծ պատրաստեցեր, նորում ոչ զգառն օրինակին, այլ զքոյդ սրբազնագունեղ Մարմին, և զԱրիւն

րիւն յառաջադրեցեր 'ի ճաշա
կումն. զուարճացուցանելով ըզ
բնաւ հաւատացելալս խրախճանիւ
սրբազանիւ, և քաղցրական կենա
րարիւ արբուցանելով զնոյնս. Նո
քում են համայն դրախտին փափ
կութիւնք, և երկրին ընդ մեզ
Հրեշտակաց սրբազանք, բայց
քաղցրութեամբ իւիք երջանկա
գունիւ:

6. Վա՜յ թէ՝ որքան մեծ է, և
յարգելի պաշտօն քահանայից, ո-
րոց տրեալ է զՏր՞ն փառաց բա
նիւք սրբազանիւք սրբազնագոր
ծել, շրթամբք օրհնել, ձե
ռօք շօշափել, բերանով յառկա
նալ ճաշակել, և այլոց մատա-
կարարել: Ո՜ թէ, որպէս ձեռք
քահանային պիտոյ մաքուրք,
բերանն ամբիծ, մարմինն սուրբ,
սիրտն անարատ, յոր մտանէ հեղի
նակն հանուրց մաքրութեանց:
'Ի բերանոյ քահանային մէն միայն
սուրբ, մէն միայն պարկեշտ, և
մէն միայն օգտակար արտաբերիլ
պարտի բան, որ այնքան առէպ
ճաշակէ զՍրբազնութիւնն Քն:

7. Աչք նորին պարտին զու-
զուաք, և համեստք, որք սովոր
են

են նկատել զՄարմինն Քրիստո
սի: Ձեռքն մաքուրք՝ վերացու
ցեալք 'ի յերկինս, որք զՍտեղ
ծօղն երկնի, և երկրի, սովոր են
առձեռնել: Վասն քահանայից
յատկապէս ասի յ'Օրէնս. * լե Ղևտա
րուք սուրբք, զի սուրբ եմ ես Տէր 11. 44
Աստուած ձեր: 1 Պետ
8. Նպաստեսցէ մեզ քոյդ շնորհ, 1. 16
ով ամենակարօղ ած, զի որք ըն
կալաք զպաշտօն քահանայական
արժանապէս, և առաքինաբար կա
րիցուք քեզ ամենայնիւ մաքրու
թեամբ, և բարեաւ խղճիւ մատուց
սպասաւորել: Եւ եթէ ոչ կարի
ցուք այնքանիւ անմեղութեամբ
վարուց կենցաղավարիլ, ըստ ո
րում էմք պարտաւորեցեալք,
շնորհեա մեզ գոնեա արժանապէս
ողբալ զչարիս, զորս գործեցաք.
և հոգւով հեզութեան, և բարւոյ
կամաց առաջադրութեամբ, ջեր
մեռանդապէս ըստ խնկութեան
քեզ ծառայել:

Գ. լուխ

Գլուխ ԺԲ:

Թէ մեծաւ զգուշութեամբ պարտի զինքն նախապատրաստել, այն որ հաղորդե-
լոց է Քրիստոսի:

ՁԱՅՆ ՍԻՐԵՑԵԼՈՅՆ:

1. Ես եմ սիրող մաքրութեան,
և տուող համայնից սրբութեան: Ես խնդրեմ զսիրտ
մաքուր, և անդ է տեղի յարահան-
գստութեան իմոյ: Պատրաստեա
ինձ զվերնատունն մեծ զարդարե-
Ղուկա ցեալ, * և արարից առ քեզ զՊա-
22. 11 սեքն հանդերձ աշակերտօք իմովք:
Եթէ կամիս, զի գայցեմ առ քեզ,
1 Կորն և մնայցեմ առ քեզ․ * 'ի բացուրբեա
5. 7 զհին խմորն, և մաքրեա զսենեակ
սրտի քոյ: Տարահերքեա բոլոր
վիմք զկենցաղս, և զբնաւ խռո-
վութիւնս մոլութեց: Դադա-
Սաղմ րեաց * իբրև զճնճղուկ միայն 'ի
101. 8 տանիս, և խորհեաց * զանցուածս
Սաղմ քոյս 'ի դառնութեան հոգւոյ քոյ:
18. 13 Քանզի ամ սիրող իւրում սիրեցե-
լոյն զպատուականն, և զգեղեցիկ
տեղի պատրաստէ, զի նայամիկ ճա-
նաչի իղձ վերընդունողին զսիրե-
ցեալն:

2. Բայց գիտեմ, զի ոչ կարեմ բաւականանամ նախապատրաստել զքեզ արդեամբք քոյոյ ներգործութեան, թէեւ զամ մի բոլոր աշխատիցիս, եւ ոչ ունիցիս զայլ ինչ 'ի մտի: Այլ միայնով բարեգթութքս` եւ շնորհիւ խնամով թուլացուցանի քեզ մատչիլ առ սեղանն իմ. ոպ̃ մուրացիկ ոք, որ կոչի 'ի ճաշ ուրուք մեծատան, եւ նա ոչ ունի զայլ ինչ առ'ի հատուցանել փոխանակ բարերարութեանցն նորա, բայց 'ի խոնարհութենէ, եւ'ի շնորհակալութէ: Արա` որ ինչ 'ի քեզ է, եւ զգաստապէս աշխատասիրեա. ոչ 'ի սովորութէ, ոչ 'ի հարկաւորութենէ, այլ երկիւղիւ` եւ պատկառանօք, եւ ըղձիւ, ընկալ զՄարմին սիրեցելոյ տեառն Աստուծոյ քոյ, որ արժան համարեցաւ գալ առ քեզ: Ես եմ, որ կոչեցի, ես եմ, որ հրամայեցի այնպէս լինիլ. ես լցուցից զպակասութիւն քո. եկ առ իս, եւ ընկալ զիս:

3. Մինչ ընձեռեմ քեզ զշնորհս առաքինութեան, գոհացիր զԱյ քումմէ. ոչ իբր թէ դու արժանի իցես, այլ իբր թէ քեզ գթացեալ է

ցեմ: Եթէ ոչ ունիս՝ զոր հայցես
ըդ, այլ տեսանես զքեզ յաւէտ
կարծրացեալ, պարապեաց յա
ղօթս, հեծեաւ՝ և բախեաւ. և մի
դադարիր, մինչև արդիւնաւորի
ցիս զփշուր ինչ. կամ զկաթիլ
իմն կենարարի շնորհի առընդու
նիլ: Դու ինձ կարօտիս, և ոչ ես
քեզ: Ո՛չ գաս դու առ՚ի սրբել
զիս, այլ գամ ես առ՚ի սրբել, և
բարեգունել զքեզ: Դու գաս,
զի սրբեսցիս յինէն, և միաւորիցիս
ընդ իս. զի վերընդունիցիս զնոր
իմն շնորհ, և նորոգ՝ վառիցիս ՚ի
զգաստութին: Մի՛ ստունկանիցես
զայսու շնորհիւ, այլ նախապատ
րաստեա ամենայնիւ զգուշութե՜
զսիրտ քո, և՚ի ներքսմոյծ առ քեզ
զսիրելին քո:

4. Բայց՝ ոչ միայն պարտիս նա
խապատրաստել զքեզ ՚ի ջերմե՞
ռանդութիւն յառաջ քան զհաղոր
դութիւնն, այլև հոգաբարձապէս
պահպանել զքեզ ՚ի նմա, զկնի
վերընդունման սրբազնութեանն:
Զի ոչ խնդրի սակաւագոյն պահ
պանութիւն զկնի, քան զառաջին
ջերմեռանդ նախապատրաստու
թիւնն: Քանզի յետին բարի պահ

պա

պանութիւնն, է վերստին նախապատրաստութիւն առ՚ի ընդունիլ զմեծագոյն շնորհ։ Վ՚ որոյ՝ կարի յանտրամադրութիւն անկանին ոք, մինչ վաղվաղակի արտամիտէ ոք առ մխիթարութիւնս արտաքինս։ Զգուշացի՛ր դու ՚ի շատախօսութենէ, կաց յառանձնութեան, և զմայլեաց Աստուծով քով. զի ունիս զայն, զոր բոլոր աշխարհ տալ քեզ ոչ կարէ։ Ես եմ, որում պարտիս տալ զքեզ բոլորովին. մինչ զի՝ ոչ ևս ՚ի քեզ, այլ ՚ի յիս՝ թարց խմէք զբաղութեան, կեայցես։

Գլուխ ԺԴ։

Թէ հոգի երկրպագուն բաղձայ սըր ոյն ըմբռնողին ընդ Քրիստոսի ընկերակ ցութեան ընդ Յիսուս պատրի։

ՁԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԻ։

1. Ո՛ տայցէ ինձ՝ Տէր, զի զտանիցեմ զքեզ միայնակ, և յայտնիցեմ քեզ զսիրտ իմ բոլոր, և զմայլեցից քև, որպէս բաղձայ հոգի իմ. և միոք զիս քամահիցէ, և ոչ մի ՚ի յարարածոց շարժիցէ զիս, կամ նայիցի առ իս, այլ դու միայն խօսիցիս ընդ իս, և ես

ես ընդ քեզ, զորօրինակ սովոր է սիրողն խօսիլ ընդ սիրեցելոյ, և բարեկամն կենակցիլ ընդ բարեկամի։ Զայս աղերսեմ, զայս ինչ բաղձամ, զի ընդ քեզ բոլորովին միաւորեցիմ, և զսիրտ իմ 'ի բնաւից ստեղծուածոց 'ի բացքարշեցեմ, և մանաւանդ 'ի ձեռն սրբազանի հաղորդութեան, և 'ի ձեռն յաճախ պատարագման, զերկնայինս, և զյաւիտենականս իմանալ կարիցեմ։ Ո՜հ տէր Ա՛Ծ իմ, երբ եղէց ընդ քեզ բոլորովիմբ միաւորեցեալ, և 'ի սէր քո ընկլուզեցեալ, ինքն իսպառ յինէն մոռացեալ։ Ընոր հեմ ուրեմն՝ զի ես 'ի քեզ, և դու 'ի յիս, և մեք միահաղոյն մնասցեմք 'ի մի։

2. Դու ես ճշմարիտ սիրելի իմ,
* ընտրեցեալ 'ի հազարաց, նորում
Եփ. 5. 10 հաճի հոգի իմ բնակիլ զամ աւ
ուրս կենաց իւրոց։ Դու ճշմարիտ խաղաղարար իմ, նորում է ծայրագոյն խաղաղութիւն, և ինքնական յանդորրութիւն, իսկ արտաքոյ քոյ, աշխատանք, ցաւք, և անհուն թշուառութիւն։ Դու ես ճշմարիտ ԱԾ թաքուցեալ. և խորհուրդ քո ոչ է ընդ ամբարշտաց

այլ

այլ ընդ խոնարհաց, և ընդ միա_
մտաց բան քո։ Ո՛րթէ՝ որքան
քաղցր է Ոգի քո Տէր, որ առ՚ի
ցուցանել զանուշութիւն քո որ_
դւոց քոց, հացիւ համեղագունիւ,
որ յերկնից իջանէ, զարժանի հա
մարիս կերակրել զնոսա։ Իրաւի
ո՛չ է այլ իմն ազգ այնքան մեծ, որ
ունիցի զԱծս մերձակայս ինքեան,
որպէս դու՝ տէր Ած մեր, մերձեալ
համայնից քոց հաւատացելոց. ո_
րոց 'ի հանապազորդական մխիթա
րութիւն, և 'ի յուղղումն սրտից 'ի
յերկինս, շնորհես զքեզ 'ի ճաշա
կումն, և 'ի զմայլումն։

Յ. Քանզի՝ ո՛վ է այլ իմն ազգ
այնքան ազնիւ, որպէս է ժողովն
Քրիստոնէից։ Կամ՝ ի՞նչ ստեղ_
ծուած 'ի ներքոյ երկնից է այնքան
սիրեցեալ, որպէս է հոգին առաքի
նի, առ որ մտանէ Աստուած 'ի
կերակրել զնա փառաւոր մարմ
նովն իւրով։ Ո՜հ անճառելի շնորհ.
ո՜հ սէր անչափելի եզականապէս
մարդկան շնորհեցեալ։ Բայց
զի՞նչ տաց տրիտուր տեառն ընդ
շնորհի այսորիկ, և ընդ սիրոյ գե
րազանցի։ Ո՛չ գոյ այլ ինչ, զոր հա
ճոյապէս նուիրել կարիցեմ, բաց
'ի

'ի սրտէ իմմէ, զոր բոլորապէս մա տուցանեմ քո իմոյ, և խնկապէս՝ շարադրուգեմ ը̃ նմա։ Յայնժամ ցնծասցեն համայնք ոսկերք իմ, մինչև կատարելապէս միաւորեցի ընդ քոյ հոգի իմ։ Յայնժամ ասասցէ ցիս․ Եթէ կամիս դու գոլ ընդ իս, և ես կամիմ գոլ ընդ քեզ։ Եւ ես պատասխանեցից նմա․ ար ժանաւորեա՝ Տէր, մնալ ընդ իս, ես կամիմ յօժարապէս կալ ընդ քեզ։ Այս է բոլոր ցանկութիւն իմ, զի սիրտ իմ միաւորեցի ընդ քեզ։

Գլուխ ԺԸ։

Յաղագս ոմանց աստուածայինեաց ջերմեցեալ փափաքմանց առ Մարմինն Քրիստոսի։

ՁԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԻ։

Սաղմ 30․ 20 1․ ՈԹէ՝ որքան մեծ է * ողորմութիւն քաղցրութեան քո՝ Տէր; զոր պահեցեր երկիւղածաց քոց։ Մինչ յիշեմ, տէր իմ, զջերմեռանդութիւն ոմանց առաքինեաց, առ քոյդ սրբազնութիւն մեծաւ ջերմութեամբ, և ըղձիւ մատ

չո

չողոց, ամաչեմ, և պատկառիմ 'ի յիս. որ այնքան գաղջապէս, և ցրտաբար մերձենամ առ սեղան քոյդ սրբազանի Հաղորդութեան. այնքան կարծր, և առանց զգածման սրտի մնամ. որ ոչ բոլորովին բորբոքիմ առաջի քոյ Տէր իմ. և ոչ սաստկապէս առքարշիմ, և բաղձամ, որպէս եղեն բազումք յառաքինեաց, որք յաղագս սաստկագունի ցանկութեան Հաղորդութեան, և յաղագս մեծագունի սիրոյ սրտի, ոչ կարէին զինքեանս արգելուլ 'ի յողբալոյ. այլ բերանով սրտի, և մարմնոյ միանգամայն առ քեզ աղբիւրդ կենաց Տէր հառաչէին, որք զքաղցս իւրեանց այլապէս ոչ զօրէին սանձահարել, կամ յագեցուցանել, եթէ ոչ ընդունէին զՄարմին քո սուրբ ամենայնիւ վայելչութեամբ, և ախորժակաւ հոգեկանաւ։

2. Ո՛վ խակապէս բորբոքեցեալ հաւատ նոցին, որ է յայտնի որ տակայացեալ առարկութիւն քոյոյ սրբազանի ներկայութեան։ Այնոքիկ ճշմարտապէս ճանաչեն ըզ Տէրն իւրեանց 'ի բեկումն հացին, որոց սիրտն սաստկապէս ձմլի 'ի

նո

նոսա, սակս Յիսուսի շրջողի ընդ նոսա: Հեռի է յինէն այսպիսի իղձ, և ջերմեռանդութիւն, այսպիսի սաստկագոյն սէր, և բորբոքումն: Լեր ինձ քաւիչ՝ ով Յիսուս բարի, քաղցր, և գթած. և տուր քում աղքատ մուրացկի՝ գոնեա երբեմն, զգոյնինչ սիրոյ քոյ 'ի սրտէ՝ զգալ ընդ սրբազանի Հաղորդութեան. զի հաւատն իմ առաւել զօրանայցէ, յոյս իմ 'ի բարութեան քում յառաջանայցէ, և սէրն իմ միանգամ լիապէս բորբոքեցեալ, և երկնայնով մանանայիւ զմայլեցեալ, մի երբեք նուաղիցի:

3. Արդ՝ կարող է ողորմութիւ քո, և զբաղձալի շնորհս ընծեռել ինձ, և ոգւով ջերմեռանդութեան յաւուր գալստեան քոյ ոյ բարեհաճութեան՝ գթածապէս ինձ այցառնել: Եւ թէպէտ ըղձիւ քոյոց սեպհականաց առաքինեաց ոչ բորբոքիմ, սակայն քոյով շնորհիւ այնր մեծի բորբոքեցել ըղձի ունիմ զցանկութիւն. և մաղթեմ բաղձանօք մասնակցել զիս համայնից քոյոց ջերմեռանդից սիրողաց, և թուակցել զիս

որքապանի նոցին վիճակի։

Գլուխ ԺԵ։

Թէ շնորհ ջերմեռանդութեանն ՚ի ձեռն խոնարհութեան, և ՚ի ձեռն ուրացութէ անձին ստացանի։

ՁԱՅՆ ՍԻՐԵՑԵԼՈՅՆ։

ա. ՊԱՐՏ է քեզ զշնորհ ջերմեռանդութեանն ստէպ խնդրել, բաղձողապէս հայցել, ըմբերաբար՝ և համարձակաձայն սպասել, գոհունակապէս վերընդունել, խոնարհաբար պահպանել՝ ուշիմապէս ՚ի կիրարկանել, և Այ՝ զվախճանն, և զեղանակն վերնայնոյ այցելութէ յանձնառնել, մինչև եկեսցէ։ Եւ մանաւանդ պարտ է խոնարհեցուցանել զքեզ, մինչ զդոյնինչ, կամ զոչինչ ջերմեռանդութեան ներքսամ զգաս. բայց ոչ կարի լքանիլ, և ոչ անկարգապէս տրտմիլ։ Տայ ած բազմիցս ըն կիտում իմիք փոքրագունի, զոր ապուսեաց ընդ երկար ժամանակ. տայ ևս բազմիցս ՚ի վախճանի աղօթից. զոր ՚ի սկզբանն տալ յապաղեաց։

2. Եթէ միշտ վաղվաղակի տը-
րիւր շնորհ, և ըստ իւրաքանչիւ-
րում ուխտի առաստանիւր, ոչ դիւր
տանելի յառնէ տկարէ: Այ՛ որոյ
քարեաւ յուսով, և հեզիւ համբե-
րութե՛, սպասելի է շնորհ ջերմե-
ռանդութեան: Բայց դու սակս
մեղաց քոց համարեա՛, մինչ ոչ տրի
կամ ծածկապէս 'ի բացբառնի:
Դոյն ինչ է երբեմն, որ զշնորհն
արգելու, և ծածկէ. իսկ եթէ
դոյն ինչ է, և ոչ յայտ է մեծ ինչ
ասելի, որ զայնքան բարին արգե-
լու: Եւ եթէ զայս նոյն դոյնս,
և զմեծ ինչս 'ի բացհերքեցեր, և
կատարելամբ յաղթեցեր, եղիցի
զոր ինչ հայցեցերդ:

3. Քանզի մինչ զքեզ ամ 'ի բա
ւոր սրտէ յանձնիցես, և ոչ հոգայ
ցես զայս, կամ զայն ըստ հաճոյից
քոց, և ըստ կամաց. այլ ամբողջա
պէս զետեղիցես զքեզ 'ի նմա; իս
կոյն միաւորեցեալ զքեզ ընդ նմա
գտանիցես, և խաղաղացեալ. զի
ոչ ինչ այնքան բարւոք թուեսցի,
և հաճոյասցի, որքան բարեհաճու
թիւն ամենայնոյ կամաց: Որոք ու
րեմն զդիւրաւորութիւն իւր ստոր
զուլթէ սրտի համբառնայ 'ի վեր
առ

ռած, և զինքն 'ի բնաւից անկարգեց ըղձից, կամ յանհաճոյութեց իւրաքանչիւրոյ ստեղծուածոյ դադարկէ, եղիցի առաւել ընդունակ 'ի ներս առման շնորհի, և արժանի պարգևոյ առաքինութե: Քաղի անդ տայ տր զօրհնութիւն իւր, ուր գտանէ զանօթս թափուրս: Եւ որքան կատարելագունապէս ոք 'ի յստորնայնոց հրաժարի, և յաճախ ինքն ինքեան, քամահմամբ անձին իւրոյ՝ մեռանի, այնքան արագապէս հասանէ նմա շնորհն, ճոխապէս ներմտանէ, և գերազանցապէս զազատ սիրտն բարձրացուցանէ:

4. Յայնժամ տեսցէ, և բերկրեսցի, զարմասցի՝ և ընդարձակեսցի սիրտ նորա 'ի նմա. զի ձեռն տն է ընդ նմա, և եդ ինքն զինքն բոլորովիմբ 'ի ձեռին նր մինչև 'ի յաւիտեան: Ահա՝ այսպէս օրհնեսցի մարդ, որ խնդրէ զտր բոլորիւ սրտիւ իւրով, և ոչ ընդվայր ասնու զհոգի իւր: Այսպիսին 'ի յընդունելն զսրբազան Հաղորդութիւնն, մեծաւ արդիւնաւորէ ծայնոյ միաւորութեան շնորհիւ, քանզի ոչ դիտէ յառաքինութիւն

իւր

քեզ՝ և 'ի մխիթարութիւնն յա-
տուկ, այլ գիտէ 'ի վեր քան զնամ
առաքինութիւն, և զմխիթարու-
թիւ, 'ի փառս Այ՝ և 'ի պատիւ նր̃։

Գլուխ ԺԷ։

Թէ պարտ իցէ մեզ զմեր կարիս յայտ-
նել Քրիստոսի, և ծպել ըղ
շնորհս նորա։

ՁԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԻ։

1. Ո՜Վ քաղցրագունեդ, և ամենասուրբ Տէր իմ, զոր այժմ ջերմեռանդապէս՝ բաղձամ վերընդունիլ. դու գիտես զտկարութիւն իմ, և զկարիս, զորս կրեմ. և թէ ո՛րքան չարիս յորսայ ոլիցիմ, կամ ո՛րքանիցս ծանրանայցեմ, փորձիցիմ, վրդովիցիմ, և աղտեղանայցեմ։ Յաղագս բժշկութեան գամ առ քեզ, յաղագս մխիթարութե, և սփոփման պաղատիմ առ քեզ։ Խօսիմ ընդ քեզ, որ զա̃մ ինչ գիտես, որում յայտնի են համայն խորհուրդք իմ. որև միայն կարող ես զիս կատարելապ̃ մխիթարել, և օգնել ինձ։ Դու գիտես՝ թէ որոց բարեաց. առաւ-

եւ կարօտիցիմ, և թէ որքան աղքատ իցեմ առաքինութեամբք:

2. Ահաւասիկ՝ կամ առաջի քո ես աղքատ՝ և մերկ, հայցելով զշնորհս, և մաղթելով զողորմութիւնս: Յագեցո զքաղցեալ մուրացիկս քո, ջերմացո զցրտութիւն հրով սիրոյ քոյ, լուսաւորեա խակ զկուրութիւն իմ պայծառութեամբ քոյոյ ներկայութեան: Դարձո՛ 'ի դառնութիւն ինձ զբնաւ կենցաղականս. 'ի համբերութիւն զբնաւ ծանունս, և զհակառակս. 'ի խոտումն՝ և 'ի մոռացումն զբընաւ ըստորինայինս, և զստեղծականս: Ուղղեա զսիրտ իմ առ քեզ 'ի յերկինս, և մի թողուր զիս պանդխտել 'ի վերայ երկրի: Դու միայն քաղցրասցիր ինձ յայսմհետէ մինչ չև յաւիտեան. զի դու միայն ես կերակուր՝ և ըմպելի իմ, սէր իմ, և խնդութիւն իմ, քաղցրութիւն իմ, և բոլոր բարութիւն իմ:

3. Երանի թէ քոյով ներկայութեամբ զիս բոլորապէս վառիցես, բորբոքիցես՝ և 'ի քեզ փոխարկիցես. զի եղէց ընդ քեզ մի հոգի, շնորհիւ ներքնայնոյ միաւորութեան, և հալմամբ բորբոքեցելոյ սիրոյ:

Մի

Մի՛ թողուցուս զիս նքթի՝ և ցամաք 'ի քէն մեկուսանալ. այլ արա ընդ իս ըստ ողորմութեան քում, ըստ որում արարեր ընդ սրբոց քոց սքանչելաբար: Զի՛նչ տեղի զարմացման, եթէ բոլորովին մերք քեւ հրանայցեմ, և 'ի յիս ինքեան նուաղիցիմ. որովհետև դու ես հուր միշտ բորբոքեցեալ՝ որ ոչ երբեք ըսպառիս. սէր մաքրիչ սրտից՝ և լուսաւորիչ մտաց:

Գլուխ ԺԷ:

Յաղագս բորբոքեցելոյ սիրոյ, և սաստկագունի ըղձի ընդունելոյ զՔրիստոս:

ՁԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԻ:

1. Անդերձ ծայրագունիւ ջերմեռանդութեամբ, և բորբոքեցելով սիրով, ընաւիւք ըղձիւք՝ և փափագմամբք, բաղձամ զքեզ վերընդունիլ Տէր իմ, զոր օրինակ բազումք 'ի սրբոց, և յառաքինեաց արանց 'ի հաղորդելն քեզ բաղձային՝ որք քեզ յաւէտ հաճոյացան, գոլով ջերմեռանդք՝ և առաքինիք: Ո՛վ Տէր իմ,

իմ, սէր յաւիտենական, բոլոր բա
րի իմ, երջանկութիւն անզրաւ,
ցանկամ վերընդունիլ զքեզ ծայ
րագունիւ ըղձիւ, և ամենարժա
նիւ պատկառանաւ՝ զոր ոք 'ի սըր
բոցն ունէր, կամ զօրէր զգալ։

2. Իւ. Թէպէտ անարժան եմ
ես ունելոյ զզգացմունս զայնոսիկ
ջերմեռանդութեն, սակայն մատու
ցանեմ քեզ զբոլոր իղձ սրտի իմոյ՝
որ͞պ թէ զհամայն զայնոսիկ ամենա
հաճելիս, և բոցակիզեցեալ բաղ
ձանս միայն ունիցիմ։ Այլև զոր
ինչ առաքինի միտ կարէ յղանալ՝
և բաղձալ, քեզ ամենևին ծայրա
գունիւ պատկառանաւ, և խնկա
կանաւ փափաքանօք ընծայեմ, և
մատուցանեմ։ Զոչինչ ցանկամ
պահել վ͞ն իմ, այլ զիս, և զիմայ
ինս ա͞մ քեզ յօժարապէս՝ և կա
մաւորապէս զոհել։ Տէր իմ, և
Ա՛ծ իմ, Ստեղծօղ իմ, և Փրկիչ
իմ, այսպիսի ըղձիւ՝ և պատկառա
նօք, գովութ͞ե՝ և պատուով. այս
պիսի շնորհակալութ͞ե, արժանաւ
որութ͞ե՝ և սիրով. այսպիսի հաւ
ատով, յուսով՝ և մաքրութեամբ,
բաղձամ զքեզ այսօր վերընդունիլ,
որ͞պ վերընկալաւ՝ և փափագեցաւ
քեզ.

քեզ Մայրն քո Ամենասրբուհի,
փառաւորեցեալ Կոյսն Մարիամ,
մինչ Հրեշտակին՝ աւետողի ինքեան
զներմարմնութեան խորհուրդն, խո
նարհաբար, և առաքինօրէն պա
Ղուկաս 1. 38 տասխանեաց. * Ահաւասիկ՝ կամ
աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ
բանի քում։

3. Եւ որպէս երանելի յառաջ
ընթացն քո՝ գերազանցագունեղն
սրբոց Յօհաննէս Մկրտիչն, առա
ջի քոյ խնդացեալ զուարճացու
ուրախութեամբ սրբոյ Հոգւոյն մինչ՝
Ղուկաս 1. 44 դեռևս պարփակեալ * յորովայնի
մօր իւրոյ. և հուսկ յետոյ նշմարե
լով զՅս՛, որ շրջէր 'ի մէջ մարդ
կան՝ խոնարհեցուցանելով զինքն
Յովհան 3. 29 ջերմեռանդ ըղձիւ ասէր։ * Իսկ
բարեկամ փեսային, որ կայ՝ և լսէ
նմա, ուրախութեամբ ուրախ լինի վս՞
ձայնի փեսային. Նոյնպէս և ես,
մեծաւ՝ և սրբազանիւ ըղձիւ բաղ
ձամ բորբոքիլ, և քեզ բոլորիւ
սրտիւ իմով վերընծայել զիս։
Ուստի՝ և բնաւից առաքինեաց
սրտից զհրճմունս, զբորբոքեցեալ
իղձս, զմտաւորական վերամբար
ձութիւնս, զգերբնական լուսաւո
րութիւնս՝ և զերկնային տեսութիւնս
քեզ։

քեզ մատուցանեմ, և վերընծայեմ,
հանդերձ ա̄մ զօրութ̄բ՝ և գոհու-
թ̄բ, որ 'ի համայն ստեղծուածոց
'ի յերկնի, և'ի յերկրի հռչակի՝ և
է հռչակելի վ̄ն իմ, և վ̄ն ամենից
ինձ յաղօթս յանձնեցելոց․ զի, յա
մենից արժանապէս գովիցիս, և
մշտնջենապէս փառաւորիցիս։

4․ Վերընկալ զուխտ իմ, Տէր
իմ, և Աստուած իմ, և զբաղձանս
անհուն գովաբանութե̄, և անչափ
բարեբանութեան՝ որք քեզ, ըստ
բազմութե̄ անճառելի մեծութե̄
քո, իրաւապէս վայելեն։ Զայս
սիկ քեզ ընդ բնաւ աւուրս, և ը̄
բոլոր ժամանակաց հատուցանեմ,
և հատուցանել ցանկամ․ և զբնաւ
իսկ զերկնային ոգիս, և զհամայն
հաւատացելոց քոյս՝ մաղթանօք,
և բաղձանօք՝ առ'ի հատուցանել
քեզ ընդ իս զշնորհակալութիւնս,
ներհրաւիրեմ, և աղերսեմ։

5․ Գովեսցեն զքեզ ժողովուրդք
համայնք, ազգք՝ և լեզուք․ և զտ̄ր՝
և զմեղրածորան անուն քո, հան
դերձ վեհագունիւ հրճուանաւ,
ջերմեռանդիւ իսկ առաքինութ̄բ՝
մեծացուսցեն։ Եւ որոք պատկա
ռանօք՝ և առաքինաբար զվեհա
գու

գունեղ Սրբազնութիւն քո հաճա
կէ, և լիով հաւատով վերընդունի,
զշնորհս՝ և զողորմութիւն քո գտա
նել առաջի քո արժանաւորեսցի,
և վ՟ իմ մեղաւորիս աղերսեսցէ։
Եւ մինչ բաղձալի առաքինութե՟՝
և զմայլելի միաւորութեամբ զովա
նայցէ, և բարեպէս մխիթարեսցի՝
իսկև զարմանապէս յագեցեալ, 'ի
սեղանոյ քումմէ սրբազանէ, և
յերկնայնոյ 'ի բացմեկնեսցի, զիս ըղ
տնանկս յիշել արժանի համարեսցի։

Գլուխ ԺԸ։

Թէ մարդ մի՛ լիցի հետաքրքիր քննիչ
Սրբազնութեան, այլ խոնարհ համահե
տեւող Քի՝ հպատակելով
զզգայութիւնս իւր սրբազա
նի հաւատոյ։

ՁԱՅՆ ՍԻՐԵՑԵԼՈՅՆ։

1. Զգուշանալ պարտիս 'ի հետաքրքիր՝ և յանօգուտ քննութենէ այսորիկ խորագունեղի Սրբազնութեան, եթէ ոչ կամիս 'ի խորս տարակուսութեան ընկղմիլ։ Որ քննիչ է հանդիսավեհաւ

հութե՛, նմանձի 'ի փառաց: Ձի
առաւել կարող է Ած 'ի գործելն,
քան մարդ 'ի յիմանալն: Թէև
ըմբերելի իմն իցէ առաքինական՝
և հեզ ներխուզումն ճշմարտութե,
որ է միշտ պատրաստ 'ի յուսանիլ՝
և առողջիւ գիտաւորութբ հարց
ներհմտանալով. չքլին:

2. Երանելի է միամտութին, որ
զդժուարին շաւիղս խնդրոց 'ի
բացթողու, և հարթօրէն՝ հաստա-
տօրէն խոկ ճեպէ 'ի շաւիղս պա-
տուիրանացն ԱՅ: Բազումք զա-
ռաքինութիս իւրեանց կորուսին,
մինչ կամեցան զննել զբարձրա-
գոյնս: Պահանջի 'ի քէն հաւատ,
և միամիտ կենցաղավարութի. ոչ
բարձրութիւն մտաց, կամ խորու-
թիւն խորհրդոցն ԱՅ: Եթէ
ոչ իմանաս, և ոչ ըմբռնես * զիրս, Ի Իմաստ
որք են ստորև քո. զիարդ բովան- 9. 16
դակեսցես զիրս, որք են 'ի վեր
քո: Ուսումնասիրեա Աստուծով՝
և խոնարհեցո՛ զքոյդ զգայութի
հաւատոյն, և տրեսցի քեզ լոյս
գիտութե, ըստ որում եղիցի քեզ
օգտակար՝ և հարկաւոր:

3. Ոմանք ծանրապէս փորձին
պակս հաւատոյ, և Սրբազնութե.

բայց

բայց ոչ նոցին վարկանելի է այս, այլ մանաւանդ թշնամւոյն։ Մի՛ ունիցիս զփոյթ, և մի՛ վիճաբանիցես ընդ խորհրդոց քոց, մի՛ ևս պատասխանիցես տարակուսութեանց ներարկեցելոց 'ի սատանայէ. այլ հաւատով բանիցն Ա.Յ, հաւատով Սրբոց նորին, և Մարգարէիցն, և փախիցէ 'ի քէն անիրաւ թշնամին։ Օգտակար է բազմիցս, զի այսպիսեաց հանդուրժիցէ ծառայն Ա.Յ։ Քանզի ոչ փորձէ նա զանհաւատս, և զմեղաւորս, զորս այժմ հաւաստապէս ըստացեալս ունի. այլ զհաւատացեալս, և զառաքինիս զանազանիւք եղանակօք փորձէ, և տանջէ։

4. Փութա՛ ուրեմն զըտիւ՝ և աներկբայիւ հաւատով, և աղերսական պատկառանօք մատիր առ Սրբազնութիւն։ Եւ զորինչ՝ ոչ կարես իմանալ, աներկեւանօրէն յանձնեա՛ ամենակարողին Ա.Յ։ Ո՛չ խաբէ զքեզ Ա.Ծ. այլ խաբի այն, որ ինքն ինքեան յոյժ հաւատայ։ Շրջի Ա.Ծ ընդ միամտաց, յայտնէ զինքն խոնարհաց, տայ զիմացողութիւն տղայոց, բանայ զզգայութիւնս մտաց մաքրոց. իսկ 'ի հե

տա

տախուզից, և՛ի հպարտաց թաքուցանէ զիւրն շնորհ։ Տկա՛ր է բան մարդկային, և պատրիլ կարէ․ սակայն հաւատն ճշմարիտ, խաբիլ ոչ կարէ։

5․ Արդ՝ ամ բան, և ամ հետազօտութիւն բնական՝ հետևիլ պարտի հաւատոյն, ոչ յառաջանալ, ոչևս ներբեկել զնոյնն։ Քանզի հաւատն, և սէրն անդ յաւէտ գերազանցեն, և զաղտնեօք եղանակօք նայելիկ սրբազնագունեղի, և գերազանցագունեղի Սրբազնութեանն ներգործեն։ Աստուածն յաւիտենականն, և անչափ՝ և անհնի կարողութե, առնէ զմեծամեծս, և զանքննելիս 'ի յերկինս, և՛ի յերկրի․ և ոչ է հետազօտութիւն զարմանալի գործոյն նր։ Եթէ այնպէս ինչ լինէին գործքն Այ, զի դիւրաբար 'ի մարդկայնոյ իմացմանէ ըմբռնէին, ոչ գոյին զարմանալիք, և ոչ ասէին անճառելիք։

Վ․Ե․Ր․Ջ․

ՑՈՒ

ՑՈՒՑԱԿ

Գրոց և Գլխոց:

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ:

[illegible] օգտակարք առ[illegible] հոգեւորականս:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ:

Յա

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ։

Առաջնորդութիւնք փորձողք առ ներքնայինս։

Գլուխ Առաջին։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ:

Յաղագս ներքնայնոյ մխիթարութեն :

Գլուխ Առաջին:

ԺԸ

ԻԸ.

յիրս

քանչ

 ԳԻՐՔ

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ:

Յաղագս Սրբազնութեան:

Գլուխ Առաջին:

Ցի

ՅԻՇԱՏԱԿԱՐ ԲԱՆ։

ԱՄենաբարի բնութիւնն, և
Ամենառատ գթութիւնն՝ ոչ
կամեցեալ զխշերայնով, և թաքս
տեամբ պարածածկել զիւր՝ զբա
րեաց, և զմեծաց պարգևաց՝ զշնո
սանս, և զծանուցմունս. վասն որոյ
բացեալ զդրունս գանձուց, և ըշ
տեմարանաց իւրոց՝ անթուելեաց,
և անճառելեաց, եհեղ, և տարա
ծեաց առատաօրէն. յանդիման
առնելով զիւրն ամենահարուստ
Տէրութիւն։ Յօրինելով դեղեց
կադէր պայծառութեամբ, և զու
նադուն վայելչութեամբ զարդա
րելով, և չքեղատարած կայանիւ,
և հեղուսիւ պնտակայ կառուց
մամբ զետեղելով անշարժապէս։
Եւ ՚ի վերայ այսքանեաց մշտատև,
և անբաւ պարգևաց՝ Իշխան, և
Տէր՝ զմարդկային ազգս եդ իշխել՝
և վայելել, ըստ նորուն ահաւոր
փակ հրամանի, և կամաց։ Եւ այ
սու ոչ շատացեալ յաղագս անբա
կան սիրոյն եղելոյ առ մեզ. այլ
՚ի վախճանի աւուրց՝ զՄիածինն
իւր պարգևեաց մեզ առ ՚ի հաղոր

դակ

դակցիլ բնութեան մերոյ, ըստ վկայութեան Սրբոյն Յօհաննու, որ ասէ. Այնպէս սիրեաց Ած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին ետ. Յօհան. 3. 16: Իսկ 'ի յարդեանց, և'ի հաղորդութեանց Մեծի Սիրոյ այսորիկ՝ ընտրեցան, և արխացան. զօրացան, և քաջացան անբաւք, և անթիւք. զանազան ծաղկօք, և չքնաղազարդ վարուք ելին ընդ առաջ Անմահ Փեսային՝ Թագազգեացք, և Պսակափայլք. ըստ ձայնի Սրբոյն Պօղոսի, որ ասէ. Եւ նա ետ զոմանս Առաքեալս, զոմանս Մարգարէս, զոմանս Աւետարանիչս, զոմանս Հովիւս, և Վարդապետս. Եփեսացւոց 4. 11: Ուստի ես հէքս, և ողբոց բազմաց ըստորակայեալս, անձաշակ, և անհաւատոր այնքանեաց բազմունակ, և ամենայնի երախանեաց, և արտաքսեալ յերամնից, և 'ի դասուց որդւոց առաքաստի՝ Թօմաս Եպիսկոպոս, 'ի Նահանգէ Գողթնեաց, 'ի Մասնէ տեսչալի վայրից Վանանդու. միշտ մերահայեցով յանձնայնութե վատնեցեալ զիմ զկեանս՝ տումնկս տաղաթապաճոյճ. պատեհաւոր վարկայ՝ զհամա-

զա

ղախօս, և զքաղցրաճաշակ Գիրս Թովմասու Քեմփացւոյ տպագրել յ'իմում Գործարանում, զոր յայրմարեցի, և կազմեցի վշտօք անթուելեօք. այլև՝ ծախս նոցունց՝ յիմոց ընչից. զի գոնէ յ'ընթերցասէր Եղբարցդ խնդրեցից զօժիտս սիրոյ, և կարեկցութեան, ձօնել եղկելւոյս զփշրանս մշտամատոյց աղօթից ձերոց. Թերևս նոքօք բուժեցայց 'ի սատակչական ախտից. զի ես որդն եմ, և ոչ մարդ, և չիթ իմն դիւրածախ, և հողմավար, որ ոչ երբեք 'ի տեսութեան աչաց կայանայ: Եւ արդ՝ աղաչեմ զհամայն խումբս սպասաւորեալ Հարց, և Եղբարց. զի՝ մինչ ճաշակէք ըմպելով 'ի համեղաբուղխ, և 'ի քաղցրահոս աղբերէ սորին, յիշման առնիցէք արժանի՝ զհունակ, և զապիկարս, զԹովմաս զանարգիւնս 'յերամս բանաւորաց: Այլև՝ զծնօղսն իմ քաղցրասնոյց. զՀայրն իմ համեստակենցաղ՝ ըզ Նուրիջան Նուրիջանեան. և ըզ Մայրն իմ պարկեշտագնաց՝ ըզ Գիւլզարն. և զԵղբարս Հօր իմոյ՝ զՂուկաս, և զՍտեփաննոս: և զԵղբարսն իմ զհարազատ՝ զԳրիգոր

գոր, զԱրիստակէս, և զՅակոբ.
և զ-Բոյրն իմ Ջանայ: Նաև՝ յի
չել մաղթեմ զբազմերախտ, և ըզ
զկառավարող Գործարանին, և
բունն հեռու; և Վարժ Տպագրու
թե, զՎարդապետ Մատթէոսն, որ
է որդի Եղբօր Մօր իմոյ. և ըզ
Հայր իւր, զՅօհաննէս. և զմայրն
զՄարիամ. և զեղբայր իւր՝ ըզ
Պետրոս: Նաև՝ և զորդիս Եղբ՟ց
իմոց՝ զՂուկաս՝ և զՄիքայէլ.
որք են վարժ, և ներհմտացեալք
Լատինական Լեզուի, և կրթե
ցեալք յուսումն Փիլիսոփայական,
և բազմազան հանճարոյ. զորս Ամե
նազօր Ձեռն Արարչին պահեսցէ
անսայթաք գնացիւք. յօգուտ, և
՚ի պայծառութի Եկեղեցւոյ Սրբոյ՝
ամէն: Իսկ զորիսուր սիրոյ ձերոյ,
և ջանակցութեան՝ հատուսցէ Քս՟
ըստ խոստմանն իւրոյ՝ որ ասացն.
՚Ի տան Հօր իմոյ օթևանք բազում են.
Յօհ. 14. 2: յայնմ օթևանին, և զա
հոյն հանդուսցէ զձեզ Քս՟ յաւուրն
աներեկին. և զմեզ՝ և զմերսն ամ՟ հա
ղորդ արասցէ ուրախութեն այնո
րիկ, զոր ակն ոչ ետես՝ և այլն. ՚ի
փառս Ամենասրբոյ Երրորդութեն,
այժմ, և յաւիտեանս. Ամէն: